

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿՑԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: [info@artsakhlis.am](mailto:info@artsakhlis.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՏՅԱՆ

ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.  
ԳՐՈՂ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒ

ԱԼԻՍՈ ԲԱԴՐԱՋԱՆՅԱՆ • ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ. ԳՐՈՂ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՅՈՒՆ

## ԱԼԻՍԱ ՅՈՒՐԻԻ ՔԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ծնվել է 1985 թ. ապրիլի 5-ին Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ստեփանակերտի Ա.Վ. Խսահակյանի անվան թիվ 10 միջնակարգ դպրոցում:

2002թ. ընդունվել եւ 2007թ. գերազանցությամբ ավարտել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանի Բանասիրական ֆակուլտետի «ժուռալիստիկա» բաժինը:

2007 թվականից աշխատում է նույն համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում՝ ավագ դասախոսի պաշտոնում:

2009-2015 թթ. եղել է ԱրՊՀ Գրականության եւ ժուռալիստիկայի ամբիոնի հայցորդ:

2016-ին ՀՀ ԳԱԱ.Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել է թեզ՝ «Մաքսիմ Հովհաննիսյանը գրող եւ հրապարակախոս» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ (2007թ.) եւ ԼՂՀ (2005թ.) գրողների միության անդամ է:

Հեղինակ է բանաստեղծական չորս ժողովածուների՝ «Խոտի աղերսանք» (2005), «Թիթեռախաղ» (2007), «Հայացքի մերկություն» (2010), «Գրիչս երազ է տեսնում» (2014): Հեղինակ է նաև գիտական հոդվածների՝ գրականության արդի հիմնախնդիրների մասին, որոնք տպագրվել են Հայաստանի եւ Արցախի պարբերականներում:

Ամուսնացած է, ունի երկու որդի:



**ԱԼԻՍԱ ԲԱԴՐԱՄՅԱՆ**

**ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԵՍԻՍՅԱՆ.  
ԳՐՈՂ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ**



**ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ- 2018**

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Դ)

Բ 242

Տպագրվում է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի»  
պետհավատարմագրված համալսարանի  
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գիրքը խնբագրեց և առաջարանը գրեց  
բանասիրական գիտությունների դրկանոր, դրոֆեսոր,  
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ  
ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԸ

Գրախոս՝ Ա. Մ. ԱթԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների  
թեկնածու, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության  
վաստակավոր գործիչ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա. ՅՈՒ.

Բ 242 «ՄԱՔՍԻՄ ՀՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ. ԳՐՈՂ և ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ/ Ա.  
ՅՈՒ. Բաղդասարյան.- Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն,  
2018, 224 էջ:

«Մաքսիմ Հովտաննիսյան. գրող և հրապարակա-  
խոս» աշխատության մեջ հեղինակը դիտարկում,  
վերլուծում ու գնահատում է անվանի գրողի ու հրա-  
պարակախոսի գեղարվեստական արձակն ու հրա-  
պարակախոսությունը, ընդգծում դրանց թեմատիկ-  
գաղափարական հագեցվածությունն ու գեղարվես-  
տական ինքնատիպ առանձնահատկությունները:

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Դ)

ISBN 978-9939-1-0713-4

© Բաղդասարյան Ա. Յու., 2018

© «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ  
«ԴՐԱՏՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



## ԱԿՆԿԱԼՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Հովհաննիսյանը ժամանակակից հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներից է։ Նրա գեղարվեստական արձակը եւ հրապարակախոսությունն աչքի են ընկնում գաղափարական հագեցվածությամբ ու գեղարվեստական ինքնատիպ առանձնահատկություններով։ Նրա գրական հունձքն արժանացել է ականավոր գրողների ու գրականագետների լուրջ ուշադրությանն ու բարձր գնահատականին։ Ուստի պատահական չէ սույն գրքի երեւան գալը։

Ուսումնասիրության հեղինակը՝ Ալիսա Բաղդասարյանը, ճանաչված գեմք է հայ գրականության արցախյան հատվածում։ ՀՀ եւ ԼՂՀ գրողների միության անդամ է, բանաստեղծական չորս ժողովածուների հեղինակ, դասախոսում է Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի պետհավատարմագրված համալսարանում, ակտիվորեն մասնակցում է գրական միջոցառումներին, հանդես դալիս արդի հայ գրականությանն առնչվող կարեւոր հարցերով։

Ալիսայի աշխատանքի թեման, հիրավի, արդիական հնչեղություն ունի, առաջին հերթին նրանով, որ ամբողջական, ավարտուն գրականագիտական ուսումնասիրություն է անվանի գրողի բազմերանգ արձակի ու կրակու հրապարակախոսության մասին։

Աշխատության հեղինակը Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունը քննության է ենթարկում գեղարվեստական հարուստ ավանդների հետ ունեցած տարաբնույթ կապերի մեջ՝ վկայակոչելով պատմահասարակական այն տեղաշարժերն ու ճակատագրական իրադարձությունները, որոնց հիման վրա բազադրվել է 20-րդ դարի երկրորդ կեսի հայ գրականությունը։ Այսուեղ կարեւորում ենք ընդգծել 1941-45 թթ. Հայրենական մեծ պատերազմի, ապա հետպատերազմյան եւ առանձնապես Արցախյան շարժման ու գոյամարտի ահեղ տարիները։

Ուսումնասիրության առաջին՝ «Մաքսիմ Հովհաննիսյանի գեղարվեստական արձակը» գլխում Ալիսան բնութագրում է գրողի «Նարնջագույն գիշերներ» պատմվածաշարը՝ հյուսված սիրո հավերժության գաղափարի արձածումներով։

Ապա առանձին ենթագլուխներով վերլուծվում ու արժեքավորվում են Հովհաննիսյանի «Գյուղացի մարդիկ», «Հարար, Հարար» ժողովածուները, որոնք ժամանակին արժանացել են Հայաստանի եւ Արցախի պետական հատուկ մրցանակների։

Գրքի առաջին գլուխ ենթագլուխներից մեկը վերնագրված է «Հայ մարդու ազգային խառնվածքն ու հոգեբանությունը պատերազմական եւ հետպատերազմական տարիներին», որտեղ վերլուծվում են «Բաց դռներ» եւ «Հոգնած երեխո» ժողովածուները։ Այստեղ հանդամանալից քննության են ենթարկվում հոգեբանական այն բազմաշերտայնությունն ու ապրումների ծանրությունը, որոնք բացահայտված են բազմավաստակ գրողի նրբագեղ պատմվածքներում։

Ալիսան համոզիչ փաստերով եւ ազնիվ քննադատին հատուկ արդարամտությամբ ապացուցում է, որ Արցախի եւ արցախցու գեղարվեստական պատկերը Մաքսիմ Հովհաննիսյանի չնորհի է ներկայացվել համահայկական գրականության տեսադաշտ։

Ա. Բաղդասարյանն աշխատության երկրորդ գլխում դիտարկում եւ վերլուծության է ենթարկում անվանի գրողի բազմաշերտ հրապարակախոսությունը։ «Արցախի ճակատագիրը «Մենք» ժողովածուում» եւ «Արցախյան պատերազմի անդրադարձը» ենթագլուխներում Ալիսան Մ. Հովհաննիսյանի «Մենք» հանրահայտ գրքի եւ «Ծեպորտաժ գեպքի վայրից», «Ծեպորտաժ գեպքի վայրից-2», «Ծեպորտաժ գեպքի վայրից-3» եռադրության վերլուծությունների հիման վրա ապացուցում է, որ գրողի հրապարակախոսությունը գեղարվեստական արձակի երանգներով ինքնատիպ են ձեւի եւ բովանդակության միասնությամբ, թեմատիկ բազմազանությամբ, ինտելեկտուալությամբ, գդացմունքների անմիջականությամբ, եւ որ ամենից կարեւորն է հայ մարդու հարուստ հուզաշխարհի, կամքի ուժի, դիմացկունության, կենսասիրության հմուտ նկարագրությամբ։ Այստեղ եւս ընդգծված երեւում է Ալիսա Բաղդասարյանի գրական հասուն հայացքների առկայությունը։

Ուսումնասիրությունն ամբողջական չէր լինի, եթե հեղինակը չքննարկեր բազմավաստակ գրողի լեզվառնական առանձնահատկությունները։ Երրորդ գլխում կոնկրետ օրինակների փաստարկումներով Ալիսան ներկայացնում է գրողի գունագեղ լեզվի բազմաշերտայնությունը։

Ա. Բաղդասարյանը բանիմացությամբ է շարադրում նաեւ աշխատության եղբահանգումները՝ ապացուցելով, որ Մաքսիմ Հովհաննիսյանի ստեղծագործությունը ժամանակակից հայ արձակի ինքնատիպ էջերից է, որն արժանի է բազմակողմանի ուսումնասիրության։

## ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիրությունների դոկտոր, ԼԴՀ գիրության վասրակավոր գործիչ

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն աշխատությունը նվիրված է Ժամանակակից հայ արձակի եւ հրապարակախոսության անվանի դեմքերից մեկի՝ Մաքսիմ Հովհաննիսյանի գեղարվեստական արձակի եւ հրապարակախոսության ուսումնասիրությանը:

**«Մաքսիմ Հովհաննիսյան. գրող եւ հրապարակախոս»** քեման արդիական է: Այն հնարավորություն է ընձեռում վեր հանելու տաղանդավոր գրողի ստեղծագործությունների նշանակությունը, ամբողջացնելու ստեղծագործական դիմանկարը, նշելու նրա տեղի ու դերն արդի հայ գրականության պատմության մեջ:

Աշխատանքի նպատակն է հանակարգել եւ մեկնաբանել Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունները, բացահայտել նրանց առանձնահատկությունները, վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք առկա են նրա տեսադաշտում, կատարել թեմատիկ եւ ժամանակակից համարյակի նույնագործության դիտարկում՝ եւ քննարկում՝ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջության մեջ:

Աշխատության սահմաններում քննության ենք առել գրող-հրապարակախոսի ստեղծագործությունների ժանրային, թեմատիկ, աշխարհայացքային, պատկերային առանձնահատկությունները: Փորձել ենք ցույց տալ Մ. Հովհաննիսյանի գեղարվեստական արձակի եւ հրապարակախոսության մեջ լուսաբանված հասարակական-քաղաքական գործընթացները, մարդու հոգեբանության, աշխարհնկալումների, բնավորության բացահայտումների, երեւույթները խորությամբ ընկալելու եւ վարպետորեն ներկայացնելու գրողի կարողությունը:

Մ. Հովհաննիսյանը, 20-րդ դարի 60-ական թվականներին մուտք գործելով գրական դաշտ, իր տաղանդով եւ բեղուն գրչով կարողացավ հասուն եւ համոզիչ խոսք ասել: Հիմնավորելով իր մտքի խորհուրդն ու բռնած գործի արժեքավոր լինելու իրողությունը՝ նա ստեղծեց գրական հարուստ ժառանգություն: Գրող-հրա-

պարակախոսն այսօր էլ ստեղծագործական ընթացքի մեջ է, դեռևս արգասարեր է նրա գրիչը, ասելիքը՝ թարմ ու հետաքրքիր, բարձրացրած խնդիրներն ու շոշափած թեմաները՝ ժամանակամետ։ Ինչպես ժամանակին նկատել են գրականագետները, Մ. Հովհաննիսյանի գրական մուտքը հաստատեց, որ ասպարեզ է մտել գեղագետի մտածելակերպ ունեցող եւ ինքնատիպ ոճի ձգտող մի արձակագիր։ Կյանքը հաստատեց նրանց կանխատեսումները։ Հայրենի ծննդավայրի մաքրությունն ու գեղեցկությունն ամբարած իր մեջ՝ գրող-հրապարակախոսը ստեղծեց եւ շարունակում է արարել արժեքավոր գործեր՝ տալով Արցախի ու արցախցու, եւ ընդհանրապես՝ աշխարհի ու մարդու անաղարտ ու բնական, ճշնարիտ ու կենդանի պատկերը։ Ծիշտ է նկատել անվանի գրականագետ, ակադեմիկոս Սեւակ Արզումանյանը՝ գրելով. «Այս, իր աշխարհի հանգույն, իր աշխարհի շնչով է ապրում Մ. Հովհաննիսյանը, ստեղծում պայծառ գործեր, ընթեցողին պարզեւում հոգեւոր ինքնամաքրումի ու ինքնաճանաշման պայծառ պլահեր... Իսկ եւ իսկ իր աշխարհի հանգույն, իր աշխարհի շնչով... Ուրիշ ոչ մի առեղծված, ոչ մի գաղտնիք կամ թալիսման»<sup>1</sup>։

Մ. Հովհաննիսյանի տաղանդի, ինքնատիպ ոճի, նրա ստեղծած հետաքրքիր աշխարհի եւ նրանում ապրող մարդկանց մասին ուշագրավ է գրող, գրականագետ Վարդան Հակոբյանի դիտարկումը. «Վարդարի Մաքսիմ Հովհաննիսյանին՝ այն պատկերացումն ես կազմում, որ ոչ միայն ինքն է կերտում իր հերոսներին, այլև իրուսներն, իրենց հերքին, վերակերտում են գրողին, այսինքն՝ աստվածային արարչությունն ընթանում է զուգահեռ»<sup>2</sup>։

Մ. Հովհաննիսյանը, գրելով իրեն ծնած, սնած հողի, այն շեն պահող մարդկանց մասին, ցանկանում է նրանց կյանքի խորհուրդը պարզել որպես զգուշացում՝ «ավելի երջանիկ բախտ ունենալու համար»։ «Արվեստի մեջ նորությունը ծնվում է այն ժամանակ, երբ արվեստագետը լավ գիտի, թե անցյալում ստեղծված ավանդներից, որի վրա պետք է հենվել, որից պետք է հրաժարվել, եւ ինչին

<sup>1</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2006 թ., էջ 518:

<sup>2</sup> Մինսայան Մ., Մաքսիմ Հովհաննիսյան. կենսամատյան, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2004 թ., էջ 8:

պետք է ձգտել»<sup>3</sup>, - գրում է Էդ. Զրբաշյանը: Մաքսիմ Հովհաննիսյանն առինքնող պարզությամբ ընթերցողի առջեւ է դնում իր միտքն ու ի հոգին՝ հավատարիմ մնալով իր արյան կանչին եւ իր նախնիների փորձն ուսուցանող դասերին: Մ. Հովհաննիսյանը ճշմարտության եւ ճշմարիտ խոսքի մասին երեք իմաստուն պատմություն է արել իր 50 -ամյակի օրը: Իրենց ազգի մեծ Սաքունց Բախչու կյանքն է, Գյուլի տատից ստացած դասն ու մոր ազնվականությունը: Նա գրականություն է մտել քարոյականության այն պաշարով, որ ձեւակերպել է այսպես. «Մեծ քաջություն չէ հիվանդի երեսին ասել, որ դատապարտված է»: Ասել է. «Հիվանդ ես՝ բուժվիր»<sup>4</sup>, - ընդհանրացնում է հրապարակախոս Վահրամ Արանեսյանը: Գրողի ճշտի ու ճշմարտության մասին ունեցած արժեքավոր դիրքորոշումները լավագույն ձեւով ընդգծեց եւ ընդհանրացրեց Ղարաբաղյան շարժումը: Թե՛ գրողի, թե՛ լրագրողի, եւ թե՛ պարզապես հայ մտավորականի ակնկալիքները, ձգումներն ու երազանքները շաղկապելով իր ժողովրդի ճակատագրական ժամանակաշրջանի պահանջի հետ, նա արձանագրեց դժվար, բայց հերոսական մի տարեգրություն, որի կերտման ճանապարհին ոգու ու հոգու համարձակությունն էր պետք: Հր. Մարետոյանի բնութագրում Մաքսիմ Հովհաննիսյանը դարձավ «Բանի գեներալ»: «Հիանալի է, - գրել է Հր. Մարետոյանը, - որ մեր խոսքի ավելորդության, մեր ժամանակի անցածության, ուրվագծվող նոր ժամանակներից մեր էպոխայի հեռանալու բոլոր օրերուն Մաքսիմ Հովհաննիսյանը չի լրել խոսքի ապաստարանը, չի լրել հավատը՝ թե՛ մենք եւ մեր խոսքն ավելորդ ենք, եւ թե՛ ուրվագծվող նոր աշխարհը պատկերի է գալիս ըստ մեր խոսքի»<sup>5</sup>: Այդ Բանի գեներալը, տարիներ հետո բաց ճակատով պիտի հայտարարի, որ ինքը երբեմն իր որեւէ տողի համար չի ամաչել: Գրել է իր խղճի, իր մտքի թելադրանքով: «Գուցե ես չեմ կարողացել ամբողջ ճշմարտությունը ասել, բայց երբեք կեղծը չեմ ասել: Այնպես որ, այս առումով անխա-

<sup>3</sup> Զրբաշյան Էդ., Աշխարհայացք եւ վարպետություն, Երեւան, «Դայաստան» հրատարակություն, 1967 թ., էջ 193:

<sup>4</sup> Արանեսյան Վ., Ազնվացնող ներկայություն, «Ազգ» օրաթերթ, N 83, 10-05-2011:

<sup>5</sup> Հովհաննիսյան Մ., Երևան, Անազիմ հաստիր, Ստեփանակերտ, «Կաչազան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուն, 2006 թ., էջ 516:

թար են իմ գրական գործերը<sup>6</sup>, - հարցազրույցներից մեկում ընդգծում է գրող- հրապարակախոսը:

Պատահական չե, որ հայ գրականությունը նոր ու ինքնատիպ դրսեւորումներ ունեցավ Արցախյան շարժման եւ պատերազմի, ինչպես նաև զինադադարի հաստատման շրջանում: Արցախյան պատերազմն արդի հայ գրականությունը հարստացրեց նոր թեմաներով, գրական հերոսի նոր կերպարով (Լեւոն Խեչոյան «Մել գիրք, ծանր բզեզ» (1999), Հովհկ Վարդումյան «Կանքել» (2010), Մարսիմ Հովհաննիսյան «Մեճք» (1989), Նվարդ Սոլոմոնյան «Կարկառներ» (2010) եւ այլն): Այս ժամանակահատվածում ծնունդ առած վավերագրական արձակը՝ որպես ժանր, լավագույնս դրսեւորվեց Մարսիմ Հովհաննիսյանի գրի տակ: Վավերագրական եւ գեղարվեստական ժանրերի համադրությամբ, գրող-հրապարակախոսը բանաձեռում է արցախյան ֆենոմենոլոգիա:

Մայրենի լեզվի եւ հայրենի բարբառի նրբությունների յուրացման, հայ եւ համաշխարհային գրականության ու մշակույթի ուսումնասիրության, փիլիսոփայական եւ հոգեբանական իհմնական դրույթների քաջատեղյակության շնորհիվ, գրող-հրապարակախոսը բացում եւ բացահայտում է յուրօրինակ մի աշխարհ, որտեղ գեղեցիկն ու տգեղը, չարն ու բարին, ճիշտն ու սխալը բախվում են իրար՝ ի ցույց հանելով կյանքի ճշմարիտ պատկերը, եւ մարդը, կերտելով իրականությունը, բացահայտում է իր ես-ի տարողունակ ու բազմախորհուրդ տարածքները: Ուեալիստական թանձր գույներով գրողն ընդիհանրացնում է բազմաբարդ ու բազմարովանդակ կյանքի տիրույթները: Երկի սյուժեի եւ կոմպոզիցիայի ճիշտ հարաբերակցության արդյունքում հեղինակը հասնում է հերոսների հոգեբանության եւ բնավորությունների լիարժեք բացահայտմանը: Ըստ գրականագետ Շկլովսու, սյուժեն իրականության կրնցեացիան է<sup>7</sup>: Մարսիմ Հովհաննիսյանի արձակին խորթ չեն դասական պատմելաձելին հատուկ սյուժետային ընդգծումները, անգամ աննշան թվացող մանրամասների միջոցով բա-

<sup>6</sup> Արցախի համրային ռադիո, 2006 թ. (Արխիվ):

<sup>7</sup> ՄԱՍՑՈՒՍՈՒ Թ. իՌՎԱՑՈՒ-Տ տՐՏՉՎ ՏրցրՍՈՒ ՍոՂրու-ՍՏՉ, ՇՏՐՍՉՈ, ԼՉՊՈՅՑԱՑՔՐՑՉԾ հՏՋՎՑՐՍՈՒ տՈՒՐՈՅՑԱՑՔՆ, 1953 Հ. թՌ. 13.

ցահայտում է մարդու հոգեբանությունն ու ներաշխարհը: Իսկ ցանկացած մարդու ներքին աշխարհը, անկախ սոցիալ-հասարակական եւ այլ պայմաններից, իր մեջ ներառում է ինքնուրույնության տարրեր, ինչի մասին ժամանակին գրել է Արիստոտելը<sup>8</sup>: Ընդհանրապես մարդու ներաշխարհի ուսումնասիրությունը՝ որպես կարեւորագույն խնդիր, եղել եւ մնում է թե՛ դասական, թե՛ ժամանակակից մասնագետների ուշադրության կենտրոնում: Առավելապես այսօր՝ գիտության եւ տեխնիկայի աննախադեպ զարգացման ժամանակաշրջանում, հոգեբանությունը դիֆերենցվում է՝ առաջ քաշելով մարդու ներաշխարհը բացահայտող մի շարք ուղղություններ, հոսանքներ, դպրոցներ: Ինչպես նկատում է գրականագետ Դավիթ Գասպարյանը. «Ամրող 20-րդ դարի գրականությունը Նիցշեի, Ֆրոյդի դար է, որոնք եկան որպես գերմարդ, գիտակցության հոսք, որպես հոգեվերլուծություն, ներքին խոսք, գոյագիրիստիքայություն: Խուսափել այս ամենից՝ անգամ Նիցշե ու Ֆրոյդ չկարդալով՝ անհնարին է»<sup>9</sup>: Ժամանակաշրջանի փոփոխությունները բնականաբար չեն կարող դրւս մնալ գրականության տեսադաշտից, որի հետեւանքով գեղարվեստական գրականության մեջ առաջ քաշվեցին նոր դրույթներ, որոնք ամրագրվեցին նաև հայ գրականության մեջ: Պատահական չէ գրականագետ Զ. Ավետիսյանի այն դիտարկումը, թե՝ «20-րդ դարի հայ գրականության վկա ակնհայտ է 20-րդ դարի արեւմտյան փորձը: Բորխիսի ընդգծված կյանքային ֆաբրիկայի գեղարվեստական յուրահատուկ վերակառուցումը, սյուժետավորումը, Զոյսի ներքին մենախոսությունը, Կաֆկայի հերոսի օտարացման, այլակերպման նշանները, Բերետի հերոսների արսուրդային սպասողականությունը, Փոլքներյան գեղարվեստական տեքստի խտացվածության որակը, ընդհանրապես արեւմտյան արձակին հատուկ ապահերուստումը, սյուժեի անսպասելի շրջադարձները եւ այլն»<sup>10</sup>: Այսպիսով՝ անցյալ դարի 60-ական թվականներին հայ գրականության էական փոփոխությունը, պայմանավորված լինելով համաշխարհային գրականության ազդեցությամբ, եղավ շրջադարձային: Աս-

<sup>8</sup> ՀՐՈՒՅՑՑԱՎԱՅԻ, ԼրՍցրբՑՏ տՏֆցՌՌ, ՄՏԲՄՋՌ, 1973 չ, բՅՌՈՎՈՓՈ 60,68, 87.

<sup>9</sup> «Նարցիս» հանդես, Երեւան, 2009 թ., էջ 5:

<sup>10</sup> Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2011թ., էջ 188-189:

պարեզ մտած նոր սերնդի արձակագիրներ Հ. Մաքետսյանը, Զ. Խոլավիյանը, Պ. Չեյրունցյանը, Մ. Գալշոյյանը, Վ. Պետրոսյանը, Ն. Արայյանը, ինչպես նաև Մ. Հովհաննիսյանը, փնտրեցին ու գտան կյանքը պատկերող նոր ու թարմ ձեւեր, եղանակներ, առաջին պլան մղվեց մարդն՝ իր հոգեբանությամբ ու ներաշխարհով: Մ. Հովհաննիսյանը Հր. Մաքետսյանի հետնորդը լինելու համոզիչ փաստարկներ ու հիմնավորումներ ունի: Նրա ստեղծագործությունների հիմքում մարդն է, առավել հաճախ՝ գյուղացին՝ իր յուրահատուկ կերպարի հոգեբանական եւ գեղագիտական բացահայտմամբ: Հենց 1960-ական թվականներին «Քաղաքագիրների» եւ «Գյուղագիրների» միջեւ ծագեց քանավեճ, որտեղ «Քաղաքագիրների» տեսարան Վ. Պետրոսյանը իր «Հավասարում քազմաթիվ անհայտներով» հոդվածում, եւ Հրանտ Մաքետսյանը «Այսպես կոչված գյուղագրության մասին» հոդվածում առաջ քաշեցին իրենց կողմնորոշումներն ու տեսությունները «միջին ազգային կերպարի» շուրջ, որտեղ հատկանշական է Հրանտ Մաքետսյանի այն դիտարկումը, թե՝ «ո՞չ գյուղն ու քաղաքն են սոցիալական հակադիր բեւեռներ, ո՞չ գյուղացին ու քաղաքացին են մարդկայնորեն հակադիր որակներ...»<sup>11</sup>: Տաղանդավոր գրողը, ընդհանրացնելով իր խոսքը, վերջակետում է ասելիքը՝ ընդգծելով իր նտքի փիլիսոփայությունը. «Զկա գյուղագրություն կամ քաղաքագրություն, կա միայն մարդկային հայացք՝ բնությանն ու աշխարհին»<sup>12</sup>: Մ. Հովհաննիսյանը հենց այս հարբուրյան վրա էլ ընդարձակեց ասելիքը՝ ստեղծելով արժեքավոր գործեր՝ «Մենք», «Նարնջագույն գիշերներ», «Գյուղացի մարդիկ», «Բաց դուներ», «Հարա՞ր-Հարա՞ր», «Հոգնած երեկո», «Հեռացող երկրի կարուտը» եւ այլ էսեաշարեր ու պատմվածաշարեր, որոնք, ինչպես հեղինակն է նշում, իր տեսած ու զգացած կյանքի հասորներն են, իր «խոկումների պտուղը»: Գրականագետ Սեւակ Արզումանյանը, հետեւելով Հովհաննիսյանի գրական ընթացքին, նկատել է. «Արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի գրական «հումքի» աղբյուրն իր ծննդավայրն է, հայրենի գյուղը, որը պատմվածքներում Լեռնադրյուր անունն է»

<sup>11</sup> Մաքետսյան Յ., Սպիտակ թղթի առջեւ, Երեւան, «Յայ գիտակ» հրատարակչություն, 2004 թ., էջ 46:

<sup>12</sup> [30. 44]:

ստացել՝ սիմվոլացնելով առհասարակ ավանդական ու նոր Լեռնային Ղարաբաղը՝ իր աշխատասեր ու խորաշեն մարդկանցով ու սովորություններով»<sup>13</sup>:

Մ. Հովհաննիսյանի հճնատիա ձեռագիրն իր ընկալումներով բարձրաժեք է, բծախնդրության չափ անզիջում, ակադեմիական չափանիշների մեջ հաստատում եւ ընկալելի: Նրա ստեղծագործություններն արցախցու ֆենոմենալ տեսակի եւ սեփական եւի բացահայտնան արժեքավոր մի փորձ է, ինչն ընդգծում է գրողի հոգով, մտքով ու փիզիկական ամբողջականությամբ ազգային հոդին ամուր կապված լինելու կարեւոր հանգամանքը, առանց որի ամբողջական չէր լինի ոչ նրա կյանքը, ոչ արվեստը, որոնք պայմանավորված են իրարույն եւ իրար միջոցով են կայանում: Հովհաննիսյանն այն գրողների շարքին է դասվում, ում կենսագրությունն ու ստեղծագործությունը անմիջականորեն միաձուլված են: Իսկ հեղինակի ստեղծագործություններից շատերի «արտաքինն ու ներքինը» հասկանալու համար, ինչպես նկատում է անվանի գիտնական Ալբերտ Շվայցերը<sup>14</sup>, պետք է խմանալ նրա անձնական կյանքի պատմությունը: Հետեւապես, գրող-հրապարակախոսի ստեղծագործական ամբողջական իրապատկերին հասնելու համար անդրադառնանք նրա կենսապատումին:

Մաքսիմ (Միսաք) Երվանդի Հովհաննիսյանը (Ավանեսյան) ծնվել է 1934թ. փետրվարի 18-ին Ասկերանի (նախկինում՝ Ստեփանակերտի) շրջանի Հարավ գյուղում: Հայրենի բնաշխարհի տպավորիչ պատկերները, դեմքերն ու դեպքերը խոր հետք են բողոքում Մ. Հովհաննիսյանի հոգում, որը հետագայում ատահաջող է հանդիսանում գրողի գրական ընկալումների ձեւավորման ու զարգացման գործում: Այդ ազդեցության մասին տարիներ հետո այսպես պետք է խոսեր գրող-հրապարակախոսը. «Այս փոքրիկ լեռնային ածուն, որին սիրում ենք խանդրու սիրով, որին նվիրված ենք ակամա՝ մեր արյամբ, դարձավ ինձ համար նյութ, դարձավ շունչ ու ողի, իր կոշտ ու տաք գրկի մեջ փայփայեց ինձ՝ որպես գրողի ու քաղաքացու»<sup>15</sup>:

<sup>13</sup> «Գրական Աղորեջան» հանդես, 1984 թ., N 5, էջ 92-93:

<sup>14</sup> <http://168.am>, Դամիել Խարմս, 2008 թ., օգոստոսի 26:

<sup>15</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Առաջին հատոր, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2005 թ., էջ 7:

1952 թ. Ս. Հովհաննիսյանն ավարտում է Ստեփանակերտի թիվ 2 միջնակարգ դպրոցը եւ ընդունվում տեղի երկամյա մանկավարժական ինստիտուտը, բայց կիսատ քողմելով՝ ընդունվում է Երեւանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի բաժինը եւ այն ավարտելով՝ Վերադառնում հայրենի երկրամաս՝ լրագրողի մասնագիտությամբ: «Երեւանի պետական համալսարանն ավարտելոց հետո ինձ կանչում էին մեծ քաղաքի հեռութերը, ես իմ երազների իրականացումն այնտեղ էի տեսնում: Մայրս, սակայն, որիշ կերպ էր մտածում: Եսկ քանի որ ինձ համար չկար մեկ որիշ կամք, քան մորս կամքը, Վերադարձա այնտեղ, որտեղից սկսվել եմ եւ որտեղից էլ ճախախնամության մի պահանջով պետք է շարունակեի»<sup>16</sup>, - ընդգծում է Հովհաննիսյանը, ապա խոստովանում, որ իր որոշման ճիշտ լինելը տարիներ հետո է հասկանում միայն, քանի որ իրեն ծնած հողին ինքն առավել էր պետք, որտեղ էլ կարողացել է առավելապես ինքնադրսեորվել: «Արցախ աշխարհի հերիարային բնության նրերանգմերը հոգու մեջ առած՝ նա խենքորեն սիրահարվեց ստեղծագործական աշխատանքին, ընտրեց լրագրությունը եւ մտավ քարքարոտ ու վերնբաց մի ճանապարհ, որ կոչվում է գրողի ճակատագիր»<sup>17</sup>, - նշում է բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, այլովեսոր Սովորաց Խանյանը:

Մ. Հովհաննիսյանն իր աշխատանքային գործունեությունը սկսում է 1958-ից՝ Լեռնային Ղարաբաղի զանգվածային լրատվության մարմիններում: Աշխատում է ռադիոհաղորդումների մարզային կոմիտեում՝ որպես թքակից, ավագ խմբագիր, իսկ 1971-1986 թվականներին՝ գլխավոր խմբագիր: Կարճ ժամանակահատվածում Մարսիմ Հովհաննիսյանի անունը կարելի էր տեսնել Արցախի, Հայաստանի, Սփյուռքի պարբերականների էջերում: Նրա դերն ու նշանակությունը մեծ է հատկապես Արցախյան շարժման դիմանկարը պատկերելու գործում: 50-ական թվականներից սկսած արցախյան շարժման առաջին ակտիվիստներից էր: Դեռևս շարժումից առաջ նա իր համախոհների հետ մասնակցում էր շարժմանը: Քանի որ շարժման այդ համագույշին պոռքվումի ար-

<sup>16</sup> [22, 7]:

<sup>17</sup> Խանյան Ս., Մարսիմ Հովհաննիսյան. Լեռնադրյուրի վիպաշխարհը, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2007 թ., էջ 5:

մատները շատ ավելի խորն են, հեռվից եկող եւ հեռուն գնացող: «Տարիներ ի վեր,- գրում է Հովհաննիսյանը,- մեր քոլոր հաղորդումներում ու հրապարակումներում միշտ ձգտել ենք բարձր պահել մեր ազգային ոգին ու զաղափարախոսությունը»<sup>18</sup>: Ազգայինը, որը խորհրդային տարիներին եւ հատկապես Աղբեջանի տոտալ միջավայրում դժվար էր պահպանել, իսկ հրապարակավ հանդես գալը խիզախություն էր պահանջում: Հնարավորության սահմաններում նրանք աշխատում էին պահել ազգայինը: Եվ երբ ազգային քոնացումները սկսում են վտանգավոր դառնալ, 1965 թ. ԽՄԿԿ Կենտկոմին ուղղվում է հայտնի 13-ի նամակը, որի տակ 13 ստորագրողներից մեկն էլ Մաքսիմ Հովհաննիսյանն էր:

Մասնագիտությամբ լրագրող Մաքսիմ Հովհաննիսյանը, իր առաջին, բայց համոզիչ քայլերն անելով արձակի քնազավառում, ընթերցողի սեղանին է դնում պատմվածքների առաջին ժողովածուն «Իմ իին լրենի» վերնագրով, որը լրիս է տեսնում 1970 թ. Քարվում եւ լյան արձագանք ստանում: Ինչպես հեղինակն է ասում. «Ժողովածուն չինչի որպես ինքնազովեստ, բայց պիտի ասեմ, որ իմ գրքերը քաղաքի գրախանություններուն չէին մնում: Երբ ուզում էի գրախանություն վերցնել՝ մտերիմներին նվիրելու համար, ապա չէի գտնում: Ստիպված դիմում էի շրջկենտրոնների գրախանություններին»<sup>19</sup>: Ժողովածուն արձակագրի կենսագրության որոշակի պատկերումն է, նրա մատորումների, իին ու նոր օրերի հուշապատումը, որը խոստումնալից ինքնաներկայացման հայտ էր: Հենց գրքի համանուն պատմվածքով գրողը մտավ գրականություն: Այս մասին հեղինակը հարցազրոյցներից մեկում նշում է. «Պարզապես հոգիս ազատելու համար գրեցի «Իմ իին լրենի» պատմվածքը: Հուրախություն ինձ, բավականին շերմությամբ ընդունվեց այն: Զահելություն կար եւ բավականին շերմություն՝ պատմվածքում, խոսքի ազնվություն, զգացմունքի ազնվություն: Այդ ամենը գրավեց ընթերցողի ուշադրությունը: Հիշում եմ, պատմվածքի առիթով արձակագիր Մարգար Դավթյանը «Գրական Աղբեջանում» արձագանք գրեց: Ասեմ նաև, որ պատմվածքը տպագրվել էր համա-

<sup>18</sup> Հովհաննիսյան Ա., Երկեր, Չորրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Անոն» գրատուն, 2009 թ., էջ 252:

<sup>19</sup> Արցախի հանրային ռադիո, Ստեփանակերտ, 2006 թ. (Արխիվ):

նուն ամսագրում»<sup>20</sup>: «Իմ իին լրտենի» պատմվածքով Մ. Հովհաննիսյանը մուտք գործեց զրականություն: Միաժամանակ այն հեղինակի առաջին զրքի ստեղծման հիմնաքարը դարձավ: Գրվեցին նոր պատմվածքներ, որոնք տպագրվեցին Ղարաբաղում, Աղրբեջանի հայատառ մամուլում: Այդ ժամանակ Հայաստանում տպագրվելը համարվում էր միշտամուրթյուն՝ Աղրբեջանի ներքին գործերին: Այնուամենայնիվ, «Սովետական գրականուրթյուն» ամսագրում տպագրվեցին Հովհաննիսյանի գործերից: Անվանի արձակագիր Վիկեն Խնչումյանը, ամսագրի պատասխանատու քարտուղարը լինելով, ջերմ խոսքերով նամակ գրեց, ինչը եւս նպաստեց նոր պատմվածքներ գրելուն եւ տպագրվելուն, որոնք էլ հետագայում ամփոփվեցին «Իմ իին լրտենի» ժողովածուում: 1971 թ. Հայաստանում հրատարակվում է գրող-հրապարակախոսի երկրորդ գիրքը՝ **«Գարնան կարու»** վերնագրով: Պատմավածաշարի հերոսները, պատկերների ամբողջ համակարգը հիշեցնում են մարդու՝ բնուրյան մի մասնիկ լինելու իրողուրթյունը: Կարեւոր չէ՝ գործող անձը զյուղում է ապրում, թե՝ քաղաքում, կարեւորը նրա զգացածն է, նրա բնուրյունը զգալու կարողուրթյունը: Ծնորի, որը մարդուն տրվում է հենց այն օրից, երբ իր առաջին ճիշն է արձակում: Իսկ թե որքանով է մարդը զնահատում այդ շնորհը եւ օգտվում դրանից, այլ հարց է:

1975թ. Մ. Հովհաննիսյանը «Դեղին լուս» պատմվածքի համար արժանանում է ԼՀ Արհմտուրյան մարզային վարչուրյան մրցանակին: Երկու տարի անց (1977թ.) Բարգում լուս է տեսնում **«Գյուղացի մարդիկ»** ժողովածուն, գիրք, որի վերնագիրն ինքնին բացում է բոլոր փակագծերը: Իսկ այն, ինչը թաքնված է այդ փակագծերի ներսում, ավելին է, քան զյուղացի մարդու առօրեական նկարագիրը: Գրողի հերթական ժողովածուն հրատարակվում է 1980թ. **«Եղ սիրտն ասաց»** վերնագրով: Պրոբլեմատիկ, խոհափիլսոփայական լուրջ ու հետաքրքիր կյանքապատկերներ, իրական, շոշափելի իրավիճակներ ու երեւույթներ եւ խորհրդավորության շղարշներով պարպաժ զգացմունքների առերևում. «ով խաղն է շահում, ով՝ սերը»: Կյանքը պայքար է, եւ այն սկսելուց առաջ անհրաժեշտ է պայքարելու ձեւերն իմանալ:

<sup>20</sup> [1. Արխիվ]:

1983թ. «Սովետական գրող» հրատարակչությունը տպագրում է Մ. Հովհաննիսյանի «Նարնջագույն զիշերներ» գիրքը, որը արձակագրի լավագույն պատմվածաշարերից է: Փիլիսոփայական որույն պատկերների մի ինքնատիպ շղթա, կյանքաշունչ ընկալումների, զգացմունքների հորձանուտ: Գրողն առանց ձեւական պերճաշուրության, դիպուկ բառերով, բացում է շրջանակներ, որոնք կյանքի իմաստն են կազմում:

Արձակագիրը 1982-ից արդեն ԽՍՀՄ գրողների միության անդամ էր:

1986-1987 թվականներին Մ. Հովհաննիսյանն աշխատում է որպես Ստեփանակերսի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն: Նա միշտ կապված էր թատրոնին, եղել է թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, ակտիվ մասնակցել խաղացանկի ձեւափորձանը, հայերեն թարգմանել ոռու դրամատուրգների պիեսները, այդ թվում Ա. Օստրովսկու «Գեղեցիկ տղամարդը» դրաման: Այդ ընթացքում (1986թ.) Բարգում լույս է տեսնում նորա «*Ծոգ*» պատմվածքների ժողովածուն: «Ծոգ»-ը, ինչպես արձակագրի նախորդ գրքերը, առանձնանում է ինքնատիպությամբ, նոր ու ժամանակահարույց զգացողություններով ու ընկալումներով:

1988թ. սկսվում է Արցախյան շարժումը՝ իր հետ բերելով բոլորովին այլ զգացողություններ եւ ակնկալիքներ: Արցախյան հարցը բացահայտորեն բարձրացվում է համահայկական մակարդակի: Բաց նամակներով հանդես են գալիս ժամանակի մտավորականները: «Հաղթանակը, միայն հաղթանակն է ազատելու մեզ թշնամու կողմնակիցների եւ մեր իսկ քանահրանքից: Հաղթանակը մեր անցյալի եւ ապագայի, եւ համայն մարդկության առջեւ մեր առաքելությունն է»<sup>21</sup>, - գրել է Հրանտ Մարենոսյանը: Արցախյան շարժումը դառնում է համազգային խնդիր, որի լուծման համար բոռնցրվում է ազգը, եւ գործը, խոսքի հետ համազոր, կերտում է նոր դարաշրջան: Հովհաննիսյանը կարողանում է լինել այն ձայնը, որ բխում էր յուրաքանչյուր հայի սրտից եւ արժեւորվում յուրաքանչյուր հայի սրտում: Իսկ Արցախյան շարժումն ամբողջ հայության հոգսն ու մտահոգությունն էր, որի իրական նկարագիրն ար-

<sup>21</sup> «Արցախ» հանդես, 1994 թ., N 3-4, էջ 2:

տացոլվում էր Էստերում, ակնարկներում, պատմվածքներում, որնք իր ժողովրդի հույսով, հավատով ու հիասքափություններով, ուրախությամբ եւ ցավով ապրող ու տառապող գրող-հրապարակախոսի գրչի վարպետությամբ էին արարվում: «Նախքան Արցախյան շարժումը ես սկսել էի մի մեծ վեպի վրա աշխատել: Այն գյուղի խմբումների, մարդու, անհատի, հասարակության, կյանքի բարդ վիճակների, մարդկային կրորուտների եւ մարդկային հոգու ընդվզումների մասին էր: Բավականին աշխատել էի վեպի վրա, բայց սկսեց Արցախյան շարժումը, եւ տեղափոխվեցի «Խորիդային Ղարաբաղ» թերթը, եւ սկսեց մի նոր կյանք, մի նոր իրավիճակ»<sup>22</sup>, հարցազրույցներից մեկում նշում է Մարտին Հովհաննիսյանը: Նա մի կողմ է դառն այդ գրքի վրա աշխատելը եւ ամբողջությամբ նվիրվում Շարժման արտացոլմանը: 88-ն ու նրան հաջորդող մարտական տարիները նոր թափ ու որակ են հաղորդում գրող-հրապարակախոսի գրչին, որի արձագանքն ինքնատիպ է, մարդու հոգու հետ խոսող, պարզ ու հասկանալի: Աշխատանքի եւ պաշտոնի բերումնվ նա գնացել է իրադարձությունների թարմ հետքերով, հանդիպել քաղաքական գործիչների եւ մշակույթի երեւելինների, որոնց հետ վարել է հարցազրույցներ: Անմռաց գրույցներ են Հրանտ Մաթեոսյանի, Ելենա Բոների, Կիմ Բակշիի եւ Արցախյան գոյապայքարի գործին նվիրված այլ նշանավորների հետ:

1988 -1993 թվականներին Հովհաննիսյանը ստանձնում է «Խորիդային Ղարաբաղ» (հետագայում «Արցախ») թերթի գլխավոր խմբագրի պաշտոնը: Խմբագրական պատասխանատու աշխատանքներից զատ՝ գրող, լրագրող, հասարակական գործիչ Մ. Հովհաննիսյանը, հավատարիմ մնալով իր մասնագիտությանն ու աստվածային շնորհին, պատմվածքների, Էստերի միջոցով արտացոլում է Արցախում տեղի ունեցող պատմական իրողությունների, հերոսական դեմքերի ու դեպքերի փաստացի պատկերը: Այդ տարիներին էլ ծնվում են նրա շատ գործեր, մասնավորապես՝ «Սնանք» Էստերի ժողովածուն: Այն լույս է տեսնում 1989թ. Երեւանում, որտեղ գետեղված տասը Էստերն արժեւորում են Արցախ բնաշխարհի գեղեցկությունն ու նրա ժողովրդի հարուստ հուզաշ-

<sup>22</sup> Արցախի հանրային ռադիո, Ստեփանակերտ, 2006 թ. (Արխիվ):

խարիթ: Ժողովածուի համար Մ. Հովհաննիսյանն արժանանում է Հայաստանի գրողների միության Դ. Դեմիրճյանի անվան մրցանակի: Հետազայտմ նրա հրապարակախոսությունը ձեւավորվում է «Տերունական աղոքք», «Ուսուրտած դեպքի վայրից» եւ այլ հրապարակումներով: Արցախյան շարժման սկիզբը, ընթացքն ու հարաբերական անդրդրը բնութագրող ինքնատիպ արձանագրմանք գրող-հրապարակախոսը գրական, փաստագրական մեծ ժառանգություն է ստեղծել: Նա համարձակորեն իրականության ճշմարիտ դեմքն ի ցույց հանեց՝ երբեմն նաև սեփական անձը վտանգելով: Սակայն դա էր ժամանակի հրամայականը, իսկ գրիչ ունեցող գրողը, մտավորականը ոչ միայն չէր կարող դրս մնալ այդ ժամանակից, այլև ինքը եւս պետք է նպաստեր այդ ժամանակի կերտման գործընթացին: Մ. Հովհաննիսյանը կարողացավ ստեղծել իր աշխարհը՝ ճիշտ ժամանակագրությամբ, շոշափելի, հարազատ, իրական դեմքերի ու իրադարձությունների օբյեկտիվ նկարագրությամբ, պարզ եւ հասկանալի շարադրանքով, բառերի ու բառակապակցությունների դիմուկ գործածությամբ եւ հաստատուն ձեռագրով: Ականավոր գրականագետ, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը գրում է. «Այստեղ էականը «նոր աշխարհն» է եւ նրա պատկերը՝ ըստ խոսքի, որ այլ կերպ կարելի է անվանել իրականության գիտակցում: Ժամանակն Արցախյան ազատագրական շարժումն է տասնամյա իր տեսողությամբ՝ սկիզբը, ընթացքը եւ անվարտ վիճակի հարցականը»<sup>23</sup>: Երբեւ Մ. Հովհաննիսյանի գրիչն այնքան բեղուն չի եղել, որքան այդ տարիներին: Գրեթե երկու հատոր են ընդգրկում այդ տարիների նրա ստեղծագործությունները՝ էստեները, հրապարակումները, պատմվածքները: Այդ ժամանակահատվածում է լույս տեսնում նաև «Գնում ենք արեւին դիմվորելու» (1991թ.) պատմվածքների գիրքը, որի համար հեղինակն արժանանում է ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան մրցանակին: Արձակագիրն իր հերոսների երկխոսությունների եւ ներքին մենախոսությունների միջոցով ասում է ամենակարեւորը: Այն, ինչն իրավամբ պետք է գնահատվի նարդկային հարաբերություններում, քանի որ բնությունը մարդուն մարդ է պահում:

<sup>23</sup> Սարինյան Մ., Դայ գրականության երկու դարը, Գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009 թ., էջ 205:

1993-1996-ին Մաքսիմ Հովհաննիսյանը նշանակվում է ԼՂՀ Նախարարների խորհրդի լրատվության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավար, 1995-1998-ին «ԼՂ Հանրապետություն» օրաթերթի գլխավոր խմբագիր:

1998 թ. գրող-հրապարակախոսն «Արցախ իմ, ցավ իմ» վերնագրով պատմվածքների եւ էսեների մի ամբողջական գիրք է դնում ընթերցողի սեղանին, որում զետեղվում են «Սենք» Էսսեաշարը, «Տերունական աղոքք», «Ռազմաճակատում հարաբերական հանգիստ է», «Ակիլիայի եւ խարիֆիսի արանքում» պատմվածաշարերը: 2005-2009թթ. լույս է տեսնում Հովհաննիսյանի Երկերի չորս հատորյակը, որտեղ ամփոփվում են հեղինակի թե՛ հրապարակախոսական, թե՛ գեղարվեստական արձակի գրեթե ամբողջական երկերը: Այս առիթով ուշագրավ է Մ. Հովհաննիսյանի հետևյալ ընդգծումը. «Սույն հրատարակության չորրորդ հատորը կազմեցի եւ դարձյալ մնացի երկմտության մեջ՝ դուրս են մնացել «Չաստվածների խնջույք», «Ուրացողը» եւ «Կոշտուկներ» վիպակները, «Ուշացած երեկո» պատմվածքների շարքը, որը դեռևս ավարտված չեմ համարում: Այստեղ հիշեցի արդեն թեւավոր դարձած խոսքը՝ տան վերանորոգումը չի ավարտվում, այլ ժամանակավոր դադարեցվում է»<sup>24</sup>: «Չաստվածների խնջույք», «Չաստվածների խնջույք-2» գրքերը լույս են տեսնում 2008-2009 թթ., որտեղ հեղինակն ընդհանրացնում է մարդու եւ բնության, մարդու եւ հասարակության, մարդու կեցության նպատակի եւ ձգտումների, ծշնարության որոնումների շուրջ արված իր դիտարկումները՝ էսեների, խոհերի տեսքով: Մ. Հովհաննիսյան գրողի տաղանդի յուրօինակ մի դրսեւորում է «Հոգնած երեկո» (2010թ.) գիրքը, որտեղ շեշտը դրվում է առավելապես հերոսների հոգեկան ապրումների վրա: «Ինչքան էլ կենդանի թվան գրական կերպարները, նկատել է ֆրանսիացի գրող Անդրեա Մորուան, - գրողը անտեսում է ամբողջական պատկերը, առանձնացնում հերոսի այս կամ այն գիծը, զգացումը, այս կամ այն կիրքը, որպեսզի մեզ համար հնարավոր դարձնի լավ ուսումնասիրել նրան»<sup>25</sup>:

<sup>24</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Չորրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակություն, «Սղնա» գրատում, 2009 թ., էջ 2:  
25 «կղործապան ԽՌՈՎՓՈ-Ռ սՌ-ՅՎՌՈՅՑՐԱՎ», ՄՏՌԱՋՌ, 1978 Հ., բՑՐՈՎՌՈՓՈ124.

«Հոգհած երեկո» գրքի տրամաբանական շարունակությունն է վերջին տարիներին գրված վիպակների ու պատմվածքների ամփոփագիր հանդիսացող «Հեռացող երկրի կարուղը» խորհրդանշական վերնագիրը կրող ժողովածուն: Գրողի մտահոգությունը ժամանակի էվոլյուցիոն շարժի մեջ հայ մարդու քնավորության, ազգային սովորությունների, հոգեբանության շրջադարձային փոփոխության հետ է կապված: Ոչ խաղաղություն, ոչ պատերազմ անկայուն իրավիճակում հայտնված դարարադյան հերթական անգամ գոյապայքարի մեջ է մտել: Եվ, եթե երեկ արտաքին թշնամու դեմ մղած անհավասար մարտում ոզի եւ ուժեղ կամք է ունեցել, հավատում էր իր բոնած գործի հաղթական ավարտին, ապա այսօր երերում է նրա վստահությունը: Ժամանակների հետ փոխվում են մարդիկ, նրանց փոխհարաբերություններն ու աշխարհընկալումները, որովհետեւ «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոփոխվում, յուրաքանչյուր պահի գետն այլ է, նախկինը չէ, նախկինը միայն աշխարհագրական հասկացությունն է, բովանդակությունն այլ է»<sup>26</sup> (Հերակլիտ): Մ. Հովհաննիսյանը, գտնվելով կյանքի հորձանուտում, լավագույն ձեռով զգալով ժամանակի շունչը, ստեղծում է շընդհատվող հոսքի մեջ գտնվող մի հետաքրքիր գրականություն: Նրա արձակն իր բեմատիկ ընդգրկվածությամբ, ժանրային եւ այլ առանձնահատկություններով կարելի է տարանջատել՝ մինչեւ 1988 թ. գրած երկերից: Յուրաքանչյուր ժամանակաշրջան (խորհրդային ժամանակաշրջան, պատերազմական եւ հետպատերազմական ժամանակաշրջան) իր դրոշմն է թողել գրողի արձակում, սակայն մի բան ակնհայտ է եւ անփոփոխ: Մաքսիմ Հովհաննիսյանի գրական ձեռքբերումն իր հայրենի եզերքն է՝ Արցախը, իր ժամանակատարածական բոլոր ընդգրկումներով: Հենց Մ. Հովհաննիսյանի շնորհիվ է արցախյան մոտիվն ընդգծված հայտնվում անկախության շրջանի հայ գրականության եւ հրապարակախոսության տեսադաշտում: Նրա ստեղծագործությունները նշտապես գտնվել են գրականագետների եւ նրա գրչակից ընկերների ու շաբաթական լեզուներում: Մ. Հովհաննիսյանի ստեղծագործական հունձքի արժեւորմամբ հանդես են եկել հանրահայտ գրողներ ու

<sup>26</sup> Դովականյան Յու., ժամանակակից փիլիսոփայական հոսանքներ, Երեւան, 1998 թ., էջ 88

գրականագետներ: Ուշագրավ են Հրանտ Մաթեոսյանի «Մաքսիմ Հովհաննիսյանի մասին»<sup>27</sup>, Սեւակ Արզումանյանի «Իր աշխարհի հանգույն, իր աշխարհի շնչով»<sup>28</sup>, Սերգեյ Սարինյանի «Նամակ՝ գրող Մաքսիմ Հովհաննիսյանին»<sup>29</sup>, Վահրամ Աբանեսյանի «Մեղավորների փրկության համար»<sup>30</sup> գրախոսությունները, ինչպես նաև Բանասիրական գիտությունների դրվագը, պլոֆեսոր, ԼՂՀ Գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի «Մաքսիմ Հովհաննիսյան. Լեռնադրյուրի վիպաշխարհը»<sup>31</sup> ուսումնասիրությունը: Սակայն այնոր է նշել, որ տաղանդավոր գրող-հրապարակախոսի թե՛ գեղարվեստական արձակը, թե՛ հրապարակախոսությունն ընդհանրության մեջ կարիք է ունեցել նոր ուսումնասիրության: Սույն աշխատությունը տվյալ թեմայի գեղարվեստական բացահայտումների ընդհանրացված գնահատման փորձերից է՝ մեր գրականագիտական ըմբռնումների եւ ստեղծագործական կենսափորձի մեկնակետով: Զգուել ենք ընդհանրացնել բազմավաստակ գրող-հրապարակախոսի գեղարվեստական երկերի եւ հրապարակախոսության ամբողջական պատկերը՝ գեղագիտական, հոգեբանական, փիլիսոփայական հայացքների ու հիմնավոր դրույթների համահարթության նեզ: Ուսումնասիրության մերողաբանության հիմքում ընկած է Մ. Հովհաննիսյանի գեղարվեստական արձակի եւ հրապարակախոսության ուսումնասիրվող նյութի համարման սկզբունքը: Աշխատանքում վերլուծվում եւ գնահատվում են գրողի երկերում արծարծվող թեմատիկ բազմազանությունն ու ժանրային առանձնահատկությունները: Ուսումնասիրության աղբյուրագիտության հիմքն են կազմում Մ. Հովհաննիսյանի ստեղծագործական գործունեության ընթացքում լույս տեսած պատմվածաշարերն ու էսեաշարերը, Երկերի ժողովածուների

27 Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեացոտ» հրատարակչություն, «Սոնա» գրասում, 2006 թ., էջ 516-517:

28 [23. 527]

29 Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2008 թ., էջ 518-520:

30 Հովհաննիսյան Մ., «Չաստվածների խնջույք - 2», Ստեփանակերտ, «Սոնա» գրասում, 2009 թ., էջ 3-4:

31 Խանյան Մ., Մաքսիմ Հովհաննիսյան. Լեռնադրյուրի վիպաշխարհ, Ստեփանակերտ, «Սոնա» գրասում, 2007 թ., 124 էջ:

իինգ հատորները, նրա վերաբերյալ զիտական ուսումնասիրությունները, մամուլում տպագրված հոդվածները: Աշխատանքն ունի ճանաչողական նշանակություն՝ պայմանավորված նյութի արդիականությամբ, թեմատիկ բազմազանությամբ եւ ժամանակակից առանձնահատկություններով: Գիրքը բաղկացած է Ներածությունից, Երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, Եղակացությունից և Օգտագործված գրականության ցանկից:

**Ներածության** մեջ ներկայացվում է ատենախոսության նախատակն ու խնդիրները, արդիականությունը, զիտական նորույթը, մշակվածության աստիճանը:

Առաջին զիտում («Մաքսիմ Հովհաննիսյանի գեղարվեստական արձակը») ուսումնասիրել եւ վերլուծության ենք ենթարկել գրողի գեղարվեստական արձակը, մանավանդ՝ «Նարնջագույն գիշերներ», «Գյուղացի մարդիկ», «Հարար-Հարար», «Բաց դրներ», «Հոգնած երեկո», «Հեռացող երկրի կարոտը» ժողովածուները, որտեղ լավագույն ձևով երեւում են արձակագրի գեղագիտական հայացքների, փիլիսոփայական ընկալումների, հոգեբանական դիտարկումների հիմնարար ընդգրկումները: Այն բաժանվում է «Սիրո թեման «Նարնջագույն գիշերներ» պատմվածաշարում», «Լեռնաշխարհն ու նրա մարդիկ» («Գյուղացի մարդիկ»), «Հարար-Հարար» ժողովածուները», «Հայ մարդու ազգային խառնվածքն ու հոգերանությունը պատերազմական եւ հետպատերազմական տարիներին» («Բաց դրներ», «Հոգնած երեկո», «Հեռացող երկրի կարոտը»)՝ ենթագլուխների:

Երկրորդ զիտում՝ «Մաքսիմ Հովհաննիսյանի հրապարակախոսությունը» վերնագրի տակ ընդգծել եւ ընդհանրացրել ենք հեղինակի հրապարակախոսությունը՝ շեշտը դնելով «Մենք», «Ունապրտած դեպքի վայրից», «Ունապրտած դեպքի վայրից-2», «Ունապրտած դեպքի վայրից-3» շարքերի վրա, որոնք Արցախյան գոյամարտի տարեգրության, արցախցու հոգու եւ ոգու պոռքկումների ընդգծված «շորշովիներն» են: Այն իր հերթին բաժանվում է «Արցախի ճակատագիրը «Մենք» ժողովածուում», «Արցախյան գոյապայքարի անդրադարձը «Ունապրտած դեպքի վայրից», «Ունապրտած դեպքի վայրից-2», «Ունապրտած դեպքի վայրից-3» եռագրությունում» ենթագլուխների:

Երրորդ գլխում («Մաքսիմ Հովհաննիսյանի լեզվի և ոճի միքածի առանձնահատկություններ») ընդգծվում եւ ընդհանրացվում է այն իրողությունը, որ Մաքսիմ Հովհաննիսյանի տաղանդը ոչ միայն նրա ստեղծագործության թեմատիկայով ու գաղափարաբանությամբ է պայմանավորված, այլև բարձր արվեստով եւ կենդանի, պարզ ու գունեղ լեզվով: Մ. Հովհաննիսյանը, ստեղծելով լեզվառնական իր ուրույն համակարգը, իր նպաստն է քերում հայ գրական լեզվի զարգացման գործում:

**Եզրակացության** մեջ հակիրճ եւ հստակ ներկայացվում են Մ. Հովհաննիսյանի գեղարվեստական արձակի եւ հրապարակախոսության յուրահատկությունները, նորագույն շրջանի հայ արձակի մեջ նրա նվաճած սեփական տեղը, թեմատիկ-գաղափարական եւ գեղարվեստական առանձնահատկությունները հայ արձակի զարգացման ընդհանուր ընթացքի մեջ:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

### 1.1. Սիրո թեման «Նարնջագույն գիշերներ» պատմվածաշարում

Մինչեւ Մաքսիմ Հովհաննիսյանի «Նարնջագույն զիշերներ» տարբերակում սիրո բաղրադարյան եւ տառապանքի նկարագրությունների գնահատումը՝ հարկ ենի համարում նույն քենայի հանդելով եղած բացասական վերաբերմունքն անհատի դատամունքի տարիներին: Հայսնի է, որ այդ ժամանակաշրջանում արգելված էր սիրո եւ նրա հետ առնչվող տարբեր աղբումների դատակերումը: Սեր համարվում էր անձնական նեղ աղբումների արտահայտություն, որն իրեւ անհարիր էր սովետական մարդու վեհ զգացմունքներին, նրա բաղաբացիական դիրքորոշումները: Սիրո զգացումը դարձադիւն համարվում էր զաղափարական սխեմատիզմ, նրա նկարագրությունը գրական երկերում «ինդիվիդուալիզմի» արտահայտություն:

Անհատի դատամունքի բննադատությունները հետո Խորհրդային գրականության ներկայացուցիչները, այդ թվում եւ հայ գրողները, դիմեցին սիրելությանը: Սիրվա Կապուտիկյանը 1955թ. «Խորհրդահայ գրականության ներկա վիճակը» գեկուցման մեջ ջերմ խոսի ասաց 1954-1955 թվականներին հրատարակված երկերի մասին: Անվանի բանասեղծուիկն ընդգծել է. «Այդ ժամանակաշրջանում խորհրդահայ դուեզիայի բնորուց երեւույթներից մեկն այն է, որ այստեղ իր արժանի տեղն է գրավել անձնական եւ մանավանդ սիրային լիրիկան»<sup>32</sup>:

<sup>32</sup> «Գրական թերթ», 1955թ., N 25:

Սակայն, ցավով, կարծրատիպը դեռևս զգացնել էր տախիս իրեն: Սիրային բնարեցության հերոսի շուրջ բռնկված քանավեճը շիկանում էր: Հնչում էին սիրո թեման թերազնահասող ելույթներ: Գրականագետ Վազգեն Մնացականյանը հենց Ս. Կաղութիկյանի «Մրտաք զրույց» գրքի «Սիրո խոսքերից» շարքի մասին գրեց. «Նման հերոսը չի կարող ներկայացնել մեր դարաւորանի երիտասարդ մարդու հոգեւոր գեղեցկությունը...»<sup>33</sup>:

Ավելի հեռուս գնաց գրականագետ Սողոմոն Սողոմոնյանը: Նա «Խորհրդահայ դրեզիայի մի ժամի հարցեր» հոդվածում բննադատեց Ս. Կաղութիկյանի եւ Գ. Էմինի սիրային քանասեղծությունները, նշելով. «Սիրային երգերը լուսվում են հեղինակի անձի շուրջը, արտահայտում են նրա անհատական զգացմունքներն ու ապրումները»<sup>34</sup>:

Սիրո թեմայի արծարծմանն անդրադարձավ ու քանավեճին մասնակցեց Պ. Սեւակը: 1954-ին սղագրվել էր նրա «Սիրո ճանապարհ» ժողովածուն: Աղա յուրաքանչյուր նոր գրքում զետեղվել էին նրա դուեմներն ու շարֆերը՝ սիրո թեմայով: Ժամանակի գրական խմորումներում նա հաստատեց սիրո թեմայի անհրաժեշտությունը՝ բայց ոչ ճակատային, այլ ժամանակակից մարդու նուրբ ու հարուստ ներաշխարհի քացահայտմամբ: Նրա սիրապատումը հասարակական մեծ հնչեղություն ունեցավ եւ առաջ բերեց քանավեճ: Այդ նշանակում էր, որ անձնական կյանքի խնդիրները հասարակական մեծ կարեւորություն ունեն, որ սերը կյանք է, կյանքը՝ սեր: Մեծն քանասեղծը «Երգ երգոցով» փառաբանեց սերը, որդես հոգու եւ մարմնի միասնություն ու գեղեցկություն: Սիրապատումը սեւակյան դրեզիայում փայլատակեց նաև «Նույն հասցենով», «Նորից չեն սիրում, սիրում են կրկին» շարֆերով:

<sup>33</sup> «Գրական թերթ», 1955թ., N 28:

<sup>34</sup> «Սովորական գրականություն», 1957թ., N 6, էջ 110:

Սիրո լեզենդների ու քաղաքների շարքեր հյուսեց Հ. Շիրազը, ստեղծելով կենսական մքնոլորտ, դասկերելով մարդկային իրական հարաբերություններն ու կենցաղային վիճակը, սիրո բոլոր հոգեվիճակները:

Սիրեգության զարգացման ընթացքին իր նողասը բերեց Հ. Սահյանը՝ բնադպատճեական բնարեցության նրանուր հյուսվածքներով: Նա դուզիա բերեց սիրեցության սահյանական դասկերներ՝ հաստատելով բնարական հերոսի հոգու հարսությունը: Նրա սիրային երգերում մարդն է՝ իր տագնապներով, հղարժությամբ, կենսափրությամբ:

Սիրային բնարեցությունը հարսացրին Ս. Կապուտիկյանը, Մ. Մարգարյանը, Մետաքսեն: Նրանց բնարական հերոսը, հաղթահարելով կյանի դարսադրած հոգսն ու ցավը, ամենաբարդ խաչմերուկներում բայլում է հղարտ, հավատարիմ իր սիրուն ու երկրին: Հայոց սիրեցության թարմացման ու հարսացման ասդարույլում իրենց ինքնաշխատ խոսքն ասացին Վ. Դավթյանը, Գ. Էմինը, Հ. Հովհաննիսյանը:

Այսպես, ինչպես նկատել է գրականագետ Դ. Գասպարյանը. «Սիրո բնարեցությունը ինքնարտահայտման լայն ու բազմակողմանի հնարավորություններ բացահայտեց ժամանակի դուզիայում: Գեղարվեստական արժեքի հասած սիրեցությունը մի տեսակ մարդկայնացրեց բաղադրական շերտի տակ կփած բանարվեսը»<sup>35</sup>:

Սիրո բեմայի արծարծումն իր հունի մեջ մտավ նաև ժամանակակից արձակում: 1954 -1970-ական թվականներին հայ գրականության ստեղծագործական վերելիք նկատելի մի մասը սիրո թեմային նվիրված արձակ երկերն են:

Ժամանակակից կյանի դասկերման եւ ժամանակակակից մարդու կերպարի ստեղծման հարցադրումները լայնորեն բննարկեցին գրական ասուլիսներում եւ հիմնականում ե-

<sup>35</sup> Գասպարյան Դ., Պոեզիան եւ կյանքի ծշմարտությունը, Երևան, «Լույս» իրատարկչություն, 1990թ., էջ 269:

կան մի եզրակացության, որ իրական կյանքում բաղադացու բոլոր ապրումները փոխկաղակցված են, այդ տեսադաշտում նաև սիրո աստվածանվեր զգացումը, առանց որի չի կարող լինել երջանկություն, ընտանիք, դայլար, հաղթանակ, հավերժի հասկացություն ու ընկալում:

Կարենոր այս խնդրի լուծմանը մասնակցեցին Ժամանակի նշանավոր գրողները՝ Հրանտ Մաթեոսյանը, Վարդգես Պետրոսյանը, Պետք Զեյթոնցյանը, Գևորգ Արշակյանը, Մուսեղ Գալույյանը, Չորայր Խալավիյանը, այնուհետև Լեւոն Խեչոյյանը, Մերուժան Տեր-Գովանյանը եւ ուրիշներ:

Չնայած Հայաստանի հետ գրական տիումների սույն հնարավորություններին, գրական այս տեղաւարժը նկատելի դարձավ նաև Արցախում: Այդ ուղղությամբ իրենց նղասը քերեցին արձակագիրներ Սարգս Աբրահամյանը, Իսահակ Ալավերդյանը, Բագրատ Ուլուքաբյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը:

Հայ արձակում այս զարդների կիզակետում Հրանտ Մաթեոսյանն էր, որն արդեն դարգել էր գրողի իր կոչումը եւ ընդգծել. «Գրականությունը մարդկության կարուն է կյանքին: ... Գրականությունը աշխարհի ազնվանալու ու տառապալից ճիզն է: Դա գրականության կոչումն է ի ծնե»<sup>36</sup>:

Եվ աշխարհի ազնվանալու տառապալից ճիզն նա ընթերցողի սեղանին դրեց իր անմահ երկերը, որոնց մեջ չեր տրանցվում սիրո թեման: Նման գրենից է «Օգոստոս»: «Օգոստոս» դասմվածքով Հր. Մաթեոսյանը բացում է մի ճանապարհ, որով անցնում են նաև այն գրողները, ովքեր դիմու սովորեին նրանից: Այդ սովորողներից էր Մաքսիմ Հովհաննիսյանը, որի համար Հր. Մաթեոսյանը նորահայս վարդես էր՝ նորագույն տրանսի հայ գրականության դասմության մեջ:

<sup>36</sup> Մաթեոսյան Յո., Սպիտակ թղթի առջեւ, Գրական թերթ, հոկտեմբերի 14, 1966թ.:

Սիրո թեման, ըստ Էռիքյան, արծարծվեց նաև Վարդգես Պետրոսյանի ստեղծագործություններում:

նրանց հոգեբանության, զգայական աշխարհի, կենսապայմանների, երազանքների եւ վարժագծերի բացահայտումն է: Այստեղ հատկանիւ կան բարդացական եւ հոգեբանական, սոցիալ-հասարակական խնդիրների ընդհանրացումները:

Հողի լեզուն սերտած, սար ու ձորի օրենքներով աղրող մարդկանց, նրանց կենսակերպի, հոգեբանության, եւրին ու արտաքին ընդզումների մասին է «Հարեւաններ» դասմվածքը: Այստեղ առկա գրեթե բոլոր խնդիրներն առաջ են գալիս այն ամենի դասճառով, որ մարդիկ «լուն ուղս են դարձնում, քեննում ալյորին»: Այլորն էլ սվյալ դեմքում Սիմոնն է, ում հոգին ուսում են զյուղի մի քանի Արել՝ աշխարհի եղած-չեղածը վերագրելով նրան, ինչի դասճառով էլ նա ուզում է քողնել զյուղն ու զնալ. «Գնա՞ ո՞ւ զնա հարյուր սարվա զյուղացի մարդը. տուն-տեղ ունի, կին-երեխա: Լավ բանջարանց ունի: Ուեհան է աճում՝ իւնց տանես ցուցահանդես: Մարդը կով է դահում, խոզ է դահում: Էտ ունի: Խելով է, բայց Արել չի, խորամանկ չի ու դավաճան չի»<sup>83</sup>, - ընդգծում է հեղինակը:

«Հարեւաններ» դասումի հիմքում ընկած են հարեւանությամբ աղրող Արելի եւ Սիմոնի փոխհարաբերությունները: Ինչպես ժողովրդական իմաստությունն է ասում, «Մո՞ հարեւանը ամենահեռու քարեկամից լավ է»: Իրար հարեւանությամբ աղրող Սիմոնն ու Արելը միասին մեծացել, «փրերով աղ ու հաց կերել», անհրաժեշտության դեմքում իրար օգնել են, մի անմեղ կատակի համար ուզում են իրենց հարյուր սարվա աղն ու հացը ջուրը բափել: Սիմոնի ուրիշ տեղ նոր տուն կառուցելու եւ ավելի լավ հարեւաններ ունենալու որոշման մասին իմաստալով՝ Արելը խնդրելով, հորդորելով փորձում է համոզել, որ Սիմոնը հրաժարվի իր մասրությունից: Սիմոնի զնալու դասճառներից մեկն էլ այն է, որ Արելն իր Հերսիկ աղջկան Սիմոնի Վիտալիկ որդուն չի տալիս: Երեխաններին երջանիկ տեսնելու, ինչպես նաև լավ հարեւանին չկորցնելու

<sup>83</sup> [22. 347]:

ցանկությունը ստիլում է Սիմոնին ու Արելին փոխել իրենց որոշումները եւ զալ ընդհանուր համաձայնության: Արդյուն- ֆում հաղթանակում է տարիների հարեւանությունը, որն է՛լ ա- վելի է ամրապնդվում խնամի-բարեկամական կաղով:

Ինչու վերը նեցինք, Հարարը, գրողի համար դայնա- նական գեղարվեստական միջավայր լինելով, ամրողանում է ամեն մի դասմվածքի հետ՝ իր տարածքային առանձնահա- կություններով, հոււակորողներով, դեմքերի ու դեմքերի հա- գեցվածությամբ: Հարարում ապրող մարդկանց իրար կաղող հարեւանության, արյունակցական, խնամի-բարեկամական կաղն իր մեջ դարունակում է մի շարժ խնդիրներ, որոնք հնա- րավորություն են տալիս գրողին բացելու իր հերոսների հոգե- բանությունն ու կենսակերպը: Գյուղացի մարդու միամիտ ու դարգ կատակներն ու լուրջ-լուրջ ասված սրամիտ մսերն իրա- կանում ցույց են տալիս նրանց մարդկային կերպարի յուրա- հասկությունները:

Գյուղական դժվար առօրյայի, գյուղացու դարգ մսերի, հետարքիր համեմատությունների մի համանվագ է «*Գուշացա- վեր*» դասմվածքը: Այստեղ եւս շարունակվում է հնուտեցի- ների եւ հարացիների մրցակցությունը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու և վյալ տարածելու բնակիչներին միացնող եւ տարերակող հասկությունները: Պատմվածքի հե- րոսները ժամանակային ու տարածային որեւէ սահմանա- փակում չունեն: Երեկը, այսօր ու վաղը միախառնվելով՝ հե- րոսների հոգեվիճակների մեջ բացվում են նրանց կյանքի դո- ւերը՝ խաղաղաւու հանելով դայմանական ժամանակ ու տա- րածություն: Երկխոսությունների, ներքին մենախոսություն- ների, հեղինակի եւ հերոսների խոսքի միջոցով բացահայ- տվում են այուժեային որոշակի տարրեր: Մ. Հովհաննիայանը ձգտում է գտնել այն կարեւոր կետը, որը հնարավորություն է տա- լիս հասնել մարդկային հոգեբանական իրական նկարագ- րին: Նախորդ դասմվածքներում հիշատակված բրիգադիր Մեխակը այստեղ արդեն հանդես է գալիս գլխավոր հերոսի

դերում: Նրա ներքին ընդվզումներն ու ընդհանրացվող մսենքը բացահայտում են ոչ միայն իր կյանքի ու իր ընտանիքի անցուդարձը, այլ նաև նախազահի ու որոշ գյուղացիների կենսակերպն ու նրանց մարդկային կերպարը բնութագրող բնավորության որոշակի հասկանական գծեր: Սոցիալ-հասարակական տարբեր դիրքերում գտնվող մարդկանց հարաբերությունների եւ այդ փոխհարաբերություններից առաջացած բախումների ու հակասությունների հոլովոյթներում ընդգծվում են մարդկային հոգեբանությունն ու բնավորությունը: Նախազահը, չարաւահելով իր դաւանքը, յուրացնում է դեսության ու ժողովրդի ունեցվածքը: Մի բան, որ յուրահատուկ է գրեթե բոլոր հասարակական դիրք ունեցող մարդկանց: Պատմվածքը, սկսվելով Մարտիկի եւ նախազահի հանդիպումով եւ նրանց միջեւ տեղի ունեցած գրույցից, արդեն իսկ դարձ է դառնում թե՛ նախազահի, թե՛ Մարտիկի դիրքորոշումներն ու նրանց բնավորության որոշակի գծերը, որոնց միջոցով հնարավոր է դառնում եղրակացնել, թե ով՝ ով է: Մարտիկը ազնիվ եւ կայուն բնավորություն ունեցող երիտասարդ է, իսկ նախազահը շահանող է ու կաւառակեր: Հեղինակը Մարտիկի ներքին մենախոսության միջոցով ներկայացնում է նախազահի ամբողջական կերպարը բնութագրող որոշակի մանրանասներ: «*Հարս՝ r, Հարս՝ r*» շարքը, որ Տամարանական կադրով միանում ու ամբողջանում է նրանում զետեղված դասմվածքներով, իրականում բացահայտում է գյուղի եւ գյուղացու կյանքի բնական ընթացքը հոգեբանական ճիշտ ընդհանրացումների եւ համոզիչ մեկնարանությունների շնորհիվ: «*Գարուն է, գարուն չէ*» յուրօինակ վերնազիրը կրող դասմվածքը եւս բացահայտում է Հարար գյուղն ու նրանում ապրող մարդուն: Այսեղ էլ հանդիպում ենք նախորդ դասմվածքներից արդեն իսկ հայտնի դեմքերի, սակայն այլ գործողության մեջ, այլ ձեւաչափով: Նախորդ դասմվածքից մեզ ծանոք բրիգադիր Մեխմակն այսեղ եւս զլխավոր հերոսի դերում է: Հենց նրա ներքին մենախոսությունների, հիշողության,

մսերի, կարծիքների փոխանակման շնորհիվ է գրողը բացահայտում ոչ միայն իր զիսավոր հերոսի կենսադայմաններն ու հոգեբանական վիճակը, այլև բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են նրա դատկերած գյուղի ու այդ գյուղում ապրող մարդկանց առաջ ծառացած խնդիրների հետ։ Մեխակն ընդամենը մեկ-երկու օրվա դայմանականության մեջ վերհուսի միջոցով հայտնվում է տարբեր գոյատարածություններում, ժամանակային տարբեր ընդգրկումների մեջ։ Մեխակի կերպարի բացահայտումը շարունակվում է «*Law-կեծ*» դատմվածքում, որտեղ անգործ մնացած նախկին բրիգադիրը հասնում է այն օրին, որ բարհանքում որդես բար կտրող աշխատելու համար դիմում է Զոհրաբին, ուն նա ամեն հարցում օգնել, աջակցել էր։ Եվ ահա Զոհրաբի «հան ու չեն» իմանալու համար գնում է նրանց տուն, որտեղ Զոհրաբի հետ, սեղանի տուրք նսած, եղորի դատանով գործի մասին ոչինչ չի խոսում։ Հերոսների գրույցի, բաժականութիւն, ներքին մտումների ու վերհուսի միջոցով գրողը ներկայացնում է կյանքի ընթացքն ու այդ ընթացքը կերտող մարդկանց հակադիր բնավորություններն ու հոգեվիճակները։ Պատմվածքի կառուցվածքը փոքր է, սակայն մեծ է ասելիքը։ Նրա հերոսներն իրական մարդիկ են, իրենց անմիջական ու բնական դրսերումներով։ Մեխակի, նախազահի, Զոհրաբի, Իգնատի, նորանանակ բրիգադիր Շահենի կերպարների միջոցով Մասսիմ Հռվիաննիսայանն ընդգծում է այն կարեւոր իրողությունը, որ կյանքում, չարն ու բարին ապրելով կողք կողքի, կամա թե ակամա բախվում են իրար, ինչից էլ առաջանում են անդատասխան հարցեր ու հարցականներ։ Թերեւս նման մի իրավիճակում է հայտնվում Զոհրաբը, ով Մեխակի հետ քեֆ անելուց եւ նախազահի մոտ մտնելուց հետո ընկնում է կասկածաների մեջ։ Զոհրաբի ներքին խոռվությունները, կասկածներն ու կակիծները հետաքրքիր ձեւով խմորվում են հետեւյալ ձեւաչափի մեջ։ «Զոհրաբ՝ Էքը կորցրած, գնաց բարհանք։ Մինչեւ բարհանք հասնելը մի երկու տեղ նստեց, մտածեց, ուզեց որ-

շել՝ ամենաշատ վտանգը ումի՞ց է զալիս՝ Մեխակի՞ց, քե՞զ Վանեսյանից։ Դուք իրաւ ուժեք, ուրիշներին կրակի մեջ զցեք, ես ձեր... Չորրաբ հայինյեց-քեց, որ քի հետ խոսքի կեղտու- սությունները քափի»<sup>84</sup>։ Գրողը հերոսի այս կասկածամտու- թյամբ ու մՏորումներով վերջակետում է դասմվածքը՝ եղա- կացությունը բողնելով ընթերցողին։ Պատմվածում քար- տացված խնդիրները թերեւ քարոյական եւ հոգերանական քնույթ են կրում, ինչի արդյունքում արտացոլվում են մարդկա- յին հակառակի բեւեռների եւ նրանց կյանքի նկատմամբ ունե- ցած վերաբերմունքի միջեւ եղած քախումները։ Հովհաննի- սյանի դասմվածաւերին բնորոշ ներքին կաղճ ու բովան- դակային ու կառուցվածքային ամբողջականությունն ընդ- գծված է նաև «Հարա՛ր, հարա՛ր» դասմվածաւրում։ Հարա- ր դայմանական գեղարվեստական միջավայր է, որը գրողի հայրենի գյուղի համայնապատճենն է, որտեղ հիշատակված ցանկացած դեմք, իրողություն, դատկեր, զգացողություն տո- ւափելության չափ իրական են ու ընդգծուն, ինչում էլ կայա- նում է Մաքսիմ Հովհաննիսյան-գրողի վարդետությունը։

---

<sup>84</sup> [22.406]:

### **1.3. Հայ մարդու խառնվածքն ու Հոգեբանությունը պատերազմական եւ հետպատերազմական տարիներին («Բաց դռներ», «Հոգնած երեկո», «Հեռացող երկրի կարոտը»)**

Մասսիմ Հովհաննիսյանի գրական ձեռքբերումների յուրահատուկ դրսեւրումների ելակետում նարդու հոգեւոր եւ ֆիզիկական գոյության մեջնենական դայլարի հաղթարշավն է, մարդու «ներսի ու դրսի» ընդգծած դասկերումն՝ անմիջական բացահայտումներով, համոզիչ ու հաստատու եղրահանգումներով, որոնց հեղինակը հասնում է հոգեբանական եւ փիլիսոփայական հիմնավոր դրույթների ընդհանրությամբ։ Ա. Քամյուն գտնում է, որ «ամենամեծ վիդասանները փիլիսոփա վիդասաններն են<sup>85</sup>։ Մ. Հովհաննիսյանի կերտած հերոսներն ինքնուրույն, գործունյա, ակտիվ, գաղափարական հայացքների նարդիկ են, անհատականություններ՝ անկախ իրենց գՏնվելու վայրից, հասարակական դիրքից, սոցիալական իրավիճակից, սեռից, սարիփից։ «Բաց դռներ», «Հոգնած երեկո» եւ մյուս ժողովածուները, Մ. Հովհաննիսյանի խոսնվանությամբ՝ իր տեսած ու զգացած կյանքի հասնութեն են, իր «խոկումների դժուղը»։ «Բաց դռներ» դասմվածաւրը յոք դատումից բաղկացած մի յուրիհնակ շարժ է, որտեղ մարդկային դարգ ու բարդ փոխհարաբերությունների, կյանքի հետ ու դժվար առաջադրանքների ամփոփագրում մարդը կարողանում է չաղավաղել սեփական նկարագիրը։ Այսեն գորդը չի մոռանում իր ազգային դասկանելության, հայի ու հայեցի մՏֆի անհրաժեշտ դայմանը։ Նրա հերոսներն արցախա-

<sup>85</sup> Քամյուն Ա., Փիլիսոփայությունը եւ վեպը, «Գրական թերթ», 1992 թ., N 1:

կան աշխարհի դեմքն ու դիմագիծն են կերտում իրենց առանձնահատուկ բնույթով ու հոգեկերտվածքով:

Հայ ավանդական ընտանիքի առանձնահատկություններն ու սովորություններն են իրենց ամենայն մանրամասնությամբ առերևափում շարժի հենց առաջին դատումում: «Անդրանիկ» դատմածքի համանուն հերոս Անդրանիկի ունեցածը ասծոն կողմից տրված «լեն սիրսն» ու շատ երեխաներն են, որոնց աշխարհ գալը Սոնա տափ կայացրած վճռի արդյունքն է. «Ասծոն բերքն է, ոտազալիքը բարի լինի»: Մ. Հովհաննիսյանը կողրիտային դատկերներ ու կերպարներ ստեղծելու նղատակով դիմում է ոչ միայն գրական-գեղարվեստական դատկերավորություններին, այլ նաև բարբառային յուրահատկություններին: Պարզ, հետաքրիր շարադրանիքի հետ նա մեկտեղում է ազգային սովորություններն ու կարենու իրողությունների բարդ համարությունները՝ համեմելով հումորային նրաբություններով: Պատմվածքում առավել շուշափելի է հեղինակային խոսքը, որի միջոցով դարձարանվում են բացահայտվում են հերոսների կենսակերպն ու հոգեվիճակները: Սոցիալական ծանր դայմաններում գոյալայքարի դուրս եկած իրենց դարզությամբ, մարդկային բարձր որակներով, աշխատասպահությամբ, անտրունջ ու անսղառ հավատով, Անդրանիկը, մոր՝ Սոնայի եւ կնոջ՝ Երանի օգնությամբ ու աջակցությամբ, դահում ու մեծացնում է երեխաններին: Սոցիալական ծանր դայմանների դժվարության մեջ անզամ գրողը նրանկատուեն ընդգծում է հերոսների սիրառաս ու գեղեցիկ ներաշխարհը, որի շնորհիվ էլ, թերեւս, նրանի կարողանում են դիմանալ, հաղթահարել, հուսալ եւ սպասել լավ աղրելուն, քեզ անելու ժամանակների լուսավոր երազանքը իրական ժամանելու վաղվան: Գեղեցիկ զգացմունքների աշխույժ մի դատկեր է մորն ուղղած՝ որդու հուսադրումն ու գուրգուրանքը. «Դժվարն էսօր է, մեկ էլ էգուց, հետ քեզ է լինելու,- ասում է Անդրանիկը եւ սիրս տալիս նվազացող Երանին: Թե որ Սոնա տարը ուզում է զանգատվել մի սեղից, Անդրանիկը մորը ծփ

ուս թոցնում է վեր ու մի երկու անգամ բուլղի անում, հետո նաև նույնում աքոռին ու հրամայում:- Խոխոցը դիմի մինչեւ մեռնելու դահես»<sup>86</sup>: Հեղինակը, նկարագրելով բազմազավակ ընտանիքի կենսակերպը, մայր-որդի, կեսուր-հարս, կինամուսին փոխհարաբերություններում ցույց է տալիս հայ մարդու մոտեցումն ընտանիքի, ընտանեկան սպովությունների ու ավանդույթների արժեքային համակարգին: Հայ մարդու ազգային խառնվածքի եւ հոգեբանության, առավելադես նրա աշխատասիրության, հյուրասիրության, խելքի, իմաստության եւ այլ մարդկային դրսեւումներին տարբեր առիթներով շատ են անդրադարձել զիսության, մշակույթի հայ, ուս եւ այլազգի խուռը դեմքեր: Ուշագրավ է «Ժողովուրդների բնավորությունը» մարդաբանական բնութագրումների մեջ հայ ժողովրդի մասին Կանչի հետեւյալ ընդգծումը. «... Այդ խելացի եւ աշխատասեր ժողովուրդը չափում է այս ծեր աշխարհը հյուսիսից հարավ, արևելքից արեւմուտք եւ, որտեղ էլ որ նա լինում է, բոլորի մոտ կարողանում է գտնել սրաքաց ընդգծություն»<sup>87</sup>: Հովհաննիսյանը հայ ժողովրդի ազգային բնավորության ու հոգեբանության առանձնահատկությունների ընդհանրացման մեջ «մարդու ազգային» բնավորություն ու հոգեբանություն ունեցող հերոսներ ստեղծելու նորատակ բնավ չի հետապնդում: Նմանօրինակ ընդգծումների ու ընդհանրացումների միջոցով արձակագիրը մարդուն բացում է տարբեր հոլովույթներում: Ազգային, սոցիալական եւ իրավիճակային հոգեբանության առանձնահատկությունների բացարձության ժողովիկ գրողը բացահայտում է իր գրական հերոսի ներաշխարհի ընդհանրական նկարագիրը: «Անդրանիկ» դասմվածքում օրինակելի են ոչ միայն հերոսների փոխհարաբերությունները, այլև հենց իրենից հերոսները: Ուսանելի

<sup>86</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Առաջին հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուն, 2005 թ., էջ 226:

<sup>87</sup> Խովիչ Լ., հՏո. բՏի., ԶՏՎ 2, ԾՏՐԱՋՌ, 1967 չ., բՅՐՈՎՈՓՈ 573.

Կերպարներ են Անդրանիկը, Սոնան, Երանը, Մեխակն ու Շուշանը: Ինֆնատիո կերպար է Սոնա տարը: Նա, իր բռնած ճիշտ դիրքորոշման ժնորհիվ, կարողանում է լինել հարգված ու սիրված նայր, հասկացող սկեսուր, համբերատար տաշիկ, աղահովում է իր ընտանիքի խաղաղությունն ու համերաշխությունը՝ իր դահլիճով արժենորելով տան մեջի իր կարգավիճակը: Գրողի ընկալումների դիմակետում նաև ազգային առանձնահատկությունների արտացոլումն է: Սակայն, ամեն ինչից զատ, հեղինակի նոյատակն իրականության յուրովի դիմարկումն ու մեկնարանումն է: Նրա ուսադրության կենտրոնում են ինի ու նորի, ավանդականի ու ժամանակակցի համադրության, դրական ու բացասական ազդեցությունների հետևանքներն ու արդյունքները: «Անքառամ» դասմվածքի հիմքում ընկած է ազգային սովորությունների, ավանդույթների խախտման ժխուր իրողությունը: Անուշավանը, ամուսնալով Սեղա Փառավոնովնայի հետ, որին բակում Անքառամ են կնիքը, «իրեն էլ կրակը զցեց, բաղի ժողովրդին էլ»: Ամեն or «ծեփծեփուն ու անկասելի» Սեղա Փառավոնովնայի աշխատանքի գնալն ու զալը բակի բնակիչների համար մի յուրօնակ արարողության է վերածվում: Իսկ Հովհաննիսյան գրողի գրչի տակ այդ արարողությունը սինթեզվում է մարդկային բնավորությունների, վարք ու բարքի ընդգծման հետ: Գրողի ասելիքը, թերեւս, կայանում է այն կարեւոր ճշմարտության մեջ, որ յուրաքանչյուր մարդ դեմք է ունենա բարոյական որոշակի սկզբունքներ: Մարդկային տարբեր ճակատագրերի, բնավորության տարբեր գծերի, տարբեր հոգեվիճակների անդրադարձի մեջ գրողի ուսումնասիրության առարկան էլի մնում է մարդը:

«Անքառամ» դասումի մեջ հիշատակված Ելենին հանդիպում ենք հաջորդ «Անմարդ կին» վերնազիրը կրող դասմվածքում: Այստեղ եւս հարեւանների գրույցների միջոցով դարգարանվում են իրողություններ, երեւոյթներ, բացահայտվում դեմքեր ու դեմքեր, որոնց կյանքի մանրամասները, նրանցում

առկա վերելքներն ու վայրէջքներն իրենց ուրույն դասկերներով ընդգծվում են հաճաղատասխան ձևաչափով: Պատմվածքում գործող անձանց՝ հարեւանների մսերի ու կարծիքների ընդհանրության մեջ բացահայտվում են նաև իրենց իսկ կյանքի ու կենսագրության որու մարմանանություններ, որոնք ել ավելի ամրողական են դառնում դասմվածաւարի հաջորդ գործերում: Կյանքի բազմաւերս սարածքների դրներն են բացվում «Ասղարափ» դասմվածքի հերոսների առաջ: Պատմվածքի հիմքում ընկած է գոյի մշտնական դայբարը: Կյանքի եւ մահվան սահմանագծում հայտնված Օսեփ աղայի կերպարի միջոցով գրողն արժենորում է ազգային իին սովորութներն ու ավանդութները: Տան մեծի ներկայության ադահովվածությունն ու նրա բացակայությունից առաջացած անդաւումանությունը երեսում են Օսեփ աղայի, Անահիտ հարսի եւ Ավետիք քոռան աղրումներում, ինչն առավել տուափելի է երեսում հատկապես ճակատագրական դժվար դահերին: Օսեփ աղայի լավ չլինելու մասին լսելով՝ թե՛ հարազաները, թե՛ հարեւանները լուրջ չեն ընդունում՝ մտածելով. «Ո՞վ չի հիվանդանում, մեծն էլ է հիվանդանում, փոքրն էլ է հիվանդանում, մարդ դեմք է հիվանդանա, որ հետո լավանա...»<sup>88</sup>: Սակայն հիվանդությունն Օսեփին այնքան արագ եւ այնպիսի դաժանությամբ է փոխում, որ հարեւան Մեխակն, այցելելով նրան, ցափով արձանագրում է՝ «Ժամանակի մերը չմեռնի՛ իրենը առանց հարցնելու է առնում»: Եվ հիշելով, որ ընդամենը մեկ տարի էր անցել այն օրից, երբ ինքը, Անդրանիկն ու Օսեփը գնացել էին կրմիզուկի, եւ հիացել ութունայա Օսեփի դահվածքից ու կեցվածքից: «Ո՞նց էր զարդարելունով գնում, կարծես ութուն տարեկանը Մեխակն էր, Օսեփը չէր»<sup>89</sup>: Հարսի եւ երկու քոռան խնամքը, հարեւանների հոգա-

<sup>88</sup> Յովիաննիսյան Մ., Երկեր, Առաջին հասոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2005թ., էջ 257:

<sup>89</sup> [22. 259]:

տարությունն ու նրանց հաճախակի այցելությունները, կարծես դեղի լավն էին տանում անկողին ընկած Օսեփ աղային: Սակայն լուսաղեմին, երբ Անդրանիկը ծեծեց Մեխակի դուռը, այլևս Օսեփ աղան չկար: Օսեփի մահից հետո քոռն ու հարսը մենակ ու անղաւաղան մնացին՝ զգալով իրենց որք ու անմեր: Մարդ-անիափի հոգեբանական յուրօշինակ դրսւուրում է հետեւյալ հատվածը. «Մայրը նայեց որդուն, որդին մորը նայեց, իսկ զուզալ արցունիները կախվեցին երեխայի թարթիչներից: Երկուսն էլ այդ րողեին իրենց որք էին զգում: Միայն հիմա զգացին, որ Օսեփ աղան չկա ու այլևս չի լինելու: Այդ միտքը նրանց անարդար դաժան թվաց»<sup>90</sup>: Օսեփի կյանքի դասմության անմիջական ու ակտիվ մասնակիցներն են հարեւանները, որոնք աչքի են ընկնում հարեւանի հանդեպ իրենց սրացավորյամբ ու հոգատարությամբ:

Կյանքի ու մահվան սահմանագծում հայտնված մարդու հոգու սկայատեսների, վերելքների ու վայրէցների յուրօշինակ մի դասկերասրահ է «Անդրեաս» դասմվածքը: Անդրեասը, անկողին ընկնելով, իհուղության օգնությամբ վերադառնում է անցյալ՝ յուրովի արժեւորելով նրանում կատարված դեմքներն ու իրադարձությունները: Գրողը հերոսի ներքին մենախոսության միջոցով ներկայացնում է նրա հոգեբանությունն ու ներաշխարհը՝ բացահայտելով իր կերտած դասմության եւ այդ դասմության ուրույն դերն ու նշանակությունն ունեցող անձանց, նրանց կյանքն ու կենսակերպը բնութագրող մանրանասներ: Սովորական թվացող իրողությունների ու իրադարձությունների վերհուտի դասկերասրահում գործող անձիք՝ Անահիտը, Վարւամը, Կամոն, Անուշավանը, Վահրամը եւ ուրիշներ, Անդրեասի զլխավորությամբ ու անմիջական մասնակցությամբ, երեւում են իրենց իրական ու շուշափելի կյանքամասկերներով: Անդրեասի իհուղության, ներքին մենախոսության միջոցով երեւան են հանվում իր եւ իր որդիների,

<sup>90</sup> [22. 267]:

հարսերի ու քոռների բնավորության դրական ու բացասական գծերը: Նա, ականատեսի դիտողականությամբ հետեւելով իր որդիների ու նրանց լնաւանիքների անցուղարձին, խոս ու զրոյցին, համեմատության սանդղակի տակ է դնում երեք որդիների եւ նրանց կանանց վարքն ու բարքը՝ ընդգծելով նաև նրանց ֆիզիկական թերություններն ու առանձնահասկությունները: Միբիրի անտառներում ավտովրարի ենթարկված միջնեկ որդու ֆիզիկական եւ հոգեւոր առավիճությունների ընդգծմամբ հայրը նախաղատվությունը տալիս է նրան՝ հենց նրա մեջ տեսնելով իր գենի շարունակությունը: Ըստ Անդրեասի՝ հենց նա է, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին առանձնահասկություններով արժանի է իր ազգի տղամարդկանց հետնորդը կոչվելուն: Հերոսի բնավորության եւ հոգերանության առանձնական ընդունելու յուրօրինակ մի փորձ է՝ նրա իսկ հոգու ընդգույններից ծնված տողերով դարուրված հատվածը, որտեղ հայրը, որդու հանդեպ տածած անմնացորդ սիրու ու նվիրումի դաշտառով, հակասական մտքեր ու կարծիքներ է ունենում, ինչի մեջ մեղադրում է որդուն՝ չափից դուրս լավը լինելու համար:

Անկասկած, «Անդրեաս» դասմվածքը կարելի է դասել Ա. Բակունիցի «Միրհավ», Հր. Մաքենույանի «Ալխո» դասմվածքների շարքում:

Աչսարիի անարդարությունների, մարդու արժենորումների եւ արժեգրկումների մասին է «Օգոստոս, շոգ» դասմվածքը, որով ավարտվում եւ ամփոփվում է «Բաց դոներ» դասմվածաշարը: Ինչպես եւ շարքի նախորդ դասմվածքները, այս դասմվածքը եւս հետև քաջացող, սակայն իրականում դժվար կյանքով աղրող նարդկանց, նրանց առօրյայի, հոգերանության մասին է՝ համեմված ժողովրդական իմաստություններով ու հետարքիր համեմատություններով: Արդեն իսկ ծանոթ հերոսները, որ մինչ այդ ակնարկվել կամ բացահայտվել են ամբողջությամբ, այստեղ եւս բացում են իրենց հոգու դրները՝ արդեն այլ գործողության մեջ, այլ ձեւաչափով: Պատմվածքում հանդես եկող Ա-

ղավենը, Օսեփը, Սիմոնը, Հակոբը, Ելենն ու Սահակը, աղ-րելով իրար հարեւանությամբ, լավատեղյակ են իրար հետ կա-սարված բոլոր իրադարձություններին: Նրանցից յուրաքան-չյուրն իր անձնական ցավն ունի, իր ժշտություններն ու կարու-ները, իր սղասումներն ու հիասքափուրյունները: Արտաքին ու ներքին աշխարհները եւ դրանց իրական ու երեւակայական, տարածույթ ու հակասական դրսւուրումները նրանցից յուրա-քանչյուրի կյանքում գոյություն ունեցող իրողություններ են, ո-րոնք երեմն օգնում, երեմն էլ վճառում են թե՝ իրենց, թե՝ ու-րիշներին: Յուրաքնչյուրն ունի ճշմարտության իր տարերակը, որն էլ մարդուն չի բողոքում օրյեկտիվ զնահատել իրեն ու երե-ւույրները: Սակայն ամեն ինչին դիմացող ու տեղն եկած դեղ-ֆում՝ ամեն ինչ ներող, մոռացող մարդ արարածի կյանքում ծագած ցանկացած խնդիր, վեծ ու անհաջորդյուն հարք-վում է ժամանակի ընթացքում: Իր հերոսների արտաքին եւ ներ-քին բնութագրումներում գրողը բացահայտում է բնավորու-թյուններ, ճակատագրեր: Ներկայացնելով Աղավենի տան տա-նիքի բարութանդ վիճակը եւ այդ ամենի շուրջ նրա ու նր-դու՝ Արմենի անտարերությունը՝ գրողը դիմում է իրադարակա-խոսական ժանրին՝ ֆելիետոնին հատուկ բննադարական, եր-գիծական նրբերանգներին: Փլման եզրին զժնվող տանիքի կա-ռոցներից Աղավենի տան դատերը դատնում են «Վարչական բարեկանություն», եւ դա բնավ չի անհանգուստացնում նրան: Այն վերա-նորոգելու փոխարեն Աղավենը շատ ուղարկում է բակ՝ դոմինո խա-ղալու. «...հիմա դոմինոյի հերթը Աղավենին է եւ տանիքն էլ աշնանն է կարելու»<sup>91</sup>: Արմեն որդին էլ «քրենու ճղներով բարձրանում է հենց նրա ուժերի տակ շատարար դառած տանի-քը եւ այնտեղից աղավենի քոցնում,- անտերները ոնց էլ լավ են ճախրում...»<sup>92</sup>: Նոյն փողոցի մեջ այլ բնակիչ Հակոբն էլ, գունավոր ակնոցները դրած, Երեւանի դասախոս որդու ու-

<sup>91</sup> [22. 290]:

<sup>92</sup> [22. 290]

դարկած ձեռնափայտը ձեռքին, զնում է հայրենական դասերազմի մասնակիցների համար բացած խանութը՝ մթերաքաղին ստանալու համար, որից անգամ Անդրեասը չի օգտվում, իսկ Հակոբը օգտվում է, «թե ե՞ր է արդարություն եղել»:

«Անմարդ Եղենը» դասմվածքից արդեն իսկ հայսնի ինքնաշխատ Ելենը այստեղ եւս բացահայտում է իրեն՝ բացելով իր կյանքի ու հոգու հերքական դրսերը: Այս անգամ այլ գործողության մեջ, այլ ձեւաչափով, նա ավելացնում է եւս մի տերիս, որով ընդգծում է իր եւ ամուսնու՝ Սահակի փոխսհարաբերությունը, որից դարձ է դառնում, որ Վերջինս հեռացել է ոչ միայն կնոջից, այլև՝ Երեխաներից, որնց մերկությունը ծածկելու, նրանց գոնե օրվա հացով աղահովելու համար Ելենը բունուհաճզիս չունի, գիշեր-ցերեկ աշխատում է, մեն-մենակ տանջվում, տառաղում: Եվ, երբ «դուճուրի գրողը չի կտրվում՝ նոր զգեստ է ուզում», Ելենի հոգում կուտակված բողոքն ու դժգոհությունը դուրս է ժայթում. «Չո՞ս ու ցավ ֆեզ, գրողը մի դիր, իմաս որ վեր եմ կացել, է՝, ու իր փորձ է անում, որ կարի մեթենայի տակից ելնի, բայց դրա համար ժամանակ չունի, - ջահերությունը, կյանքն ասեղի ծակով անց է կացել, իսկ դակաս բառն էլ իրենց համար են ստեղծել, որ Մեխակի կինը տարեւը իրենցից, օրական մի զգեստ է փոխում, մի վերակուն մի սեղոն է հագնում, կառուցում են, կառուցում, բայց աշքներին կըսանալ չկա...»<sup>93</sup>: «Երոսուհու հոգու ընդզգումների միջոցով գրողը բացահայտում է նաև այլ մարդկանց կյանքն ու կենսակերպը՝ շեշտը դնելով սոցիալական անհավասարության մշտառկա խնդրի վրա: Սակայն հեղինակը, օրինակ բերելով մեկ այլ հերոսի՝ Սիմոնի կյանքն ու կենսագրությունը, ընդգծում է. «Ո՞վ է ում դարդ իմանում, մարդու դուրսը ուրիշն է վառում, ներսը՝ իրեն»<sup>94</sup>: Ֆինքածնի տեսուչ՝ «մեջքը կուցած, ժիքը վերքածելու անդիտան սովորություն»

<sup>93</sup> [22. 293]:

<sup>94</sup> [22. 293]:

ունեցող Սիմոնը, քուակի անցնելով, «ուզենալով-չուզենալով, ամաչելով-արհամարհելով ախտերացեղ Հայկազի հետ զնաց սեղոն, իր վրա ամխաը հազար ոռորիլի գրել սվեց եւ օրենքով, խաչ ու ղատարազով՝ երկու տարվա միջինով հաշված, հարյուր ժամի վրա քուակի անցավ»<sup>95</sup>: Եվ երբ ձեռքը փող ընկապ, այգու ծերացած ծառերից ազատվեց, ծաղկանց սարքեց ու ծաղկից սկսեց լավ եկամուտ ստանալ: Սակայն հիմա, երբ արդեն լավ է վաստակում եւ փողի կարիք չունի, իրեն երջանիկ չի զգում, «մի աչքում ծիծառ է, մյուսում՝ արտասուն, միայն արտասունքը թագցնում է ընկեր-հարեւանից»<sup>96</sup>: Խմիչքից բուժելու համար Սիմոնը մեծ տղային տարվա Մոսկվա՝ հուսալով, որ այնտեղ կրուժվի: Իսկ, երբ ինացավ որդու հիվանդանոցից հեռանալու լուրը, այլեւս չգիտե՞ր՝ որտեղ փնտեր նրան: Բոնի ու ձեռքը քափ տա, անարժան զավակը ո՞ւմ է դեսք»<sup>97</sup>: Գրողը, ներկայացնելով եւ համեմատության մեջ դնելով հերոսների սոցիալ-հոգեբանական իրավիճակը, բերեւս հերթական անգամ հաստատում է այն ճշմարտությունը, որ, անկախ տարիքից ու սեռից, անկախ հասարակական դիրքից ու սոցիալական կարգավիճակից, ամեն մեկի կյանքում էլ մի դժբախտություն կա, մի ժխուր ղատնություն: Ինչդես հայ մեծ քանասեղծ Հովհաննես Շիրազն է ցավին դիմանալու մարդու առանձնահատկութանն անդրադարձել, այնուևս էլ Մ. Հովհաննիսյանն է իր իիացմունքն ու համակրանքն արտահայտում մարդ արարածի ցավին դիմանալու ունակության վերաբերյալ. «...էս ի՞նչ նյութից է Աստված մարդուն սարթել, որ դիմանում է, տեղը եկավ՝ ծիծառում, բեփ է անում, ուժը ղատածը անում է ընկեր-հարեւանի համար, դեսք եղավ՝ իրենից կտրում, տալիս է ուրիշի, որ ուրիշն էլ ունենա: Բա, կյանք է... եւ ողք օգոստոսյան երեկո...»<sup>98</sup>: Այս խորհուրդով է ավարտվում «Բաց դռներ» ղատմ-

<sup>95</sup> [22. 294]:

<sup>96</sup> [22. 295]:

<sup>97</sup> [22. 295]:

<sup>98</sup> [22. 296]:

վածաւարի վերջին դասմվածքը, որն իր բովանդակային առումով կարելի է ընկալել որպես վերջարան, որպես շարֆի հերոսների կյանքի ու կենսագրության ամփոփում։ Նրանցից յուրաքանչյուրն, անկախ իրենց ֆիզիկական ներկայության ու անվան հիշատակման, աղբեկալ իրար հարեւանությամբ, կամա թե ակամա մտերնանում, բարեկամանում, մի ընտանիք են դառնում, որտեղ վեճ ու կոխվ էլ է լինում, բեֆ-ուրախություն էլ։ «Բաց դռներ» շարֆի յուրաքանչյուր գործ առանձին վեցրած մի ամբողջական ստեղծագործություն է՝ իր կառուցվածքով, ձևով ու բովանդակությամբ։ Իսկ ընդհանրության մեջ նրանից մի ամբողջություն են, մի ամբողջական դասմություն՝ միեւնույն բակում աղբող նարդկանց անցյալի, ներկայի ու աղագայի մասին։ Այն նարդկային հոգու, նրա կենսակերպի ու բնավորության բացահայտման յուրօհնակ մի փորձ է, որի հաջողությունը գրողի՝ Վարդեսնրեն կերտած կերպարների, իրական ու տուափելի դասկերների ու դասմությունների, առողջ տրամաբանության, գրավիչ շարադրանիքի, հյութեղ բառադաշտի՝ գրական եւ բարբառային ժեւսադրումներով, ինքնատիպ հանադրությունների ու հակադրությունների մեջ է։ Գրողը դասմություններ դասմելու, կուռ սյուժեներ ստեղծելու խնդիր իր առջեւ չի դնում։ Նրա նորատակն իրականության յուրօհնակ նաև նաև մատուցման միջոցով նարդկային հոգու, նրա կյանքի, էության ու բնավորության դրեւը բացելն ու մարդուն ներս ու դրսից ցույց տալն է՝ հայ մարդու, ազգային մասնակերպի դարգորությունը ընդգծմամբ։ Թերեւս գրական կերպարի հոգեբանական կառույցի ամբողջականությունը դայմանավորված է առանձնադեպան այդ կերպարի ազգային բնավորության եւ հոգեբանության յուրահատկություններով։ «Գրական կերպարի բնավորությունը որուակիորեն դայմանավորված է նրա՝ ինչ-դես սոցիալական, այնպես էլ ազգային հոգեբանության

<sup>99</sup> Бочаров С., Характеры и обстоятельства //Теория литературы, Основные проблемы в историческом освещении: Образ, Метод, Характер, Москва, Издательство АН СССР, 1962 г., страница 313.

հետ»<sup>99</sup>, - նույն է գրականագետ Ս. Բոչարովը:

2010 թ. լույս տեսած «Հոգևոր երեխո» գիրքն աչքի է ընկնում նյութի արդիականությամբ և թեմատիկ բազմազանությամբ: Նրանում զետեղված վիղակներն ու դասմվածքները նորովի են ներկայացնում արցախցու անցյալի և ներկա կենսակերպի բարդ հարաբերակցման իրողությունները: Այսեղ եւս հեղինակի նորատակը՝ մարդու հոգեֆիզիկական դրսեւորումների միջոցով կյանքի ճիշտն ու սխալը բացահայտելն է՝ աշխարհում ինչ-որ բան փոխելու հավատով: Համադրելով անցյալն ու ներկան, իրականն ու երեւակայականը՝ գրողը ներկայացնում է ժամանակը, որտեղ հակադրվում են նյութն ու հոգին, ոչնահարվում մարդուն մարդ դահող կարեւորագույն արժեքները: Ժամանակային տարբեր ընդգրկումների հատույքում լավն ու վատը, ճիշտն ու սխալը խառնվում են իրար, եւ աշխարհը դատնում է խճանկար: Հովհաննիայանը, սինթեզելով հոգեբանական եւ երգիծական սկզբունքները, հանդես է գալիս ժամանակակից կյանքի բննադատությամբ: «Արմա» խորհրդանական վերնազիրը կրող վիղակում արձակագիրն անդրադառնում է կյանքի ուրախ ու սխուր դրսեւորումներին՝ բացահայտելով մարդկային հոգու գաղտնի դրները: Նրա հոգեբանական դիտարկումները յուրովի են մեկնաբանում իրադարձություններն ու երեւույթները: Հայ նորօրյա կնոջ իրական ու ռուսական դասկերը ներկայացնելով՝ գրողն իր ընդգծումներում ու ընդհանրացումներում առանձնադես անդրադառնում է հայ եւ, ընդհանրադես, կնոջ ֆենոմենալ կերպարին: Բնության մեջ քոյլ էակ համարվող կինն իրականում ուժի ու զորության խորհուրդն ունի իր մեջ, որն առավել ընդգրկում է երեւում գրողի կերտած Հեղուտի կերպարի մեջ: Հեղինակը կարեւորում է նաև հերոսուհու՝ զործունյա, ճարդիկ, ցջահայաց կնոջ դերը, ով աղադացվելով նոր ժամանակների բարեւիհն, առաջնորդվում է կյանքի խաղի կանոններով: Դարարադցի հայ կինը, մեն-մենակ հայտնվելով կյանքի հորձանուտում, կարողանում է հերոսաբար հաղթահարել քոյլոր խոչընդունե-

ըլ: Սեփական սխալների վրա սովորելով, սայթաբել-ընկնելով եւ համարձակորեն բարձրանալով՝ Հեղուը սերտում է կյանքի դասերը եւ բացահայտելով աշխարհն ու մարդուն՝ գտնում իրեն, իր սեփական ես-ի որակական տարածքը: Բնավորությամբ եւ վարժագծով Հեղուը փոքր-ինչ առանձնանում է հայ գրականության մեջ եղած կանանց կերպարներից: Թեեւ Հեղուի կերպարը նմանություններ ունի Հր. Մաքետայանի Աղունի («Աւեան արեւ») կերպարի հետ, սակայն տարբերությունները եւս ակնհայտ են: Հեղուը Աղունի զարգացած ժեսակն է, ինչը դայմանավորված է ժամանակաշրջանի բարոյական արժեքների նորօրյա ընկալումներով ու գնահատմամբ: Մ. Հովհաննիսյանի հերոսուհին, համար ու կամային անհատականություն լինելով, ձգտում է հասնել իր նոյատակին թեկուզ զոհողությունների գնով: Արժանավայել ու աղահով աղբելու անմար երազանքը կյանքի կոչելու համար Հեղուն անցնում է անվերջ թվացող տառաղանքների միջով՝ մեն-մենակ, առանց որեւէ մեկի աջակցության ու միջամտության: Նա իր հաստակամության, ուժեղ կամքի, աշխատասիրության եւ գործի մեջ հմտանալու ունակությամբ իր ուսերին էր առնում տան տղամարդու դարտականությունը: Իրական դեմքերի ու դեմքերի արձանագրմամբ գրողը ցույց է տալիս նաև դասերազմ ժեսած ժողովրդի կյանքի, կենսակերպի դժվար ընթացքը: Հայկազր, դասերազմի դաշտից վիրավոր վերադառնալով տուն, այլեւս չէր կարող ֆիզիկական ծանր աշխատանքով զրադիկել: Տան ամրող հոգսը՝ հաւմանդամ ամուսնու, երեւ երեխաների խնամքն ընկնում է Հեղուի կանացի նուրբ ուսերի վրա: Առեւտի կանոններին տիրապետելով, յուրացնելով առեւտրականի հոգերանությունը՝ նա միաժամանակ սերտում է կյանքի դաժան օրենքները: Կինը հասկանում է, որ քոք դատիվը դատապահնելու դատասով բանում հայտնված ուղուն՝ «ձախորդ ու սրացավ» Արդիկին, ազատելու համար դեմք է քծեկին, բուժքոջը, բննիշին եւ համադատասխան այլ մարդկանց ընորհակալական խոսք ասել՝ գումարի ժեստով: Եվ անկախ

այն հանգամանքից,որ նա ամեն անգամ համադատասխան ծրարը հանձնում էր հասցեատրոջը վստահ եւ անկաւկանդ, այնուամենայիշ տալու դաիին ներփին լարվածություն էր զգում, «կեսը հալվում էր», ինչը խոսում է նրա կերպարի ազնիվության ու առաֆինության մասին: Կյանի աղեկոծություններում հայտնված Հեղուը կարողանում է իրեն բաժին հասած կնոջ, մոր եւ հարսի դերերը հաճատեղել եւ հասնել ներփին ներդաշնակության: Շալիկոյի հետ սեղի ունեցած ամորթալի միջադեղը իրականում Հեղուի մեջ հակասական զգացողություններ է արթնացնում: Կորցնելով ամորթիածությունը, որը նրա վերջին դասվարն էր, վերագտնում է վաղուց արդեն կորցրած իր կանացիությունը: Հետարքիր է հեղինակի՝ կնոջ հոգեբանության ուրած արված հետևյալ դիտարկումը. «Հեղուը զգաց, որ իր համար այլեւս Շալիկոն գոյություն չունի: Կնոջ խոր զգացմուններից մեկն էլ հիասքափությունից ծնված արհամարհանն է տղամարդու նկատմամբ: Նա արհամարհեց. նույնիսկ չցանկացավ իմանալ՝ իր ենթադրությունը ճի՞շ է, թե՝ ոչ: Դա այլեւս կարեւոր չէ իր համար»<sup>100</sup>: Ուշագրավ է հարս-կեսուր փոխհարաբերությունը, որը բացահայտվում է ընդամենը մի բանի տողով, հեղինակային խոսքի հետևյալ ընդգծման մեջ. «Ակեսուրը հարսին գնահատում է: Հարսը տղամարդու սեղ էլ է աշխատում. կնիկա սեղ էլ»<sup>101</sup>: Պատմվածքում ընդգծված է հիւղության դերը: Հեղուը վերհուի միջոցով հայտնվում է սարածածանակային սարեր ընդգրկումների մեջ: Նա հիւղության օգնությանը բացահայտում է իր կյանի կարեւոր մանրամասներն՝ անցյալ-ներկա հատույքի եզրագծում: Հերոսուիկն, կերտելով ներկան, վերաբրում է անցյալը: Նրա ներկա կյանի ամեն մի դաիը, արթնացնելով անցյալի մի հույս, հասկանալի է դարձնում նրա արարքներն ու վարքա-

<sup>100</sup> Յովհաննիսյան Մ., Յոգնած երեկո, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2010 թ., էջ 33:

<sup>101</sup> [27. 24]:

զիծը: Հեղուսն իր խոսքի եւ վերհուսի միջոցով է ներկայացնում իր կյանքի դատմությունը, որտեղ լավագույն ձեւով արտացոլվում են նաև ժամանակաշրջանի մեծ ու փոփոք խնդիրները: Հեղուսի ամբողջ կյանքն աննահանջ մաքառում է գեղեցիկ ու արժանադաշիկ աղբեկու համար: Ընտանիքի աղահովածությունը, երեխաների կրթությունը եւ նի շարֆ այլ ձեռքբերումներ հնարավոր են դարձնում հերոսուհու համառության, ուժեղ կամքի, աշխատասիրության շնորհիվ: Աղջկա՝ Ուերեկայի տնից հեռանալն ու զադոնի ամուսնանալը, փոփոք որդու՝ Արքիկի սխալ կենսակերպը, բանակում գտնվող որդու՝ Մարտիկի մեքենա ունենալու տարիների երազանքը Հեղուսի մասհովությունը, ցավն ու ուրախությունն են: Ինչուս հենց ինքը՝ Հեղուսն է բննիչին ասում՝ «մոր սրբի օրենքները ուրիշ են»<sup>102</sup>: «Ֆորդ» գնելու, բաղադրի էլիսար մի վայրում խանութ բացելու իր ծրագրերն ու երազանքները կինն առանց մտածելու ի չիք է դարձնում Արքիկի սխալն ուղղելու համար: Վիդակում առկա են որոշակի բաց տեսարաններ, որ մինչ այդ բացակայում էին հեղինակի արձակում: Սակայն այդ նկարագրություններում անզամ դահլիճանվում է չափի զգացողությունը, չկան սգեղ, գրեիկ նկարագրություններ: Ամեն ինչ գեղեցիկի ու ավանդականի սահմաններում է: Հեղուսի եւ Շալիկոյի հարաբերության որոշակի մանրանասներ ներկայացնելով՝ արձակագիրը հետամուս է իր հերոսուհու բնույթի բացահայտմանը նաև: Նմանատիմ մի բացահայտում է հետեւյալ հասվածը, որով եւ ավարտվում է վիդակը՝ ընդհանրացնելով բովանդակային ուրույն կառուցվածքը: «Հեղուսը բարձրացավ տեղից. մտավ ննջասնենյակը: Հայկազը թերեւ ֆսֆացնելով բնել էր: Նա վրայից հանեց խնամքով ընտրած ցըազգեսն ու մետախյա տակառները. հազար ամենօյշանը եւ զգույշ, որ Հայկազը չարբնանա, տեղավորվեց նրա ընդարձակ աղահով

<sup>102</sup> [27. 45]:

<sup>103</sup> 27. 50]:

գրկում»<sup>103</sup>:

Հեղուտն իր բնավորությամբ ու համոզմունեներով կյանքի դարգ ու բարդ դրսեւորումներում հանդես է գալիս արժանավույն ձեւով՝ բարձր դահելով թե՛ ամուսնու, թե՛ երեխաների դասիվը: Անփորձության դասճառով մոլորություններ է ունենում, եւ ինչպես հեղինակն է մեկնաբանում. «Չգիտես ինչպես. ներին ուժ ծավալվեց նրա մեջ. զիսին բափված դժբախտությունները աչքին ներկայացան ոչ թե որդես սխալ բայլ կամ ձախորդ արարք, այլ իր առաջ հայտնված հերքական դժվարություն, որ կյանքը նորից ու նորից առաջադրում է...»<sup>104</sup>: Մ. Հովհաննիսյանի ցանկացած ընդգծում ու ընդհանրացում հերոսուհուն բնութագրելու, նրա հոգեկերտվածքն ու կենսակերպը բացահայտելու, ինչպես նաև ժամանակաշրջանի արատավոր երեւոյթները ի ցույց հանելու նոյասակ են հետապնդում: Նա ամենանուր եւ դիմուկ գոյւներով կերտում է հայ կնոջ իրական կերպարը, ում ուսերին ծանրացող դժվարությունների ու դժբախտությունների դասճառը հենց դասերազմն է եւ նրանից առաջացած բոլոր խնդիրները: Ղարաբաղյան դասերազմի հետեւանենով Հայկազի եւ Հեղուտի ընտանիքի ցավով սկսում են տառապել շատ հայկական ընտանիքներ: Մինչ այդ գոյություն ունեցող հայ ավանդական ընտանիքի դասերը փոխվում է: Տան տղամարդուն փող վասակելու, ընտանիք դահելու գործում, փոխարինելու է գալիս կինը: Պատերազմը ոչ միայն փոխում է հայ ավանդական ընտանիքի կառուցվածքն ու բովանդակությունը, այլև հիմք է դառնում, որ մի շարք ընտանիքներ չկայանան: «Գոտկասեղից ցածր» վիդակը հենց միայնակ սրտերի, չկայացած ընտանիքների դժբախտ դասմությունների անդրադարձ է: Հեղինակը, իր կյանքից մի դրվագ ուրվագծելով, առանձնապես շեշտը դնում է նրանում հայտնված համակրելի երիտասարդի

<sup>104</sup> [27. 50]:

վերհութի վրա: Սումգայիքյան ծանր օրերի դաժանուրյանն ականատես ու մասնակից Թուրիկն օղերասոր Ժորիկի միջոցով ծանոքանում է հեղինակի հետ, ով աշխատում էր որդես լրագրող, եւ նի բանի ամիս անց, արդեն որդես ծանոքի, հանդիպում է նրան, եւ նրանց միջեւ տեղի ունեցած խոսակցության արդյունքում՝ Հովհաննիսյանը տեղեկանում է սումգայիքյան դաժան օրերի, արցախյան արյունալի դեմքերի ու իրադարձությունների մանրամասնությունների մասին: Գրողը հերոսի միջոցով ներկայացնում է հայ-աղրքեցանական դասերազմի ընթացքը՝ նողատակ հետաղինելով բացահայտել ոչ միայն դասերազմական գործողություններն ու երկու ազգերի միջեւ ծագած կոնֆլիկտները, այլև մարդկային ճակատագրերի նկարագրությամբ՝ կյանքի եւ մարդու էռոքյան խորենը բափանցելը: Վիդակում առկա են նաև ազգային առանձնահատկությունների դարզաբանումն ու արժենուրումը: Հեղինակը հերոսի մսերի բարձրածայնման միջոցով բացահայտում է նրա կերպարն՝ ընդգծելով ազգային յուրահատկությունները: «Ղարաբաղցին իր մասին հոգնակի է խոսում. համեստ ասում է. - Տանկի վրա ենի աշխատում: Կամ՝ հետախույզ ենի աշխատում: Այսինքն թե՝ մենակ ինքը չէ, ընկերներն ըստ են՝ աշխատում ենի, ոնց որ առավոտյան նախաճաշ ես անում ու գնում ամեն օրվա գործիդ, անասունը հանդ ես սանելու, ավտոմեքենան գործի ես զցում, նախօրոնք վերցրած ուղեգրով դիմի գնաս հեռավոր ուղերքի: Հիմա էլ ավտոմատը առնում ես, նոնականելու ուսիդ դրած, տանկը տանում ես սողացող թշնամուն: Աշխատում ենի... Ահա այսպէս Ռուբիկը աշխատում է ֆազոնի՝ տանկիսի ահուսարսափի վրա»<sup>105</sup>, - Ռուբիկի կերպարը ներկայացնելու ժամանակ ընդգծում է հեղինակը: Նա իր հերոսների միջոցով բացահայտում է իրենց իսկ կենսագրության որոշ մանրամասներ, որոնք ոչ միայն նրանց կյանքի բնութագրիչներն են, այլև նի ողջ ժողովրդի: Հայ ժո-

<sup>105</sup> [27. 55]:

դովրդի մաքառումների, դժվարությունների ու դրանց հաղթահարումների մասին է «Գուշակելից ցածր» վիդակի բովանդակային առանցքը: Իսկ, եթե զործողությունները որեւէ հանգուցակեսի հանգելու տեսակետից դիմարկենք, կճկատենք, որ վիդակում էականը մարդն է՝ իր ներքին ու արտաքին աշխարհով, աշխարհ, որտեղ հատկանական է նաև ազգային դաշկանելության խնդիրը: Ուորիկ, Վադո, թե մեկ այլ անուն կրող հայ Երիտասարդի կենսագրության կերտմանը բնականաբար չէին կարող չանդրադանալ հայ-աղրբեջանական հարաբերությունները: Մ. Հովհաննիսյանը, հավատարիմ մնալով իր գրողական հավատամբին՝ օբյեկտիվորեն ներկայացնում է այն ժողով եւ դաժան իրականությունը, որտեղ ինքն աղրուն է: Հեղինակը դատմում է դաշերազմած եւ դայմանական խաղաղության դայմաններում գտնվող երկրի ժողով իրականության մասին: Պատմվածքն իր մեջ ընդգրկում է մեծ ժամանակահատված՝ իր բազմաթիվ իրադարձություններով. սումգայիրյան ջարդ, տեղահանություն, Արցախյան դաշերազմ, հետդաշերազմյան իրարացում: Այս ամենի անդրադանում Մ. Հովհաննիսյանն երեմն առավել մեծ ժեղ է հատկացնում իրեն մտահոգող դեմքերի ընթացքին եւ հոգեբանական վերլուծություններին: Այս երեւույթը նկատվում է հատկապես անկախության շրջանի արձակում, որտեղ հեղինակը վավերագրական եւ գեղարվեստական նրբերանգներով հետարքիր գրականությունն է ստեղծում: Ընդհանրապես այն մասին, թե որն է ճիշ՝ դատմել, թե գեղարվեստութեան ներկայացնել բուն նյութը, հակասական կարծիքներ կան: Թերեւս ուժագրավ է Խոսն Orstեօա ի Գասսետի հետեւյալ միտքը. «Ինձ մի դատմել, թե կերպարն ինչողիսին է՝ ես դեսք է նրան իմ աշխերով տեսնեմ»:

Ամեն դեմքում, Ժամանակային տարեր ընդգրկումների մեջ, ներքին մենախոսության, երկխոսության, վերհութի միջոցով, գեղարվեստի եւ փաստագրության համադրությամբ կայանում է գրողի ստեղծագործ միտքը՝ հասնելով իր նոյատակին: Այն իր ձեւաչափով եւ բովանդակային ընդհանրու-

թյամք ուշագրավ է թե՛ դատմության, թե՛ գրականության համար: Նրանով կարելի է ներկայանալ համաշխարհին՝ հայի ու նրա խնդիրների մասին բարձրաձայնելու նոյառակով եւ ոչ միայն:

Ղարաբաղի եւ ղարաբաղցու ցավերի եւ ուրախությունների, կորուսների ու կարուսների մասին է նաև «Մոլորակ «Փակուղի» վերնազիրը կրող վիդակը: Հեղինակն, ընթերցողին ծանոթացնելով Ստեփանակերսի Փակուղի փողոցի եւ նրանում աղբող տաճնչորս սեփական սների քնակիչների հետ, ուստի դնում է նրանցից առավել ակտիվների կյանքի ու կենսակերպի նկարագրության վրա: Նա, դիմելով Ղարաբաղյան բարբառի հյութեղ քառ ու քանին, ունալիսական գույնների քանձրությամբ եւ հումորի նուրբ դասկերավորությամբ ստեղծում է կենդանի եւ իրական կերպարներ՝ արժեաւորելով նրանց անհատականությունն ու մարդկային դարզությունը դիմագիծը: Վիդակում արտացոլված կյանքն ու նրանով աղբող մարդու հոգեկերտվածքը ընդգծվում ու ընդհանրացվում են աշխույժ երկխոսությունների, վերհուսի, հումորի, հերոսների բաղադրիչական եւ բարոյական ակտիվ դիմարկումների միջոցով: Փակուղի փողոցի քնակիչներ քաղկոս Մրամը, Աղետնակը՝ Պուտին մականունով, Ստեփանը, մասավորական Հայկ-Արամը, Լիդարիսը, Ելիզավետա Գեւորգենինան եւ այլոք, Փակուղին մի յուրօնինակ մոլորակ են դարձել, որտեղ հակաբվելով՝ նրանի խոսում են խորհրդային կարգերի եւ նրա փլուզումից հետո երկրի սոցիալ-հասարակական իրադարձությունների դրական ու բացասական փոփոխությունների մասին: Անցյալն ու ներկան համադրելով ու հակադրելով՝ գրողն անդրադառնում է առկա մի շարժ հիմնախնդիրների: «Մոլորակ «Փակուղի» վիդակում արծարծվում է հայ ավանդական ընտանիքում տղամարդու եւ կնոջ դերերի փոփոխության արդիական խնդիրը: Տղամարդը, որ հնուց ի վեր փող վաստակողի, տան կերակրողի դերում է հանդես եկել, Ղարաբաղյան դա-

Տերազմի եւ հետղատերազմյան դաժանությունների ու դժվարությունների դաշճառով, իր տեղը զիջել է կնոջը: «Ամեն ինչ զլխիվայր տու եկավ: Տղամարդը անգործ նստեց տանը, կինը փորձեց աղրուսի հոգսն իր վրա վերցնել: Անգործությունից տղամարդու ձեռքը գործի չի հասնում»<sup>106</sup>, - ընդգծում է հեղինակը: Այստեղ Հովհաննիսյանը, ժամանակային տարբեր ընդգրկումներում բացահայտելով Փակուղու բնակիչների՝ Պուտինի, Մրադի, Լիմարիսի, Արզամի եւ այլոց ընտանեկան կյանքի որոշ նանրանասներ, օւետը դնում է թե՛ սոցիալական, թե՛ հոգեբանական դիրքուումների վրա: Հարուսի եւ աղքահի միջեւ եղած մշտակա բախումը նորօյա ժամանակագրության մեջ առավել ընդգրկուն ու տարողունակ խնդիրներ է առաջ բերում: Մ. Հովհաննիսյանը Ստեփանակերսի բակ հիւեցնող «Փակուղի» փողոցի բնակիչների օրեցօր փոխվող փոխսհարաբերությունների, վարֆ ու բարֆի միջոցով ցույց է տալիս, թե ինչպես են նոր ժամանակների բարֆերը կործանում բարդյական այն բոլոր արժեքները, որոնց օնորիկվ դարաբաղցին դահղանելով իր հետաքրքիր տեսակը՝ հաղթանակել է անհավասար մարտում: Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության, Խորհրդային իշխանության փլուզման, հետղատերազմյան անհարքության արդյունքում առաջացած ներկայի ժանուար անկարգությունը գրողը նշում է. «Ոչխարի սուրուն եւ սվին եւ կաղն ու չխարը առաջ ընկան, ամեն ինչ իրաւ խառնվեց»<sup>107</sup>: Փակուղի փողոցի եւ նրա բնակիչների վարֆ ու բարֆի, օրախնդիրների ու օրակարգի մասին, որմես վերջաբան, հեղինակը «Հրաժեշտից առաջ» վերնազիրն է ընտել: Այստեղ երեւան են հանվում ոչ միայն աշխարհի մի անհնաւան հաւաքածում տեղավորված մոլորակի՝ Ստեփանակերսի Փակուղի փողոցի եւ նրանում աղրող մարդկանց ցավերը, ու-

<sup>106</sup> [27. 86]:

<sup>107</sup> [27. 77]:

րախություններն ու դատմությունները, այլեւ հենց գրողի փիլիսոփայական դիտարկումները՝ կյանքի և աշխարհի, մարդու և նրա զգայական աշխարհի շուրջ: «Աշխարհի գոյությունն իմաստավորվում է մեր զգացողությունների մեջ: Առանց մեր մասնակցության աշխարհը կորցնում է որևէ իմաս»<sup>108</sup>, - գրում է հեղինակը: Կյանքի հակասական ու հարաբերական դրսերումների շուրջ գրողի ըմբուծացումները, հոգու ընդվզումները, կորուսներն ու երազանցները դարադրության հարցերի ու հարցականների ալիք են բարձրացնում: Արձակագի մտահոգությունը Փակուղի փողոցի և նրա բնակիչների՝ աշխարհից հեռանալու, անհույս մոռացվելու խնդիրն է: Ժամանակի ընթացքում ամեն ինչ փոխվում է. հենրը գնում են, գալիս են նորերը՝ արդեն նոր հոգսերով, նոր ոգեւորություններով ու հիասքանչություններով: Հովհաննիսյանն, ընդհանրացնելով եւ ընդգծելով Լիդարիսի ու Ռուկեհաս Տաշի ցավն ու տառաղանքը, Մրամի, Ստեփանի Խոսքակոխը, մտավորական Հայկ-Արամի լրացումները, հատկանում է այն կարենր իրողությունը, որ, այնուամենայնիվ, ոչ-nf եւ ոչինչ չի մոռացվում անկախ ժամանակից ու տարածության հեռավորությունից: Այսեղ գրողը ժեօք դնում է առավելադեպ անցյալը չմոռանալու կարենրության վրա: Ներկան իիմնված է անցյալի վրա, եւ ինչքան էլ նորերը գան իրենց նոր հոգսերով, նոր ուրախություններով, եւ ինչ բառերով էլ ձեւակերպեն սիրու եւ վեսի զգացումները, միեւնույն է, «մի անանուն կարս կեարունակի անգրունն թեւածել «Փակուղի» մոլորակի ոլորտներում»: Քանի որ ծաղի ամրությունն արնատով է դայմանավորված, դատահական չէ, որ արձակագիրը «Հոգնած երեկո» գրի առաջին շարքը, որը երեք վիդակից է բաղկացած, սկսել է «Արմաս» խորհրդանշական վերնագիրը կրող վիդակով:

<sup>108</sup> 27.121]:

Գրքի հաջորդ շարքը «Ծանր կարիլ» հետաքրքիր վերնազիքը կրող չորս դասմվածքների ամբողջությունն է: Այն, որ արձակագիրն առաջին անգամ է անդրադառնում վիլակի ժանրին եւ յուրովի է ներկայանում այս ձեւաչափի մեջ, ինքնին նորովյա է: Սակայն գրքում տեղ գտած դասմվածքները եւս իրենց բովանդակությամբ ու թեմատիկայով, խոսքի ու մսքի կառուցվածքով նոր են, տարբեր նախորդներից: Բարդ հոգեբանական վերլուծություններն ու փիլիսոփայական դրույթներն իրենց տեղն են զիջում նորօրյա արձակի առաջ բաւած դարզությանը: «Ծանր կարիլ» դասմվածքը, որը համանուն շարքի առաջին գործն է, քենաշիկ առումով դատերազմական եւ հետաքրքիր առաջին դեմքով ներկայացնելով դեմքերն ու իրադարձությունները, հերոսների միջոցով համեմատության մեջ է դնում երեկն ու այսօրը: Կամոյի, Հովհեկի, Գրիգորի, Մխիթարյի եւ այլ բազորդիների հույսերի, մշահոգությունների ու իիասքափությունների միջոցով գրողը բացահայտում է ժամանակի իսկական դեմքը: Մալաքիայի գիտահետազոտական ինստիտուտի առաջատար ինժեները, քողնելով աշխատանքը, Երեւանի տունն ու տեղը, զալիս է Ղարաբաղ՝ դատերազմին մասնակցելու համար: Պատերազմի բոլոր օրերին կովի դաւտում, կրակի տակ տանկ ու մարտական այլ տեխնիկա վերանորոգելով՝ «դրոֆեսոր» մականունն է ստանում: Եվ ահա խաղաղ ժամանակներում երիտասարդ սղան, ականատեսն ու մասնակիցը լինելով զինվորական, աղա՝ հասարակական-քաղաքական անարդարությունների, խորը իիասքափություն է աղում: Եվ որոշում է վերադառնալ Երեւանի իր տունը եւ ինժեներական խոստումնալից աշխատանքին: Երիտասարդ սղան չկամությամբ է զալիս այդ որոշման, ինչի շուրջ խոսելու եւ խորհրդակցելու նյատակով հանդիպում է ժեռու (հեղինակի մասին է խոսքը) հետ եւ օղու բաժակների հաջորդականության մեջ խոսում իր մշահոգությունների ու

հիմաքափությունների մասին: Նա, անդրադառնալով դատերազմական ծանր տարիներին, ցավով է արձանագրում խաղաղ ժամանակներում կատարվող անարդարությունները: «Պահակակետում ֆնով անցնող զինվորի ջարդը տալիս են ոնց որ քուրքին կցարդեն: Բացատրությունը մեկն է՝ որ մյուսները չենեն: Այդուս են հիմնավորում. իրենի անում են եւ ֆեղնից դահանջում, որ դու էլ նոյնը կրկնես: Նման մի դեմքից հետո զինվորներից մեկը՝ լուսավոր մի տղա, բանասիրականի ուսանող էր, ինքնասաղան է լինում»<sup>109</sup>, - վրդովմունքը չի կարողանում քացցնել հայ բանակի սղան, ով, այդ գործի առիթով հրաժարվելով կեղծ ցուցում տալուց դարձել է հրամանատարության «աչքի փուտը»: Այստեղ հեղինակն ընդգծում է ոչ միայն իր հերոսի հոգու մաքրությունն ու բարոյական սկզբունքները, այլև նրա հայրենասերի արժանավայել կերպարը: Առողջ երկխոսության արդյունքում բացահայտվում է Կամոյի եւ ժողովրդի հավատարիմ զավակների, ինչդես նաև՝ հեղինակի մսի փիլիսոփայությունն ու սրացավությունը: Կյանքի, աշխարհի անարդարությունների, ժամանակաշրջանի ճիշտ ու սխալ, լավ ու վաս դրսեւրումների շուրջ խորհրդածելով՝ Հովհաննիայանը հատկանում է իր յուրօրինակ դիրքորոշումը: «Կան սահմանային դահեր, եր հասարակությունը վերապրում է անցումային շրջան, տեղի են ունենում ցավագին եւնույրներ, կարծես կյանքը հետքնբաց է աղրում: Ավա՞ն, հեռանում են հերոսների ժամանակները, եւ գալիս են աղականիչների ժամանակները»<sup>110</sup>, - լնդիանրացնում է արձակագիրը: Նա, ժամանակաշրջանը ներկայացնելով կենդանի գույներով, նույն է, որ հասարակությունը հայտնվում է դեմքեսիայի մեջ: Իսկ այդիմիսի ճակատագրական դահերին դիմակայելու համար արդեն «քաղաքացիական խիզախության ժամանակի հերոսներ են» դեմք: Եվ նման դատասխա-

<sup>109</sup> [27.132]:

<sup>110</sup> [27.137]:

նատու ժամին նահանջելը դասավորություն համարելով՝ հեղինակը նկատում է. «Չղեսֆ է քոյլ տալ, որ այլասերվի այն, ինչի համար արյուն է թափվել. Եւ անասելի տառաղանքներ է կրել ժողովուրդը: Վտանգավորը հոգու այլասերումն է»<sup>111</sup>: Պատումում կենդանի ու ռուսափելի իրականությունը, գրողի վարդեւության ընորհիվ, անմիջապես գտնում է իր հասցեաշխետներին: Արցախում աղրող, նրա հոգսերով ու ցավերով տառաղող ցանկացած մարդ՝ դատկերված իրականության մեջ տեսնում է իրեն եւ գտնում իրենը:

Արցախյան դատերազմը հայ ժողովրդի դատմության մեջ կորուսների եւ միաժամանակ հերոսությունների արժեավոր էջեր արձանագրեց: Հրետակոծության, ավերածությունների եւ անմեղ զոհերի ականատես ու մասնակից Ստեփանակերսն ու ստեփանակերսցինները գոյադայքարի աննախադեղ ջանեմեր էին գործադրում: Այդ ճակատագրական ժամանակաշրջանն իր բոլոր դրսեւորումներով լավագույն ձեւով արտացոլվում է «Ապաւատառն» դատմվածում, որտեղ հեղինակային ես-ի առկայությամբ, Հովհաննիսյանն անդրադառնում է իր երկրի, իր ժողովրդի ինքնաղաւումդանության կարեւորագույն դրսեւորումներին, նրանց հոգու եւ կամքի ուժի ընդգնամբ ներկայացնում դատերազմն ու նրա ցավալի հետեւանենքը: Դիլուկ բնութագրումներով, իրականության ճշգրիտ դատկերմանը արձակագիրը բացահայտում է ոչ միայն բաղադրի ներքին անցուղարձը, այլև նրանում աղրող հայտն ու անհայտ դեմքերը՝ հատկանշելով նրանց կենսակերպն ու հոգեկերտվածքը: Գրողի նոյատակը սովորական թվացող մանրամասնությունների նկարագրությամբ հայի կյանքի եւ հոգեբանության, բնույթի ու բնավորության հատկանշական գծերն ընդհանրացնելն ու բացահայտելն է: Իր իսկ կյանքի ռուսակի դրվագների նկարագրության միջոցով արձակագիրը

<sup>111</sup> [27.138]:

բացահայտում է ժամանակաւրջանի դժվարություններն ու անհարդությունները:

Պ. Սեւակն ասում է՝ «Արվեսը ոչ այլ ինչ է, քան արվեսագետի ինքն իր մեջ ունեցած ներհակությունների արտահայտություն, հոգեկան մի վիճակ, երբ ստեղծագործողը դաշտասի հասարակական հողի վրա, լայն ընդգրկումների հնարավորության մեջ կարող է կամ անկարող է դրսեւորել իր վերաբերնունքը տիրապետող միջավայրի, հասարակական մտայնության եւ այլնի հանդելոց»<sup>112</sup>: Մեծն Սեւակի այս դիմարկումի հաջող վկայություններից է Մաքսիմ Հովհաննիսյանի «Աղասարան»-ը, նրանում լավագույն ձեռվ երեսում է կնոջ դրական կերպարի հանդելոց ունեցած Հովհաննիսյանի ջերմ զգացումը: Եվ դատահական չէ, որ նա դատմվածքը նվիրում է հենց իր կնոջը՝ Զոյա Թորոսյանին, ով մանկաբարձուիկ լինելով, անձնական օրինակով եւ մասնագիտական գիտելիքներով արդարացնում էր իրեն: Հեղինակն իր մեկ օրվա ժամունության ժեմասային դայմանական ժամանակի մեջ կարողանում է ցույց տալ ներկան՝ բոլոր դրսեւորումներով: Ժշնանու արկերից դաշտամանվելու նողատակով գրողը կնոց հետ ժեղավորվում է նետախի կոմքինասի կառուցած «բանվորական սելեր» անվանվող ժեներից մեկի աղասարանում: Տագնադը, որ զգացվում էր Արցախ աշխարհում, մի հարկի տակ էր հավաքել մանկաբարձին, գրողին, հաւաղակին, վարդեշին, ծաղկավաճառին, բոլոր բոլորին՝ անկախ սեղից, տարիքից, հասարակական դիրքից ու մասնագիտական բնագավառից: «Այդ դահին ոչ ոքի չէր մտահոգում, թե ինչո՞ւ են բնակարանները ավերվում, եւ ներսի կահ-կարասին ոչնչանում՝ տարիներով մի կերպ խնայված փողերով ձեռք բերած»<sup>113</sup>, գրում է հեղինակը: Հովհաննիսյանը թե՛ իր հերոսների վարք ու

<sup>112</sup> Սեւակ Պ., Երկերի ժողովածու, Դաստիր VI, 1976 թ., Երևան, «Դայաստան» հրատարակություն, էջ 295:

<sup>113</sup> Հովհաննիսյան Մ., Դոգմած երեկո, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2010 թ., էջ 164:

բարի, թե՛ իր հիմնավորումների ու համոզմունեցների առանցքում շետքը դնում է հայ մարդու՝ հայրենի հողի հանդեղ սածած անմնացորդ սիրո, նվիրվածության արժենորման վրա: Այլաղես, ինչպես մեկնաբանել փոփրիկ Հովիկի այն մեծ երազանքը, որ երբ տասնվեց տարեկան դառնա, կկարողանա կովի գնալ: Իսկ տասնվեցի մեջ մտած Վահանը, երդվելով «մոլոդոյների» զոկատին, դաշտասվում է մեկնել դաշտազմի դաշտ՝ քողնելով սիրած աղջկան և չկարենուելով իր առողջական խնդիրները: «Արդեն որոշված է, երդում եմ սկել ՎՃԱՏՊՏՆ-ների զոկատին, գնալու հաստատ է»<sup>114</sup>, - ասում է Վահանը: Նոյնիք դրամատիկ ու հերոսական է երիտասարդ աղջկա՝ հղիությունը չընդհատելու հաստատում որոշումը: Ծնողներից զաղտնի դահելով երեխա ունենալու փասթ՝ նա վախից ու նյարդային լարումից արյունահոսություն է ունենում: Իսկ երբ լսում է երեխայի հnr զոհվելու մասին, որոշում է, որ երեխան դեմք է ծնվի՝ որդես նրա միակ հիւատակը: «Ես ոչինչ չասացի: Հոգիս լցվել էր: Վերամբարձ մտածեցի՝ այս ժողովրդին հաղթել չի լինի»<sup>115</sup>, - եղրակացնում է գրողը:

«Ծանր կարիլ» վերնագիրը կրող չորս դասմվածքներից բաղկացած շարքն ամփոփվում է «Ապաշխարան» դասմվածքով: Եթե «Աղասարան» դասմվածքի հիմքում հաղթանակած հայի կերպարն է արժենորվում, աղա այստեղ հեղինակն անցյալ-ներկա ժամանակային դայմանականության մեջ անդրադառնում է Արցախյան դաշտազմի և հետմատերազմյան դաժանություններին ու դժվարություններին, մարդկային ու անմարդկային դեմքներին ու դեմքներին: Հիւողության, երկխոսության և գեղարվեստական այլ միջոցների գործածությամբ Հովհաննիսյանը համադրում ու հակադրում է Ղարաբաղի ու ղարաբաղցու հասարակական, բաղադրական, սոցիալ-սննդական, հոգեբանական տարաբնույթ իր-

<sup>114</sup> [27. 161]:

<sup>115</sup> [27. 167]:

դությունները։ Գրողի միտումի օկտօպ թերեւս դրվում է այն ցավալի իրողության վրա, որ Ղարաբաղի եւ ղարաբաղցու ղատեազմն այսօր էլ շարունակվում է։ Եվ, եթե Արցախի ազգային-ազատագրական անհավասար ղայֆարում հայր կարդադացել է հաղթել իր միասնականության, հավատի եւ համախմբման ընորհիվ, աղա հետղատերազմյան ժամանակաւրջանում արդեն երկրի ներտում առաջացած գոյի խնդիրը նաև ղայմանավորված է երկրի սնտեսական իրավիճակի, ժողովրդի որոշակի դժողովության իրողությամբ։ Դեղբեսիայի մեջ հայտնված հասարակության անդամը հայտնվել է հոգու այլասերման վտանգի տակ՝ չկարողանալով հաղթահարել ղատերազմին հաջորդող դժվարությունը։ Արցախյան ազգային-ազատագրական ղայֆարում հայի հոգում ծնված լույսն ու հրավառությունն ասես երեւվում են ղայթյունավտանգ խաղաղության ղայմաններում, ինչը, թերեւս, ղայմանավորված է անցումային շրջանի ցավագին երեւույթների առկայությամբ։ Դրանցից վաքրագույնն Օլիգարխի՝ անհուսալի վիճակում հայտնված մարտական ընկերոջն աշխատանքի վեցնելու խնդրանքը մերժելու կարողությունն է։ Փորլուծությունից «կեփերը դրդած եւ ամորթահար ճուտոն» վաղուց արդեն ճուտ չէ, այլ «թիկունքավոր աքոռին» բազմած մարտական խաչի ասդեմ, ում առաջ վիզ է ծոռում, դառնում «կուզուկծիկ», ««կեփի» ամորթալի դեմքերի կենդանի մնացած միակ անցանկալի հիւեցումը՝ նախսկին բաջ ու անվախ հրամանատարը, ով այլեւս հրամանատար չէ, այլ «հասարակության մեջի հոռը հարող» հիւեղության անտեսանելի «կուտուկ»։

«Հոգնած երեկո» գրեւում զետեղված համանուն ղատմվածաւարը եւս աչքի է ընկնում մսի բարմությամբ, յուրօշինակ ղատմելածնեով, կենդանի նկարագրություններով, խորիմաս երկխոսություններով եւ զեղարվեսական այլ միջոցներով։ «Orkejg մեկը», «Եզակի բվով», «Գենադիկ», «Հոգնած երեկո» ղատմվածներում որդես գլխավոր հերոս, հանդես է գալիս գրողը, ով, ղատմելով խեղված ճակատագրերի, ուրախ ու

Տխուր օրերի, մեծ ու փոքր իրադարձությունների, մարդկանց հոգու սարրաբնույթ դրսեւումների մասին, վերահմատավորում է նրանց կենսափիլիսոփայությունը: Նրա ցանկացած ընդհանրացում, ընդգծում ու բացարություն նղատակ է հետաղնդում ոչ միայն մարդու ինտելեկտուալ ու զգայական աշխարհի բացահայտման, այլև դրանց դասձառահետեւանքային կառի անդրադարձման: Ամալյայի վիժումը, Գենադիկի խմելը, Եգորի հայինյելը եւ մարդկային այլ դժբախտություններ, սովորություններ ու բուլություններ գրողի հոգեբանական դիմակումներում գտնում են իրենց հիմնավորումները: Մարդու կյանքում տեղի ունեցող սարաբնույթ դեմքերն ու իրադարձությունները գրողը ուսումնասիրության է ենթակում մարդու ներաշխարհի բացահայտմամբ: Այնտեղ կատարվող ցանկացած տեղաշարժ, գործողություն, անմիջապես անդրադարձում են մարդու արարքների, վարք ու բարքի, սովորությունների վրա: Հոգեբանական խոր դիմակումների, զգայական աշխարհի արժենումնան, մարդկային հարաբերությունների հետաքրքիր մի դրսեւուրում է «*Մեղրահացի ժամանակը*» դասնվածքը: Արծվիկը օդափոխվելու համար զալիս է զյուղ՝ Մուրադի եւ Վանուին տուն: Մուրադը Վանուին բաղաբից էր հարս քերել եւ արդեն երեք տարի է, որ նրանք երեխա չեն ունենում: Երեխա չունենալու մտահոգությունը Վանուին օր ու գիշեր հանգիս չէր տալիս: Իսկ հորաքրոջ խորհուրդը այն մասին, որ նորից ամուսնանա կամ «բարձը փոխի», ականջի ետևու էր զցել՝ հույսը դնելով Ասծոն վրա: Եվ ահա ամուսնու «օւժիք» նորածիլ տղան՝ խելացի ու ամաչկոս Արծվիկն, հասուն կնոջ՝ Վանուին հոգրում բորբոքում է մի գեղեցիկ զգացում, ուր սակայն գեղեցիկ ավարտ չի ունենում: Արսարգանդային հղիության եւ ժամանակին թժուկի չղիմելու դասձառով Վանուիկն մահանում է: Մահից առաջ զանգելով Արծվիկն, նրան տեսնելու ցանկություն է հայտնում եւ բացասական դատասխան ստանում: Կինը կյանքից հեռանում է՝ այդուն էլ չտեսնելով նրան: Արծվիկն, ճանադարիկելով դդրոցականնե-

Իի միջազգային մրցույթի, վերադառնում է միայն մեկ տարաք հետո: Հերոսների միջոցով գրողը բարձրացնում է կյանքի անարդարությունների եւ դրանց մեջ հայտնված նարդու խնդիրները: Մարդու ընդամենը խաղում է իրեն վիճակված դերը: Հույսի եւ հիասքափության, լույսի եւ խավարի դայնանականության մեջ է հայտնվում կինը, ով ընդամենը ուզում էր մայրանալու հաճույքը զգալ, որը ճակատագրով վիճակված չէր նրան: Աւշարհ-կյանք-մարդ-ժամանակաւորացան. ահա այս միացյալ օդակի շուրջ են գրողի խորհրդածությունները, խոռվությունները, վեճերն ու համակերպումները, ինչ լավագույն դրսեւորումը «Քամարհանիներ» դասմվածքն է՝ «Սպիտակ ազրավիներ» տարբե: Որդես բնաբան՝ գրողն ընտել է Նիցենի հետեւյալ միտքը. «Ամրողջովին դինդ միայն ամենաազնիվն է լինում»<sup>116</sup>: Աւշարհի անարդարությունների եւ մարդկային հակասական բնավորությունների հարաբերակցման արդյունքում առաջացած անհավասարությունների շուրջ են գրողի «ինքնահենրձվող» մսենքը: «Հղտիու տեսիլքները դուլքուի են արել, մսենք պիեկոծվում են, իմբդ քն մեջ փոքրքում են՝ կրվելով աշխարհի դեմ, մարդկանց դեմ, բայց վերջ ի վերջու հանգում են այն մսին, որ անհնար է անարդարության առաջն առնել: Մեն մենակ ի-նչ դիսի անես սառն իրականության դեմ հանդիման: Ծնվում են ինքնահենրձվող այս մսենք...»<sup>117</sup>, - նուու է արձակագիրը: Ես, նա, մյուսը խորագրային սարանջատման ընդգծումներով գրողը համենատության մեջ է դնում սարքեր կենսակերպի ու հոգեկերտվածքի տեր մարդկանց, որոնք անցյալում հոգերանական, սոցիալ-հասարակական այլ իրավիճակում էին գտնվում, ներկայում այլ: Նա երեկ աչքի էր ընկնում իր բարձր ինտելեկտով, հասարակական դիրքով, կեցվածքով ու դահվածքով, այսօր հայտնվել է անորոշ կարգավիճակում: «Անալիսիկ լավ միտք» ունեցող, կարմիր դիմլումով «հսկայական մասնագետի» կարիքն այ-

<sup>116</sup> [27. 240]:

<sup>117</sup> [27. 240]:

լես չկա: Նա մերժված է իր «մասնագիտական ամբիցիաների» համար: Նորօյա «խճած-խճված» կողմնորոշիչների, «հասկացությունների նույացիայի» հետեւանքով առաջ եկավ սերնդափոխության խնդիրն՝ իր բոլոր բացասական կողմերով: Ինչը հակասական զգացողությունների, անդատասխան հարցերի ու հարցադրումների դաշնառ է դառնում: «Հերտսված մեր ժամանակներում այդպես էլ լավ չհասկացնի, թե ինչ է կատարվում մեր ժուրջը. ինչու փոխեցին ընքոնումներն ու դատկերացումներն աշխարհի, մարդկանց մասին: Մենք միայն վկայակոչում ենք անցյալը՝ առանց խայթի գովելով այն, ինչը առաջ այդանում էինք: Մեր բարոյական անկումը չէինք տեսնում»<sup>118</sup>, - մեկնարանում է գրողը: Նրա մսի դիտակետում Արցախի ու արցախցու անցյալն ու ներկան է, որնոց արտացոլանքում առերեսվում է նաև աղագան: Արցախյան դատերազմի, խորհրդային կարգերի փլուզման ու հետպատերազմական խառնաւսփորի հետեւանքով երկփեղկվում է հասարակությունը, ինտելեկտին ու զգայական աշխարհին փոխարիմնելու են զալիս նյութն ու բնազդը: «Բնազդը զործեց: Սորու զգացողությամբ նախաղասվությունը տրվեց բարեկամական-ազգակցական կարգերին: Հեռու գնալ դեմք չեր. փնտրութի կարիք չկար. հավաքվեցին, իրենք իրենց նշանակեցին»<sup>119</sup>, - իրականության դարգ ու կենդանի գոյներով ներկայացնում է հեղինակը: Գրողը բաղադրական, սոցիալ-հասարակական, բարոյական խնդիրների ռուափման մեջ դատկերում է կյանքի եւ մարդկային հոգու բաց եւ անհսանելի տարածքները: Միահյուսելով հոգերանական ու երգիծական սկզբունքները՝ Մ. Հովհաննիայանը բնադրատում է ժամանակակից կյանքի արատավոր կողմերը, մարդկային աղավաղված բարերն ու սովորությունները: Իր ձեւաշափով, կառուցվածքով, թեմատիկ ու բովանդակային

<sup>118</sup> [27. 250]:

<sup>119</sup> [27. 242]:

հարցադրումներով դասմվածքը որոշակի ընդհանրություններ ունի Նար-Դոսի «Ես եւ նա» ստեղծագործության հետ։ Հոգեբանական վերլուծության ենթարկելով սոցիալական եւ բարոյական հակադիր բեւեններում գտնվող մարդկանց վարքն ու բարքը՝ Հովհաննիսյանը կյանքը դեռի լավը փոխելու, անարդարության առաջն առնելու նոյատակ է հետադարձում։ Աչխարհում արդարության հաստաման, արդար հասարակության զոյտության եւ այլ երիտասարդական երազանքների, դեռմբերի ու հիասքափությունների մասին է «Թիվենու սովորի սակ» խորհրդածությունը, որտեղ հեղինակը մարդ-բնություն համեմատականում շուշափում է մարդու եւ մարդկայինի հարցը։ «Ամենից բերարը են է, որ մարդիկ աշխատանքից խամրացել են, աչք դահած սպասում են, թե որտեղից նի օգնություն կտանան։ Հիմա ամոք չեն համարում, որ աղբարկներում... մարդու լեզուն դաս չի զալիս, որ ասի, հավի ֆրոք են անում, կամ ձեռքը մեկնած մուրացկանություն են անում։ Փող են դարսք վերցնում եւ զիտեն, որ չեն վերադարձնելու։ Ամոքը վերանում է. աչիդ մեջ ճայում են ու սուս խոսում»<sup>120</sup>, - իր երկրի, ժողովրդի ճակատագրով մատուցված ընդհանրացնում է «Տագմասպներ» դասմվածքի հերոս Սոկրատը։ Այսեղ առողջ երկխոսությունների միջոցով գրողն անդրադառնում է կյանքի մեծ ու փոփոք ողբերգություններին՝ հատկանիւնով մարդ-ցրադամաս փոխսհարաբերության ճիշտ դիտարկումները։ Հեղինակային ես-ը դայմանական անվան տակ ընդգծելու ու ընդիանրացնելը հարեւանների կյանքի ու կենսակերպի մեծ ու փոփոք եղելությունների մասին է, որտեղ հեղինակը հոգեբանական վերլուծության է ենթարկում մարդու ներաշխարհը՝ հատուկ շետքը դնելով սոցիալական խնդրի առկայության վրա։ Երես - Շողեր ամուսինների, Մանուշար եւ ընկեր Համազասպ հարեւանների փոխսհարաբերություններում գրողն արտացոլում է իրականությունը՝ իր լավ ու վաս դրսեւորումներով։ Պատմվածքում առավել շուշափելի է գրողի իրական կերպարը, ով Ար-

<sup>120</sup> [27. 262]:

մենակ դայմանական անվան տակ արժենորում է դատմվածքում գործող անձանց կյանքի փիլիսոփայությունը: «Վիդասանի լուսնացյալ «Ես»-երը, այդ թվում՝ չար դիմված «Ես»-երը, բոլորն էլ նրա հնարավոր գործող անձինք են»<sup>121</sup>, - այս տեսակետն են առաջ բառում Ռընե Ռելլեֆն ու Օսթին Ռուրրեն «Գրականության տեսություն» գրքում: Ժամանակաշրջանը եւ նրանում ապրող մարդկանց ապրելակերպն ու հոգեբանությունը բացահայտելով՝ չի կարող չլինել Հովհաննիսյանի եսի առկայությունը: Գրողի սեղծագործություններում ականատես ենք լինում նրա բնության եւ ապրումների, կենսակերպի ու աշխարհներակալումների իրական դիրքորոշումներին: Այս իրողությունն օգնում է նրան ոչ միայն քափանցել մարդու կյանքի եւ հոգու հայտնի ու անհայտ տարածքները, այլ նաև՝ էլ ավելի հավասի ու անմիջական է դարձնում իրականության արտացոլման գործընթացը: Ընդհանրապես այս իրողությունը գրականության անդաստանում սովորական երեսույթ է: Ցանկացած գրող հերոսի կերտման գործում կամաքեան ականա առաջնորդվում է իր անխափան ես-ի ընդհանրական ընդգծումներով: Պատահական չէ Ֆլորենի այն խոսնականությունը, որ Տիկին Բովարին ինքն է, ինչպես Դոստուկին, ով իր եռթյամբ ներկա է չորս Կարամազով եղբայրների մեջ: «Անհնություն» դատմվածքում Հովհաննիսյանը հանդես է գալիս որպես գլխավոր հերոս՝ խախտելով Լեսպինգի հայտնի այն սկզբունքը, որ «դեսք է վերանալ դատմողի հայեցակետից եւ գործել գործող հերոսներից յուրաքանչյուրի տեղը»<sup>122</sup>: Սակայն Հովհաննիսյանի՝ դատմողի հայեցակետից չվերանալու դիրքորոշումը բնավ դայմանավորված չէ գրողի սաղանդի, կենսափորձի ու վարդետության կամ երեւակայության բացակայությամբ, ինչի վառ վկայությունը նրա գրական եւ հրամարակախոսական առաւ եւ արժեքավոր հունգն

<sup>121</sup> Ռելլեֆ Ռ., Ռուրրեն Օ., Գրականության տեսություն, Երեւան, «Սարգս Խաչենցից. Փրիմրիմֆո» հրատարակչություն, 2008 թ., էջ 123:

<sup>122</sup> Լեսսինգ Գ., Գամբուրգական դրամատուրգիա, Մ.-Լ., 1936 թ., страница 123.

է: Պատմվածքում, թերեւս, այուժեն է ննան մատուցման ուղենիշ հանդիսանում: Հենց սյուժեի միջոցով է գրողը վերստեղծում իր հերոսի գործողությունների յուրօշինակ ժողովն: «Եթե կոմղողիցիան թեմայի զարգացման տամարանությունն է, առա սյուժեն հեղինակի համար դառնում է հերոսի բնավորության կազմավորման միջոց»<sup>123</sup>, - նույն է զրագանազն Զավեն Ավետիսյանը: «Անբնություն» դասմվածքում հեղինակը ժամանակաշրջանի խնդիրներին անդրադառնում է երգիծական նույր երանգներով՝ հատկանշելով ազգային բնաւորության որոշակի գծեր:

«Հոգնած երեկո» գրքի երես վիղակները, երես դասմվածքներն ինքնաշխատ են, ընդգրկուն, համոզիչ թե՛ կառուցվածքային, թե՛ բռվանդակային ձեւաչափով: Նրանցում արծարծված խնդիրները, արդիական լինելով, բարձրաձայնում են թե՛ սվյալ միջավայրի, թե՛ ընդհանրական իրողության ընդգրկումների, հիմնավորումների՝ լավ ու վատի, ճիշտ ու սխալի մասին:

«Հոգնած երեկո» ժողովածուի ժամանական շարունակությունը կարելի է համարել «Հեռացող երկրի կարողություն» գիրքը: Խորհրդանշական վերնազիրը կրող այդ ժողովածուն անկախության ժրանակի հայ գեղարվեստական արձակի լավագույն գործերից է: Նրանում տեղ գտած վիղակներն ու գրույցներն ընդհանրացնում են 1994թ. զինադադարից հետո «ոչ դասերազմ, ոչ խաղաղություն» անկայուն իրավիճակում գտնվող արցախյան իրականությունը, որտեղ մարդկանց վերաբերմունքն ու դատկերացումները կյանքի մինչ այդ գոյություն ունեցող բարոյական արժեքների վերաբերյալ, խրախուսական չեն: Ավանդապահ դարաքաղցին յուրացնելով բոլորովին օսար, ոչ իր ֆիմքին հարիր մարդկային փոխարարքերություններ, կարծես կորցնում է իր ինքնաշխատ տեսակը: Ժամանակաշրջանը ճիշտ գնահատելու ունակ գրողը ծանրակշիռ դիմարկումներով և հիմնավոր ընդհանրացումներով իր մտահոգությունն է

<sup>123</sup> Ավետիսյան Զ., Գրական առեղջագործության հոգեբանություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011 թ., <http://litopedia.org/>, 2013 թ.:

արտահայտում երկրի, ժողովրդի, նոր հայ մարդու, եւ ընդհանրապես՝ մարդու բարոյահոգերանական արժեքների փոփոխության նկատմամբ: «Կոռճ» վիդակի հերոսները ճշգրտուն ներկայացնում են արցախյան արդի ժամանակաւորացանի իրական դասկերը, երբ «երեխայի մատնաբարի տալու» նման նի անմեղ առաջարկ կարող է իրարանցում առաջացնել՝ խիս արժեքավոր դարձնելով Զախմախբարի «անտեսված» հողակտորը: Հեղինակը, երկու, անգամ երեք ժամանակների դայմանական անցումներում (Խորհրդային ժամանակաւորացան, Արցախյան դասերազմ, հետմասերազմական ժամանակաւորացան) ներկայացնում է մարդուն՝ ազգային եւ սոցիալական հեղափոխության մեջ: Խորհրդային հասարակարգում աղրած, արցախյան դասերազմով անցած, դայմանական խաղաղության անկայուն իրավիճակում գտնվող երկրի բաղաբացին «իշխանություն-իշխանավոր՝ անցողիկ բաների», ինչդեռ նաև սոցիալ-հասարակական անքարենողաս դայմանների դասճառով քողնում է իր խև «արյամբ շաղախված» հողը եւ աղասան վնասում Ալբայում կամ մեկ այլ երկրամասում: «Ժամանակի հետ չափանիւներն ել են փոխսկում» եւ «ամեն ինչ հարաբերական է» ձեւաչափի մեջ Համզայի հոգոցը տեղին է հնչում. «Մարդը ի՞նչ էր ուզում, ինչի հասցրին»<sup>124</sup>: Մ. Հովհաննիսյանը, ձեռքը դնելով կյանքի զարկերակին, տախս է Արցախի ներկա իրականության ճշգրիտ դասկերը: Արցախը, որն արձակագրի համար հայրենի բնօրրան լինելուց զայտուց արդեն դարձել է աշխարհայաց, իր գրական հունձի կարեւոր ու յուրօհնակ աղբյուրը, այսօր արդեն նոր երանգներ է ձեռք բերում: Հեղինակն իր մտահոգություններն եւ արտահայտում թե՛ իր երկրի բաղաբական-հասարակական, թե՛ իր ժողովրդի սոցիալ-հոգերանական, թե՛ մարդկային փոխհարաբերությունների փոփոխության եւ այդ ամենից առաջացած իրարանցման շուրջ: Եթեկ նկուղներում դաստղարված, այսօր արդեն մասնավոր սե-

<sup>124</sup> Դովիանմիսյան Մ., Երկեր, Դիմումներով հասողը, «Վաչագան Բարեպաշտ» իրատակչություն, «Սոնա» գրասուն, Ստեփանակերտ, 2015 թ., էջ 258:

փականաւեր դարաքաղցու նոր տեսակն իրեն այն երկրի տեսն է համարում, որի համար արյուն քափած սղաներն իրենց սռացված ու արհամարված զգալով, հեռանում են, բողնելով իրենց երկիրը: Փող կուտակած «կուլակ»-գյուղացիներն ել իրենց երեխաների համար բնակարաններ են ձեռք բերում բաղադրում՝ դաշտարկելով գյուղերը: Այս եւ նմանատիպ տագնալիներով ու մասհոգություններով է արձակազիրն արտահայտում իր «հեռացող երկրի» կարողը: Նրա բեմատիկ ընդգծվածության մեջ առանձնահատուկ տեղ ունի արցախյան ներկա իրականությունում տեղ գտած եւ օրենք ավելի լճացող բացասական երեւյթների արտացոլումը, որը խիստ սարբերվում է դարաքաղցու ավանդական կենցաղավարության, սովորությունների ու հոգեբանության առումով:

Հայի ինքնության, նրա «ես»-ի բացահայտման հետագրի մի վորձ է «*Snir մի կուր հանգիս*» վիմակը: «Ինաստունը ոչինչ չի հավաքում: Նա ամեն ինչ անում է ուրիշների համար եւ բաժանում ուրիշներին», - Լառ Ցզի այս միտքն ընտելով որդես բնաբան, Մ. Հովհաննիսյանը նախանշում է խոսվելիք նյութի բուն իմաստը: «Երսաների եւ հեղինակային խոսքի միջոցով արձակագիրը բացահայտում է հայ մարդու հոգեբանությունը, սոցիալական, ազգային, հասարակական գործոնների ընդհանրությամբ: Սոնայի եւ իր աղջիկների, նրանց ամուսինների արարքներում եւ փոխհարաբերություններում երեւում է հայ ավանդական ընտանիքի արժեհանակարգը: Ընտանեկան դարգ ու հասկանալի կենցաղավարության, մարդկային ջերմ ու ներքանկան հարաբերություններում առերեսվում են ծնող-զավակ, կիբ-ամուսին, ընկեր-բարեկամ արժեքները, որոնք բարյական նորօրյա խառնաւչփոքում բացառիկ իրողություն են: Իրար օգնելու, դժվար դահերին թե ու թիկուն լինելու կարեւոր հանգամանքը, որ եղել է մարդու, մասմակության հայ մարդու բնափորության հիմնական կողմը, վիմակի հերոսները կարողանում են արժանավայել դահել, դահմա-

<sup>125</sup> [28. 272]:

նել, զգալով իրաւ «գոյության անհրաժեշտությունը» («Նազենին ցավի դես զգաց մոր գոյության անհրաժեշտությունը»<sup>125</sup>):

Ավանդական ընտանիքի սովորությունների, տան մեծի հանդեպ ցուցաբերած սերը, կաղվածությունն ու հարգանքը լավագույն ձեւով երևում է վիղակի հերոսների փոխհարաբերություններում: Ավանդակեցության սկզբունքներով աղրող այս ընտանիքի դժվար կենցաղավարության, ներքին ընդգործմների արտացոլման մեջ Մ. Հովհաննիսյանը քարձաձայնում է ոչ միայն ազգային, այլև համամարդկային մի շարժ խնդիրներ: Սոնան որդես նվիրյալ մայր, Մարտիկը՝ հայրենիքի դաւադան, տալիս են ամեն ինչ, վտանգում իրենց կյանքը, «աղրելու իրենց ժամանակը» եւ փոխարենը ոչինչ չեն սանում: Կյանքը փիլիսոփայորեն դիտարկելու ունակ գրողի մտահոգությունը կայանում է նրանում, որ հայ զինվորը իր երկրից օգնություն ստանալու փոխարեն օսարի օժանդակությամբ է փրկվում, մայրն էլ իր երեխաների ցավ ու հոգսերով տարված կորցնում է առողջությունը եւ «աննկատելի հեռանում է անէություն»:

Մ. Հովհաննիսյանի հերոսները ժամանակների համեմատականում իրենց եւ տրջաղատի կյանքով ու կենսակերպով տալիս են «տեղած ժամանակների» ճշգրիտ դատկերը: Համանուն վիղակի հերոսները, երեկ դարարադի հասարակական, սննդական, մշակութային եւ այլ քննազարդությունների կարեւոր դեմքեր լինելով, այսօր անգործ, քուակի «կողեկները հաւշող» ուստա Սերորի «վուլկանիզացիա» յուրօրինակ ակումբի «նարդի» խաղացողներն են: Նրանից ասել-խոսելով, ծիծաղելով ու ձեռ առնելով արձանագրում են այն իրողությունը, թե ինչ էին, ինչ դարձան: Սակայն նրանց մտահոգությունը, ցավն ու հիասքափությունը նեղ անձնական լինելով, իր մեջ ներառում է համազգայինի տարրեր: Հեղինակի մտահոգությունը Ղարաբաղի եւ դարարադու ներկա իրականու-

<sup>126</sup> [28. 294]:

թյունն է, որտեղ «Դժգոհելու համար նյութի դակասություն չի լինում»<sup>127</sup>: Հեղինակը երկու սարքեր սերնդի ներկայացուցիչ-ների՝ ուստա Արմենակի եւ Երիտասարդ Արամիկի երկխոսության միջոցով բարձրածայնում է հիմնախնդիրների մասին, որոնք հիմնավորում են դարաբաղում դարաբաղի շմալու ողբերգությունը: Երկիրը դատարկվում է զների թանկացման («Օրինակ, զները՝ զազից սկսած մինչեւ ռուկայում վաճառվող մի փունջ կանաչի»<sup>127</sup>), խիս ցածր քուակ-աշխատավարձերի («Ոնց որ էօֆ դոչը՝ ոչ երկարում են, ոչ էլ կարձանում»<sup>128</sup>) դատճառներով, ինչդեռ նաև աշխատաեղերի կրծատման եւ մի շարժ սոցիալ-հասարակական խնդիրների հետեւանելով եւ «վա՝ յ նրան, ով դրսում մարդ չունի»: Վիդակն ավարտվում է հետեւյալ ընդհանրացմամբ. «Գնալով «Վուլկանիզացիայի» ակումբը գոսացավ, դարձավ անհամ քերանից ընկած»<sup>129</sup>: Գրեւում տեղ գտած վիդակներում ազգային եւ համամարդկային սարարույթ հիմնախնդիրների հոլովույթում մարդու հոգու ընդվզումների, մասհոգությունների, ցավերի ու հիասքափությունների ընդհանրության մեջ Ս. Հովհաննիսյանը հանգում է նրան, որ մարդկությունը գնում է դեղի կործանում, աղեսը համաժարհային է: Եվ «Մի հարցու ինչու, որովհետեւ պատասխան չունեմ» եղրակացությամբ արձակագիրը որդես վերնազիր է ընտրում «Հեռացող երկրի կարուրը» գրի վերջին, թվով չորրորդ վիդակի համար: Այսեղ եւս ժամանակների անցումային զգայաշափով հեղինակը իր հերոսի՝ Սեղրակի կերպարում ցոյց է տալիս ներկա իրականության ավանդական հայի ձեւափոխված, նոր տեսակը: Թերեւս դատահական չէ, որ հերոսն աղրում է Խորհրդային հասարակարգի, Արցախյան դատերազմի եւ հետմատերազմական խառնակ ժամանակների հեղափոխությունը: Եվ, եթե սովետի ժամանակ նա մենատեսեսի հոգեքանությամբ սիդ-

<sup>127</sup> [28. 294]:

<sup>128</sup> [28. 294]:

<sup>129</sup> [28. 309]:

ված էր մտնել «կոլխոզ», դարտադրված դասերազմում ներկա գտնվել, աղա սեփականատերի ու բիզնեսների ներկա ժամանակաշրջանում հետևյալ գտնում է իր սեղը («Զեն-ներեցության մարմաջը կլանել էր նրան»<sup>130</sup>): Սեղրակի կերպարի մեջ լավագույն ձեռով արտահայտվում է ժամանակի ոգու իրական դատկերը («Նա հովազի նման, որ ցատկից առաջ դրկում է մկանները, վսահ է, որ զոհն իր ճանկերում կլինի»<sup>131</sup>): Նա շահի գործոնը նկատի ունենալով, ամուսնանում է «քարձր հարկերում հեղինակություն ունեցող» բաղադրիչ զլիսավոր հաշվադատներից մեկի՝ Ասդրամի հետ եւ կարճ ժամանակում ձեռք բերում ունեցվածք եւ «հեղինակություն»: Սեղրակն էլ «Քառոս»-ի հերոսների նման հայտնվելով դարձածի կեղծի՝ փողի ազդեցության տակ, մոռանում է ընկերներին ու բարեկամներին, անգամ հին դարսի մասին, որը հենց ինքը՝ հերոսը, համեմատում է «Զիմզիմովի մուրհակի» հետ: Եվրոպական քարերի ներքափանցումը հայ իրականություն այնքան էլ բարենպաս չեղավ: Այլ վարժ ու քարժ ունեցող, արժեքային այլ սանդղակով առաջնորդվող դարարադյան հասարակությունը կլանված փորձում է յուրացնել այն, ինչն իրենը չէ: Թերեւս սա է դասճառը, որ հայ ընտանիքում մեծացած երիտասարդը ինչքան էլ փորձում է նյութով լցնել իր հոգու դատարկությունը, այնուամենայնիվ, հարազաների, ընկերների ու բարեկամների անտարբերության դասճառով «ավելորդության զգացումը ամբողջովին դատում է նրան»: Սեղրակի հակադատկերն է նրա կինը՝ Ասդրամը, ում քարոյական կերպարը հակասում է ամուսնու անբար կերպարին: Սոցիալակես աղահով, հասարակության մեջ իր ուրույն տեղը գտած, ամուսին, երեխա ունեցող կնոջ անձնական եւ ընտանեկան երջանկություն գտնելու երազանքը մնում է անկատար: Եթե Սեղրակը յուրացնում է քարոյագրկված իրա-

<sup>130</sup> 28. 355j:

<sup>131</sup> [ 28. 374]:

կանության ոգու բաղաքականությունը, աղա Աստրամը ցավով ու հիասքափությամբ է մտածում նյութադաշտ ու բաղեցնի ամուսնու մսի եւ արարեների բարոյագրկնան մասին. «Ոչ մի զցում, մեղավորության զգացում: Խղճի Վրա ոչինչ չի ծանրացել, ճանապարհին բար կա՝ տրանցիր կամ իրեւ մի կողմ: Ինչոքե՞ս կարելի է այդպես աղրել: Ինչոքե՞ս աղրել նման տեսակի մարդու հետ»<sup>132</sup>:

Աստրամն առաջնորդվելով՝ «մարդս ոչ միայն հացիվ...» աստվածանշյան ինաստությամբ, կարեւորում է հոգու աշխարհը, որտեղ մարդիկ ոլես է աղրեն իրենց հոգու եւ ոչ քե՛ իրենց «մոլորությունների ու սսրակա կրթերի» համար: Սառը, անտարեւ կյանքի հռճանուտում իր հոգու համար հենարան չի գտնում, եւ հեզնանեռվ արձանագրում է այն ժխուր ճշմարտությունը, որ իր երեխային տեսնելու, սիրելու, փայփայելու համար անգամ ժամանակ շատ քիչ է ունենում («Օրվա այն ժամն է, երբ Աստրամը ազատ կարող է երեխային գրկել, փայփայել: Իրեն մայր զգալու ժամն էր, ինչոքես հեզնանեռվ իր մասին ասում է Աստրամը»<sup>133</sup>): Այսեղ ոչ միայն ամուսինների բնավորությունների, արժեների եւ սկզբունքների անհամատելիության հարցն է ռուսական այլ այլ հայ նոր եւ ավանդական ընտանիքների արժեհամակարգի տարբերությունները: Սոնան ընտանեկան հոգսերով տարված, ժամանակ չի ունենում իր առողջությամբ զբաղվելու համար: Աստրամն էլ այդ նոյն ժամանակի սղության դասճառով իր երեխային սիրելու, իրեն մայր զգալու ժամանակն իսկ դլանավորում է: Ժամանակաւորականի քերություններից մեկն էլ ժամանակի դակասն է, որը համամարդկային է, գլորալ խնդիրներից մեկը: Գլորալ խնդիրներից են նաև օրեց-օր տատացող հիվանդությունները, իշխանավորների սովորական դարձած փոփոխությունները: Հայ ժողովրդի ազգային կերպարին անդրադասնալիս միշտ էլ կարեւորվում էր նրա երկարակեցության

<sup>132</sup> [28, 393]:

<sup>133</sup> [28, 354]:

փաստը, իսկ հիմա հիվանդությունները շատացել են և մահը դարձել է սովորական երեւույթ:

Մ. Հովհաննիսյանի հերոսները հաճախ են երեւույթները դիտարկում փիլիսոփայության ժամանկյունից: Նրանք իրենց խոսքում ոչ միայն մեջքերում են հին հույն փիլիսոփաների եւ մեր օրերի հմասունների մսերը, այլև՝ երբեմն իրենք են փիլիսոփայում: Հետաքրքիր է Նշան Ավետիչի հետեւյալ ընդհանրացումը. «Վերջերս շատ եմ մտածում բնազդի մասին, գուցե բնազդը մարդուն կարող է ավելի իմաստուն առաջնորդել, բնազդն է իր մեջ կրում մարդու գլխավոր նողատակը՝ գոյատեսկու նողատակը եւ առաջ գնալու ճիշտ ուղղությունը»<sup>134</sup>: Ընդհանրապես՝ Մաքսիմ Հովհաննիսյանի հերոսներն ու հերոսուհիները, անկախ իրենց սեռից, սարիփից, արհեստավոր, կամ արվեստագետ լինելու հանգամանքից, աչքի են ընկնում իրենց ինտելեկտով, կրթվածությամբ ու զարգացվածությամբ: Նրանք կայացած, ինքնուրույն, կյանքում իրենց տեղը գտած ժամանակակից մարդու կերպար են: Հայ գրականության մեջ հայ կինը խելքի, իմաստության, խոհեմության եւ շատ այլ ազգային եւ մարդկային կարեւոր արժեքներով առանձնահատուկ տեղ է գրավում: Սակայն Մ. Հովհաննիսյանի առաջ բաւած հայ ժամանակակից կնոջ, մասնավորապես՝ դարարաղցի կնոջ կերպարը (Հեղուտ, Ասդրամ, Լիլի) նորույթ է հայ նորագույն տրանսի արձակի մեջ: Ի դեմք Ասդրամի, հեղինակը առաջ է բաւում հասարակական գործունեությամբ զբաղվող դարարաղցի կնոջ կերպարը: Ի տարբերություն Սեդրակի կերպարի, Ասդրամի կերպարը ամբողջական չէ, ինչորեւ և Սեդրակի սիրուհու Լիլիի կերպարը, ով եւս ժամանակակից, կիրք, գործունյա կնոջ տեսակ է: Այս կանայք անցյալ չունեն, ունեն ներկա եւ այդ ներկան չի բավարարում նրանց: «Վերջերս հաճախ եմ հիշում Սեն-Սանսի «Կարամի մահը»: Ինչու չեմ կարող ասել», - նույն է Լիլին:

<sup>134</sup> [28.339]:

Մ. Հովհաննիսյանի համար առաջնայինը խոսվելիք նյութն է, որը միշտ էլ հասարակական որեւէ կարեւոր հիմնախնդրի ժուրգ է: Ուստի նա իր լճարած քեմայի, ասելիքի միջոցով է բացահայտում իր հերոսին: Համենայնդեպս Հովհաննիսյանի ստեղծած կանացի կերպարները անկախ իրենց հասարակական եւ սոցիալական կարգավիճակից հայ ավանդական կնոջ (Վերժինն աս, Սոնա) զարգացած ժեսակն են, նրանք չեն մոռանում իրենց ազգային դասկանելությունը եւ նրանց երջանկության չափորոշիչը առողջ ընտանիք ունենալու մեջ է («Ասոյրամը ընտանեկան ջերմություն էր ժենչում, Սեղրակից իզուր է այդ սղասում»<sup>135</sup>): Սեղրակի կերպարը եւս նորույթ է անկախության ցրջանի հայ գրականության մեջ: Նա նոր հայ մարդու կերպարն է մարմնավորում: Գրեում իր ուրույն ժեղն ունի «Վկայություններ» բաժինը: Այսեղ հեղինակը նովելային հետաքրքիր դասկերներ է բացում ընթերցողի առաջ: Մարդ-սյուժե կտրվածքում հեղինակը ուսադրությունը կենսոնացնում է արցախյան ներկա իրականության բացասական երեսույթների վրա, որի արդյունքում խաթարվում է հայի, մասնավորապես՝ դարձարադու նկարագիրը: Արձակագիրն իր սագմանութեան արտահայտում է հեղինակային խոսքի ձեւով, կամ գործող անձանց ժուրթերով: Նրանց մտահոգությունները կայանում են հասկաղես նրանում, որ դասերազմի ահ ու սարսափը ժեսած, մեծ դժվարությամբ ու կորուսներով հաղթանակի հասած ծողովուրդն իր հաղթանակը վայելելու փոխարեն դարտադրված է շարունակել աղրել այնողես, ինչու դասերազմի տարիներին՝ այն տարերությամբ, որ այսօր մարդիկ իրաւ նկատմամբ անտարեր են դարձել, իրաւ ցավի՝ անհաղորդ: Ղարաբաղին շարունակում է իր գոյադադարը, եւ, եթե դասերազմի ժամանակ զիսեր թշնամին ով է, գնում էր նրա դեմ, «հիմա չզիսի դեմը կանգնածը թշնամի՝ է, թե՝ բա-

<sup>135</sup> [28. 393]:

թեկամ: Էստես աղրելը անհնարին է դարձել»: Երկրի բաղա-  
ֆական, սոցիալ-հասարակական անքարենդաս դպյաման-  
ները հային խոցելի են դարձնում արտաքին թշնամու առաջ:  
Ժամանակային տարբեր ընդգրկումների մեջ, հերոսների վեր-  
հուսի, երկխսության, ներփին մենախոսության, հեղինակա-  
յին խոսքի եւ այլ գեղարվեստական միջոցների օգնությամբ  
Հովհաննիսյանը խոսում է ժամանակաշրջանի եւ նարդու  
հոգեբանության փոփոխությունների մասին: Այսեղ ըետքը  
դրվում է առավելապես «Հեռացող երկրի կարուը» ժողովա-  
ծուի վերնագրի բովանդակային բացահայտման վրա: Արցա-  
խյան դասերազմը, որն արդեն իրողություն է իր կորուսնե-  
րով, հաղթանակներով ու հաղթահարումներով, իր հետ քերեց  
հակասական զգացումներ: Պարտադրված դասերազմում  
հայտնված հայն ինքնակամ զենքը վերցրեց եւ դայլարեց հայ-  
րենի երկրի լուսավոր աղազայի համար: Նրանցից շատերը, որ  
«դասմությամբ հերոսներ» են, նահատակվեցին, բողնելով ի-  
րենց անունները, այսօր հիշվում են միայն «հանդիսավոր  
հավաքների ժամանակ»: «Անսպասելի վայրիվերումների ու  
շրջադարձերի» նոր ժամանակներում «ասպարեզ եկան նոր  
հերոսներ», որնեն անսպասելի, անգամ իրենց համար, սկսե-  
ցին երկիր դեկավարել եւ խոսել երկրի անունից: Մարտին Նի-  
կիսիչի ասած. «Հիմա լայնանիս արոտներին նսում են դղ-  
ուսն ալիքի քերածները»: Երկիրդ քողնում հեռանում ես՝ «Վայ  
է, մնում ես՝ էլի վայ է»: Մի քան ակնիայս է, որ դասերազմա-  
կան դժվար տարիներին չընկճվող, չհուսահասվող հայ նար-  
դու այսօրվա հարցարդումն՝ («սրա՞ համար էին կովում»),  
հուսադրող չէ: Եվ, բնավ դեմք չէ մեղադրել տախու վարողին՝  
«Ստիփանակերտսն աղրելու տեղ չէ» ձեւակերպման համար:  
Եվ ինչողե՞ս մեղադրել Մարտին Նիկիսիչին՝ սուս խոսելու հա-  
մար, ո՞ւմ մեղադրել Արուսակի «ոչ են է ճիշտն ասելու, ոչ են է  
սուսը խոսելու» երկընտրանի համար, կամ՝ ինչո՞ւ մեղադրել  
այն երիտասարդին, ով չի ուզում «ցուցակով գրուսը դահել»,  
այլ ուրիշների նման ուզում է գնալ եւ լավ աղրել: Եվ ինչ-

դե՞ս հակածառել Վաղոյի ասածին՝ «Հիմա ո՞նց է, ուս ես աշխատում, թե՝ իիշ, միեւնույնն է, ելի խանուքում ցուցակ ես գրվում...», երբ քուակ քաժանող Մարզոն քուակի օրը սնից տուն մտնելու փոխարեն մտնում է «քաղի խանութ ու դարսեր մարում»: Իսկ հաղորդ երկրի ժողովրդի համար ամոք է «խանութի ցուցակը, աղքարկոները փորփրելը եւ նման այլ բաներ»: Այստանով հանդերձ, Մ. Հովհաննիսյանի հերոսները չեն դադարում հուսալ եւ հավատալ, որ հեռացողները կարող են իրենց «ընկեր-ծանոթների դեմքները մտահան չանեն» եւ նորից վերադառնան իրենց երկիրը: Ցանկություն, որ կասկածենի է քվում երիտասարդ Ռուբիկին, ով Արտավազդի նման իր մտահոգությունը գրեթե նույն կերպ է արտահայտում՝ «Երկիրը բանդել եմ ու սվել ինձ», սակայն դարաքաղցի երիտասարդը, ոչ թե ասում է՝ «ո՞նց կառավարեմ», այլ ասում է՝ «Լա՞վ չէր լինի Մեխակը մնար ու միասին ժիրություն անենք, զործն էլ հետք կգնար»: Այս եւ նմանատիպ մտահոգություններով ու տագնադմներով է հանդես գալիս արձակագիրը «Վկայություններ» քածնի իրադարձումներում: Թե՛ սույն քածինը, թե՛ վիդակները, որ տեղ են գտել «Հեռացող երկրի կարոռը» գրքում, ոչ միայն Մաքսիմ Հովհաննիսյանի, այլև Ժամանակակից հայ գրականության մնայուն արժեկներից է:

### ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

#### 2.1. Արցախի ճակատագիրը «Մենք» ժողովածուում

Եղիշե Զարենցն իր «Մուսայիս» բանասեղծության մեջ, որով քացվում է «Էղիֆական լուսաբաց» ժողովածուն, դիմելով մուսային, նոր խաղաղ օրերի հրամայականով խորհուրդ է տալիս հերկել «միսեր այսօրվա մարդու, մինչեւ զրոհի ժամանակը գա»։ Այս ընգրծում է.

Եղ ժամը, երք զա-դու կրկի՛ն, կրկի՛ն,  
Ինչպես անցյալում կոմունար կամայ-  
Ամպրոպադղորդ բնարը ծեռփիդ:  
Գրոհի վսիմ երզը շրբունիդ  
Դիրքերում ինչ հետ կլանզնես անահ<sup>136</sup>:

Հանճարեղ զրողի այս մարզարեական խորհրդի դահը եկալ նրա ողբերգական մահից չորս տարի անց՝ 1941-ի հունիսի 22-ին։ Նախկին ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի արհասիրս զավակները զրոհի ելան հիտլերյան ֆաշիզմի դեղին ժամանակի դեմ՝ փրկելու ոչ միայն իրենց

<sup>136</sup> Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու, հատոր IV, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատա-  
րակչություն, 1968 թ., էջ 11:

Մեծ հայրենիքը, այլեւ մարդկության աղազան։ Գերմանական ֆաշիզմի դեմ մղվող դայլարը հայ ժողովրդի համար դատերազմ էր Վիլհելմ Երկրորդի հոգեզավակ Հիտլերի և հիտլերականների, ինչողեւ նաև Երիտրուրդերի ժառանգորդների դեմ՝ հանուն Խորհրդային Հայաստանի դահլյանան, գերված Արցախի ազատության, անկախ և ազատ միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարի իրականացման։

Պատերազմի հենց առաջին օրը, ասես, հենց Զարենցի խորհրդով, հայ գրողները ոչ միայն հնչեցրին իրենց գրողի երգը, այլեւ հանդես եկան հրապարակախոսական իմաստուն, ոգեկոչող գեկուցումներով, հոդվածներով, գրախոսություններով, դամֆիլեսներով եւ այլ ժանրերով։ Նոր երանցներ սացավ հայրենի երկրի մասին հնչեցրած խոսքը, հայ ժողովրդի դատմական-հերոսական անցյալը ներկայացվեց որդես նորօրյա գոյանարժի թի շառաչ։ Տեղին է վերիիշել ականավոր զիտնական Հովսեփ Օրբելլու կրակոս ելույթը Թրիլիսիում տեղի ունեցած անդրկովկասյան ժողովուրդների հակաֆաշիստական հանրահավաքում 1942 թ. օգոստոսի 23-ին, որով կոչ արեց՝ միասնական ուժերով մարտնչել «հիտլերյան հրոսակախմբերի» դեմ։

Հայ գրականությունը, առաջին հերթին հրապարակախոսությունը, սերմանեց անձնութաց սեր հայրենիքի հանդել, ատելություն՝ թշնամու նկատմամբ։ Ինչողեւ միշտ, այս անգամ եւս թեւածեցին Ավելի Իսահակյանի խորհուրդները։ Նրա «Ֆաշիզմը դիմի խորսակվի», «Հայրենական դատերազմը եւ հայ ժողովուրդը», «Պատմության ժամանակունը մեր օգին է» հոդվածները կրակոս կոչեր էին՝ ֆաշիստական բարբարոսության դեմ։ Մեծ բանաստեղծը հավատով գրեց. «Մենի խորապես հավատում ենի, որ ճշմարտությունը եւ արդարությունը դիմի հաղթանակեն չարության վրա։ Մեր սրբազն կոփվը կլինի վերջին կոփվը»<sup>137</sup>։

<sup>137</sup> Իսահակյան Ավ., Երևեր, հաստոր 5, «Սովետական գրող» հրատարակչություն, 1977 թ., էջ 333։

Ո-ազմաճակատային թերթերում հանդես եկան Դերենիկ Դեմիրճյանը, Նաիրի Զարյանը, Մարտիրոս Սարյանը, Արսեն Տերտերյանը եւ ուրիշներ: Նախընտրվել էին ռազմականչը, մարտահրավերն ու նամակ-դիմումը եւ այլ ժանրեր: Դրանք ոգեղեն կանչի ու դաշտամի, հերոսական անցյալի փառաբանման ու ներկայի վճռականության միջոցներով արքացնում էին հայրենապիրական ջերմ զգացումներ, ամրաղնդում ճակատի ու թիկունիքի միասնությունը, Խորհրդային Հայաստանի շուրջը համախմբում սփյուռքահայերին՝ գերմանական ֆաշիստների դեմ:

Հայոց ազգային ճակատագիրը թելադրեց 1988 թվականի Արցախյան ազգային-ազատագրական շարժումն ու մեզ դարտադրված դաշերազմը: Շարժման հենց առաջին օրերից կրկին հնչեց հրադարակախոսությունը: Մամուլում հանդես եկան Բագրատ Ռևոլյուցիանը, Զորի Բալայանը, Բոգդան Զանյանը, Սերո Խանզադյանը, Սերգեյ Սարինյանը, Սերգեյ Արզումանյանը, Սիլվա Կալուտիկյանը, Վահագն Դավթյանը, Համո Սահյանը, Գետրդ Էմինը, Սոս Սարգսյանը, Բենիկ Օվչյանը, Ռազմիկ Դավոյյանը, Գետրդ Դեւրիկյանը եւ շատ ուրիշներ: Նրանց հրադարակախոսական ելույթների մեջ կարմիր թելի դես անցնում էր Պատմական Հայաստանի 10-րդ նահանգը հանդիսացող Արցախ աշխարհի ազատագրման հիմնախնդիրը: Այդ օրերին առանձին հնչեղություն սացավ Հրանտ Մարենոսյանի, Մաքսիմ Հովհաննիսյանի, Վարդան Հակոբյանի, Վարդգես Բաղրյանի, Գուրգեն Գարդիելյանի, Սոկրատ Խանյանի, Հրաչյա Բեգլարյանի, Նվարդ Ավագյանի, Նվարդ Սողոմոնյանի եւ մյուս մտավորականների հրադարակախոսական ելույթները թե՛ հրադարակային հանրահավաքներում, եւ՛ թե՛ մամուլի էջերում: Առաջին հերթին բարձրաձայնվում էին Արցախի հերոսական անցյալի եւ վտանգված ներկայի զուգահեռները եւ կոչ արվում՝ բորբակել Աղրենջանի հայահալած լուծը:

Հրադարակախոսության առաջին գծում գրեթե բոլոր գրողներն էին, նրանց խոսքը բորբոքում էր ոսքի ելած ժողովրդին, մղում ազատագրական դայլարի: Առանձնահատուկ երանգ ունեցան Հրանի Մաքենույանի ելույթները: «Հաղթանակը մեր անցյալի, աղազայի եւ համայն մարդկության առջեւ մեր առաքելությունն է» հոդվածում նա իշում է աղքա-ջանցի գրողի հոխորանին ու երդումն այն մասին, որ կտրելու է հայի ձեռքը, եթե մեկնի Ղարաբաղին: «Երդվում է, եւ իր ժողովուրդը նրան ցեղաղետ է մեծարում, եւ իր կառավարությունը նրան զարդարում է շքանչաններով: Եվ դա սահմոկելի է, որովհետեւ ե՛ն նա, ե՛ն նրանի լավ գիտեն, որ Ղարաբաղն ինքնիշխան ժողովրդի հայրենինի է, այնինչ՝ խոսում են որդես անմեր-անլեզու տարածեների, որդես սիրամեն տան մասին», - գրում է Մաքենույանը եւ հոդվածի վերջում հաստատում իր հավասի դրույնով. «Հաղթանակը մեր անցյալի եւ աղազայի, եւ համայն մարդկության առջեւ մեր առաքելությունն է: ... Մեր հաղթական այսօրից հաղթական էլ անցյալ է հառնելու, մաքուր առանձնատերով ծաղկուն բաղադրենի Հայաստան հայրենինի է բացելու մեր հաղթանակած այսօրը, սահման է դնելու խավարի քաջավորությանը՝ ուրախություն բոլորի՝ եւ թշնամու, եւ թշնամու նույնական, բանի որ, ենթադրում եմ, ինքն էլ է նողկում սումգայիթյան իր հարյուրամյա զառանցաներում տաղակվելուց»<sup>138</sup>:

Տաղանդավոր գրողը կոչ էր անում «հավատավոր ջանի»: Ծամարտությունը դահանջում է նեւել, որ այդ «Հավատավոր ջանի» զինվորյալ գրող-հրադարակախոսների շարքում ամենից բեղմնավորը Մ. Հովհաննիսյանն էր: Եվ դա բնական էր, որովհետեւ Հովհաննիսյանն այդ թեժ տարիներին արցախյան դաւանական օրաթերթի սեղծագործող-խմբագիրն էր, գաղափարական դայլարի ծանր հրետանին՝ միւս դաշտաս դատասխանելու Աղրբեջանի ոչ միայն կառավարող ցըցան-

<sup>138</sup> Մաքենույան Դր., «Սպիտակ թղթի առջեւ», Երեւան, «Դայ զիտակ» հրտարակչություն, 2004թ., էջ 300:

ների, այլև կեղծարար մտավորականների հակահայկական - հակադատմական հերյուրանիներին, Արցախը սեփականելու բարբաջաններին: Այստեղից էլ Մ. Հովհաննիսյանի հրադարակախոսության դասմական արժեքը եւ գործառական նշանակությունը նոր սերունդների ճանապարհին:

Մեծ է նրա ներդրած ավանդը Արցախ աշխարհի, արցախցու բնույթի, հոգեբանության, սովորությունների, արցախյան շարժման, աննահանջ մաքառման ու դայլարի, դատերազմի ահասարսուու դեմքերի ու դատմական կարեւոր իրադարձությունների փաստագրության մեջ: Այդ «բանի գեներալը», ինչդես Հրանի Մաքենույանն է բնութագրել, հայրենաբաղն ու հայրենաւոնչ ակնարկների, էսաների եւ լրագրային տարբեր ժանրերի միջոցով աշխարհի տարբեր ծայրերում գտնվող հայությանը մասնակից էր դարձնում Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Նա, փաստագրելով ներկան, դայլարում էր իր հողի, իր ժողովրդի հաղթական աղագայի համար: Այդ տարիներին էլ ծննդում են նրա շատ գործեր, մասնավորապես՝ «Մեն» ժողովածուն: Հետազայում նրա հրադարակախոսությունը ձեւավորվեց «Ուսպորտած դեպքի վայրից», «Ուսպորտած դեպքի վայրից-2», «Ուսպորտած դեպքի վայրից-3» եւ այլ ժարթերում ու հրադարակումներում: Արցախյան շարժման սկիզբը, ընթացքն ու հարաբերական անդրրը բնութագրող ինքնաշխատ արձանագրմանը գրող-հրադարակախոսը գրական, փաստագրական մեծ ժառանգություն է ստեղծել: Նա համարձակուեն իրականության ճշմարիս դեմքն ի ցույց հանեց՝ երեսն նաև սեփական անձը վասնգելով: Սակայն այդ էր ժամանակի հրամայականը, իսկ գրիչ ունեցող գրողը, մտավորականը ոչ միայն չէր կարող դուրս մնալ այդ ժամանակից, այլև ինքը եւս դեմք է նողասեր այդ ժամանակի կերտման գործընթացին: Մաքսիմ Հովհաննիսյանը կարողացավ ստեղծել իր ժամանակաշրջանը՝ ուսափելի, հարազատ, իրական դեմքերի ու իրադարձությունների օբյեկտիվ նկարագրությամբ, դարձ ու հասկանալի շարադրանինով, հաստատուն ձեռագրով: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը նկատում է. «Այստեղ էա-

կանը «նոր աշխարհն է» եւ նրա դասկերն ըստ խոսքի, որ այլ կերպ կարելի է անվանել իրականության գիտակցում»<sup>139</sup>:

1989թ. Երևանում լույս է տեսնում Մ. Հովհաննիսյանի «Մենք» ժողովածուն:

Գրողը «Մենք»-ում ոչ միայն ներկայացրեց արցախյան «ֆեռումնենը», այլև հարսացրեց անկախության տրջանի արձակը: Այն Արցախ աշխարհը ներկայացնող մի հետարքիր եւ դատմական կարեւորություն դարունակող էսսեաւար է, որում իրաղարակախոսական սուր հարցադրման եւ լուրջ խնդիրների մեջնաբանման հետ մեկտեղ ներկայացվում է նի բարեկամական պարագաների մասին՝ սկսած ծառի դատի դասմությունից, սարածքային կարեւորություն ունեցող անունների թվարկումից, նրանց գՏնվելու տեղի գեղարվեստականացված փաստագրությունից, մինչեւ արցախցու մասնակերմի, վարժ ու բարի, բառ ու բանի հյութեղ դասկերավորության իրաղարակերը: Գրում բացահայտվում են արցախյան մենք ու մունքի առավելություններն ու թերությունները, բնութագրվում Արցախի եւ արցախցու բնավորությունն ու դիմագծերը: Պատահական չէ, որ 1998թ. «Մենք»-ի համար Մաքսիմ Հովհաննիսյանն արժանացել է ՀԳՄ Դեենիկ Դեմիրճանի անվան մրցանակին:

Գիրքը «Մենք» ազգաճանաչ անվամբ մի շարժ հարցերի դատախանաներ է տալիս, սուր հարցեր առաջադրում՝ օգտագործելով հումորի անհրաժեշտ հնարաններ: Ինչպես նաև դատմական տեղեկություններ է հաղորդում Արցախ բնաշխարհի մեծ ու փոփոք սարածաւորականների մասին:

«Մենք»-ի մեջ զետեղված էսսեներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Նրանցում նրբութեան դասկերված են արցախյան աշխարհը ներկայացնող դատմական իրաղարձություններ եւ արժեքներ: Գրի հերոսները

<sup>139</sup> Սարիմյան Ս., Յայ գրականության երկու դարը, գիրք հինգերորդ, Ստեփանակերտ, «Դիզակ պլոտ» հրատարակչություն, 2009 թ., էջ 205:

դարաբաղցիներ են՝ կարելույն չափ գնահատված իրադարակախոսի կողմից: Մ. Հովհաննիսյանն իր գրչով վրձնում է այն ամեն սիլականը, ինչն արցախյան է: Արցախյն, նրա սարածքներին, նրանում բնակվող մարդու էռոթյանն անծանոք ընթերցողը կարող է ծանոթանալ այս գրի միջոցով: Գիրքը, ինչն սկզբից բացահայտելով «մունիքի» էռոթյունը, հերթականութեան մատուցում է Արցախ բնաշխարհի ճաւացուցակը, որի ուժեսները՝ համեմունքների առատությամբ, համտեսելու մեծ ցանկություն են առաջացնում, եւ եթե ինքն էլ արցախցի ես, մտովի վերիիշում ես այդ ամենը, զրուցում զրողի հետ: «Եվ ինչ գեղեցիկ են ձեւոյքները եւ ինչքան մաքոր է բաղադրված արցախյան ֆենոմենոլոգիան fn կենսաբանական բջիջներում: Իրոք մեծ խորհուրդ ունի այդ «տեսակ» կոչվածը, առավել եւս մարդկային տեսակը, որ fn ընկալմամբ սիեզերական սկիզբ ունի եւ կազմավորվում է քնության ընտրությամբ եւ ամենակա է՝ անտառների բավուտներում, ծառերի սաղարթներում, եղանակների գույններում, հողի ընդերից ելնող բանականության թոխքում»<sup>140</sup>, - ընդգծում է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը:

Մասիմ Հովհաննիսյանը հմտությամբ խոսի փետերը բացում եւ ավարտում է ժողովրդական կենսափորձի ընդհանրացմամբ: Նա սարքեր դասկերմերը քերում միացնում է իրար, այնուև, որ քվում է, թե այդ ամենն այնքան են համազոր, միասնական, որ հնարավոր չէ մեկն առանց մյուսի դասկերացնելը: Նրա ստեղծագործությունները նման են կտավների, որոնց ուսումնասիրումն սկսվում է երեւելի երանգներից եւ հասնում դասկերմերի խորհային ու խոհական բացահայտմանը: Այնուա որ, արտասվելու դահին ուզում են արտասվել, լրելու դահին լրել, եւ «քած այն բաղադրավարության վրա, որ դեմք է սիմդի ժողակ, երբ սիրտ արտասվել է ուզում»<sup>141</sup>:

<sup>140</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հասողոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուլ, 2006 թ., Նամակ՝ գրող Մաքսիմ Հովհաննիսյանին, էջ 521:

<sup>141</sup> Հովհաննիսյան Մ., Արցախ ին, ցավ իմ, Երեւան, «Նաիրի» հրատարակչություն, 1998 թ., էջ 60:

Մ. Հովհաննիսյանը հաշվետու տարեգիր չէ, նա աղբում է այն ամենի համար, ինչ որ դասկերում է: «Գեղարվեստական ստեղծագործությունը դեմք է դիմի ոչ թե մսքին, այլ զգացմունքայնությանը, դրանում է կայանում նրա հիմնական անվիճելի օրենքը, որ չի կարող փոխվել, այդպես կհարատելի արվեստ»<sup>142</sup>, - գրում է Վ. Բերյոտսկը: Մ. Հովհաննիսյանն ընդունում է այս դիտարկումը:

«Մենք»-ի էսեների դասավորությունը մի ամբողջական դասմություն է՝ սկսած խորհրդային կարգերից մինչև 1988-ի ազգային-ազատագրական ժարժումը: Այն իմենաշիմ հանրագիտարան է, որում արտացոլվում են արցախուցու դժվար առօրյան, նրա կամքի ուժն ու հավատն աղազայի հանդելոց: Ամենօրյա հոգսերի մեջ նա ժամանակ չի ունենում վայելելու բնության դարգեւները, որը հասուկ է Արցախին: Այն գիտակցելու համար դեմք է ուրիշ տեղերից հյուրեր զան, որ արցախցին դասմելով կամ ցույց տալով հղարտան: Սա է «մենքի» տեսակը, եւ այդ տեսակի իրական դասկերը հավասիրեն եւրկայացնում է հրամարակախոսը սույն տողերի մեջ: Գյուղերի անվանումները, գտնվելու վայրերը, գյուղացու աղբումները, մտածելակերպը, լեզվական հնչերանգները, աղբելու տարօրինակ եւ յուրօրինակ ձեւերը, գյուղից գյուղացու հեռացումը, հողի եւ գյուղացու հավերժական մտերմությունն ու ժամանակավորելով փախուստը գրողը դասկերում է հավասի, առինքնող երանգներով: Խնդիրն, ինչը ես միշտ, մարդն է, բնությունը, մարդու եւ բնության միջեւ առկա հնարավոր հեռավորությունը, ցավի անդրադան ու անհատությունը: Իրողություն, որ տշանակվում է ընտանիք-հայրենի բնաշխարհ-նյութական դակաս-կարուս-կորուս, եւ ամենակարեւո՞ւ այդ ամենին դիմանալու կարողության ուժայակաղով: Ղարաբաղցու ֆենոմենալ տեսակի արժեւորման ահա թե ինչ հիմնավորում է տալիս Հովհաննիսյանը «Երք հո-

<sup>142</sup> Брюсов В., Литературное наследство, Москва, Издательство Наука, 1976, с. 224.

դը գնում է զյուղի տակից» էսսեում. «Նովոսիբիրսկի գիտականներից մեկը գրել է, թե որտեղից է խմացել, ասենք, գիտնականին էլ ասեն՝ որտեղից, իսկական գիտնականը նա է, որ սուսը իսկականից ջռկում է,- ահա այդ գիտնականը գրելով դահանջել է, որ Ղարաբաղի հայությունը դեմք է դահմանել, որովհետև հայության արցախական տեսակը մեր ժողովրդի... գենեֆոննդն է»<sup>143</sup>:

«Մենք»-ը բացվում է «Մենք» էսսեադատումով, որտեղ հավասարապես արտացոլվում են արցախցու լավ ու վաս կողմերը, թերություններն ու առավելությունները: Գրող-հրադարակախոսը մեղմ երանգներով բննադատում է այս կամ այն երեւոյթի դատասահետեւանքային կաղերի վաս ազդեցությունը՝ ներազգային կամ համաշխարհային հնչեղություն ունեցող իրողությունների սահմանագծում: Մ. Հովհաննիսյանը սաժիրայի եւ հումորի միջոցով իր վերաբերմունքն է արտահայտում ժամանակրօնակի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերի մասին, ասում իր լուրջ ու դիմուկ խոսքը, լավ ու վաս երեւոյթների հանդեմ ցուցաբերում իր համակրանքն ու հակակրանքը, գեղարվեսորեն ուրվագծում է մարդկային հոգու ամենանուր կողմերը, արցախցու հոգուն ու ոգուն հարազատ զացողություններն ու Տամարանական ընկալումները:

Հրադարակախոսի տողը իմացարանուն եւ գեղագիտուն հազեցած է: Նա իր խոսքը սկսում է մենքից, որին «մենք ասում ենք մունք», զալիս հասնում 2000 տարեկան ծառի դատմությանը: Եվ նոյն հետևոյթյամբ անդրադառնում Ամարաս վանքին՝ ասելու համար այն ամենն, ինչը հուզում է, եւ դեմք է, որ հուզի յուրաքանչյուր արցախցու: Այդ ամենը արվում է հյուրին՝ գրող Ալվարդ Պետրոսյանին, արցախցուն վայել հյուրասիրությունը ցույց տալու եւ արցախցու

<sup>143</sup> Յովհաննիսյան Մ., Արցախ իմ, ցավ իմ, Երեւան, «Նաիրի» հրատարակություն, 1998 թ., էջ 15:

հայրենասիրության վեհ զգացումն արտահայտելու համար։ Դրանից ավելի հզոր զգացում չկա արցախցու համար։ Միայն արցախցին է ինքն իր նասին հոգնակի խոսում, եւ միայն Արցախն ունի Գանձասար, որի «դեմք Կաչաղակաբերդն է, իսկ Ամարասն ավելի հին է, Մեսրոպ Մաշտոցը Ամարասում դղրոց է քացել եւ մեր անկիրք ու մտն երեխաներին՝ այր, բեն, զիմ, դա... այսպիս ծոր սալով զիր-իմաստություն սովորեցրել ու վերջում էլ, որդես դասզամ, նրանց վարժվող ուղեղներում կաթեցրել՝ զրանս հանճարոյ»<sup>144</sup>, - ընդգծում է հեղինակը, եւ աղա Շարունակում, որ միմիայն Արցախի այսն կարող է Մորփեոս ասծուց անտեղյակ հորինել մրափեռուս քառն ու հիանալ. «քառն այային դուր էր եկել, ու խանդաղատանքով կրկնել է որդու խոսքը՝ քան չկա, մի ժիշ մրափեռուս արա։ Ու այսպիս իրար սալով՝ Մորփեոսը՝ հոլովվելով, ձեռ առնելով, բերանից բերան փոխս ընկնելով, դառնում է մրափի հասկացություն, քառ, քառաղացաւար»<sup>145</sup>։ Սակայն այնտեղ, որտեղ ամեն ինչ չափազանց լավ է թվում, իրականում ոչինչ էլ լավ չէ։ Յավը ճշում է երանության աշխերից, եւ անկարող են թվում ամենակարող մսերը։ Սիրտը ճնշվում է մի աննեմար քանից, սակայն լրում են արցուները, երբ սոսկում է դարգ երեւելին։ Յավն ու սառաղանքն այնտեղ են լինում, որտեղ դասկերացնելն անգամ ամոք է։ Արցախի իրացք բնության, նրա հեզ ու համեստ բնակչության խորը ներսում ըմբռոս ցավն է, կարսը, սովը. «Երեսուն սովալլուկ երեխա՝ գումարած ընկեր Թավրիզյան, հանած նոր եկած սյունաւենցին, խեղդվում ենի հացի բուրմուներուն»<sup>146</sup>, - սրացավությամբ ու ականատեսի անմիջական նասնակցությամբ արձանագրում է հեղինակը։ Երանության կողքին ցցվում է ափսսանելը, ափսսանելի կողքին՝ դահանջը, հարկադրանքը, եւ մունքի քու-

<sup>144</sup> [21. 8]:

<sup>145</sup> [21. 10]:

<sup>146</sup> [21. 9]:

լուրջունն առավելուրջուն դարձնելու նղատակն է առերեսվում: Հրաղարակախոսն արցախցու վեհ ու առաքինի լրջուրյամբ, փիլիսոփայական ժեւադրումներով, արցախական բառ ու բանով շաղախսված դատկերների միջոցով տալիս է ժամանակի ճիշտ նկարագրը: Հիմնավոր ու համոզիչ ընդհանրացումներում ու ընդգծումներում արժեւորվում է հեղինակի այն համոզմունքը, ըստ որի Արցախը հավերժական սահմանագծում իր հաղթական սահմանումն ունի: Նրա բնաշխարհի գեղեցկուրյունն արարումն է այն հավերժուրյան, որ կարող է քեւավորել մարդկային ոգեւորությունը: Բայց, ի զարմանս այդ ոգեւորության, հիացմունքն այլեւս չի արժեւորում բնուրյան գեղեցկուրյունը: Կյանքի դժվարությունները, առօրեական խնդիրները, մանր-մունք հոգսերը սիդում են մարդուն անտեսել բնուրյունը զգալու նրբանկատությունը: Եվ մարդը, կամա թե ակամա, հեռանում է բնուրյան հրաւալիֆները վայելելու հնարավորությունից. «Հոգսերի մեջ, կյանքի անհաւա հարցումների, մեր կենցաղի անհարմարությունների, մեր քանկությունների ու դժվարությունների, ժամանակի սղությունների, չոռուցավի մեջ, մեր ծովությունների, զակաշունների մեջ մոլորշած, մի օր ամեն ինչ բարձիքողի չենք անում ու զնում մեր ծառն էլ տեսնելու, մեր մյուս հրաւալիֆներն էլ վայելելու»<sup>147</sup>, - նկատում է գրող-հրաղարակախոսը, առաջ շարունակում, որ այդ հրաւալիֆները ֆիշ չեն Արցախյան հողում: Այսեղ «ցորյանի արտեր ենք աճեցրել, այգեստաններ տնկել, եւ ճիերի երամակներն էլ վարգել են լեռնադարերի ուսերով, եւ նրանց պացքը նման է եղել երկնամերձ մեր սարերին, այդ մերձությունը դուր է եկել Վարդեսին, եւ նա Ամարասում բարը բարին է դրել, միշտ միտն է դահել սարերի մերձությունը երկներին, եւ երբ իրար շարած բարերը սկսել են լեզու առնել, խոսել են ոչ թե խոսք ու բառով, այլ այս երկրի հետ ի-

<sup>147</sup> [21. 10]:

թենց նմանությամբ: Ահա այդ ժամանակը, որ այլեւս ժամանելու չեն, այլ Ամարաս վաճի, դատմել են այս կողմերի բաների մասին»<sup>148</sup>, - ինդինակը դատմական անցյալի հիմնավորմանը արժեւորում է իրանկարը:

Մասսիմ Հովհաննիսյանը, անդրադառնալով դարարադցու քնույթին, նրա քնավորության յուրահատուկ գծերին, նույն է, որ դարարադցիները սիրում են հղարտանալ իրենց հուշակորողներով, դատմական անցյալով, մոտակա անելիքներով, անգամ հղարտությամբ: Որպիսի հղարտություն կա նույնիսկ լուրջան մեզ, ինզ հղարտություն, որը դարարադցու արյան մեզ է, նրա էության նրբերանգներում: Ինչ-ուս չհղարտանալ, երբ քնուրյունը օնորիել է մի չեսնված ծառ, որին. «դեռ իր ժամանակ Նիկոլայ քագավորն է ամիսը մի ժամի ոռուրի քուակ նւանակել... ոչ մարդուն, ծաղին»<sup>149</sup>, - ընդգծում է ինդինակը, աղա շարունակում դարձարանել, որ այդ ծառի նմանները չկան, եւ չեն եւ լինի. «լինեն էլ, կամ ֆիշ քվով կլինեն, կամ դակաս տարեկան»<sup>150</sup>: Սիրով եւ հղարտությամբ խոսելով իր երկրի, իր ժողովրդի արժանիքների ու առավելությունների մասին՝ Հովհաննիսյանի ուշադրությունից չեն վրիդում նաև թերությունները, որոնի առավել համոզիչ ու հաստատուն են դառնում համեմատությունների ու հակասությունների համատեսում, որտեղ, արժեւորվելով դրականը, բարձրաձայնվում են բացասական երեսույթները: Հեղինակը, հղարտութամբ նշելով նմանը չունեցող ծառի երկարակեցության մասին, ցավով է արձանագրում այն ժխուր իրողությունը, որ իրաւալիքը անգամ «մի հասարակ ցուցանակի չի արժանացել, որդեսզի չգնաճ Կարմիր շուկա ու եւ դառնաճ, կարծես ավանն ավանային խորհուրդ չունի, սովորող մի երկարեւ սյուն չու-

<sup>148</sup> [21. 8]:

<sup>149</sup> [21. 7]:

<sup>150</sup> [21. 8]:

նի 60x40 սմ չափսի, 8մմ հաստությամբ երկաքարերի կտր, մի զողող վարդես, Կարմիր շուկայի կուլտուրայի տունը շնորհենվ մի աշխատող չունի, որ հայերեն-ռուսերեն գրի, անգլերեն նկարի, եթե անգլերեն դասառու չունեն, զա Ստեփանակերտ և Խնոմրի անգլերեն իմացող անգլերենի մի դասառուի, որը բառարանի օգնությամբ եւ անտառախալ գրի՝ Սիսորաւենի սոսենին երկու հազար տարեկան է»<sup>151</sup>: Այն, ինչը չկա՝ երանելի է քվում, իսկ այն, ինչն իրոք երանելի է եւ մեր շուշը է, մեր կողին, անտեսվում է, չի արժանանում համապատասխան փառարանմանը: Կյանքի դարադրու՝ ոմանց հրաւալիքն են տալիս, ոմանց էլ՝ հրաւալիքը զնահատելու եւ վեր բարձրացնելու ժամանակն ու նյատակը: Արցախյան հողում ծառերը ճգվում են դեղի երկինք, ճգտում հարատեսության: Արցախյան հողում «քարերն այլեւս furter չեն, այլ Ամարաս վանք»: Իսկ նրա զավակները, տունուտիղ քողած, հեռանում են իրենց հայրենական օջախներից: «Սիսորաւենցուն Կարմիր շուկայում գտիր, Ստեփանակերտում, Բաբու, Երեւան ու ուրիշ նշանավոր բաղադրություն»<sup>152</sup>: Հեռացում, որի դասձառը վիճահարույց է, բայց ոչ արդարացված: Ամեն տեղ եւ ամեն ինչում կարելի է փնտել մեղադրներ ու անմեղներ, դասձառաբանումներ ու արդարացումներ, սակայն փասը մնում է փաս. նրանք հեռանում են եւ նրանցից ոչ մեկի «խելքը չի կտրում, որ դեղի ծառը տանող ճանապարհը դեմք է կարգավորել, գուցե թե կարուսախսից այսեղ մղվածներից մեկը իր համար որոշի՝ կնոջ հետ շհամաձայնեցնելով, երեխա-հարազատներին դիմադրելով, խելքից դակասելով, որտեղից գլուխը մտած մի ծոռությամբ որոշի զալ զյուղ, որ հայրական տունը շենացնի, զարնանը զա ամայի դլդան ու կածուկ կոխած բռստանատեղը բահի տալու, կարտոֆիլ, լոբիկ ցանելու,

<sup>151</sup> [21. 8-9]:

<sup>152</sup> [21. 9]:

տաֆդեղի սածիլը Քյաքուկից կրերի, այդուև ամեն ինչից առաջ կունենա, որ բաղաբում մնացած երեխաները ամեն ինչ փողով չառնեն: Դատարկված-ավերված, սովալլուկ դառած կոլտնտեսային ժուկայում ամեն ինչ թանկ ու կրակ է»<sup>153</sup>, - նույն է հեղինակը: Նա, արժենորելով դարաբաղցու հղարտ դահլվածքն ու կեցվածքը եւ մի շարժ այլ առանձնահակուրյուններ, ընդգծում է, որ երեմն այդ առավելուրյունները բերությունների են վերածվում, եւ հղարտությունը, որով դարձենում են, ծաղրելու ժեղիք է տալիս: Ծիծաղելի է նման դայնաններում նման կերպ զոյատելու ձեւը՝ «փողի համար չաղրելը, ձեռուոտք մաքուր աղրելու մղումը»: Այն դառնում է աղրելակերպ, վերածվում սովորության: Ծովուրյունը գլուխ է բարձրացնում, եւ մարդը տրվում է անգրծության վայելիքին: Այնինչ՝ «գործ անելու, բան անելու ժամանակներն են եկել: Մեր այս խեղճուկրակուրյունը բռքափելու, մեր տուն-օջախը ըենացնելու, մեր վարուցանքը անելու, մեր կիսատուրյունը լցնելու ժամանակներն են»<sup>154</sup>, - ընդհանրացնում է հրաղարակախոսը: Հովհաննիսյանը երկրորդային նշանակուրյուն ունեցող երեսույթների միջոցով բացահայտում է առաջնայինը, այն, ինչն իրոք դրոբլեմատիկ հնչեղություն ունի: Նա փաստերի, օրինակների միջոցով ի հայս է բերում իրողությունը: Խնդիրներ, որ հուզում են հսարակության տարբեր խավերի ներկայացուցիչներին:

«Մենի»-ի շարունակուրյունը «Եր հոդք զնում է զյուղի սակից» էսեն է: Այստեղ հեղինակը ընթերցողին Սխսորաւունից ժեղափոխում է Ննգի, ներկայացնում նրա անցյալն ու ներկան, իրենց անունները հայրենի օջախներին արժանադաւակությամբ դրումած ննգեցիներին: Արդեն այն Ննգին չէ, որտեղ կան «քանի տարեկան՝ մարդահասակ եւ ավելի կարասներ» եւ այլ գործիքներ դաշտասկած կավից: «Գավին

<sup>153</sup> [21. 9]:

<sup>154</sup> [21. 10]:

մենի կյեվաք ենի ասում,- ղարզաբանում է հրադարակախսուը,- եւ կյեվաքն էլ գավ չէ՝ կերակրի ափսե, որտեղից քրդուճը լավ ուսվում է, եթե մանավանդ ձեռփիդ փետի՝ ողորկ, չտաւված, բայց հետո գործածությունից լավ հղկված գդալ է: Այդ բոլորը այսեղ են ղարտասվել, Ննջիում: Այսեղ կավը ուրիշ տեսակի է՝ մարդիկ շատ-շատ դարեր առաջ իմացել են կավից խեցի ղարտասելու արվեսը»<sup>155</sup>: Հովհաննիսյանը իիացմունքով ու համակրանքով է ներկայացնում Արցախ աշխարհի բնությունն ու ժողովրդին, նրանց վերաբերող ամեն մի բարեմասնություն՝ դրանք համեմելով արցախական բառ ու բանով: Արցախական ժողովուրդը կարող է աներկրա հղարտանալ իր հարատեսությամբ, ազնիվ զոյաղյարնով, իր անկրկնելի բնաշխարհով, իր ֆենոմենալ հավատով եւ ղարտասխանատվությամբ: «Մենքի այս տեսակը» ինքնատիղ, տարաբնույթ ես-երի շարունակականն է, որնց հեռացումի մեջ մշտառկա է անլսելի նոտիկությունը, մերձեցման մեջ՝ անասելի մտերմությունը: Որովհետեւ «այս տեսակին» տրված է մի այնպիսի բնաշխարհ, որը լինում է հետիաբներում: Արցախ աշխարհը եւս հետիաք է, նրա մեջ մեկ անգամ հայտնվողն այլես դուրս գալու ցանկություն չի ունենում: «Բնության գույների խաղը ղարաբաղյան զորգերի փափկություններում, նախւերի կատարյալ ձեւերը զարմանալի նման են լեռների այս շարերին, մեր բնավորությանը, մեր բնույթին...»<sup>156</sup>, - ընդգծում է հրադարակախսուը:

Մ. Հովհաննիսյանը սրացավությամբ է ղատկերում կյանքի արատավոր երեսույթները, որոնք ամեն տեղ, ամեն ինչում առկա են: Նա կեղծ ու ձեռական շղարտերով չի սփռում ղարաբաղցու թերություններն ու սխալները՝ լավը տեսնելու ակնկալիքով: Մի զյուղի, մի լեռնահիմքի ղատմության մեջ բարախում են տասնյակ ղատմություններ, ճակատագրական

<sup>155</sup> [21. 13]:

<sup>156</sup> [21. 17]:

նւանակություն ունեցող իրավիճակներ, կենսագրություններ, որոնք կերպում են ահավոր դժվար դայմաններում: Ծանր կացության մեջ են հայտնվում այս կամ այն զյուղն ու զյուղացին՝ անկախ իրենց ցանկության: Հետև է սրան-նրան մեղադրելը, դժվար՝ զիտակցել եւ խոստվանել սեփական մեղքը, առավել եւս՝ որեւէ բան ձեռնարկել իրավիճակը կարգավորելու համար: Որովհետեւ անմեղներ չկան, ամեն մեկն ունի իր մեղքի բաժինը: Գյուղը դատարկվում է աշխատանք չլինելու դատասպվ, զյուղացու տունուտեղը ավերվում է, «զյուղի գլխին ծանրացած սարը փլուզվում է, բայց միանգամից չի փլուզվում, այլ ճանաղարի մեջտեղը խոռոչ է բացում, դատը ծեղի է տալիս, ծեփը բափվում է, երկու հարեւան ընկուզենիներ իրարից հեռանում են մի տար-քան մետք»<sup>157</sup>: Ժամանակի իրաղատկերն արտացոլելով՝ Հովհաննիսյանը բարձրացնում է կարեւոր հիմնախնդիրներ, տալիս հարցեր, առաջ քառում լուծումներ: Գյուղում աշխատանք չկա, աշխատանք լինելու համար դեմք է աշխատել, աշխատանք ստեղծել, եթե կա ցանկություն եւ նողատակ՝ այդ ցանկությունն իրազործելու համար: Հրաղարակախոսը մեղավորության չափորոշումներ չի տալիս, բնադասորնեն չի մոտենում երեւոյթներին, մեղավորներ ու անմեղներ չի փնտրում, այլ հումորի միջոցով փորձում է մեղմել կյանքի եւ ժամանակի ընդգծված դրամատիզմը: Նա համաղատավասար բառերի միջոցով դատկերում է իրողությունը, իրավիճակին նայում տարեր տեսանկյուններից, որովհետեւ «եթե նարդ տոնը քողնում է, եթե Տասը վերսի՛ Ծաղկաձորի մարդիկ ուզում են քողնել զյուղը, նւանակում է հիմնավոր մի բան տեղահան է եղել, խախտվել է մի հավասարակցություն, որ դեմք է վերականգնել»<sup>158</sup>: Իսկ տեղահան եղած հավասարակցությունները վերականգնելու համար դեմք են ամենափիշը

<sup>157</sup> [21.12]:

<sup>158</sup> [21.18]:

Երկողմանի փոխըմբռնում, սրտացավություն, աշխատանքի հանդեպ սեր ու դատախանաւություն: Այնինչ՝ «զանգը շարունակում է լոել»: Իսկ, թե «ինչի մասին է լոում զանգը»՝ «քաղաքի աղմուկից հեռու, մարդկային կրթերից հեռու, աշխարհից կտրված, ինքն իր մեջ դատենավորված խնդրի հետ, իր ցավի հետ»<sup>159</sup>: Քանի որ «դղրոցը երեխաներով է աղրում», «զյուղը դղրոցով է աղրում», իսկ զանգի չլոելը խթանելու համար «մեր հարսների ծոցը դեմք է լիքը լինի, մեր տղամարդկանց եռանդը՝ տաս, որ տենացնեն եւ մեկը երկու դարձնեն՝ երեխան, կովի հորը, տոռու հասկերի բանակը, հիմնվի, նոր կովանոց տինվի»<sup>160</sup>: Սակայն դղրոցի ուսուցիչ «ընկեր Առաքելյանը՝ ընկեր Միշան, հիմա առանց զորքի զորավար է, որովհետեւ... Լեզուն չի գալիս, որ ասի, ասելու բա՞ն է, որ ասի, բառերը խցանվում են կոկորդում, լացը բռնում է, ու խսուելը դառնում է անհնար՝ դղրոցը վաղուց փակվել է, վաղուց դասատու չի, դիրեկտու չի»<sup>161</sup>: Նրա դասագիրքը հիմա «Պչելովոդսվո» ամսագիրն է, որը կարդում սովորում է, որդեսզի ընտելանա մեղվարուծությամբ զբաղվելու զործին, եւ հավատա, որ մարդիկ կակսեն «մեղվի նման արդար աղրել»: Մ. Հովհաննիսյանն ամենայն հարգանքով ու ջերմությամբ թերթում է Սզնու դասմության ամենանշանակալից էջերը. «Դրա համար էլ իմ խոկումները, ընկեր Առաքելյանի դառնությունները որոշեցի թեզ հանձնել: Գուցե թե օգտակար ծառայեն... Հենց «Մենք»-ն էլ սա է»<sup>162</sup>: Սա դասզան չէ, ոչ էլ խորհուրդ, կամ՝ համոզում, այն խնդրանի է, ցանկություն, որը ուշադիր՝ հեղինակը եւս ընդունում է՝ հետեւելու նղատակով:

«Տուր մի կտր հանգստություն» էսսեում հրադարակախոսն արձարծում է մշտադիմ արդիական «մենք»-ի

<sup>159</sup> [21. 19]:

<sup>160</sup> [21. 23]:

<sup>161</sup> [21. 23]:

<sup>162</sup> [21. 23]:

հերթական խնդիրը, որը ծանրանում է տաս ընտանիքների ուսերին, որքան մեծ է ընտանիքը, այնքան մեծ են հոգսերը: Առավել եւս, որ սեփական տունդ այլեւս բոնը չէ, բոնը բազմանդամ ընտանիքն է եւ հյուրանոցի երկու նեղ համարը: Հովհաննիսյանը նույն է. «Տասնմեկ ուսող բերան, տասնմեկ բնելու տեղ, հյուրանոցը նառեր չունի, որ բոլորը բնելու տեղ ունենան, ունիծոց բնում են, սենյակի օդը դառնում է գաղջ: Երեխանների համար շնչելը խնդիր չի, օդի մեջ մնացած բրկածինը առնում են մատաղ բռներն ու արտաշնչում: Արտաշնչված այդ օդը Աշխեն տափի համար հերիք չի, իրեն էլ հերիք չի, շնչելը դառնում է դժվար, ոտի ծայրին զնում է դառնում կառակար անում, ում փորը բաց է՝ ծածկում է, որ առնանացող լուսադեմին ցրտող օդը չվճարութեաններին, իրեն մի տեղ հարմար արածը կուչուկծիկ լիներով է դառնում, բնում՝ երազ է տեսնում, արքնանում՝ զիսին մղձավանջներ են բափվում, երազը չի հիւվում, հոգու մեջ ծանր զգացողությունն է մնում, որը հետաղնդում է լուսացող ամբողջ օրվա ընթացքում»<sup>163</sup>: Հոգս, նոյատակ, կամ՝ գործոններ, որոնց բացակայության դեմքում կյանքը կորցնում է իր հրադուրանքը: Սակայն հակառակ իրողության դեմքում եւս՝ կյանքն անհրադույց է դառնում, հոգսը դառնում է տառապանք, «մտածմունքից ուղենքը մթագնում է, աչքիդ առաջ բան չես տեսնում. ո՛չ ճանապարհ կա, ո՛չ ճանապարհ ցույց սկող պաֆ: Մարդ մտածելուց հոգնում է»<sup>164</sup>: Բայց կարիքը մարմնի, ուղեղի հոգնածությունն անտեսելու հրաման է արձակում, եւ դարսականությունը սիխում է դայլքարել: Ընտրությունն արդեն արված է, հետ դառնալու ճանապարհ չկա, ահա քեզն է ճակատագրի հրամայականը՝ «Քեզ սուր բն երեխաններին դահելու հոգսին, դժվար մեծացնելու երջանկությա-

<sup>163</sup> [ 21. 27]:

<sup>164</sup> [ 21. 27]:

նը, ամուսնուն խնամելու, սկեսվոր ծառայելու կնոջական fn դարտականությանը, որդեսզի շնկատես հայելու մեջ fեզ նայելու անհրաժեշտությունը, կյանքի ուրիշ տեսակի զգացողությունը չունենաս, fոնը զործ-երեխա-ամուսին հոլովումն է, ոնց որ fերականության գրքի անգիր արածը՝ ուղղական, սեռական, տրական...»<sup>165</sup>: Հայը այնողիսի ավանդույթներ ու սովորություններ ունի, որ երեմն շիամածայնվելու, հակածառելու ցանկություն ես ունենում: Տան ամբողջ հոգսը հայ կնոջ ուսերին է: Հայ կինը, հայ մայրը, ինչողես հայ մեծ դուսն է ասում «Մեր ճորտն ու ժերն է մայրս, Մեր տան անտունն է մայրս...»: Այսողիսին է ընտանիքում հայ կնոջ դերն ու նւանակությունը: Թերեւս այդողիսին է Աւշիւնների ճակատագիրը, որը կերտվում է ահավոր դժվար դայմաններում: Կարեւորը, որ կերտվում է՝ երեխաները, մեկը մյուսի հազուսները հազնելով, մեծանում էին, «դպրոց զնում, սկեսուրն աշխատում էր, ամուսինն աշխատում էր, ինքը աշխատում էր, մեկից լավ, մեկից դակաս ապրում էին»<sup>166</sup>: Այնողես, որ նստել հանգստանալու ժամանակ չկա, լուս հեղություն, որի մեջ ցավ, ժիրություն, քախիծ ու սառաղանք է: Բայց մարդ արարածը դիմացկուն է իր եռությամբ, իր մարդկային որակներով: Որքան մեծ են նրա համբերությունն ու դիմացկունությունը, այնքան շատ են փորձությունները, եւ որքան շատ են փորձությունները, այնքան կայուն են համբերությունն ու դիմացկունությունը: Մ. Հովհաննիսյանի այս մտումները միանգանայն համեմատելի են Հր. Մաքետոյանի «Աւնան արեւ» վիդակի մեջ fննարկված հիմնախնդիրներին: Ծնակուտում Աղունները, Արցախում՝ Աւշիւններն իրենց փիրուն ուսերին տանում են ոչ միայն ընտանիքի տնտեսական դժվարությունների ծանր բեռը, այլև դայլարում են իրենց անձնական՝ կանացի ոչ ցանկալի ճակատագրերի դեմ, միա-

<sup>165</sup> [21. 24]:

<sup>166</sup> [21. 24]:

Ժամանակ լծվում որդիների քարվոյ կյանքն աղահովելու կրկնաղատկվող հոգսերին:

Սակայն նույն, որ Մ. Հովհաննիսյանի ստեղծած դասկերները Հր. Մաքենույանի դասումի միազիծ կրկնությունը չեն:

Չժխտելով գրական ազդեցության նշանակությունը, այստեղ ավելի շատ կարող ենք ընդգծել գրական ժիղարանական կաղերը, որոնք ենթադրում են այնպիսի ընդհանրություններ, որոնք երեւան են գալիս համանման կենսական եւ գրական երեւույթների միջև։ Այս դեմքում կարելի է բերել Ֆոլկսեր - Մարկես - Մաքենույան ստեղծագործական ընդհանրությունների օրինակը եւ դրանց ավելացնել Մ. Հովհաննիսյան երեւույթը։ Ամեն դեմքում՝ նրանք նյութը խսացրել են մանրակերտի մեջ եւ յուրովի բացատրել աշխարհը, չլինով իրենց հարազա հողի դայմանական ընդհանրացումը։ Կրկնենք՝ Հր. Մաքենույանը գրականություն բերեց Ծնակութը, իսկ նրա գրչեղբայր Մաքսիմ Հովհաննիսյանն՝ իր Լեռնաղբյուրը։

Ժողովրդի ճակատագրի հետ կաղված երեւույթները միշտ են հուզել Մ. Հովհաննիսյանին։ Այդ են վկայում նրա վավերագրական գործերը՝ նվիրված Շուշի քաղաքից բռնությամբ տեղահանված հայերի կրած ծանր աղբումներին։ Հերթական փորձությունն օրգանի աշխատող, կուսկակար Հրաշիկի մեծ ընտանիքի համար եղավ հայրենի Շուշից «դժվար ետ զցված փողերով» շինված տունուտեղից հեռացվելն ու Ստեփանակերտի հյուրանոցներից մեկում հանգրվանելը։ «Հյուրանոցի երկու ներ համար՝ իրենք տասնմեկ հոգի՝ ուր երեխա, անոսինը՝ Հրաշիկը, սկեսուրը՝ Աշխենը, ինքը»<sup>167</sup>։ Խնդիրն անլուծելի է, անմիսիքար է իրավիճակը, հարցերը բախվում են իրականությանն ու մնում անդատասխան։ Ինչուները սեղմվում են կոկորդի մեջ եւ աղարդյուն է,

<sup>167</sup> [21. 27]:

հանգստանալը՝ եւս, հարցերը հանգիս չեն տալիս՝ «ինչո՞ւ այսպէս ստացվեց, ինչո՞ւ այսպէս միանգամից ամեն ինչ փուլ եկալ՝ սղառնալով ամեն ինչ տակովը անել։ Կվերանա՞ թշնամանքը։ Ո՞վ է թերքը, հեռուստաեսությունը հնարել, միտք մքագներ՝ չհնարեր։ Գալիս են երկու ժողովրդի բար տալիս՝ գնում։ Ո՞րն է նոյատակը։ Այս արյան մեջ, այս դղուրության մեջ, այս խոռվիներում ի՞նչ են որոնում»<sup>168</sup>։ Հրադարակախոսն առօրեական խնդիրների, ծանր հոգսերի, դժվարին կացության մեջ հայտնված բազմանդամ ընտանիքի խնդիրների միջոցով ներկայացնում է տիրող բաղադրական մքնուրուրը։ Հրադարակախոսի ձեռագիրն այնքան հարազա ու հետարքիր հնչերանգներով է դարնուված, որ թվում է, թե նրա լեզվով Արցախն ու արցախցին են խոսում։ Նրանց անմիտքար դայմանների դասկերման մեջ նա Շետադրություն է ծանր կացության մեջ հայտնված ազգի վիճակը։ «Չալակու, զալակու» էսեն եղրափակում է խորհրդային ժամանակաշրջանի դասկերը եւ անցնում ազգային ազատագրական դայքարին։ Նրա կոմղողիցինն միջուկը գրողիրադարակախոս Մաքսին Հովհաննիսյանի եւ ֆիմիկոս Հասմիկ Հասրաթյանի հեռախոսագրույցն է՝ Արցախին եւ ամրող հայությանը հուզող իրադարձությունների շուրջ, հայերի հանդեղ արդարացի եւ անարդարացի վերաբերմունքի մասին, եւ այն մասին, թե այդ խառնածվոր իրաւանցումների արդյունքում ինչորսի ցավ ու տառապանք, հակակրանք ու արհամարհանք են ցուցաբերում Սփյուտքում աղրող հայերի հանդեպ։ Երկխոսության մեջ առերեսվում են հայուիու միամիտ հարցադրումներն ու հայաւունչ ընկալումները, որոնք ցավ ու ցասում են դասճառում դարակործան իրադարձությունների քատարելանում գտնվող «Խորհրդային Ղարաբաղ» թերքի խմբագրին։ Փորձառու գրողն իր երիտասարդ խոսակցին փորձում է հասկացնել, որ կյանքում դեմք չէ այդ-

<sup>168</sup> [21. 27]:

բան միամիտ լինել, որովհետեւ արդարությունը սարքեր մարդկանց համար սարքեր է լինում, հատկապես ազգերի հարաբերություններում:

«Այս դժվար օրերին, հույսի այս օրերին» էսսեի վերնագիրն ինքնին արտացոլում է Արցախում ժիրող մքնողութը: Հրամարակախոսն իր խոհերի, կոչերի, սազնաղների ուրվագծման մեջ արտացոլում է դարաւորանի բառային դասկերը, որն է՝ Խորհրդային կարգերի փլուզումն ու նրան հաջորդող վերակառուցման մասին խոստումներն ու սպասելիքները, իրադարձությունների հանկարծակի փոփոխություններն ու հիասքափությունները, եւ հույսի ու հավատի ակնկալիքները. «Հավատանք, որ մեր արդար դահանջն արդար վճիռ կունենա: Ինչքան էլ ճանապարհը խոսր լինի, ի վերջո այն հասնում է արդարությանը, ճշմարտությանը: Եկեք ձեր հավատի հավաստումը որոնենք այն հայտնի որոշումներում, որ ընդունվել են մեր երկրի բարձրագույն մարմիններում, եկեք մեր նոյատակին հասնելու հաստակամությամբ հավատանք, որ վերակառուցման դժվարին, լարված մեր ժամանակներում, հենց միայն այս ժամանակներում կլուծվի հանգույցը, որ 65 տարի առաջ հյուսվել է ու հիմա այսպես դժվարանում են, չեն ուզում հանգույցի հեղինակները իրենց ձեռքերով լուծել: Հուսանք»<sup>169</sup>:

«Արցախի ոռու հարսը» եւ «Ինեսա Բուրկովա» իրար հաջորդող էսսեները՝ ոռու հարս Շվեդովա Տամարայի եւ ոռու գրող Ինեսա Բուրկովայի հոգիներում Արցախի եւ արցախցու հանդեղ ծնված սիրո մասին է. «ահա այսպես. որդեսզի ոռու գրող Ինեսա Բուրկովայի արցախսական խոկումները աղրեն, դեսք է խստագույնս դահդանվի բժշկի դասվիրանը, որ հեռու է «Լեռնային Ղարաբաղը եւ նրա շուրջը ձեւակերպումից»: Մինչդեռ «Ինեսա Բուրկովան Մոսկվայից եկել է Ստեփանակերս, այսաներ է ոննատակ տալիս, դարե-

<sup>169</sup> [21. 40]:

տասուն է զնում, որ Խաչին տափ զնալու իրավունք ստանա, որն անհետ մի խնդիր է դարձել, Բայկանուրից տեղերական թոփշը տեսնելու դես մի բարդություն»<sup>170</sup>: Իսկ Տամարա Ըվեդովան. «այս ութ ամսում Բելգորոդչինայից Արցախ աշխարհը բերված ոռու այս կինը, որին ոչ հետքին կյանք է վիճակվել, բոլորին դես փետրվարին զլասվոր հրամարակում զիւեր է լուսացրել, Սումգայիթ է վերաբրել, տան սակավ մնացած փողը սղառվել է, բայց ոչ ինքն է զնացել գործի, ոչ Սուրենին է բռղել գործի զնալ եւ այսպես իրեն, Սուրենին, իր երեխաներին կեղեցելով՝ դահանջել է, որ Արցախի հարցը արդար լուծում ստանա: Եվ որդեսզի հաստատվի, որ այդ դահանջը վերջնական է, գործադուլ է արել, ոռջիկով աղրող մարդու սակավաղետությամբ Մոսկվայից եկած գրող հյուրերից Ինեսա Բուրկովային եփած կարտոֆիլ է սվել հացի են եւ մանրանան դասմել իր մասին, իր ձախորդ Սուրենի կյանքը դասմել, իր ծնողներից ստացած նամակները դասմել, լաց լինելով նկարագրել, թե ինչպես էին ուզում սղանել իր ձախավեր Սուրենին, իր Արքուրիկի, իր Արկադիկի հորը»<sup>171</sup>: Հրամարակախոսն այս հերթական ժետարումների մեջ ընկալելի է դարձնում խնդրի ամենացավոտ կողմի նկարագրությունը: Սուրեն հայրերը, Արքուրիկ, Արկադիկ որդիները հորինված անուններ չեն, ոչ էլ ոռու գրող Ինեսա Բուրկովան եւ ոռու հարս Ըվեդովա Տամարան, նրանք Արցախում կատարվող իրաւանցումների ականատեսներն են, արցախական արհավիրքի ցավն ու տառապանքը կրողները: Մ. Հովհաննիսյանը նրանց զգացմունքների ու գործողությունների արտացոլանքում ցույց է տալիս Խորհրդային, առանձնադես Աղրբեջանի վերին այսանների կողմից ցուցաբերած անարդարությունները, որնաց դասձառնվ արցախահայությունն աղբում է հերթական հիասքափությունն ու անարգանքը:

<sup>170</sup> [21.50]:

<sup>171</sup> [21. 43]:

«Մղջավանց» և «Քախչի պապ» էսսեներում հրատարակախոսն անդրադառնում է հայ-ադրբեջանական հակասություններին, հայի բնույթին ու հոգեբանությանը, նրա անցյալին ու ներկային, հաղթահարումներին ու հաղթանակներին, կորուսներին ու դժբախտություններին: Արցախյան շարժումը հերքական անգամ վերհիշել սկեց հայի դաժան ճակատագրի ցավոս էջերը: Եվ թե այդ աղետի օրերին Հովհաննիսյանն ինչու հիշեց Արցախի Հարար (Հարավ) գյուղի Սահմանց ազգի մեծի՝ Քախչի դամբի գերդաստանի դատավորությունը, քերեւս նրա համար, որ հայ ժողովրդի դժբախտ ճակատագրի փոխանցվում է նաև իր զավակներին: Քախչի դամբը, Շուշան աղջկա հարսանիքին լսելով Արշակ որդու մահվան լուրը, որուում է շխափանել հարսանիքը՝ նեւլով. «Էսօր հարսանիքի հերթն է, վաղն էլ հոգեհացի հերթն է լինելու»: Սակայն աղջիկն էլ երջանկություն չտևավ՝ մահացավ ծննդաբերության ժամանակ՝ «Երկու որք քողնելով իրենից հետո»: Ուսման համար Քաֆու ուղարկած Սամվել որդին էլ՝ «Էն գնալն էր, որ զնաց, Նոյի ազքավի դես էլ չվերադարձավ»: Իսկ, երբ փոքր որդու՝ Գարեգինի «սեւ քուղըր» սաշացավ, եւ իր մեծ գերդաստանից միայն Եսրեւ աղջիկը մնաց, Քախչի դամբն իր համար գերեզմանաբար դատարանուց: Գերեզմանաբարի վրա ո՞չ ծննդյան թիվ գրեց, ո՞չ էլ մահվան թիվ համար տեղ քողեց, միայն գրեց՝ «ասս հանգչի Քախչի Ավանեսյան»: Հրադարակախոսը, նեւլով, որ այս դատավորությունը հնարված չէ, գրում է. «Աղետի այս օրերին հիշեցի այդ դատանությունը ու հայտնության դես հասկացա, որ Քախչի դամբ հայ ժողովուրդն էր»<sup>172</sup>: Ժողովուրդ, որն այնքան ցավ ու արյուն է տեսել, այնքան Սահմանց Քախչու Հարուններ, Արշակներ, Գարեգին որդիներ է կորցրել, որոնք իրենց իսկ սանը գնդակահարվել, կամ «քուրքերը ցափի մեջ են դրել ու վա-

<sup>172</sup> [21. 62]:

ոել»: Սամվելներ է ունեցել, որոնք ուսում սահմանական համար հեռացել են իրենց հայրական տներից եւ «Նոյի ագռավի դես» էլ չեն զերադարձել: Դա դեռ մեղմ ասված՝ խաղաղ ժամանակներում, երբ քուրքն ու հայը «եղբայրություն» էին անում: Եվ ինչորեւ միտես հայի հավատարմությունը ունահարվեց, խիդճը համարվեց խեղճություն, ցավը դարձավ հայի միակ ու անմիջական ուղեկիցը: Իսկ «Մեր լավ հիշողությունը քորքենելու կարիք չկա: Լավ սերտած դասը կրկնել են տալիս հարյուր տարի անընդհատ, հարյուր տարի անընդհատ վարժեցնում են մեզ մեր ճակատագրի այն դարտադրանին, թե ազգը դեմք է արյուն տա՝ Շուշի, Բաքու, Սումգայիթ, Խոջալու, Կիրովարադ»<sup>173</sup>, - «Մղձավանջ» էստեում ընդհանրացնում է Հովհաննիսյանը: Նրա էստեներում փաստագրական շարադրանքը միաձուլվում է հոգու դարտադրանին, զգացմունքների արտացոլմանը, որն արվում է առանց ավելորդ լալկանության, չափածեած զավեցի, առանց դերձաւուի բառաւաղախի: «Մենք»-ի յուրաքանչյուր էստե իր մեջ դարունակում է մեկից ավելի տեղեկատվություն՝ անձնապորված եւ թեմատիկ: Ամեն մի էստե իր մեջ դարունակում է տարբեր ոլորտներից տարբեր իրադարձությունների ըուրջ մեկից ավելի փաստարկներ: Հայտնի ու անհայտ մարդկանց, զյուղերից ու հուշակորողների առանցքում «մենքի» խորհրդանիւն է, որով սկսվում եւ ամփոփվում է «Մենք» էստաւարը: Մենք, այսինքն՝ Ղարաբաղն ու դարաքաղին, նրանց դասմական անցյալն ու հիշարժան ներկան, նրանց իրողության, երեւոյթի հանդեպ ձեւավորված սկզբունքներն ու ձեւակերպումները, նրանց բնույթի, կենսակերպի, ավանդական ընկալումների ներքին ու արտաքին հոգեքանական ձեւակերպումները: Արցախն է իր ամբողջական իրադասկերում՝ վեհադանձ ու հերոսական, ցավոս ու ողբերգական էջերով: Հրա-

<sup>173</sup> [21. 60]:

դարակախոսը գաղափարի համազորումը ձեւի որոշակիության հետ ներկայացնում է ժամանակի հարաբերականը, այն, ինչը համազոր է հաղթանակի ու հաղթահարման: «Հաղթանակը, միայն հաղթանակն է ազատելու մեջ քենամու կողմնակիցների եւ մեր իսկ բամահրանքից: Հաղթանակը մեր անցյալի ու աղագայի, եւ համայն մարդկության առջեւ մեր առաքելությունն է»<sup>174</sup>, - նում է Հրան Մաքեոսյանը:

Անցյալի նկատմամբ հղարժության ու սիրո զգացումը, աղագայի հանդեպ հույսն ու լավատեսությունն առկա դժվարություններին դիմանալու սղեղանին են, ամրապնությունը, որոնց հենվեռով՝ հնարավոր է դառնում խավարի մեջ լույսի գտնումը, ամայության մեջ լիանալու հագեցումը, որովհետեւ ամեն ինչ ժամանակավոր է, թեև երեմն դահը հավերժություն է բվում, հավերժությունը՝ դահ: Արցախահայության համար դահը հավերժություն էր, ցավը՝ անսահմանաչափ: Խնդիրներն ու անդատասխան հարցերն առօրյայից բարձրանում էին համազգայինի սահմանագիծ, անձնափրկությունը դարձել էր համահայկական խնդիր:

«Հատուկ դրույթուն» էսեն՝ տարանջատված թվերով, եղափակում է «Մենք»-ի ամբողջական դասակարգումը: Այն բնութագրում է արցախցու դատմության սկիզբն ու շարունակությունը, կատարվածը, ներկան ու գալիքը՝ ժաղախած «մենքի» նոր ձեւավորվող եւ վաղուց արդեն կայացած տեսակների միախառնումով, որն ինչքան էլ տարբերակելու առիթ հանդիսանա, միեւնույն է՝ նմանությունն աներկա է: Մ. Հովհաննիսյանը հոգեբանական վերլուծությունների միջոցով բացահայտում է այն ամենակարեւորը, որը ոգին է գործողության, ժամանակի: Որովհետեւ այնտեղ, որտեղ չկա ոգի, չկա հավաս, սղասում, հավատամք՝ անհնա-

<sup>174</sup> «Արցախ» հանդես, 1994 թ., N 3-4, էջ 2:

Իին է հաղթահարումն ու հաղթանակը: Դարեւ շարունակ սառադանի կրած հայ ժողովուրդը, Արցախն ու արցախցին աղթել, ամեն ինչին դիմացել են հույս ու հավատի ընորհիվ եւ այն մեծ համբերության, որն ամբարված է նրանց հոգում ու ոգում: Պատահական չէ հրամարակախոսի «Հասուկ դրություն» Էսսեի քնարանի ընթրությունը. «Եվ քանի որ ոգին ավելի ուժեղ է, քան մարմինը, ուստի ոգու տառապանիները դաժան են ավելի, քան մարմնի տառապանիները (Լաս.)»<sup>175</sup>: Բնականաբար, եթե չիներ այն ոգին, որով օժտված-զինված է արցախցին, դժվար թե կարողանար հարատեև այդ-քան ժամանակ: Դժվար թե դայլարելու ուժ ունենար, իսկ հայ ժողովրդի դարավոր ճանադարի դրա վառ աղացույցն է: Շանադարի, որը սուկ ճանադարի չէր, այն դատմություն էր, հայ ազգի սկիզբն ու շարունակությունը, նրա կյանքն ու կենսագրությունը, որի ուժը դահել ու դահդանել է հայի մեջ՝ հային:

Էսսեում արտացոլված է Արցախյան շարժման սկիզբն ու ընթացքը՝ դժվարին ու նղատակամետ, որը բացահայտում է արցախցու ֆենոմենալ տեսակն՝ իր ամբողջական նկարագրով, Ղարաբաղի քնարականություններով: Եվ այդ ամենի առանցքում «մենքի» խորհրդանշին է, որով սկսվում եւ ամփոփվում է Էսսեաւարը: Նրանում Ղարաբաղն ու դարարադին են, նրանց դատմական անցյալն ու հիւարժան ներկան, կենսակերպն ու ավանդույթները, նրանց մտի ու աշխարհընկալումների ներքին ու արտաքին իրադասկերը՝ վեհադան ու հերոսական, ցավոս ու ողբերգական էջերով:

Մ. Հովհաննիսյանի ամեն մի ստեղծագործություն մի ավարտում քանդակ է: Էսսեներում արցախյան շարժման, դատերազմի փաստագրական շարադրանիքը ներկայացված է

<sup>175</sup> Յովհաննիսյան Մ., Արցախ իմ, ցավ իմ, Երեւան, «Նաիրի» հրատարակչություն, 1998 թ., էջ 72:

ոեալիսորեն, Արցախի քնության եւ արցախցու քնավորության համաձնուղածքով, հայ մարդուն ծանոք, ռուսակելի լատկերներով, որտեղ ամեն ինչ լատմական արմատներ ունի եւ զալիքին միտքած ըցուղեր:

Մ. Հովհաննիսյանի «Մենք» էսսեարը Արցախի եւ արցախցու մասին նոր խոսք է՝ արժանի լուրջ ուսադրության:

## **2.2. Արցախյան գոյապայքարի անդրադարձը «Ռեպորտաժ ղեպքի վայրից», «Ռեպոր- տաժ ղեպքի վայրից-2», «Ռեպորտաժ ղեպքի վայրից-3» եռագրությունում**

Տասնամյակներ են անցել Արցախյան հերոսամարտից, ինչը եղել եւ շարունակում է մնալ քե՛ հայ, քե՛ օսարազզի գրողների, դասմարանների, բաղադրական գրդիշների եւ մի շարժ այլ բնագավառների ներկայացուցիչների ուսադրության կենտրոնում։ Եվ թեև նրան նվիրված են բազմաթիվ աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, գրեր, հուսագրություններ, վիճակագրական եւ փաստագրական ժողովածուներ, օրագրություններ, կինովավերագրեր, գիրք-հուսամատյաններ, շարելգրություններ, nrnbf կարենոր դեր են խաղում անհրաժեշտ եղակացություններ անելու համար, այնուամենայնիվ, հայ ժողովրդի համար արյունոց, սակայն հաղթական եւ ճակատագրական կարենոր ժամանակաշրջանի ամբողջական իրադարձություններն ավարտված համարել դեռևս չի կարելի, քանի դեռ ասելիք կա, եւ արթուն է մարդկային իհւողությունը։

Արցախյան ազատամարտի հերոսների սիրազգործությունները ներկայացնելու համար հայ գեղարվեստական արձակի եւ իրադարձության մեջ հայտնվում է ազատամարտիկ-զինվորի նորահայոց ու ինքնաշխատ կերպարը։ Այն ի շարքերություն Հայրենական մեծ դաշտազմին մասնակցած խորհրդային զինվորի գրական կերպարի, դիմարկվում է տարբեր ժեսանկյուններից, նոր ու հետարքիր երանգներով հարսացնելով արդի հայ արձակի ազգային դիմադարակերը։ Հերոս-ազատամարտիկի կյանքն ու բազազործությունները, ինչպես նաև Արցախյան իրադարձությունների ամբողջական

ղաւակերն արձանագրելու նոյատակով ծնունդ է առնում վավերագրական արձակը, որտեղ իրենց նոյատն են քերում Հովհակ Վարդումյանը, Վարդգես Բաղրյանը, Նվարդ Սողոմոնյանը, Կոմիտաս Դանիելյանը եւ այլոք:

Արցախյան վավերագրությունը որակական իմաստով լավագույնս դրսեւորվեց գրող-հրադարակախոս Մ. Հովհաննիսյանի կողմից: Նրա քեղմնավոր գրիչը ազդարարում է արցախյան ազգային-ազատագրական դայքարի հաղթաւովը: Մ. Հովհաննիսյանն իր տաղանդի եւ փորձի շնորհիվ վարդեսուն համադրել է վավերականն ու զեղարվեսականը եւ արդյունելում սացել ժանրային ձեւափոխված հետարքի մի միասնություն, ինչուս ժամանակին ընդգծվել է «Սովետական գրականության դատմություն» ձեռնարկի 2-րդ հատում. «Շեղբեկով փաստագրական հավաստիության ցջանակները, ակնարկը վերաճում է դատմվածքի»<sup>176</sup>.

Մ. Հովհաննիսյանի «Մենի», «Ուղորտած դեղքի վայրից» եւ այլ հրադարակումները լինելով լրագրային ժանրեր, միաժամանակ կարելի է համարել փորձածավալ դատմվածքներ: Գրող-հրադարակախոսը ներդրել է իր մարդկային ու մասնագիտական ողջ ներուժը եւ հայ ժողովրդի կենսագրության կարեւորագույն էջերից մեկը՝ Արցախյան գոյադայքարի ամբողջական դասկերը հավերժացրել «Ուղորտած դեղքի վայրից» խորագիրը կրող երեխ մասից բաղկացած շարքում: Նրա հրադարակախոսական սուր մսի արգասիքը դարձած Արցախյան գոյամարտի լավագույն վկայականը, ժամանակային ճշգրտությամբ, փաստերի հերթականության ամբողջությամբ հայ ազգի կենսագրության մեջ մեծ արժեք ներկայացնող գործ է՝ դատմական կարեւոր իրադարձությունների անմիջական շարադրանքով ու նկարագրությամբ: «Նյութերը դասավորված են ըստ ժամանակագրության,- նշում է Մ. Հովհաննիսյանը, - որեւէ միջամտություն չեմ կատարել, չեմ սրբագ-

<sup>176</sup> «Սովետահայ գրականության պատմություն», 2-րդ հատոր, 1965 թ., Երեւան, էջ 45:

թել, չեմ խմբագրել՝ դահղանելով նախնական վիճակը։ Այդ օրերին տեղի ունեցածն այդպես եմ ընկալել, եւ իմ գնահատականները միշտ չեն, որ միանալու են ընկալվել։ Անցած լինի»<sup>177</sup>։ Հովհաննիսյանը, լրագրության ժանրային առանձնահատկություններից ելնելով, ժամանակին ու անկողմնակալ ներկայացնում է իրողությունը՝ երեմն հենց դեղի վայրից։ «Ուեղորտած դեղի վայրից» քածնի հրադարակումները մեծամասամբ հենց նման քնույթ են կրում։ Վերնագրի ընտրությունն իրոք համադատասխանում է շարժի մեջ ներառված գործերի կառուցվածքին։

Գրող-հրադարակախոսի յուրաքանչյուր գործ ընթերցողին օգնում է զգալ իրադարձությունների ողջ ընթացքը, դասկերացնել նրա ողջ խորությունը։ Այն արցախյան ազգային-ազատագրական դայլարի, Արցախի ու արցախցիների փաստացի նկարագիրն է, արցախյան գոյադայլարի ժամանակագրությունը, ինչի մասին նշում է նաև ինքը՝ հեղինակը։ Սակայն այն զուտ փաստագրական շարադրանիւնը չէ։ Փաստերը դարության մեջ են հուզական նկարագրություններով, ինչն արվում է տեղին ու չափի մեջ։ Հովհաննիսյանի հրադարակումներում դարձ երեսում է հայ ժողովրդի ցավով տառապող արվեստագետ-քաղաքացին, ում համար ժամանակի հրամայական գործը սեփական ազգի փրկությունն էր։ Չենքը, որ նա վերցրեց 88-ին և 88-ից առաջ, գրիչն էր, առաս հունակը՝ մտապես քարման, ճշգրիտ, հմտութեան գրված հոդվածները։ Հրադարակախոսն անձամբ հայտնվում էր իրադարձությունների կենսունում, հետեւում նրանց ընթացքին, մտահոգվում երեւույթների անհաջող դասավորությունից, ժյուրում ողբերգական երեսույթներից, ուրախանում հաջող արդյունքներով։ Նա ակտիվ դայլարում էր գրչով։

Մասսիմ Հովհաննիսյանի հրադարակախոսությունը հուզական է։ Երեմն, ելնելով ժամանակակից առանձնահատկու-

<sup>177</sup> Հովհաննիսյան Ս., Երկեր, Երկրորդ հասողոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Ստուգ» գրասուլ, 2006 թ., էջ 311։

թյուններից, հեղինակն ինքն է բարձրաձայնում իր հուզմունիքի մասին, երեմն էլ այդ ճիշը լսվում է տողատակ ասված արտահայտություններում։ Շարժում ամփոփված բոլոր հրադարակումները տեղ են գտել մամուլի էջերում, մասնավորապես՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերում։ Արցախի նայր թերքը խորհրդային իշխանության տարիներին լույս տեսած առավել աչքի ընկնող դարբերականներից մեկն է, որն սկզբնական շրջանում կրել է «Ղարաբաղի գեղջուկ» անունը, ժամանակի ընթացքում ստացել տարբեր անվանումներ՝ «Սովետական Ղարաբաղ», «Խորհրդային Ղարաբաղ», «Արցախ», «ԼՂ Հանրապետություն», այսոր արդեն՝ «Ազատ Արցախ»։

1988 թ. ադրիլյան բուօն օրերին, երբ Ստեփանակերտի կենտրոնական հրադարակում ժողովուրդը վանկարկում էր «Լենին, դարսիա, Գորբոչով», «Սովետական Ղարաբաղ» թերքը Մաբսիմ Հովհաննիսյանի դեկալարությամբ դառնում է Արցախի արդար ծայնի խոսափողն ու շարժման տարեգիրը։ Դժվար է գերազնահասել խմբագրության «մի բուօն» լրագրողների կատարած աշխատանքը՝ դատերազմական իրավիճակում, անգամ նվազագույն կենսադաշտումների բացակայությամբ։ Նրանի հետեւում էին բոլոր լրատվածիցներին, Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ցանկացած բարձրաձայնված մսի, կարծիքի վերաբերյալ խոսուն ճշմարտության, փասերի լեկվով։ Ծիծ կամ սխալ, դեմ կամ կողմ արտահայտված մսերին անմիջապես արձագանքելով՝ նրանք ոչ մի դահ չեին մոռանում այնքան լավ սերտած լրագրողական էքիպայի նորմերը։ Գրող-հրադարակախոս խմբագիրն իր գրավոր ելույթներում զնահատում էր իրավիճակը, կարեւոր զանազանում երկրորդայինից, ընդգծում անփխարինելի ճշմարտությունը. մարտնչել՝ հանուն Արցախի ազատության։

«Ուղղութած դեմքի վայրից» շարժի բոլոր բաժիններում Հովհաննիսյանն անդրադանում է Արցախի ազգային-ազատագրական դայքարին, կիսում արցախահայության տագնալն ու վճռականությունը։ Եվ երբ ժողովուրդը ոսքի է ելել եւ դահանջել ազգային իր արդար իրավունքները, եւ՝ «Խորհ-

դային Ղարաբաղ» թերքը, ե՛ւ հրադարակախոս խմբագիրը իրենց տեղն են զքաղեցրել դահանջատիրական անզիջում դայխարի կարեւոր դիրքերում: Այդ ծանր ու դատախանառուու տարիների դժվարությունները հաղթահարելով՝ «Խորհրդային Ղարաբաղ»-ն իր դարտականությունները հաջողությամբ է կատարել: Թերքն առաջինն էր Խորհրդային Միության մեջ, որ Գորքաշովյան վերակառուցման կաւանդող սահմանափակումների առկայությամբ անգամ կիրառում է խոսքի եւ մամուլի ազատության սկզբունքը: «Խորհրդային Ղարաբաղ»-ը արցախյան ազգային-ազատագրական շարժումը ներկայացնում էր այնպես, ինչպես կար: Թեեւ 70 տարիների ընթացքում խորհրդային մամուլում ամրագրված ավանդույթներն ու սովորույթները դժվարացնում էին թերքի աշխատանքը, առավել եւս, երբ նրա աշխատողներին ծայրահեղական, նացիոնալիս եւ այլ տեսակի նակդիրներ էին կողցնում, միեւնույն է, գոյամարտը սկսվել էր, որի դրուակակիրներից էր յուրաքանչյուր մտավորական: Անգամ Հայաստանի լրագրողներից շատերը, որոնց առաջ փակ էին ազատ խոսելու հնարավորությունները, այդ ընթացքում իրենց նյութերն ուղարկում էին «Խորհրդային Ղարաբաղ»-ին, որն իր էջերը տրամադրում էր նրանց հողվածներին:

Խմբագրությանը մեծ բանակությամբ նյութեր էին ուղարկում նաև Լենինգրադից, Մոսկվայից, Կրասնոդարից, Դոնեցկից, ընդ որում գրում էին ոչ միայն հայերը, այլեւ այլազգի ընթերցողները: Այս մասին Ս. Հովհաննիսյանը «Ռեդումուսած դեղբի վայրից-2» քածնի «Խոսuf ընթերցողին» խորագի տակ գրում է. «Այօօր, ընթերցն՝, մեր խմբագրություն են մտնում նամակներ Դոնեցկից, Լենինգրադից, Սվերդլովսկից, Մոսկվայից, Տավուշից, Երևանից, Բաքվից, Ռիզուանից, Հայաստանից, հարցումներ ու առաջարկություններ դարձնակող, գովարանող ու դարսավող, ամեն մակարդակի՝ դրոֆեսորի, բռուականուի, բանվորի, տնային տնտեսուի ստորագրությամբ: Մենք մեր տնորհակալությունն ենք բերում նրանց եւ առաջարկում համատեղ աշխատանքը շարունակել, որպեսզի «Սովետական

**Ղարաբաղ» - «Սովետսկի Կարաբախը» լինի հետարքիր, մարտական, կյանքու, առաջամարտիկ»<sup>178</sup>: Այս անհավասար դայմաններում «Խորհրդային Ղարաբաղը» անհավասար դայխարի էր եղանում թե՝ ադրբեջանական, թե՝ կենտրոնական մանուլի այն հրադարակումների դեմ, որոնք խեղաքյուրում էին արցախյան ազատագրական շարժման դասձառներն ու նոյասկները: Թերքի բռնած ճիշտ բաղադրանությունը հետարքությունն է առաջ բերում ընթերցողների շրջանում, որի արդյունքում մեծանում է թերքի սփոման աշխարհագրությունը, այն տարածվում է ոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային Միության տուր 350 բաղադրերում: Այս սվյալների փաստագրությունն արժենուրվում է հատկապես «Ռելորսաժ դեմքի վայրից - 2» բաժնի «Խոսք ընթերցողին» խորագրի տակ, որտեղ Մ. Հովհաննիսյանը, արձանագրելով թերքի սփոման աշխարհագրական անսպասելի եւ ուրախալի աճը, նշում է, որ թերքն իր գոյության 65 տարիների ընթացքում նման տղաֆանակ երթեւ չի ունեցել: Այնուհետև Ստեփանակերտի «Սոյուզմեծան» բաղադրային գործակալության տեղեկատվության համաձայն մանրամասն ներկայացնում է, թե երբվանից, որտեղ եւ բանի օրինակ թերք կտարածվի: Այն սկսվում է Արցախի սահմաններից, հասնում Հայկական ՍՍՀ բաղադրերն ու շրջանները, Ադրբեջանական ՍՍՀ բաղադրերը, ինչպես նաև Մոսկվա, Լենինգրադ, Խարկով, Դոնի Ռոստով և այլ բաղադրեր: Հրադարակման վերնագրի տակ խուռական տարբերակ գրված տեղեկավորությունը, որը վերնագրի արժեք ունի, ազդարարում է. «ԱՅ-ՍՈՐ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂԱՐԱԲԱՂԸ» Ռ-ՌԱՍՎԱՂԸ» ԿՐԿ-ՆՈՐԻՆԱԿՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՄՆԻ 36621 ՏՊԱԶԱՆԱԿՈՎ»: Տեղին է հիշատակել, որ սույն նյութը տղագրվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերություն 1988թ. հունիսին: Թերքի տղաֆանակը տարեցարի մեծանում էր եւ կարծ ժամանակահատվածում հասնում մոտավորապես 75 հազարի: Բնականա-**

<sup>178</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Սովետականակերտ, «Կաչագան բարեպաշտ» հրատարակություն, «Սոմա» գրատուն, 2008 թ., էջ 192:

բար, թերթի նման մասայականությունը առաջին հերթին դայմանավորված էր Ղարաբաղյան շարժմամբ։ Արցախի ժողովուրդը Ղարաբաղյան հիմնախսնդրի մասին ճշմարիտ ինքորմացիան ստանում էր սկզբնաղբյուր հանդիսացող «Խորհրդային Ղարաբաղ» թերթի էջերից։ «Սովետական Ղարաբաղ» գերաճել է նախանդատակ իր սահմանները, -գրում է Մ. Հովհաննիսյանը։ Սա քանի արժեցող այն ուրախություններից է, երբ իրավունքը դահանջում է դարսֆ ու դահանջ՝ դարսֆ ընթերցողի առաջ, դահանջ՝ ընթերցողի կողմից»<sup>179</sup>։ Անասելի ծանր դայմաններ էին ծանրացել խմբագրի և նրա աշխատակիցների ուսերին։ Թերթն իր հերթին գոյաղայքարի մեջ էր, ինչուս այդ ժամանակաշրջանի յուրաքանչյուր հայ նար, որը մտահոգվում ու տառապում էր իր ազգի ճակատագրով։ Այս մասին «Ռեմորտած դեմքի վայրից» քածնի մուտքի խոսքում հրաղարակախոսը գրում է. «Ի դատուն (այդ տարիներին «Խորհրդային Ղարաբաղ»-ի գլխավոր խմբագիրն էի), մասնագիտության բերումով եւ ազգային իմ նկրտումների հրանայականով իմ քածին նողասն էի բերում։ Այդ օրերին անհավանական մեծ էր խոսքի ուժը, որը հավաքագրում էր մարդկանց եւ մորում գործի։ Հիրավի, Շարժման սկզբում եղել է քանը, եւ այդ գիտակցությամբ էլ գործում էին»<sup>180</sup>։ Թերթի ստեղծագործական կազմն իրեն համարելով Արցախի հայության խոսափողը՝ աշխատում էր օբյեկտիվ լինել եւ իրերը կոչել իրենց անուններով։ Լրագրողները, իրենց մասնագիտության ազնիվ զինվորները լինելով, մոռացել էին քուն ու հանգիս եւ բարեխղճորեն կատարում էին իրենց դարսականությունները։ Այս ամենն առավել արտահայտիչ է երեսում «Երբ վերջին էն էր կապվում» հրաղարակման մեջ։ Հրաղարակախոսը գրում է. «Ես եւ թերթի դատասխանատու քարտուղար Մնացական Ազգային մնացել ենք մոլորված։ Ել հալ չկա։ Մնացականը ա-

<sup>179</sup> [ 24. 191]։

<sup>180</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաշագան բարեպաշտ» հրատարակություն, «Սոնա» գրասուն, 2006 թ., էջ 311։

մեն ինչ՝ ե՛ւ էջաղիր, ե՛ւ օղերասոր, ժամ ու մեկ սողայաջուր է խմում ու ծխում: Պիտի զնամ տուն, ու մայրս դարսաղիր նկատողություն կանի՝ ընրեիցդ ծխահոս է զալիս: Իսկ վերջին էջը դիմի կապվի, երեսի տղագրիշները ֆիշ հետ զանգեն՝ էջերն ուղարկեն: Այսօր մեր Արցախում ամեն ինչ առնչվում է դատերազմին, բխում նրանից: Տղաները քանակում են, կոմունիկացիոն կապը Երջանների հետ՝ վաս, տրանսլորսը վաս է աշխատում, մեր ֆիշ ունեցած աշխատողները հնարավորություն չունեն Երջան գնալու: Իսկ թերքը դեսք է լուս տեսնի, թերքի մեջ դիմի դասմենին այն բոլոր գործերի մասին, որ տեղի են ունենում մեր հանրապետությունում»<sup>181</sup>:

Մ. Հովհաննիսյանը, նկարագրելով «Խորհրդային Ղարաբաղ» թերքի խմբագրության սահմանափակ անձնակազմի ծանր ու տառապալից աշխատանքի ընթացքը, քարձանայնում է ժամանակաշրջանի կարեւոր հիմնախսնդիրների մասին: Նա միեւնույն հարքության վրա է դնում «Խորհրդային Ղարաբաղ»-ի եւ Արցախ աշխարհի նղատակներն ու հիմնախսնդիրները՝ բնակ չտարեւակելով ու չտարանջատելով նրանց ճակատագրերը: Թերքը ժողովրդի հետ միասին միեւնույն հրադարակում դուրս էր զալիս ցույցի, եւ երբ մարդիկ գնում էին տուն, թերքի կողեկիցին ուղեւորվում էր խմբագրություն՝ թերքի վաղվա համարի վրա աշխատելու:

«Խորհրդային Ղարաբաղ», «Ի խորոց սրշի խոսք ֆեղ հետ», «Գարուն ա, ձյուն ա արել», «Սկիլլայի եւ Խարիբդիսի արաևելում» եւ մի շարք այլ հրադարակումներում Մաքսիմ Հովհաննիսյանն արձանագրում է Արցախյան գոյամարտի տարիներին թերքի գործունեության բոլոր կարեւոր իրադարձությունները: Նա թերքի անունից հաճախակի դիմելով ընթերցողին, նրան անվանում է «քարեկամ», «քախտակից», «ցալակից»:

«Ընթերցո՞ղ...,- «Ի խորոց սրշի խոսք ֆեղ հետ» հրադարակնան մեջ գրողը դիմում է ընթերցողին,- մենք քայլել ենք

<sup>181</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատող, Ստեփանակերտ, «Վաշագան բարեպաշտ» հրատարակություն, «Սոնա» գրասուն, 2008 թ., էջ 291:

միասին ու դեսք է մեր դատմական ճանապարհը միասին կտեսն ու անցնենք: Եթե ճանապարհին որեւէ մեկը հոգնի, քեւանցուկ կանենք, եթե բեկվի մեկի կամքը, մեր կորովով կլից- ֆավորենք նրան, որդեսզի Արցախի հայեցի դատկերը մնա իր նախնական տեսով, որդեսզի Գանձասարից դոկած բարը դնենք իր տեղը, որդեսզի քիչ բարկ օղին լցվի զավը, ու օրհնվի ծնունդը, օրհնվի հողը, օրհնվի հավերժի հետ բայլող մեր Արցախը: «Խորհրդային Ղարաբաղը»՝ իր ժողովրդի ծառան»<sup>182</sup>:

**«Գարուն ա, ձյուն ա եկել»** հրապարակման մեջ եւս հրապարակախոսը, դիմելով հայ ժողովրդի մինուճար, անկրկնելի Արցախին, շետքում է, որ նրա լընդզումն ու ցավը, «ո-դոքումներն ու ծառս լինելը» փոխանցվել են նրա զինվորին, հավատարիմ ծառային, նվիրյալին՝ «Խորհրդային Ղարաբաղին»: «Անտեսում են, ասում են՝ չեն լսում, դահանջում են՝ հաւավի չեն առնում. ահա այսպես լուսանցքի տեղ չեն դահում, որ մեր հոգու ցավի մասին խոսվի, որ մեր վերքին սղեղանի դրվի: Աղ են ցանում: Կեղեւը դոկում են, վերքը արևածոր լինի: Չո ճակատագիրը, Արցախ, նախախնամության դարտադրաներով փոխանցվեց ք ծառային՝ «Խորհրդային Ղարաբաղին»: Մի աշբում արտասով, մյուսով դեսք է ժողով: Այսպես են ուզում ժեզ տեսնել: Բայց կեղակալվի՝, որ հետար լինի ժողով, մորմոնք բարակի՝, որ կարելի դառնա խոսք խոսելը»<sup>183</sup>, - ցավի անեզրությունից արձանագրում է Ս. Հովհաննիայանը: Փասերի արձանագրության շարժություն ցավի մորմոն կա, զգացմունքի տարափ: Եվ այնքան ճիշ ու համահունչ է մատուցվում այդ ամենը, որ երեւույթն այլ կերպ ներկայացնելը քերես սխալ կլիներ: Ժամանակը դահանջում էր, որ տողը ցավ ցնչի, բանի որ «Նյութերը մեծ Մարտումի թեժ օրերի ճեղքներաց արձագանքներն են: Գրվել են իրա-

<sup>182</sup> Հովհաննիայան Ս., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաշագան բարդապաշտ» հրատարակություն, «Սոմա» գրասուն, 2006 թ., էջ 349:

<sup>183</sup> [23. 351-352]:

դարձությունների թարմ հետեւով, դրա համար էլ շատ հրապարակումներում զգացմունքը գերիշխում է սառը վերլուծությանը»<sup>184</sup>, - «Ունդուրսած դեմքի վայրից» շարքի մուտքի խոսքում նշում է հեղինակը:

Արցախը ոսքի էր կանգնել իր դատմական հայրենիքի, իր տան, իր սուրբ օջախի ծովիսը վառ դահելու համար: Այդ դայլարում թերքն իր ժողովրդի հետ էր եւ նրա «մաքառումների ու ոգորումների» արտահայտիչն էր: Ծանր ու դաժան այդ դայլարում Մ. Հովհաննիսյանը «Խոսuf հաղորդության» խորագիր տակ ընթերցողին կոչ է անում սատար լինել արցախահայության ոգեւունչ մարտիկն ու սարեզիրը հանդիսացող «Խորհրդային Ղարաբաղին»: «Յուրաքանչյուր առանձինառանձին եւ բոլոր միասին դահմանենք մեր թերքը, որդեսզի նրա ձայնը շարունակի դողանջել, ոգեւորել դայլարող մեր ժողովրդին, որդեսզի աշխարհին դասմի, թե 20-րդ դարավերջին ինչ ահավոր հանցագործություններ են կատարվում մեր արյունամած հողում, ովքեր են բռնակալները ու ովքեր են ազատության մարտիկները»<sup>185</sup>, - գրում է հրապարակախոսը:

Արցախում ստեղծված տնտեսական եւ բաղաբական քաղաքական, քնականաբար, հարվածում էր նաև թերքին: Երջափակված, արտակարգ դրությամբ ամեն տեսակի զրկանելների դատապարտված Արցախի միակ մարզային օրաթերքի խմբագրության առաջ ծառացավ նաև բաժանորդագրության եւ տղագրության հետ կառված մի շարք այլ խնդիրներ: Ազգային-ազատագրական դայլարի արտացոլումն ու այդ տարիներին թերքի գործունեության ամբողջ ընթացքը՝ կոնկրետ թվերի, անունների հիշատակման առկայությամբ, փաստագրական բոլոր սվյալներով ներկայացվում են «Խոսuf հաղորդության», «Խոսuf ընթերցողին», «Արտակարգ դրության շրջանի զինվորական պարես, զեներալ-մայոր Վ. Սաֆոնովին»,

<sup>184</sup> [ 23. 311]:

<sup>185</sup> [ 23. 418]:

«Երբ վերջին էջն էր կապկում», «Խոսք ընթերցողին - 2» եւ մի շարֆ այլ զործերում, որոնք մեծամասամբ տեղ են գտել «Ռետորած դեմքի վայրից» շարֆի առաջին, երկրորդ մասերում:

Հովհաննիսյանն իր հրադարակումներով հանդես էր զալիս ոչ միայն «Սովետական Ղարաբաղ» թերթում, այլև Արցախի, Հայաստանի, Սփյուռքի եւ այլ երկրների դարձերականներում, եւ ամենուր ցույց էր տալիս հային, նրա ճշմարիտ դիմագիծը, նրա յուրահասուկ տեսակը, նրան հուզող, անհանգստացնող խնդիրները: Հրադարակումներում առավել ընդգրկուն ու շուշափելի տարածք են գրավում ղարաբաղյան շարժման սկիզբը, ընթացքն ու դայմանական ավարտն ամբողջությամբ, որտեղ հայի լինել-չլինելու խնդիրն էր բարձրածայնում: Հրադարակախոսը, ներկայացնելով երկար ու բարբառներու մասնակի անցած հայ ժողովրդի ծանր ճակատագիրն ու հերքական գոյադարձարի դառնությունները, ընդգծում է, որ Արցախյան ազգային-ազատագրական գոյադարձարը նոր նոյանակների, սովորական ազգային տարածք էր բացել: Հայ ազգին աշխարհի երեսից վերացնելու եւ «մեկ հայ թողնելու՝ այն էլ թանգարանում» խելահեղ մարմարով հարքած, մեր հարեւան թօնամին այս անգամ էլ հային՝ իր սեփական տնից վրանդելու դաժան ու անմարդկային ճանապարհն էր բռնել: Այս անգամ մեկ այլ ժամանակամետ ձեւակերպմամբ՝ «Զկա հայ՝ չկա դրոբլեմ»: Ըստ որում, այդ նոյասկին հասնելու համար առաջնորդվում էր՝ «ինչքան վաս՝ այնքան լավ» սկզբունքով: «Մեծ փորձության ժամանակը» հրադարակման մեջ ահա թե իրականության ինչողիսի դրսեւումամբ է հանդես գալիս Մ. Հովհաննիսյանը. «Փորձանք է եղել՝ երկու հարեւան ժողովուրդների միջեւ վեճ է ծնվել, որ սովորում է մեկիկ-մեկիկ, զրկից սոք սվող բարերու դժվար կառուցած բարեկամության կամուրջը փլել: Իսկ մենք այնպես ս կտահ էինք անցնում այդ կամրջով, որովհետեւ այն համոզմանն էինք, թե նորօրյա մեր ժամանակներում, երբ հետին կարգ մղվեցին կրոնական նախադատարմունքները, երբ Լեռայի ցրերին հանձնվեցին նախկին վիրավորանք-

ներն ու կորուսները, երք արդեն մեզ միացնում էր ընդհանուր նղատակը, երք մենք զորանում էինք իրարով, ահա այդ ամրակաղերով զորացած կամուրջն անսղասելի ճայ սկեց, ճեղք գոյացավ, եւ այսօր աղե~ս է սղառնում»<sup>186</sup>: Հրադարակախոսը դասմության հիմնավոր խորթերից արձանագրում է այն իրողությունը, որ հայն ու ադրբեջանցին աշխարհագրական տարածքի դարտադրանքով դեմք է աղրեն իրար հարեւանությամբ, քանի որ ճակատագրով դարտադրված են իրար, եւ սա այն դեմքը չէ, որ եթե հարեւանդ քարտով չէ, կարող ես տունդ փոխել. «Հայրենի հողը աճուրդի չեն հանում»<sup>187</sup>, - գրում է նա:

«Անպրտած դեպի վայրից» երեք մասից քաղկացած իրադարակախոսական շարքի յուրաքանչյուր ստեղծագործության մեջ իրողությունը, փասթը, երեւույթը դարզարանվում, արձանագրվում է տեղի, ժամանակի, հանգամանքների թելադրանքով, ինչպես նաև ժանրային առանձնահատկություններից ելնելով: Այն արցախյան ազգային-ազատագրական դայքարի փաստագրական լավագույն դրսեւորումներից մեկն է: Այսեղ Մ. Հովհաննիսյանն արձանագրում է այն դասմական իրողությունը, որ արցախյան ազգային-ազատագրական շարժման արմատներն իրականում շատ խորն են: Այն սկսվել է 1921 թվականից, երբ Լենինի եւ Ստալինի կամքով Հայաստանը մեկ անգամ եւս բգկսվեց, Նախիջենան ու Լեռնային Ղարաբաղը նվիրեցին Ադրբեջանին: «Արդեն իր գոյության արշալույսին,- «Արցախյան գոյամարտ. Եղելություններ եւ խոհեր» խորագրի տակ մեկնարանում է իրադարակախոսը,- համայնավարությունը, վերադասավորելով երկրներ ու ժողովուրդներ, այսպես լուծում էր ազգային հարցը: Այդ զոհասեղանին, թերեւս, Ղարաբաղն առաջին մատադացուն էր: Ամեն անգամ, երբ փչել է ազատության թեկուց բեկը իրվ հովը, անթեղի տակ դահված կրակը նորից բորբոքվել է,

<sup>186</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան բարեպաշտ» իրատարակչություն, «Սոնա» գրասուլ, 2008 թ., էջ 187:

<sup>187</sup> [24.187]:

եւ մեր ազգային բողոքն ասղարեզ է հանվել»<sup>188</sup>:

Շակատագրական դոորեկում տեղի ունեցավ 1965-ին, երբ մի խումք մտավորականներ ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեին հասցեագրված նամակում, փաստելով Ադրեջանի իշխանությունների հայակործան բաղաբականությունը՝ որդես ազգային ծրագիր, դահանջեցին Լեռնային Ղարաբաղը վերամիավորել մայր Հայաստանին: Նամակն արտահայտում էր Արցախի հայ ժողովրդի կամքը, եւ ուստով շարժման մեջ են ներփակվում զյուղեր, բաղաբներ ու երջաններ: «Խորհրդային «լայնարձակ երկրի» դրույտուսյան անկողնում ազգային կամքի այսօրինակ ազատ արտահայտությունն աննախադեղ երեւոյք էր,- նեկանարանում է իրադարակախոսը,- եւ նեղապորները դեմք է դատվեին: Եվ դատվեցին: Հիշյալ նամակի հեղինակները, այդ քում՝ եւ տողերիս հեղինակը, արժանացան Խորհրդային Միության մեջ ամենածանրը հանդիսացող դիմակին՝ «ազգայնական»՝ այդեղից քիչող բոլոր հետեւանքներով»<sup>189</sup>:

Ծանր էր եւ ոչ անհետեւանք Բորիս Գետրգովի գրծութեության ժամանակաշրջանը, որը «Ղարաբաղյան նացիոնալիզմը» արմատախիլ անելու համար Ստեփանակերս էր ուղարկվել՝ որդես Ադրեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար: Ադրեջանի դեկապար Հեյդար Ալիեւը նրան օժտել էր մարզպանական լայն լիազորություններով, որի արդյունքում էլ ազգային յուրաքանչյուր դրսեւորում դատվում էր խոսազոյն ձեւերով: Հետազայում Հ. Ալիեւը, դատախաններով իր ընդդիմախոսներին, Ադրեջանի մեջիսում հայտարարում է, որ իր իշխանության տարիներին ազերիների բանակը Լեռնային Ղարաբաղում ավելացել է տաս տոկոսով: Այսպիսով՝ գետրգովյան 15-ամյա իշխանության տարիներին կուտակված համբերատարությամբ աչքի ընկնող հայ ժողովրդի ցասումը ժայթենում է 1988-ին: «Մենի

<sup>188</sup> [24. 243]:

<sup>189</sup> [24. 243-244]:

հեթանոսական դարզամտությամբ,- դարզաքանում է Մ. Հովհաննիսյանը,- հավատացին Գորբաչովի հոչակած վերակառուցնան ծրագրին, ազգային մեր կամքը հրապարակային արտահայտելու նորընծա կարգախոսին. Արցախի հայ ժողովուրդը վճռականուն դահանջեց վերարագրել դատնական անարդարությունը, երբ 1921-ին Արցախը բռնակցվեց Ադրբեյջանին»<sup>190</sup>:

Հրապարակախոսը մանրամասն ներկայացնում է 1988-ի փետրվարի կեսերին եւ հետագայում Ստեփանակերտի կենտրոնական հրապարակի եռուն իրավիճակը: Եվ թե ինչո՞ւ իրենց համայնքների վերջնական ու հաստատուն կամքն արտահայտելու համար Ստեփանակերտ էին զալիս Արցախի սարքեր բաղադրելիք ու գյուղերից դաշտամավորներ, որի հետեւանելով էլ փետրվարի 13-ին տեղի է ունենում առաջին հանրահավաքը՝ «ի հետուկս տեղական իշխանությունների դիմակայության, ի հակադրումն Բաքվից ժամանած բարձրասիճան բանագնացների»<sup>191</sup>:

Երկրամասի բոլոր բնակավայրերից տասնյակ հազարավոր միտինգավորներ դուրս են զալիս գլխավոր հրապարակ եւ անտեսելով իշխանությունների սղառնալիքներն ու հորդուները՝ միահամուռ գոչում են՝ ՄԻ-Ա-ՑՈՒՄ: «Զարմանալի փափուկ եղանակ էր տիրում 88-ի հունվար եւ փետրվար ամիսներին, - Գեղարվեսի ու իրականության ոլորտներից դիմարկում է գրող-հրապարակախոսը՝ - Մեր օրերը հյուսված էին ազգային մեր երազների գունազեղ մետախսներից: Անմոռանալի այդ ամիսներին մենք միակամ եւ միաձույլ ազգ էինք, ամենուր իշխում էր վերանձնական մեր նողասակը: Արցախի գյուղերից բռնրահաց ու արջառի միս, եւ այլեւայլ բարիքներ էին բերում հանրահավաքի մասնակիցների համար: Արցախի բոլոր տներում, բոլոր արցախցիների հոգում ազգային վերածննդի տոնն էր թեւածում: Մենք մեր դահանջաշիրությունն ի

<sup>190</sup> [ 24. 244]:

<sup>191</sup> [ 24. 244]:

սկզբանե ցանկանում էին լուծել ժողովրդավարական ձեռ-  
տով: «Լենին-Պարտիա-Գորքաչով» վաճկարկող մեր ժողո-  
վուրդը դեռևս հավատում էր, որ «ինտենացիոնալիզմի եւ ժո-  
ղովուրդների լենինյան բարեկամության» երկրում կարելի է  
լուծել ազգային որեւէ խնդիր»<sup>192</sup>:

Հունվար-փետրվար ամիսների խմորումները հայ ժո-  
ղովրդի ղատմության մեջ ավելացրին եւս մի կարեւոր էջ:  
Փետրվարի 20-ին ժողովրդական ղատօնավորների ԼՂԻՄ  
մարզյանուրիշի նստաշրջանը ԼՂԻՄ-ը նայր Հայաստանին վե-  
րամիավորելու մասին որոշում ընդունեց: Ակավեց Արցա-  
խյան շարժումը: Դեղբերի հետագա ընթացքն անկանխատե-  
սելի էր եւ միաժամանակ ոլրեւզական իրադարձություննե-  
րով հագեցած: «Բայց արդյո՞ք անկանխատեսելի: Մի՞թե, ի-  
րոք, հետագա արյունալի դեղբերը տարերային էին ծնվում,  
ինչողևս փորձում էր ներկայացնել ղաւոնական կենտրոնը:  
Թե դրանի հղացվել էին նախօրոք, սառն ուղեղով: Այդ ամե-  
նը հստակեց ուս եւ ուսացած, երբ ամենն այլեւս տեղի ունե-  
ցած էին», - գրում է հրադարակախոսը:

Փետրվարի 21-ին ԽՄԿԿ բաղբյուրոն մերժում է ԼՂԻՄ  
մարզյանուրիշի նստաշրջանի որոշումը: Հակառակորդ կողմն  
էլ իր արյունուն ծրագրերն իրականացնելու համար, նոյն  
փետրվարի 21-ին հանելով բարեկամի կեղծ դիմակը, Աղդա-  
մի «խուժանին» բաց է բողնում ԼՂԻՄ-ի Ասկերան շրջկենտ-  
րոնի վրա՝ «ըմբռուս հայերին» խրատական դաս տալու հա-  
մար: 20-րդ դարի ավարտին՝ 1988-ի փետրվարի 28-ին եւ 29-  
ին, աշխարհի աչքի առաջ տեղի է ունենում Սումգայիթի ցե-  
ղաստանությունը, որին հաջորդում են Բաքվի, Կիրովարա-  
դի, Մինգեչապուրի ջարդերը: «Սումգայիթ՝ նշանակում է ցեղաս-  
պանություն» խորագրի տակ ահա թե ինչողևս է մեկնարանում  
հրադարակախոսն այս ողբերգությունը. «Երեք անվեցա-  
նալի օրեր Սումգայիթի բաղամասերում ու հրադարակնե-

<sup>192</sup> [ 24. 245]:

րում հոսում էր մարդկային արյուն: Մոլեռանդ ամբոխը երկարե քրիչներով, սղանության՝ ձեռքն ընկած միջոցներով խողխողում էր, իրի մատնում, թալանում, դղծում»<sup>193</sup>: Սոսկվան էլ, ավելի շատ ահարեկված լինելով ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի «խաղաղ» որոշմամբ, քանի արյունոս Սումգայիթով, «դարաքաղաքացին կնճիռը» հարքում է՝ իրողությունը ներկայացնելով որդես չլուծված սոցիալական խնդիրների հետեւանք եւ ոչ թե ազգային հիմնահարց: Արցախյան շարժումը բացում է այն խոր վերքը, որը գոյացել էր խորհրդային իրականության 70 տարիներին: Քանի որ «Ղարաբաղյան հիմնահարցի» լուծումը կարող էր դուռ բացել «Ղենինյան ազգային» բաղաբանության եւ այդ բաղաբանության ստալինյան իրականացման ճիրաններում հայտնված ԽՍՀՄ տասնյակ փոքր ժողովուրդների եւ ազգային կազմավորումների համար, անհաջող փորձ արվեց Ղարաբաղյան ազգային շարժումը վարկարեկելու՝ այն ներկայացնելով որդես մի խումբ «կոռուպցված» տարրերի զործությունը հետեւանք: ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը Բաֆում այլ կերպ գնահատվեց, Երեւանում այլ կերպ: 1988 թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ Հայաստանի Գերագույն Խորհուրդը իր կազմի մեջ մտցրեց Լեռնային Ղարաբաղի Խնճնավար Մարզը: Այդ որոշումը ԽՍՀՄ սահմանադրությամբ իրավական ուժ չուներ, քանի որ Ադրբեյջանի Գերագույն Խորհուրդը մերժել էր այն, իսկ ԽՍՀՄ ԳԽ-ն չէր վավերացրել: Հայաստանի Գերագույն Խորհուրդի եւ նորաստեղծ ԼՂԻՄ Ազգային Խորհրդի համատեղ այդ որոշումն ավելի շատ տուրք էր ժողովրդական տարերային դահանջին: Հայաստանի դեկավարությունն առճակատման դուրս եկավ Ադրբեյջանի հետ եւ հակադրվեց Կենտրոնին, մասնավորապես՝ Գորաքչովին: Դեմքերը գուցե այլ ընթացք ստանային, եթե Հա-

<sup>193</sup> Ղովհամնմխյան Մ., Երկեր, Երկրորդ հասոր, Ստեփանակերտ, «Վաշազանքարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատում, 2006 թ., էջ 432:

յաստանի Գերազույն Խորհուրդը, լսելով Մոսկվային, «քարեկամական» կաղերը չխցեր Աղրբեջանի հետ: «Իմ կարծիքով,- մեկնաբանում է Մ. Հովհաննիսյանը,- տեղի դիմումներ այն, ինչ տեղի ունեցավ՝ Աղրբեջանը չէր զիշի Ղարաբաղը, Արցախի հայ ժողովուրդը չէր հաւսվի իր վիճակի հետ: Իր հերթին Կենտրոնը, որ ի սկզբանե վախեցած էր «Ղարաբաղյան բարդույթից», չէր կարող բացել Պանդորայի արկողը՝ զգուշանալով ԽՍՀՄ ամբողջ տարածում մխտղ ազգային կրակի բորբոքումից: Հետազոյում Աղրբեջանը բազմիցու ամբաստանում էր Հայաստանին այդ «ոչ սահմանադրական» որոշման համար: Ինչ վերաբերում է դեկտեմբերի 1-ի որոշման նշանակությանը, աղա, իմ կարծիքով, ԽՍՀՄ գոյուրջան դայմաններում արցախյան հիմնահարցը չէր կարող իրական տուափելի առաջսադացում ունենալ: Դա սիմվոլիկ մի գործողություն էր, որ ավելի բորբոքեց շարժումը, խանդապառեց փողոց դուրս եկած մարդկանց»<sup>194</sup>:

Արցախյան շարժումը գնալով լայնածավալ մաստաբների և հասնում: Հայ-աղրբեջանական առճակատումը դայնարի բաղադրակիրք ձեւերից անցնում է «քիրս ուժին», ահաբեկչությանը, սղանություններին: Արցախի հարակից Աղրբեջանական տրանսներից հենց Արցախում կազմակերպում են ճանաղարհների տրափակում, ավազակային հարձակումներ՝ հայկական գյուղերի վրա: Այսպես կոչված «աղրբեջանական գործոնը» գործողության մեջ էր դրվում Արցախում: Կարճ ժամանակահատվածում մարզը տրափակման մեջ է առնվում եւ կտրվում է արտաքին աշխարհից: Փակվում են մարզկենտրոն Ստեփանակերտից Մարտունի, Հարություն, Մարտակերտ տանող, ինչպես նաև Հաղբուրից տրանի գյուղեր գնացող այն բոլոր ճանաղարհները, որոնք անցնում են Աղրամ, Ֆիզուլի եւ այլ աղրբեջանական տրանսներով: Փակվում են նաև Մարզի ներսի այն ճանաղարհները, որոնք անց-

---

<sup>194</sup> [23.248]:

նում էին աղրեջանական բնակավայրերով: Այս ամենի շուրջ «Արցախյան գոյամարտ» Եղելություններ եւ խոհեր» հրադարակման մեջ ահա թե ինչ մեկնարանությամբ է հանդես գալիս Մ. Հովհաննիսյանը. «Տրամաբանական հարց կարող է առաջանալ՝ հայկական մարզում ինչողե՞ս հնարավոր եղավ նման իրողությունը: Դա հնարավոր դարձավ, եթք Արցախ ներմուծվեցին ԽՍՀՄ ներին զործերի նախարարության զինվորական կազմավորումները: Այդ ուժերը ոչ թե օրինականությունը դահլյանելու համար էին ժամանել, ինչողես հայտարարվեց դաւոննապես, այլ՝ իրականացնելու «կապված հորդին» խրատելու՝ ղետականորեն մշակված ծրագիրը: Ղարաբաղյան «վարակը» լոկալացնելու եւ շարժումը վճասազերծելու նղատակին հետամուս՝ Կենարները դարձավ Աղրբեջանի կամա թե ակամա դաշնակիցը: Հայ բնակչությունից առօրավավեցին որտորդական հրացանները, հակակարկային կայանների բոլոր հրանորները և ղեղափոխվեցին աղրբեջանական ցրաններ, որոնցից հետազոյում «Ալազան» ժիմի արկեր էին արձակվում Ստեփանակերսի եւ մյուս բնակավայրերի վրա»<sup>195</sup>: 1988-ի մայիսի 24-ին Ստեփանակերսում Շուշիի հայկական կոնորածի սարելարձին նվիրված հանրահավաքի ժամանակ Ստեփանակերսից ոչ հեռու գտնվող Խոջալու աղրբեջանական զյուղում բարկոծված հայկական մելենաների, ուղեւորների գանհարման եւ սղանության դեմքի մասին լուրը սիմոռում է ամբոխին Վրդովված շարժվել դեղի Խոջալու, որտեղ «մահակներով» զինված հայերին դիմավորում են հրացանային համազարկերով: Մինչդեռ դաշտունապես հայտարարվել էր, որ ԼՂԻՄ բոլոր բնակավայրերում առօրավել էին հրացանները: Արցախի ոչ մի ճանաղարի այլեւս անվտանգ չէր: Ակսվել էր դայլարի «վարակոիվ» ցրանը, որն էլ իր հետեւանդային արագընթաց զարգացմամբ սղանում էր վերածել խամատային դաշերազմի: Գորքաչովյան վարչակազմը դիմում է խորհրդային դրակտիկայի հա-

<sup>195</sup> [ 23. 249]:

մար անսպորտ միջոցի. 1988թ. վերջերին Լեռնային Ղարաբաղում հայտարարվում է հատուկ դրույքուն՝ ստեղծվում է Հատուկ կառավարման կոմիտե՝ բաղաքական գործիչ Արկադի Վոլոկու զիսավորությամբ: Խախտելով ԽՍՀՄ սահմանադրությունը եւ Կոմկուսի կանոնադրությունը՝ դադարեցվում են ԼՂԲՄ մարզխորհրդի գործադիր Կոմիտեի և Կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի գործունեությունը, խորհրդային եւ կուսակցական ամրող դեկավարությունը հանձնվում է ՀԿԿ-ին: Ա. Վոլոկին, Գորբաչովի օրինությամբ, օժակում է նահանգապետական լայն իրավունքներով: Արցախյան շարժումը թերակոխում է նոր տօքափուլ: 1988-ի վերջերից եւ հատկապես հաջորդ տարվա առաջին ամիսներին մեծ աշխատանքներ են ծավալվում ԼՂԲՄ-ի ձեռնարկությունները Հայաստանի համաստեղ կազմավորումներում միավորելու ուղղությամբ: Տեղական հումքով եւ Հայաստանից բերված համադատասխան տեխնիկական ու մարդկային ռեսուրսներով բացվում են նի շարֆ մասնավոր ձեռնարկություններ, կառուցվում են բնակելի տեղեր, իրականացվում են շինարարությունը ժամանակակից արդյունաբերական հիմքերի վրա դնելու ծրագրեր: Սակայն այս ամենն այլ ընթացք է սահմանված 1989թ. մայիսի 3-ին՝ Արցախում հայտարարված համընդհանուր գործադրությունով: Մի բանի ամիս տևող գործադրությունը, որն են ծանր են անդրադառնում մարզի տնտեսության վրա, կարվածահար են անում նաև Հատուկ կառավարման կոմիտեին: Հրադարակախոսն ընդգծելով այս իրողությունը՝ զալիս է այն եղանակման, որ գործադրությունները Հատուկ կառավարման կոմիտեի գործողությունը «վիճեցնելու» նղասակ գուցե եւ չին հետաղնդում, սակայն մի բան ակնհայտ էր: Ղարաբաղյան շարժման նորընծա որոշումը գործիչներ, չունենալով բաղաքական հասունություն, իրադրության մեջ միւս կողմնորոշվելու, դայլարի տարբեր ձեւերը համարելու մկունություն, միւս չեւ, որ կարողանում էին օգուտ բաղել ընձեռված հնարավորություններից: «Արցախցիներին մասնակիմալիզմը խնագարում էր ըմբռնել այն ճշմար-

տուրյունը, որ բաղաբանությունը դա հնարավորի արվեստն է»<sup>196</sup>, - գրում է հրադարակախոսը: Անզամ տնօրենների խորհուրդը, որն ըստ է ուրբայան դարձել էր արցախյան շարժման դեկապար մարմինը, չուներ գործողությունների հստակ ծրագիր: Իսկ Հայութ դրությանը փոխարինած արտակարգ դրությունը, բացահայտ վարելով աղքարեցանամես բաղաբանություն, գործադրում էր ամեն միջոց արցախյան ազգային շարժումը մարելու համար: 1988-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին աշխատանքներ ծավալվեցին՝ լուծարված մարզային իշխանությունները վերականգնելու համար: Հրավիրվեց ներկայացուցական համաժողով՝ Ազգային Խորհուրդ ընտրելու նորասկզբ: Ազգային Խորհուրդը, ըստ նախաձեռնողների հղացման, դեմք է փոխարինելու լուծարված Մարզխորհրդին: Այդ օրերին ՀԿԿ-ն հորդուրում էր չիրավիրել համաժողով՝ խոսանալով ուստափույր վերականգնել օրինական մարզային իշխանությունները: Թե ինչքանով էր անկեղծ առաջարկը, մնում է միայն ենթադրել, երբ մանավանդ նախորդ ամիսների ծավալուն դայլարը Մարզխորհրդի վերականգնման համար արդյունք չեր սկսել: Մարզային իշխանության այս նոր կառույցը չեր համատեղվում խորհրդային համակարգում, մերժվեց Կենտրոնի կողմից, և նրա լիազորությունները ճանաչվում էին միայն մարզում ու Հայաստանում: Ազգային Խորհուրդը հակակտիր էր Հայութ կառավարման կոմիտեին, երկու իշխանությունների դայլարն արագացրեց ՀԿԿ-ի լուծարումը: Կառավարման Կոմիտեի «Փափուկ» ցրանն ավարտվեց, եւ 1990 թվականին ԼՂՄՄ-ում ու նրան հարակից ցրաններում հայտարարվեց արտակարգ դրություն, արցախյան շարժման վրա ճնշումն ավելի խորացնելու եւ քոնի ուժով մարտելու այն: Իսկ առիջը եղան Բաքվի արյունալի դեմքերը: Հերթական անգամ Կենտրոնն Արցախը դարձեց «բավության նոխազ»: Այս ժամանակաշրջանի իրական նկարագիրն իր բոլոր նրբությունների, դասձառահետեւանելային կաղերի դրական ու

<sup>196</sup> [23. 371]:

բացասական դրսեւորումների մասին մանրամասն մեկնաբանություններն ու դիտարկումներն առավել շուշափելի են Մ. Հովհաննիսյանի «*Արցախյան գոյամարտ. Եղելուրյուններ և խոհեր*», «*Նամակ Աշխեն Պետրոսյանին*», «*Սկզբում եղել է քամը*», «*Մեր անյեմքերի 7-ը*», «*Ով պետք է կանգնի ժողովրդական դասի առջևն*» եւ մի շարժ այլ հրադարակումներում: «*Նամակ Աշխեն Պետրոսյանին*» հրադարակման մեջ Մ. Հովհաննիսյանը գրում է. «Այս տարվա անցած ամիսների դաժան ու հետեւողական ճնշումները, որ ձեռնարկում էր Ադրբեջանի ղեկավարությունն արցախսահայության նկատմամբ, իր նախադեմքը չունեն խորհրդային իշխանության բոլոր ժամանակներում նոյնիսկ ալիևյան ժամանակների համեմատությամբ: Խորականության, ժնշեական ու բաղաքական ճնշման, արտակարգ դրության դայմաններում մարզ մուծված զինվորական ուժի լայն օգտագործման միջոցով Ադրբեջանի ղեկավարությունը փորձում է ստեղծել նախիջեւանյան սինդրոմը, խախտել մարզի ժողովրդագրական կազմը: Արցախը նրանց համար «ժերունական հող» է, որ ժառանգել են բեկական-ֆեռակական ինչ-որ արտնագրով»<sup>197</sup>:

«*Մեր անյեմքերի 7-ը*» հրադարակման մեջ էլ հրադարակախոսը «բորբոքված ուղեղով» «կոկորդում կուտակված հարցականների» դատասխաններն է ուզում ստանալ. «Արտակարգ դրության անձուկ նեղվածքներում, տրջափակման ուկրու ճիրաններում մենք դատասխան ենք ողոքում՝ սկե՛ֆ մեզ աղբելու, մեր հողը հերկելու, մեր երեխաններին փայփայելու, մեր սիրեցյալներին սիրելու դարզագույն իրավունքը: Տվե՛ֆ մեզ մարդկության հնարած «մարդու իրավունքները»: Տվե՛ֆ մեզ Արդարությունը, որդեսզի նրանով դատվեն սղանություն, ավերում, լլկում: Սումզայիքում, Բաֆում, մեր ճանապարհների վրա, մեր հնձանի կողին, արժի մեջ, մեր օջախում: Տվե՛ֆ մեզ Հավասարություն, որ զորավոր այլ ազգերի դես մեր ճակատագիրը, մեր աղազան ինքներս ժնօրինենք:

<sup>197</sup> [ 23.371-372]:

Որդեսզի առաջնորդի հոչակած ազգերի ինքնորուման իրավունքը լինի կարգ եւ ոչ թէ մերկ ժեֆին դրված քենու ժերեւ։ Հավասար լինենի իրար նկատմամբ ու դասմության առջեւ»<sup>198</sup>։ Այնուհետեւ հրադարակախոսն արձանագրում է այն ժխոր իրողությունը, որ զործարանները հումք չլինելու դասձառով կանգնել են, ճանադարձիները երեւել չլինելու հետեւանով փակվել են, սերմնացանը հողը ցանելու հնար չլինելու դասձառով մնացել է վիզը ծուռ կանգնած, դասն էլ մնացել է կիսա՛ տունը կառուցելու հնար չկա։ «Մինչեռ կարգախոսը ի լուր աշխարհի հոչակել է՛ զործարանները՝ բանվորներին, հողը գյուղացուն, փառքը՝ աշխատավորին։ Փուս, փուս, փուս... Վերակառուցման՝ մարզում իրականացվող այս դարբուդարաղը դարձել է ղետական բաղաքականություն»<sup>199</sup>, - դարզաքանում է Մ. Հովհաննիսյանը։ Իսկ «Ո՞վ դեսք է կանգնի ժողովրդական դատի առջեւ» խորագիրը կրող հրադարակման մեջ հեղինակը վառված Ծաղկաձորի՝ իր իսկ տանը սղանված 83-ամյա ծեր կնոջ, զահել-ջիվանների սղանության եւ այլ ողբերգական երեսույթների մասին հիշատակելով՝ ներկայացնում է արցախահայության միամտության հասնող այն հույսն ու հավատը, որ արտակարգ դրության ռեժիմը կարող է կայունացնել իրավիճակը։ «Արտակարգ դրության դեկալար մարմին դարեւությունը, - մեկնարանում է հրադարակախոսը, - ավա՞ն, փոխանակ ծավալելու օրինադարձ զործողություններ անխսիր բոլոր օրինազանց ուժերի դեմ՝ զբաղվեց բաղաքականությամբ՝ դարձավ Ադրբեջանի կազկոմիտեի կամակատարը։ Պարեւության զործողությունները միակողմանի էին եւ, հետևաբար, դատապարտված էին ի սկզբանե։ Այդպես էլ մարզի ներսում ավտոճանապարհների շրջափակումը չվերացվեց։ Մինչեռ արտակարգ դրության շրջանի օրինադարձ ուժերն ի վիճակի էին մեկ հարվածով լուծելու հարցը։ Անասնազողությունն իր բերական նկարագրին

<sup>198</sup> [ 23. 412 ]:

<sup>199</sup> [ 23. 412 ]:

ավելացրել է նոր տրիխսներ՝ դարձել է բաղաբական-սնտեսական ճնշման միջոց»<sup>200</sup>:

«Մի՛ դատե՛, որ ջատկվե՞» խորագիրը կրող հրադարակման մեջ էլ Մ. Հովհաննիսյանը, օրինակներ քերելով Ծաղկաձոր գյուղի երկրորդ անգամ ավերման, իրի մատնման, Բերդանրի և նույնականացման մասին պատճենի վրա սասնյակ հարձակումների կազմակերպման, սնտեսությունների մի բանի հարյուր մանր ու խուռ եղջերավոր անասունների համան, խոսերի ու ծղոտի դեղերի հրդեհման, սների հրդեհման, սղանությունների, դասանդների եւ մի շարժ այլ անօրինական իրադարձությունների ժամանելու մասին պատկերները, նույն է. «Մարզի ներսում իրականացվող զանգվածային անասնագողության, ճանադարձության, տրամադրության մեջ ասած՝ լրյալության հետեւանելով ստեղծվել է մի վիճակ, որը կարող է նարդկանց մղել հուսահատական բայերի»<sup>201</sup>: Այսպիսով՝ սկզբել էր սաֆոնովյան ժամանակաշրջանը: Ursawa կարգ դրության դարեւությունը վարում էր «քեւերը ոլորելու» բաղաբականություն: «Սկիլլայի եւ Խարիբդիսի արանելում» հրադարակման մեջ ահա թե ինչ մեկնարանությամբ ու եզրահանգումներով է հանդես գալիս հրադարակախոսը. «Ursawa կարգ դրությունը հնարկեց որդես բաղաբական զենի՛ անենքակա դրորիւմներին ուժային լուծում տալու համար: ԽՍՀՄ երկրի լայնածավալ տարածից դողիգոն ընտրվեց fartskeqի վրա մի ասեղաչափ HKO-ն: Զինամբերի կա՛ զիստեմ որտեղ հայտնագործված, բայց առաջինը Ադրեզանում կիրառված եղանակում՝ սնտեսական, բաղաբական, գաղափարական՝ առանձին-առանձին կամ ցանկացած կոմքինացիայով: Երենց ուժը դեռ չեն կորցրել երեսնական թվականներին լայնորեն կիրառված տանտարական դրությունը»:

<sup>200</sup> [ 23. 420]:

<sup>201</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուլ, 2008 թ., էջ 226:

վոկացիան, ռեմբեսիան: Դրան գումարած՝ ցեղակից օսման-ների զինաղաւարը: Մի հսկայական կայսրություն մի փոքրիկ երկրամասի մասին է դառել, Նախիջևանի սինդրոմն ուզում են սածիլել Արցախի հողում»<sup>202</sup>: Այս տօջանում Արցախն ամրողությամբ գտնվում է տօջափակման մեջ: Զինված ադրբեջանցիներն իրավադական մարմինների աշխի առաջ «հարայ-hrngով», hrացանային կրակոցներով ավազակային հարձակումներ են ձեռնարկում հայկական բնակավայրերի վրա, քալանում ու ավերում: Մարդիկ, ստեղծված իրավիճակից ելք չգտնելով, հուսահատ քողնում-հեռանում են հայրենի գյուղերից: Անասնագողությունն Ադրբեջանի ղետական բաղադրականության մասը կազմելով՝ մի բանի ամսում անասելի չափերի է հասնում: «Նոյնիսկ Հայրենական ղատերազմի տարիներին,- «Գործ անելու ժամանակը» հրադարակման մեջ գրում է Մ. Հովհաննիսյանը,- երբ մեր ծնակներում վիստում էին ռազմաճակարը լիած ոչ մեր «դաշաղները», անասնագողությունն այսքան չէր հետացել: Առանց համարի ավտոմեքենաները վիստում են ճորակում: Եվ այդ ամենն արվում է մեր ղետությունն իրավական ղետություն դարձնելու կուսակցական-ղետական ջանքերի մեր օրերում»<sup>203</sup>: 1990-91թթ. ԼՂԻՄ ղետական եւ կոլեկտիվ տնտեսություններից բառել է ավելի բան 12 հազար խուռ եղջերավոր անասուն: Պարետության քի տակ եւ աշխի առաջ իրենիկում էին արտերը, քալանվում դաշտային կայանները: Արցախն արտաքին աշխարհի հետ կապված էր միայն օդային ճանապարհով, որտեղ արդեն մեր ու տնօրեն էր դարձել ադրբեջանական օմօնը: Քրեական անցյալ ունեցող օմօնականները ծաղր ու ծանակի էին ենթարկում հայ ուղևորներին, առանց դաս ու դատաստանի ծեծում, քալանում, փոքր ինչ դիմադրության դեմքում՝ բանարկում: Այդ ամենի մասին գիտեր արտակարգ դրության դարե-

<sup>202</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Երկրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Անմա» գրատուն, 2006 թ., էջ 357:

<sup>203</sup> [ 23. 312]:

տությունը, բայց ոչինչ չեր ձեռնարկում: Չեր կարող, այդոիսին էր, հավանաբար, կենունի հրահանգը: Մեծ չարիք էին դարձել այսպիս կոչված՝ անձնագրային ռեժիմի սուոգումները: Զենք եւ ծայրահեղականներ բացահայտելու անվան տակ արտակարգ դրության դարեւությանը ենթակա զինվորներն ամեն տեսակի խծդություններ էին կատարում, հայերից անդամահիծ խլում-վերցնում բանկարժեք իրեր, դրամ: ԽՍՀՄ ՆԳՆ զորքերը ժիշ էին տարեւզում ադրբեջանական օճոնից: «*Անզուս կոնֆլիքտ, թե՞ ունզուս համաշայնություն*» վերնագրի տակ Մ. Հովհաննիսյանը խոսում է այն մասին, որ առաջին անգամ չէ ադրբեջանական բնակավայրում տեղադրված զինված միավորումների օգնությամբ կազմակերպվող բռնությունները, սադրանեները, ժիկացված բաղաբական մքանոլորտը, ինչպես նաև ծխածածկույթի տակ մարզ մոցված այն ուժերը, որոնց նողատակն է ահարեւկոչությամբ ու բռնությամբ խեղդել արցախահայության ազգային իրավունքների համար դայլարը: Եվ աղա արձանագրում նարզում ստեղծված երկու զուգահեռ կառուցվածքների՝ դարեւության եւ օճոնի առկայությունը, նույն է, որ վերջինիս ավելանում է «Ադրբեջանի ՆԳՆ միլիցիայի կոնֆինգենտը»: «*Սումգայիթ՝ Աշանակում է ցեղասպանություն*» հրադարակման մեջ էլ հրադարակախոսն արձանագրելով Ադրբեջանի Հանրապետության դեկավար ցրցանների որոշակի ազդեցիկ ուժերի կողմից արցախահայությանը ծնկի թերելու նորանոր միջոցների հեարման փասթը՝ ընդգծում է, որ խախտելով երկրի սահմանադրական օրենքները՝ Ադրբեջանի Գերազույն խորհուրդը լուծարում է Արցախի բոլոր մակարդակի խորհուրդները: Իսկ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոն դադարեցնում է կուսակցության ցրկումների զործունեությունը (բացառությամբ՝ Շուշի): Քաղաքական այդ ուննագրությունների նողատակը թերեւս կառավարման եւ կուսակցական բոլոր կառուցվածքների կազմալուծման, ժողովրդին դեկավար մարմիններից գրկելու, արցախայան շարժումն այդդիսով ջլատելու մեջ էր կայանում: Ահա թե ինչ մեկնաբանություն է տալիս հրադարակախոսը.

«Այսօր Արցախում, Կենտրոնի քողսվությամբ, իրականացվում է արցախահայության ցեղասպանություն: Սակայն այդ հրեւալու ծրագիրը կրողները ճակատագրական սխալ են քոյլ տալիս՝ Արցախը հայ ոգու հավերժական գոյատեսման սիմվոլն է: Այդուև եղել է դարեւ շարունակ, այդուև է հիմա»<sup>204</sup>: Այսդիսով՝ Մոսկվա-Բաֆու միության նողատակն արցախյան ազատագրական դայքարը վերջնականացես ճնշելն էր: Իսկ Ադրբեյջանի իշխանությունների նողատակն ավելի հեռու էր գնում՝ օգտագործելով Կենտրոնի զինվորական ուժը՝ հայարափ անել հայկական տրամադրությունները: Այսեղ, թերեւս, Արցախի վրա ծանր է անդրադառնում Հայաստանի անկախության համար շարժումը, որը գնալով խորանում էր: Սակայն հայկական այս նոր ընդդիմությունը Կենտրոնի նկամանք բարիդրացիական վերաբերնունենով աչքի չէր ընկնում ու չէր կարող խրախուսել վերջինիս կողմից, ընդհակառակը՝ Հայաստանին դասձելու համար Կենտրոնն Արցախը դարձրեց խաղաքարտ: Այդ վճռին նողաստեցին այդ տրամադրությունը հակառուսական դրսեւորումները: Դա դառն վրիդում էր, որ քոյլ սվեցին այդ ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունները: «Օղակ» ծրագիրը, որ բազմիցս փորձարկել էր Աֆղանստանում, խորհրդային երկրում առաջին անգամ կիրառվեց Գետաւենում: 1991-ի ապրիլի 31-ին Խորհրդային բանակի տանկերը տրամադրեցին զյուղը, ուազմական օդուժը հարվածեց վերեւից, իսկ ԽՍՀՄ ՆԳՆ զորքի հետ միասին ադրբեյջանական օմօնը եւ զինված ավազակախմբերը խուժեցին զյուղ: Գետաւենի հայ բնակչությանը բռնի տեղահանելն Ադրբեյջանի իշխանությունների հրեւալու ծրագրի սկիզբն էր, որը հետագայում Ադրբեյջանի ներքին գործերի նախարարի կողմից հստակ ձեւակերպում սացավ՝ Ղարաբաղում դեմք է ադրի այնան հայ, որքան ադրբեյջանցի ադրում է Հայաստանում: «Օղակ» օղերացիայի հետագա գործողությունները ծավալվեցին Հադրութի տրամադրությունները ծավալվեցին Հայաստանում եւ Բերդաճորի

<sup>204</sup> [23. 436]:

Ենթաւորանում: Մի քանի օրվա մեջ թալանվեց, ավերվեց ու հայաբափվեց ավելի քան 24 հայկական գյուղ: Շարունակելով ճամշումը հայ բնակչության վրա՝ խորհրդային քանակի, ներքին գործերի զինվորական ստորաբաժանումների աջակցությամբ կազմակերպվում էին զիշերային արշավներ գյուղերի, առանձին մարդկանց բնակարանների վրա: Կարճ ժամանակահատվածում Շուշվա, Աղդամի, Բաբուկի քանտերը լցվում են հարյուրավոր անմեղ մարդկանցով, որոնք որակվում էին ծայրահեղականներ ու ենթարկվում վայրագ խուսանգումների: Բանտարկյալներին ազատելու համար ահավոր փրկազին էր նևանակվում: Այդ առուվաճառքին, որը ես միջնորդ, մասնակցում էին նաև զինվորականները, հատկապես՝ դարեսության բարձրասիճան սղաները: 1991 թ. օգոստոսին Մոսկվայում փորձ է արվում դեւական հեղաւորում կատարել: Ժողովրդավարական ուժերը Բ. Ելցինի գլխավորությամբ տաղալում են դուչիսիների ելույթը, իսկ հեղաւորման գլխավոր կազմակերպիչները ձերքակալվում: Ժողովրդավարական ուժերը վճռական հադրանակ են տանում: Խորհրդային կայսրականությունը կանգնում է վերջնական փլուզման փասի առաջ: Արցախում իրավիճակը եւս կտրուկ փոխվում է: Աղրեջանի իշխանությունների պասալ հաւաքարկները քոյլ են տալիս մտածել, որ կոտրվել է արցախահայության դիմադրությունը եւ մենակ կարող են վերջնականացնես վերացնել «Պարաբաղյան կնճիռը», դահանջում են դուրս բերել արտակարգ դրության գորքերը: Արցախյան գոյամարտը մտնում է իր հաջորդ եղանակով: Դեմ-դիմաց կանգնում են աղրեջանական լավ զինված բազմաբանակ զորամիավորումները եւ Արցախի ֆիդայական ջոկատները, որոնք արտակարգ դրությամբ հայտարարված էին անօրեն եւ դաժան հետաղնդումների դայմաններում անգամ դիմակայում էին աղրեջանական օմօնին: Սաֆոնովյան իշխանության դայմաններում արդեն հայտնի էր, որ Արցախի ազատության համար դայխարի ժողովրդավարական հնարավորություններն իրենց սղառել են, եւ դեղբերի տամարանությունը տանում է դեղի զինված ընդ-

հարումներ: Անդասմելի դժվարին դայմաններում, ընդհատակյա, մատչելի լեռնաղարերում էին կազմավորված ֆիդայական ջոկատները: Հայրենիքի ազատության համար կովել ցանկացողները շատ էին, չկար զենք ու զինանթերք: Այս երջանում մեծ աշխատանքներ է կատարել նաև Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ զինված խմբերի կազմակերպման եւ նրանց զիներու ճակատագրական գործում: Շուտով սկսվեց ազերիների կողմից բռնագրավված զյուղերի ազատագրությունը Հաղրութիւնը երջանում: Առաջին լուրջ դարձությունը ազերիները կրեցին Տող զյուղում: Նախօրեին նրանց «hrnuակախմբերը» մտել էին հայի մի տուն ու սրի բաւել ընտանիքի բոլոր անդամներին, այդ թվում՝ երկու մանկահասակ երեխաների: Կարճ ժամանակահատվածում թշնամին ստանում է համադաշտախան հատուցում, եւ զյուղը «մարգվում է օսար սարրից»: Սակայն հակառակորդ կողմն լավ էր նախադարձասվել առաջիկա զինված հակամարտությանը: Արդեն սեղմենմբերին հայտնի դարձավ, որ Շուտի բաղադր են բերվել «Գրադ» ժիմի զանգվածային ոչնչացման կայանքներ, որոնք միջազգային դայմանազրերով արգելված է օգտագործել խաղաղ քնակչության դեմ: 1991-ի վերջին երջակա քնակավայրերից՝ Շուտիից, Խոջալուից, Մալիբեկուից, Զանիասանից, Կրկժանից սկսեց հրետակոծվել Ստեփանակերը: Արցախը հայտնվում է «կրակե օղակում»: Այդ ժամանակաշրջանում փոխվել էր նաև բաղադրական իրադրությունը: Ինչուս ասվեց, Հայաստանի Գերազույն Խորհրդի 1988թ. դեկտեմբերի 1-ի որոշումը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին բաղադրական ակտ էր եւ ոչ ավելին: Միջազգային հարաբերություններում որոշումը չէր ճանաչվում: Հասունանում էր, դժբախտաբար ուշացումով, հայկական նոր անկախ դեսություն ստեղծելու գաղափարը: ԼՂԻՄ մարզի խորհրդի որոշմամբ 1991 թ. դեկտեմբերի 10-ին անց է կացվում հանրապետությունը, որին հաջորդում են Գերազույն Խորհրդի ընտրությունները: Ստեղծվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ միջազգային բոլոր նորմերին համադաշտախան,

Արցախի հայ ժողովրդի եւ նրա ընտրած Գերագույն Խորհրդի միակամ որոշմամբ: ԼՂՀ հոչակումը ստեղծված իրադրության լայնաններում միակ ճիշտ էր, ՄԻԱՅՈՒՄ նպատակին հասնելու հաջորդ եւ կարեւոր ասիմմետրիա: ԼՂՀ ստեղծման մարտավարական նույնակությունը դժվար է գերազանցահատել. նախ՝ Հայաստանի Հանրապետությունն ազատվում է դեկտեմբերի 1-ի որոշման դիվանագիտական դժվարություններից, այն սահուն դրվում է մահուղի տակ: Երկու անկախ դեսությունների հարաբերություններն այլևս չեր կարելի մեկնարանել որմես Հայաստանի Հանրապետության միջամտություն՝ Ադրեզանի ներքին գործերին, կամ նրա գործողությունները ուրակել որմես ազրեսիա, որովհետեւ այլևս Լեռնային Ղարաբաղը չեր կազմում Ադրեզանի «անքաժանելի մասը»: Այդ հարաբերությունն, անուուծ, ավելի կիսակվեր, եթե Լեռնային Ղարաբաղը դիվանագիտունն ճանաչվեր այլ դեսությունների, առաջին հերթին՝ Հայաստանի Հանրապետության կողմից: ԼՂՀ հոչակումը բաղաբական լայն հեռանկարներ էր բացում ԼՂՀ-ի տակերը միջազգային այցաններում դաշտանելու համար: Ադրեզանի որեւէ գործողություն արդեն սկսվում եւ զնահատվում է որմես ազրեսիա՝ անկախ դեսության նկատմամբ: ԼՂՀ-ի նույնակությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ արդեն հնարավոր է դարձել համախմբել երկրի բոլոր ուժերի ռեսուրսները՝ թշնամուն դիմակայելու, հայրենիքն ազրեսություն դաշտանելու համար: Դրվել էր անկախ դեսություն ստեղծելու բաղաբական իիմֆը: Ինչուս վերը նույնականացնելու համար 1991-ի վերջերից ուսումնական գործողություններ ծավալվեցին Արցախի ամրող տարածքում: 1992 թվականն ամենաարյունալին էր մեր գոյաղայքարի տարեգրության մեջ: Թշնամին գերազանցում էր մարտական տեխնիկայով եւ զորքերի թվաքանակով: Նրա զինյալ «հրոսակախմբերն ասդաբակում էին» Արցախի բնակավայրերը, տարեգրության մեջ: Թշնամին գերազանցում էր մարտական տեխնիկայով եւ զորքերի վրա, ավերում շենքեր, սղանում խաղաղ բաղադրանքիների: Առանձնադեպ ծանր էր Ստեփանակերսի վիճակը,

հատկապես, երբ քաղաքը սկսեցին հրթիռակոծել «գրադ» կայանքներից եւ փլատակների վերածել տասնյակ քնակելի շենքեր, արդյունաքարերական ձեռնարկություններ, իսկ խաղաղ քնակչությունը, վերջնականապես բուն ու հանգիս կորցրած, վախի ու սարսափի մեջ ամեն օր զոհեր էր ունենում: Ծուժից եւ շրջակա ադրբեջանական քնակավայրերից ամեն կերպ ձգում էին Ստեփանակերը՝ որդես Արցախի ազատագրական դայլարի միջնարերդ, ավերակի վերածել, ճնշել նրա ազատանունը ոգին: Հայերն այլընտրան չունեին՝ թշնամուն դեմք է դուրս փնտեին իրենց հայրենի քնօրրանից: Տասնյակ քաջազնուն հայորդիներ, զոհելով իրենց կյանքը, ազատագրում են Կրկտանը, Մալիբեկլուն, Խոջալուն, իսկ մայիսի 9-ին 70-ամյա գերությունից հետո ազատագրվում է նաև Ծուժին: «Մայիսի 18-ին իրականացվում է արցախահայության մեկ ուրիշ երազանքը՝ ԼՂՀ-ն Լաշինի դրույարով միանում է մայր Հայաստանին,- գրում է հրադարակախոսը:- Դա ասենային ժամն է Արցախի զոյալայքարի դասմության մեջ: Այդ օրը տողերիս հեղինակը մարտի սաւ հետերով անցավ Լաշինի միջանցքով: Հիշում եմ միջանցքը մարտով ազատամարտիկներից մեկի խոսքերը. «Այլուս դեմք է դադարեցվի ֆիդայական կորիքը, դեմք է ստեղծել կանոնավոր բանակ: Ավաղ, այն ժամանակ դա տեղի չունեցավ, ավելին՝ հաղթանակը բրացրեց մեր մարտական ոգին, մենք չկարողացան ծավալել հաջողությունները»<sup>205</sup>: Հաջողությունների ու անհաջողությունների, ոգու անկման եւ ոգեշնչումների աննախադեմ դայլարի հետագա ընթացքն ամենայն մանրամասնությամբ տեղ է գտնում գրող- հրադարակախոսի տողերում: Հայոց ազգային բանակի ստեղծման զաղափարն իրագործվում է 1992-1993թթ. երկրադահ կամավորական ջոկատների եւ բանակ զորակոչված զինակոչիկների միասնական ուժերով: Հայ ազգը, մոտ 20-25 հազարանց բանակով դուրս գալով Աղրեցանի 75-80 հազարանց բանակի դեմ, հերոսաբար հետ է

<sup>205</sup> [ 23. 436]:

շուրջում թշնամու գրոհը եւ ազատագրում Արցախը: 1994 թվականի Մայիսի 12-ին կնքվում է զինադադար: Արդյունքում՝ հայերն ունենում են 5 հազար զռհ, ինչդես նաև՝ հազարվող զռհեր խաղաղ բնակչության ցանում:

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության ազրեսիայի հետեւանելով՝ ծագած զինված հակամարտությունը՝ 1988-1994թթ., իր փուլային բոլոր ընդգրկումներով տեղ է գտնում Մասսիմ Հովհաննիսյանի հրադարակախոսական նժիկի դիմակետում՝ տարածաւրջանային եւ միջազգային զարգացումների, ներին ու արտաքին բաղաբական դրսեւությունների ընդհանրությամբ: Անկախ նրանից, թե փուլային ինչ համակարգով արժե առաջնորդվել, գրող-հրադարակախոսն ամենայն մանրամասնությամբ, անկողմնակալ ժարադանելով ու մեկնարանությամբ արձանագրել է հակամարտության ամբողջ անցուդարձը:

Հայ ժողովրդի դասմության կարեւուրագույն էջերից մեկի՝ 20-րդ դարի Արցախյան զոյադայքարի արձանագրման գործում Հովհաննիսյանի ավանդը մեծ է թե՝ «Ուղարքած դեմքի վայրից» երեք բաժնից բաղկացած շարքում եւ այլ հրադարակումներում, թե՝ գեղարվեսական արձակում:

### ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԼԵԶՎԻ ԵՎ ՈՃԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսիմ Հովհաննիսյան գրողի ինքնատիպությունը դայմանավորված է ոչ միայն ժանրային առանձնահատկություններով, թեմատիկ բազմազանությամբ, բարձր ինտելեկտուալությամբ, հոյզերի ու զգացմունքների բնականությամբ, այլև կենդանի, դարգ ու գունեղ լեզվով։ Գրականացեան Էդվարդ Ջրաշյանը գրում է. «Գրականության ազգային յուրահատկության կարեւորագույն գծերից մեկն էլ լեզուն եւ արտահայշչական միջոցներն են, որոնք անմիջաբար կրում են ազգային գեղարվեստական մտածողության կնիքը։ Դրանով է, առաջին հերթին, որում գրական ստեղծագործության ազգային նկարագիրը»<sup>206</sup>։ Մ. Հովհաննիսյանի արձակն աչքի է ընկնում դատկերավոր, սեղմ ու ներդաշնակ խոսքով, հետաքրքիր նկարագրություններով եւ դիմուկ բնորոշումներով։ Իրատես ու սրափ նկարագրություններով եւ ընդհանրացումներով, առողջ մեկնաբանությամբ, բնարականի ու վիղականի համադրմամբ նա ստեղծում է արժեքավոր գործեր, ասելիքը կենարունացնում իր հերոսների բնավորությունների ներսում։ Աչխարհը, նրանում աղրող մարդը, վերջինիս կյանքն ու նրանով դայմանավորված անցուղարձր գրողը դատկերում է դիմուկ երկխոսությունների, սրամիս մտքերի, յուրօրինակ համեմատությունների, արցախյան բարբառի ընդգծված դրսեւումների միջո-

<sup>206</sup> Ջրաշյան Եղ., Մախչամյան Յ., Գրականագիտական բառարան, Երեւան, «Հոյս» հրատարակչություն, 1980 թ., էջ 8:

ցով:

Մաքսիմ Հովհաննիսյանի արձակի լեզվառնական առանձնահատկությունները բազմազան են և արժանի են լուրջ ուսումնասիրության: Այդ առանձնահատկություններից մեկը հեղինակի, դասմողի և հերոսի խոսքն է: Ընդհանրապես ցանկացած ստեղծագործության մեջ խոսքը դայմանավորվում է երկերի զաղափարական, հուզական բովանդակությամբ ու կերպարների բնավորությամբ:

Հեղինակի, դասմողի և հերոսի խոսքները, որոնք լեզվական առանձին են՝ Հովհաննիսյանի արձակում ընդգծվում են սարքեր հարաբերակցությամբ:

Հովհաննիսյանի դասմվածքներում կարենք սեղ է գրավում հեղինակային խոսքը, որի կառուցվածքով է դայմանավորվում ստեղծագործության փիլիսոփայական և հոգեբանական բովանդակային իրարությունը: Նրա հերոսները երեմն ավելի շատ հենց հեղինակի խոսքում են անհատականացվում, ձեռք բերում իրենց դիմագիծը: Այդ դասմառով էլ գրողի արձակում հեղինակի և հերոսի խոսքի անորսալի փոխանցումներում հանդիդում ենք հերոսների ոչ սեփական ուղղակի խոսքի, երբ խոսքային երկու սարքեր ենթակա միատեղվում են հեղինակի խոսքում: Օրինակ, «Հարկանաներ» դասմվածքում հեղինակը, խոսելով հերոսի մասին, արտահայտում է հերոսի ներքին ձայնը՝ առանց ավելորդ միջամտությունների. «Հիմա Սիմոնը ի՞նչ անի: Գյուղը քողմի զնա՞»: Գնա՞՝ ո՞ւր զնա հարյուր սարվա զուլացի մարդ Տուն-սեղ ունի, կի՞մ-երեխա: Լավ բանջարանց ունի: Ուհան է անուն՝ հենց տան ցուցահանդես: Սարդը կոյ է պահում, խոզ է պահում: Էշ ունի: Խելով է, բայց Արել չի, խորամանկ չի ու դավաճան չէ»<sup>207</sup>: Նման օրինակները շատ են: Այսպես, հերոսուիի Աւլենի ներքին խոսքը ձուլվում է հեղինակի խոսքին «Նշանի մատանի» դասմվածքում, Հեղութի ձայնը՝ «Արմաս»-ում, Զոհրաբինը՝ «Քարկեծ»-ում, Վարսիկինը՝ «Կանայի»-ում եւ

<sup>207</sup> Հովհաննիսյան Ս., Երկեր, Առաջին հատող, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատում, 2005 թ., էջ 347:

այսպես շարունակ:

Հեղինակի, դասմողի եւ հերոսի խոսքի հարաբերակցության իմաստով Մ. Հովհաննիսյանի արձակում իր առանձնահատուկ ժեղն ունի դասմողի խոսքը, առանձնադես՝ «Գյուղացի մարդիկ» դասմվածաւրում: Նրանցում դասմողի խոսքը հանդես է զալիս որդես կաղող օղակ հեղինակի եւ հերոսների միջեւ: Այսեղ մի կողմից շատ բան կա հեղինակային խոսքից ու վերաբերմունքից, մյուս կողմից նրանում զգալիորեն արտահայտվում է հերոսի խոսքը, որը կամ մեջ է բերվում դասմողի խոսքում, կամ ձուլվում նրան: Տեղին է հիշել Մ. Մ. Բախտինի հետեւյալ դիսարկումը՝ «դասմողի խոսքը երեք չի կարող մաքուր օրյեկտային լինել»<sup>208</sup>, այսինքն՝ նույնանալ հերոսի խոսքին:

Հեղինակի եւ դասմողի լեզվամտածողության միասնությունը Հովհաննիսյանի արձակի ժողովրդական լեզվառնային կառուցվածքին բնորոշ եղանակներից է: Հեղինակի կողքին ժեղ է տրվում նաև նրա կրկնորդին եւ սյուժեն դասմողին, որն իր հետարքիր գոյներով զարդարում է հեղինակային խոսքը, կամ էլ այդ դասմողը դառնում է մի ինքնաշխատ «ձայնափող»: Այս երկողան, երկճյուղ դասումի ձեւը հայ արձակում առաջին անգամ օգտագործել է Ակսել Բակունինը:

Հովհաննիսյանի արձակում այս կառուցվածքի հետարքիր օրինակներից մեկը «Դրախտի ձոր» դասմվածքն է, որն ունի ե՛ւ դասմող, ե՛ւ հեղինակ: Այսեղ հեղինակը մի կողմ է կանգնում՝ ձայնը տալով դասմողին («Դրախտի ձորում աշուն է: Աշունը մարմանդ շաղում է Դրախտի ձորում») եւ այլն: Ինչ վերաբերում է Մաքսիմ Հովհաննիսյանի դասմվածքների հերոսներին, առաջ աներկրա կարելի է ասել, որ նրանց զգացողություններն ու զգացմունքները լավագույն ձեւով դրսեւորվում են թե՝ հեղինակի կամ դասմողի, թե՝

<sup>208</sup> Бахтин М., Проблемы поэтики Достоевского, Москва, 1972 г., ст. 325.

հենց իրենց՝ հերոսների խոսի միջոցով:

Հերոսների կարծիքների ու եղակացությունների դիտակետում գրողը բացահայտում է դեմքեր, դեմքեր, քնավորություններ, որոնց դրական ու բացասական դրսեւորումներն իրենց հետքն են քողնում: Այսպիսի մի բացահայտման դրսեւորում է «Անրառամը» դասմվածքը: Պատումի ռեալիստական ընդգծումների մեջ արծարծելով նյութի արժեւորման առկայությունը՝ գրողը կարեւորություն է տալիս մարդու հոգեւոր ընդգրկումներին: Անուշավանի մարդկային տեսակի բացահայտումներից են այս յուրօհնակ քնութագրումները, որոնք ոչ միայն նրա կենսակերպն են ներկայացնում, այլև՝ քնավորության գծերն ու հոգեվիճակները, որը հարեւանների մշահոգությունների, գրույցների միջոցով է առեւվում.

«- Կամ նա, կամ էշի մեջին զցած ջուլը:

- Մի ասս, կմիկը բախսի բան է,- պաշտպանում է Օսկիլ,- Անուշավանը ումի՞ց է պակաս, դիպումը՝ կոնատակին, զործատեղը՝ արևով երդում են, բայց էս մի հարցում սու բախսը չի բերել:  
- Ծիպոնը իրա բոլիցը կորեր:

- Օրենք է՝ սեխի լավը չաղալը կուտի,- բորբոքում է Աղվանը»<sup>209</sup>:

Գործածելով ժողովրդական բառաֆոնդի առանձնահատկությունները՝ Հովհաննիայանը հերոսների շուրջերով հնչեցնում է դահը դասկերող, դասկերն ամբողջացնող քեւավոր մսեր, որոնց ծանրթացանի վերը հիշատակած հասկածում: Հենց այս ձեւաչափի մեջ էլ դարձ են դառնում Անուշավանի կնոջ, Սուկ Փառավոնի աղջկա՝ Սեղա Փառավոնվանյի լավ ու վաս արարքների, ճիշտ ու սխալ բայերի մասին որոշակի իրողություններ:

Հովհաննիայանի արձակին քնորու են երկխոսությունների եւ ուրիշի ուղղակի խոսի տարբեր դրսեւորումներ:

<sup>209</sup> Հովհաննիայան Մ., Երկեր, Առաջին հասողոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակություն, «Սոնա» գրատուն, 2005 թ., էջ 239:

Օրինակ՝ «Ակամա փեսացու», «Եղ սիրտն ասաց», «Անտառապահ Մելիքը և ուրիշներ», «Էլեզիա», «Իրիկնային բախիծ» եւ այլ դասմվածքներում բաց երկխոսություններն ու ուրիշի ուղղակի խոսքը գերիշխում են հեղինակային խոսքի նկամամբ:

Ակտիվ, առողջ, աշխույժ երկխոսությունները Մ. Հովհաննիսյանի գեղարվեստական արձակի կառուցվածքի կարեւոր բաղադրիչներից են, կերպարների անհատականացման յուրօրինակ բաղադրամասերից: Նրանց միջոցով գրողը կերտում է իր հերոսներին, բացահայտում նրանց հոգեկան աշխարհը, բնավորությունը, կյանքի ճանապարհը, արտահայտում նրանց խոհերն ու զգացմունքները, բնութագրում նրանց միջավայրը: Երկխոսությունները բարձր են իրենց կատարման, մսիք, ձեւի ու բռվանդակության տեսանկյունից: Նրանց մեջ չեն գտնի միապաղպարության, ձանձրույթի, շարլունային մսերի փոքր իսկ նույլ, այնուեղ դահդանաված են կոլորիտային բռլոր նրբերանգները:

Անկախ նրանից, թե ինչ նոյատակով եւ ինչին է ուղղորդված խոսքը, այն շարադրված է համապատասխան չափ ու ձեւի մեջ, բռվանդակային յուրօրինակությամբ: Ուսագրավ է «*Urgnitsik, nr gavjstek է երեխայի աշերից*» դասմվածքի կերպարներ՝ շարուկրակ Կամոյի եւ թերթի խմբագիր Մարտին Աքզարիչի երկխոսությունը.

- «- Կամո, ի՞նչ է եղել:
- Պապիկը կանչում է:
- Բա՞ն է պատահել:
- Պապիկն ասել է՝ չասես ծնունդդ է, ասել է՝ Մարտին Աքզարիչին ասս՝ եկ նարդի իսպան:
- Իսկ պապիկը նարդի իսպալ սովորե՞լ է:
- Սովորել է. հոպար Շահենահն ամեն or սանում է:
- Ինչի՞ց իմացար:
- Ամեն or հոպարը մի ո՞սի վրա կանգնում է ու ծուղրուղու

<sup>210</sup> Յովհաննիսյան Մ., Յոգնած Երեկո, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2010 թ., էջ 203:

կանչում»<sup>210</sup>:

Արցախցի նորաքուխ երեխաների մսի սրությունն ու հումորի բարձր զգացողությունը լավագույն ձեւով դրսեւորվում է հարց ու դատասխան դարունակող այս երկխոսությունում.

«- Քեռի, հե՞-հե՞, թե՞:

- Հե՞-յ,- նոյն տնանով պատսասիսանեցի ես:

- Ո՞ւր ես զնոս:

Լեռնադրյուրցու ծոռությունը շարժվեց մեջու.

- Քեռակինդ ասել է՝ զնա ծվածեղի չոփի թեր՝ ծվածեղ անեմ:

- Հաս...:

- Հաս ա...

- Քեռիի՞:

- Ի՞նչ է՞...

- Չոփը կհավաքես, հետո Յուր ադրյուրից ջուր կխմես, հետո կրաշրանսաս զերեզմանաւուն...

- Գերեզմանաւանը ի՞նչ կաս ...

- Քեռակինս այնտեղ է...

Հետո, ծայնը ցածրացնելով, ասաց ընկերոջը.

- Տեսս՞ր, որ ասում եմ՝ լեռնադրյուրեցի է»<sup>211</sup>:

Տարածային առանձնահատկությունների ու կերպարների սրամիս բնութագրման առանցքում մրցում են նաև լեռնադրյուրցին ու ֆոլուսեցին, որն առավել ընդգրկուն ու ճշգրիտ է երեւում երկխոսություններում։ Այն, որ «Լեռնադրյուրցի մի թիզ երեխա սասր ֆոլուսեցու ծարավ կտանի ջուրը ու ծարավ ես կրերի», լավագույն ձեւով դրսեւորվում է հետեւյալ հատվածում։

«- Ախսպերացու,- ասում է,- մեղֆ չի՞ էդ ուլը, որ շարշարում

<sup>211</sup> Յովհաննիսյան Մ., Երկեր, Առաջին հատոր, 2005 թ., Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուն, էջ 104։

ես:

- Պուճուր ախաղեր, ճամփից հանում եմ, որ Եշիդ չլուսնեց-  
ալ:
- Հա՞, ես էլ իմացա էղպես մկացնելով դպրոց ես սանում:
- Քենի, քո ասածը ծեր բոլոտեցի երեխենքն են:
- Քոլոտեցին չի ուզում նահանջել:
- Որ էղպես սրամիս ես,- ասում է,- մի բան ասա՝ ծիծաղեմ:
- Եշիդ բեռը սուր՝ ասեմ:

Քոլոտեցին նայում է ծիու վրա նստած իր կնոջը ու՝ ոչ ա-  
սած, ոչ լսած, սուսուլուս ճանապարհը շարունակում»<sup>212</sup>:

Հովհաննիսյանի արձակում հանդիդում ենք նաև ուրիշի ուղղակի խոսքի այն ձեւին, որը կոչվում է ռեռլիկ։ Հեղինակն այն օգտագործում է միջավայրի կարծիքը, նարդ-կանց հավաքական ամբողջության, կոլեկտիվի հայեցա-կետն ու դիրքորոշումն արտահայտելու համար, որը գրողը ներկայացնում է որպես ուրիշի խոսք՝ դնելով գծիկ։

«— Դե հիմա կերեք, մարդու ետևից դազան կապեցիք ու  
զյուղից իմակացրիք։

— Բա, մաս նման վարիչ Լեռնադրյուրը ոչ ժեսել է, ոչ էլ  
ժեսելու է։

— Իր քե մրան ի՞նչ վճառ եք սկել, մարդը ամիսը երեք հս-  
րյուր, չորս հարյուր ոռորդի ոռնակի է ստանում,- խկոյն որոշեցին  
ժեղում։

— Տեսա՞ր, քե Արուար իմ բախտավորության հասավ։

— Ամեն մեկդ մի բան չասեք, իրար սիրում էիմ՝ պրծակ  
զնաց»<sup>213</sup>։

Ռեռլիկի բնույթ են կրում հերոսների հատուկենա ար-  
տահայտությունները, որը եւս առկա է Հովհաննիսյանի ար-  
ձակում։

«— Էս ո՞ր հերամենն արեց։

<sup>212</sup> [22. 105]:

<sup>213</sup> [22. 170]:

- Ծիծէ ծծե՞լ:
- Անդասիւրակ...»<sup>214</sup>:
- «- Էսօր բաղհանին են ձկատել փոստերը էնպէ՞ս են լցվել ասես ծալզած շորի լինի:
- Դուք նրան երես ասեմ, ուռած փորը շալակն առած, զյուղում էնպէս է ման զալիս, ասես յորք իսաչ ու ավետարանով պատակ են արել»<sup>215</sup>:

Մաքսիմ Հովհաննիսյանի ոճը վիդական է, երթեմն բնարական, իսկ երթեմն էլ հեղինակի վարդետության օնորհիվ մեծ հաջողությամբ համադրվում են քանձու էղիկականությունն ու նուրբ բնարականությունը, որոնք համեմված են ընդգծված երգիծանելով։ Ջնարականության հետ անխուսափելիորեն համադրվում է նաև ոփրմի ներքին զգացողությունը, որը որում արվեստագետների կարծիքով անհրաժեշտ հանգամանք է արձակի համար։ «Պրոզայում ոփրմի խորը զգացողությունը դարսադիր է»<sup>216</sup>, - նկատել է Ֆլորենը։ Մոդասանն էլ իր հերթին նույն է, որ արձակին անհրաժեշտ չափն ու ոփրմն այնուես, ինչորում «յուրաքանչյուր առանձին դեմքում յուրաքանչյուր առարկային»<sup>217</sup>։

Մ. Հովհաննիսյանը, իր հերոսներին օժտելով հարուստ աւաշխարհով, բարձր ճաշակով, մսի սրությամբ իրականում ցույց է տալիս իր հոգու և մսի բարձր քոիչքները։ Նրա ստեղծագործ միսքը գեղագիտական նուրբ ընկալումների, բանաստեղծական դասկերների գեղեցիկ դահեր և դարգեւում ընթերցողին։ Դրանք ամբողջական դասկերներ են, դահի, զգացողության ճիշտ ընկալումներ, որոնք կայանում են իրենց դասկերավորությամբ, յուրօրինակ սխեմայով, կառույցների ընդգծվածությամբ։ Այսպէս՝ «Դրախտի ծորում

<sup>214</sup> [22. 247]:

<sup>215</sup> [22. 153]:

<sup>216</sup> Кожинов В., Слово как форма образа // Слово и образ. Сб. ст./, Москва, Издательство «Прогресс», 1964 г., с. 38.

<sup>217</sup> [19. 38]:

աշուն է: Աշունը մարմանդ շաղում է Դրախտի ջորում: Դրախտի ջորում լուր քախծում է: Արդյո՞ք իր անցած կանաչներն է հիշում, իր խենքը զարունակերը...»

Քայլում եմ լված այս հովտով, նայում մոշի թիերին, Լալիկի խոսքին եմ ականջ դնում, հուսահաս հարցում եմ անում ծանոր փոնչենում: Մոշի թիերում շորերին ծվեններն եմ բռղել, որտեղ են դրանք: Լալիկ աղբյուր, պատմիր, խնդրում եմ, իմ մանկությունը: Գուցե դու, հմօյա փոնչենի, հիշես անցած օրերս: Գիտե՞ս, ո՞ւ պատկներն իմ մանկության համան ունեմ՝ դառնահամանադար: Դե, խոսեմ, պատմեմ իմ մանկությունը»<sup>218</sup>:

Գրողը մարդուն մարդ դահելու իր ազնիվ նղատակն իրագործում է մարդ-բնություն կատի միջոցով: Բնության իրաց դասկերների նկարագրման մեջ երեսում է Ս. Հովհաննիսյանի հոգու բնարականությունն ու բնությունը զգալու նրա ունակությունը: Բանաստեղծական մի գեղեցիկ դրսեւորում է հետեւյալ հատվածը. «Մեր անցել է լեռան թիկունքը: Ամպերից անդրադարձ ճառագայթները սյուներով կախվել են հեռավոր անտառի վրա: Թվում է՝ ամսեսամելի մեկը ամպերին նաև ուկեհասիկ փոշի է մաղում, որի նարնջագույն համիկները դանդաղ իջնում են անտառի վրա, նաևսում ծառերի սերեւներին, լուծվում սերեւներում ու գոյն սալիս: Անտառը ներկվում է աշնան հիվանդոս գոյլներով»<sup>219</sup>: Գրողը այս եւ նմանատիպ բնության անձնավորման դասկերներում ներկայացնում է աւխարհի շարժը, մարդուն եւ նրա ներաշխարհը: Նա իր ստեղծագործական խառնվածքով բնարական-բանաստեղծական շունչ է հաղորդում տողին, հուսի եւ վերհուսի արժեւորմանը վերակենդանացնում է անցյալը, ասվածի տակ թափնակած կռահվելիք շասվածով, սովորականի ու առօրեականի մեջ զրեք կորած անսովոր գեղեցկությունների հայտնաբերումով, գրավիչ է դարձնում անգամ ծանրախոհ ու իմաստուն քախիծը: Փիլիսոփայահոգեքանական ճիշտ դի-

<sup>218</sup> Հովհաննիսյան Ս., Երկեր, Առաջին հասողոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասում, 2005 թ., էջ 130:

<sup>219</sup> [22. 52]:

տարկումների, բանաստեղծական նույր ընկալումների, յուրօհնակ համեմատությունների շնորհիվ, գրողը տարածածամանակային անհամաչափ ընդգրկումների մեջ դիմարկում ու վերծանում է մարդկային բնավորությունների հոգեբանական ճշգրիտ նկարագիրը։ Գրողի դասմվածքներն աչքի են ընկնում իրենց սեղմ այուժեներով, սակայն մեծ ասելիքով։ Պատմվածքներում գրողը չի հետևում դասական դասմելածելին, հատուկ սյուժետային ընդգծումներին, այլ առանձին, սպոռական թվացող դեմքների, իրադարձությունների միջոցով բացահայտում է իր հերոսների կյանքի ու հոգեբանական որոշ մանրամասներ։ Երկխոսությունների, վերհուցի, ներքին մենախոսության եւ այլ գեղարվեստական միջոցների օգնությամբ ստեղծվում են իրական ու տուափելի կյանքի դասկերներ՝ իրական ու տուափելի մարդկային կերպարներով։ Հովհաննիսյանը, չքավարավելով ներկայով կամ անցյալով, զուգադրում է այս երկու ժամանակային ընդգրկումները եւ դրանց միջոցով դասկերում աղագան կանխորոշող որոշակի դրվագներ։ Հերոսները, վերհուցի միջոցով հայտնվելով տարածական եւ ժամանակային տարրեր ընդգրկումների մեջ, բնական գոյններով բանականության սահմաններում ներկայացնում են իրենց կյանքի ամբողջական դասկերը՝ իրենց բնավորության եւ հոգեբանության կոնկրետ ժետադրումներով։ Հերոսների հիշողությունները, ներքին մենախոսությունները, երկխոսությունները, համեմվելով հեղինակային ընդգծումներով ու համեմատություններով, բացահայտում են սյուժետային որոշակի տարրեր։ Հովհաննիսյանը, ժետը դնելով առավելադես իր հերոսների հոգեբանական անցումների վրա, առանձնադես չի մտահոգվում զործողությունների զարգացման դաշտահետեւանքային կաղի հաջորդականությամբ։ Ներկայի, անցյալի ու աղագայի ընդգծումներում նա ամբողջական դասկերացում է տալիս հերոսների կյանքի, կենսակերպի, հոգեւոր եւ ֆիզիկական վիճակների մասին։ Եվ այդ ընդհանրացումների, մքնողությունների, միջավայրի ժետադրում-

Աերի միջոցով հեղինակն արժեւորում է այն կարեւոր իրողությունը, որ մարդու ով լինելը դայմանավորված է նրա անցած ճանապարհի, նրա սկզբնավորման ու աղքած մանկության հետ։ Այսպես, «Մոռացված արահետներ» դասմասնակության հուսերի, մոր դասիարակչական մեթոդների արդյունիքի դրական կողմերի մասին է մոր՝ որդուն ուղղված հետեւյալ *hawrg-hawməqmən*։ «Չծեծեի՝ ինձ համար գեներալ տղա կդառնայի՞ր»։ Պատմվածի գործողությունների զարգացման ընթացքին հետեւող իրողություններն ու դասիերն արժեւորող Մխիթարի կերպարը եւս կարեւոր դերակատարություն ունի։ Նրա ներքին մենախոսությունների, բարձրաձայնած մսերի ու մեկնաբանությունների միջոցով Մ. Հովհաննիսյանն արտահայտում է իր դիտարկումներն ու դիրքորոշումները։ Իսկ «Կամակի» դասմասնակությունների վարչիկը, իր կյանքի, ընտանիքի անցյալի ու ներկայի մեծ ու փոքր ուրախություններն ու ժիրությունները, երազանքներն ու հիասքափությունները հանրագումարի է բերում ճանապարհի դասրասությունները և ներկայությունները։ Պատմվածի խախտված է գործողությունների զարգացման դասճառահետեւանային կաղը, հետեւարար բացակայում է ժամանակային հաջորդականությունը, եւ օւետը դրվում է հասկալապես հերոսուհու հոգեբանական անցումների վրա։ Ինչից հետեւում է, որ դատումում ոչ քե սյուժեն է էական դեր կատարում, այլ հենց կյանքի ընթացքը, առօրյայի իմաստավորումն ու աղքումի, խոհի, զգացմունիքի արժեւորումը։ Հենց դասմասնակությունն է ընձեռում ընդենությունը, ժամերի դայմանական տեսողության մեջ վերաբերելու անցյալը՝ ընդհանրացնելով ներկան։ Նա իր վերհուսի, ներքին մենախոսության, երկխոսությունների կարեւոր ընդգրկումների ընթացքավորման մեջ դատկերած կյանքի համայնադասկերում ընդհանրացնում է զյուղն ու զյուղացուն՝ իր բոլոր դրսեւորումներով։ Գրողը հերոսուհու ներանձնական եւ միջանձնական հաղորդակցման միջոցով բացում է իրական

կյանքի դրսերը:

Հիւղության, ներփին մենախոսությունների, հեղինակի եւ հերոսների մսերի օգնությամբ բացահայտվում են ոչ միայն Վարսիկի ու իր աղջիկների, այլև Զարելի եւ զյուղի այլ կանանց դժվար կերտվող ճակատագրերն ընդհանրացող մանրամասներ: Գյուղում եւ բաղաքում աղբող կանանց ու աղջիկների առօրյան ու կենսակերպը, հոգեբանությունն ու բնավորությունը բնականաբար տարբերվում են իրարից: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն ներաշխարհը եւ իր հիմնավորումներն ու մեկնաբանությունները արտաքին աշխարհի նկատմամբ: Այսեն հասկանաւական է միջավայրի ազդեցությունը, սոցիալ-հասարակական իրավիճակը եւ մի շարժ այլ իրողություններ, որոնց մարդը բախվում է իր կյանքի խորդութորդ ճանապահին:

«Վերջին որոշումը» խորհրդանտական վերնագիրը կրող դասմվածքի հերոսներ Արամն ու Վարտամը եւս իրենց խոսի, վերհուսի ու ներփին մենախոսության միջոցով բացահայտում են ոչ միայն իրենց կյանքի հետաքրիր դրվագները, այլև իրենց զյուղի եւ զյուղացիների ճակատագրերը: Թե՛ այս, թե՛ նախորդ դասմվածքի հիմքում ընկած է զյուղի ու բաղադրի տարբերությունը եւ դրանց առաջացած հակադրության արդյունքում գոյացած հարցերն ու խնդիրները: Ինչ վերաբերում է «Նշանի մատանի» դասմվածքի հերոսութուն՝ Աչսենին, աղա «Արդեն բանի տարի է, nr կողպեֆի սակ է դրել անցած օրերի հիշատակը: Այդ հիշատակն է եղել նրա նեցուկը: Եկ անցյալը վերակենդանացակ աշենի առաջ»<sup>220</sup>, - գրում է հեղինակը եւ այդ մեկնաբանությամբ էլ բացում անցյալի դրսերը ընթերցողի առաջ: Պատմվածքում ժամանակային տարբեր դրւելուրումներն առանց հաջորդականության ստեղծում են ներքայուժներ՝ հիւղության գործոնի միջոցով: Հերոսը, գտնվելով մի միջավայրում եւ վերհուսի միջոցով խախտելով ժամանակի ու տարածության

<sup>220</sup> [22.144]:

հաջորդականությունը, կարողանում է ներկայացնել ներկայի եւ անցյալի իրական ու երեակայական դասկերները: Հովհաննիսյանն իր հերոսների բնավորության գծերի ու հոգեվիճակների ընդգծմամբ է դասկերում կյանքը, ժամանակաւորագր եւ այն, որ յուրաքանչյուր ժամանակաւորագր էլ, ցանկացած հասարակարգում, եւ առհասարակ՝ կյանքում լինում են համանման դատմություններ, իրադարձություններ, դեմքեր ու դեմքեր: Կատարյալ ոչինչ չկա, աշխարհում ամեն ինչ հարաբերական է, հարաբերական է նաև ժամանակ կոչվածը: Թերեւս այս հարթության վրա է գրողը անտեսում տարածաժամանակային գործոնը, եւ ինչորս «Կոխ» դասմվածքում է նշում. «Ժամանակը՝ ոչ ու սելակ, ամեն ինչ սրբութ-սանում է: Ժամանակի հետ շատ բաներ մոռացվում են: Շատ, բայց ոչ ամեն բան: Բաներ կան, որ չեն մոռացվում: Չեն էլ մոռացվի»<sup>221</sup>:

Մասիմ Հովհաննիսյան գրողի ինքնաշխորությունը դայմանավորված է նաև լեզվածական առանձնահասկություններով: Ցանկացած թեմա, որին ձեռք է մեկնում հեղինակը, հյուսում է լեզվական իր բնական առաղձով, գտնում դասկերավորման եւ արտահայտչական իր երանգները: Ինչորս ժամանակին ներ է Վ. Գ. Բելինսկին. «Տարբեր հեղինակների ստեղծագործությունների յուրահատուկ տարրերն այդ ստեղծագործության հիմքն են, այդ երկի նյութական մասը, նրա լեզուն, իսկ այն անհատականը, հեղինակի նախասիրած մաներան (գրելածել) միայն նրան յուրահատուկ բառային արտահայտչական միջոցների համակարգն արդեն հեղինակի ոճն է»<sup>222</sup>: Ծարունակելով իր միսքը՝ բնադրան ավելացնում է նաև, որ «Ոճ» ասելով մենք հասկանում ենք բնությունից անմիջաբար հեղինակին տրված՝ բառերը նրանց իսկական իմաստով օգտագործելու կարողությունը՝ ամեն ինչի վրա դնելով իր ինքնաշխորության, անհա-

<sup>221</sup> [22. 165]:

<sup>222</sup> Բելինսկի Վ., Երկերի ժողովածու, Դատոր III, Երեւան, 1954 թ., էջ 204:

սականության, իր հոգու յուրօրինակ կնիքը:

Տաղանդավոր գրող-հրամարակախոսի բառերի մեջ, որմեն հայելում, երեսում է արցախցու ճակատագիրը, նրա անզուգական տեսակը: Արցախցին մշտահողով ցավի ու սառապանի մեջ ճանաչել ու իմացել է իրեն, օգտագործել է իր կենսագրությանը հարիր հավերժախոս բառեր, որոնք արցախցու շուրջերին ծխածանվում են՝ որմեն իրականության եւ երեսակայության ուղեկից: Բառերը դարունակում են այնոյիսի մսեր ու հարցեր, որոնք հաջորդում են իրար, ինչողևս չվերջացնող հավերժություն, փնտրութերը դառնում են անհրաժեշտություն, հարցականները՝ կենսապրքիո, ազգայինի եւ համազգայինի Երշանակներում, արցախսարույր ու արցախսարույր. «... բարի լուրը՝ տեսնես ուրիշ լիզուններում լուր հասկացությունը բարսահանդերձանելով սարքերակվո՞ւմ է, քեզ ոչ բարի լուրին ուրիշ անուն սակայ, ոչ բարի լուրին՝ ուրիշ, քեզ՝ այստեղ էլ մեր ազգային ճակատագիրը տեղ է արել իր սպոնջի համար՝ լուրի բորբ ու զույժը շատ, ավելիշը՝ բաղչայի, դրա համար չէ՞, որ մեր երեխանների անունը դրել ենի Ավելիս, Ավելի, Ավո...»<sup>223</sup>.

Բառն աշխարհ է, եւ այդ աշխարհը բացահայտելու համար դեմք է օժշված լինել երեսույթի խորքերը տեսնելու ունակությամբ: Միայն ճիշտ ու դիպուկ ընթարված բառն է օժշված երեսույթը լիարժեք ներկայացնելու կարողությամբ, որի որոնումների ու գտնումների մշտառական դայբարով են տարված միմիայն տաղանդավորները: Անտաղանդի համար հայտնություն է նաև երեսույթը ներկայացնելու անհամաժեք բառի աննոդականությունը: Քանի որ յուրաքանչյուր բառ իր կյանքն ունի, իր անցնելիք ճանապարհը, եւ ինչողևս Մողասանն է նկատել՝ բառը ոզի ունի, հարկավոր է գտնել այդ ոզին:

Հովհաննիսյանն այն գրողներից է, ում ձեռքին գրիչը դրել է երկնայինը: Նա իր մեջ ամբարած մսերն ու զգաց-

<sup>223</sup> Դովիաննիսյան Ս., Արցախ իմ, ցավ իմ, Երեսան, «Խայրի» հրատարակչություն, 1998 թ., էջ 23:

մունքները կարողանում է բառի ու բառակաղաղցությունների դիրուկ ընտրության շնորհիվ հասցնել իր նողատակային կետին՝ ստեղծելով գործեր, որոնք իրենց ձեւաչափի մեջ զերծ են ցանկացած ժիղի ավելորդաբանությունից, ծամծմվածությունից ու ձանձրույթից: Գրողի գրվածքների հաջողության առանձնահատկություններից մեկն է՝ նորի դարգ ու հակիրճ շարադրանին է: Նրա ասված յուրաքանչյուր բառ նողատակային է, ճիշտ արձակած ների դես դիրուկ: Երկարաւուն նկարագրությունների, ձգձգված դարզաբանումների, մեկնաբանությունների փոխարեն մի բանի ամփոփ նախադասություն, եւ միտք ստանում է իր բնանկարը: Մ. Հովհաննիայանը, իր ասելիքն ամփոփելով բովանդակալից նախադասությունների մեջ, ազատ տարածություններ չի քողնում: Նրա լեզվի խոսությունը շարունակարար զյուղակորվում է՝ հիմք դառնալով յուրօրինակ ոճի դրսեորմանը, որտեղ իրենց ուրույն դերն ունեն բարբառային բառերն ու բառակաղցությունները, ժողովրդական առած-ասացվածքները, որոնք առավել վառ գույներ են հաղորդում Դարաքանի ու դարաքաղու մասին կենդանի ու ուսափելիության չափ հարաբեկաց դատմություններին:

Ազատ լինելով գեղարվեստական լեզվի ընտրության մեջ՝ Հովհաննիայանը հարազա է մնում իր ստեղծագործական խառնվածին ու գեղագիտական հակումներին՝ ստեղծելով իր երկրին ու բնաշխարհին համարժեք խոս, հանգված լինելով, որ գրողի եւ նրա հերոսների ներքին ու արտաքին դրսեորումները բացահայտվում են հատկապես նրանց լեզվի միջոցով: Ինչու լեզվաբան Լ. Եզեկյանն է նույն. «Լեզուն գեղարվեստական երկի շինանյութն է, սկզբնասարը, յուրաքանչյուր անհատի լեզվամտածողությունն արտահայտող հիմնական միջոցը, որի հետ սերտեն առնչվում է նաև ոճը՝ որպես անհատականություն, ինքնափոխություն,

<sup>224</sup> Եզեկյան Լ., Դայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2007 թ., էջ 11:

բացահայտող լեզվական միջոցների համակարգը»<sup>224</sup>:

Մ. Հովհաննիսյանի ստեղծագործությունների լեզուն համեմված է ժողովրդական բառ ու բանով, բարբառային-ժողովրդախոսակցական բազմաթիվ բառերով ու արտահայտություններով: Գրող- հրադարակախոսի գրելաձեւն աղահովում է մի նոր որակ, որտեղ վարդեսորեն համարվում են գրական եւ բարբառային-ժողովրդախոսակցական կարեւոր նրբերանգները: Ինչպես Հովհ. Թումանյանը, Ակ. Բակունցը, Հr. Մաքետոսյանը եւ ուրիշներ, Մաքսիմ Հովհաննիսյանը են գրական լեզվի հարսացման հարցում մեծ տեղ է հատկացնում բարբառին: Գրողի ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում անհայտ ծագման եւ բուն բարբառային բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն եւ չեն անցել գրական լեզվին, սակայն դահողանվել են հայերենի բարբառներում ու խոսվածքում, ինչպես՝ պողլաս, շանա, շուախ, կյեկաք, ճուվարան, դազան, շոր, խոնջա, դանձա, ճոնդ մքնաժոռած, քալաչա, վիլիման, ցափ, լիսկել, ռեխկալի, ռեխ, քրիսար, հախուել, կոթ, դոչ եւ այլն: Այսօրինակ բառերի առկայությունն արձակագրի բառաֆոննում, դատահական բնույթ չի կրում: Արցախի բարբառից գործածված համադաշտասխան բառերի ասելիքը հնարավոր չէ արտահայտել լեզվական այլ սարբերակով: Արցախական մասնակերպն ուրիշ է, նոյնիսկ, երբ արցախցին խոսում է գրական լեզվով, նրա լեզվական օւշադրումը, բառի հանդեպ արցախական վերաբերնունքը ուրիշ է: Հեղինակի դասմվածքներն ու ակնարկները համեմված են Արցախի բարբառային բառերով: Այսպես, «Մոշի բոլի սեւ սաք ճիրը կտրել»<sup>225</sup>, «Մենիք համեղին բաղր ենիք ասում, ասում ենիք բաղր խոխս»<sup>226</sup>, «Մուֆանը զյուղի աչքի փսորն է»<sup>227</sup>, «Արհես չունես,

<sup>225</sup> Հովհաննիսյան Մ., Արցախ իմ, ցավ իմ, Երեւան, «Նաիրի» հրատարակություն, 1998 թ., էջ 27:

<sup>226</sup> [21. 27]:

<sup>227</sup> Հովհաննիսյան Մ., Երկեր, Առաջին հատող, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակություն, «Սոնա» գրասուն, 2005 թ., էջ 138:

<sup>228</sup> [22. 348]:

<sup>229</sup> [22. 169]:

կլրրդ թերի...»<sup>228</sup>, «*Cuis nr quaham sursum, Աղավնիկի ուխ-մոհիլը մի ժշ կարգավորեց»<sup>229</sup>:*

Թումանյանը զավառների կենդանի բարբառներին անմես չանելու կամ Վերեւից չնայելու խորհուրդով նկատում է. «Էդ բարբառներից ամեն մինք ավելի շատ ուժ ու կենդանություն ունի իր մեջ, քան մեր եղած գրական լեզուն: Սա դեռ չի կազմակերպված եւ չի էլ կազմակերպվելու, մինչեւ որ մեր ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից, սարերից ու ձորերից կենդանի վասկներով կզա միանալու սրա մեջ եւ բոլոր բարբառները հանդես բերեն իրենց զանգերը»: Այնուհետև նա դարզարանում է՝ «Ես չեմ ասում զուս բարբառով գրեցեմ ձեր հոդվածները, բայց մեծ իրավունք ունեմ բարբառներին, նրանց բառերին, ոճերին ու ձեւերին»<sup>230</sup>:

Ինչ վերաբերում է Բակունցին, աղա գրական լեզվի կառուցվածքի մեջ ևս տալով նաև փոխառություններին (ոռուաց լեզվից) եւ գրաբարին՝ (հատկապես ժողովրդական բարբառներում դահլանված գրաբարյան բառաձեւերին) գրողն, այնուամենայնիվ, գեղարվեստական գրականության ոճալեզվական մայր ավազանը համարում էր ժողովրդական բառազանձն ու ժողովրդական լեզվակառուցվածքները՝ դրանց վրա դնելով ոճային-արտահայտչական կարեւորագույն խնդիրների լուծումներ:

Մաքսիմ Հովհաննիսյանի հերոսները Արցախ աշխարհի մարդիկ են՝ իրենց առօրյայով ու կենցաղային խնդիրներով, ուստի այդ մարդկանց եւ նրանց միջավայրին տիպիկ երանգավորում տալու համար հեղինակը դիմում է մայրենի բարբառին՝ աղահովելով համադաշտավասան խոսքային միջավայր: Նրա հերոսների խոսքը աչքի է ընկնում իր բնականությամբ, համ ու հոտով, հատկապես, երբ այն ուղեկցվում է ժողովրդական խոսքով՝

ա. անեծքներով՝ Այ քո հերմ եւ անիծել (25.128), Հեռա-

<sup>228</sup> Թումանյան Յովի., Երկերի ժողովածու, Դատոր IV, Երեւան, «Դայաստան» հրատարակչություն, 1969 թ., էջ 113:

մեռդ բաղեմ (25. 248), Հողը փառանձեմի զլիսի (1. 324), Փուչ մնաս, որ փուչ եղար (25. 325), Գլխիս բար ընկնի (1. 333), Ցեխ-ձոր շինողի հnr ուկորները շունք բաշ սա (25. 384), Հողեմ գլուխդ (25.154) եւ այլն, որոնց մի մասի ժխտական կազմությունը խոսին հաղորդուն է հnrդրական կամ հանդիմանական երանգ՝ Քո հnr զլիսի բար ընկնի (25.321), Մաշոյի երեսը կորվի (25. 321):

**թ. հայինյանենվ՝ Դե ծենդ կորի...** (25.303), **Դրա ունիս-վեր...** (25. 309), **Կուտեմ հա~...** (25. 343), ծենդ կորի, ունիս փա-լիր (25. 383), **Վա~յ,** ես ծեր ծնված օրը... (25. 388), **Քո օրենիս նախազահիդ...** (25. 344),

**գ. օրհնանքներով՝ Ուսազալիին բարի լինի էս օջախում** (25. 467), **Մարդուս վերջը լինի բարի** (25. 468), **Ուշ զիշերով իւն լինի** (25. 362):

Թերեւս տեղին է նւել հայտնի լեզվաբան Վ. Առաքե-լյանի այն ընդգծումը, թե «մեր գրական լեզվի երակային առողջ զարկերը, համն ու հոտը կենդանի հնչերանգները, գունեղ արտահայտությունները, թեավոր խոսերը եւ այլն գալիս են բարբառներից»<sup>231</sup>:

Հովհաննիսյանի ստեղծագործություններում հանդի-դող բարբառային -ժողովրդախոսակցական գրեթե բոլոր բառերն ու արտահայտությունները հասկանալի են ու հարա-զա ընթերցողին, ինչին նոյասում է նաև նրանց ճիշտ ընս-րությունն ու տեղին գործածությունը: Ընթերցողի համար բնակ անսովոր չէ այն երեւույթը, երբ գրողը մի շարք անձ-նանուններ ու տեղանուններ գործածում է կրծա ձեւով, նաև ինչյունափոխված (բարբառային) սարբերակներով, ինչպես Հովհիկ, Վալոդ, Օսեկ, Ալոշ, Օհաննես, Արշոն, Մարզոն, Ա-րուս, Վանեսանց թաղ, Աշունց թաղ եւ այլն:

Հովհաննիսյանի արձակում շատ են նաև ժողովրդա-խոսակցական այն բառերը, որոնք գրական լեզվի համա-դատասախան բառերի հնչյունափոխված ձեւերն են՝ էս (այս),

<sup>231</sup> Առաքելյան Վ., Յայ գրական լեզվի եւ բարբառների փոխհարաբերության հարցի շուրջ, (Պատմա-բանասիրական հանդես), 1964 թ., N 3, էջ 150:

Էղ (այդ), Էսեկ, մեր (մայր), հեր (հայր), Էւօր (այսոր), Էղպես (այդպես), զել (զայլ) եւ այլն:

Գրողի ստեղծագործություններում էս, էղ, Էղբան եւ այլ դերանունների գործածությունն օրինաչափ է՝ դայմանավորված դրանցում արծարծվող թեմայով: Բերված դերանունների կիրառության հիմնական ոլորտն ուղղակի խոսքն է.

- Էղ իմսելիզենսներին պես է ժշել մեր երկրից (25.82),
- Էն էլ չզիտե՞մ, nr հաշվապահների տասից ինն ուսում է (25.82),
- Էղբան բախս nrտեղից (25. 83),
- Հարսիդ ու տղիդ առաջ էնակն խայտառակն ու nr հորդ հարսանիքը միհսդ զա (25.122):

Ինչու գրականացես Լ. Հախվերդյանն է նույն «Էս» այս եւ նման զուգաձեւերից ամեն մեկն ունի գործածության իր տեղը»<sup>232</sup>:

Հովհաննիսյանը հմտությամբ օգտագործում է նաև փոխառություններ, որտեղ մեծամասնություն են կազմում Ղարաբաղի բարբառին անցած, ժողովրդի կենդանի խոսքի կարեւոր բաղադրամաս դարձած ուսւերենից կամ վերջինիս միջոցով փոխառված որու բառեր՝ իմսելիզենս, պլաստինկա, սիլլյազա, տրամվայ, շրաֆենիկ, սենիմենտալ, կոմպլիմենտ, նաշալնիկ, ոհմի, միլիցա, կոմպրեն, իմկուրատոր, սարայ, մաներ, ֆրոնտալիկ, բունկեր, կանցելյար, չորս, մինիսր, պրիկազ, վերտալուս, կոռումպացված, կմայազ եւ այլն:

Հետաքրքիր է Հովհ. Թումանյանի դիմարկումը փոխառությունների վերաբերյալ. «Ոչ մի լեզու, ինչքան էլ իր ազգային բնագործությունը դահի ու զարգացնի, չի կարող փոխառություններից ազատվել եւ կղզիանալ: Ընդհակառակը, բանի զարգանա, էնգան ավելի շատ, ավելի բարդ դահանջների տիսի դատասխանի եւ ավելի շատ ու առաջ դիմի թե՛

<sup>232</sup> Հախվերդյան Լ., Զրույցներ լեզվի մասին, Երևան, «Սովորական գրող» հրատարակչություն, 1986 թ., էջ 46:

փոխ առնի, թե՛ փոխս տա:

Եվ միւս ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անդաման ստեղծել կամ բարգմանել ու ֆրակը շինել դոչազգես, կուլեսը կողիկներ կամ ուսիա լոխումը հանգստապատաս»<sup>233</sup>:

Գրողի ստեղծագործություններում տեղ են գտել մի շարժ նորակազմություններ, որոնց մեծամասամբ բարբառային «նախաձեւերի» հեղինակի կողմից մշակած-գրականացրած տարբերակներն են: Օրինակ՝ կարկուտապակ, խորատակ, հեռախաչ, մարդարող, կուպակապ, խորահոս, կեսօրահաց, խորութեալ ճամանել, բնահարք, կողմահար եւ այլն:

Մարմահմ Հովհաննիսյանի արձակում ուշագրավ են նաև բարբառային հարադրությունները՝ լին ու բոլ, բունջ ու պուճախ, բուխակ-բուխակ եւ այլն:

Հարադիր բարդությունների մեջ հետաքրիւր են այն հարադիր բայերի կառուցվածքը, որոնց անվանական բաղադրիչը բարբառային է, իսկ բայական բաղադրիչը՝ գրական, օր՝ միտք զցել, աշքը կոխնել, հեռ զալ, կուր լմկնել, մրափ մսնել եւ այլն:

Հովհաննիսյանի լեզվածական յուրահատկություններից մեկն էլ ժողովրդախոսակցական, ինչողևս նաև գրական լեզվում իր տեղը գտած բառակրկնությունների կիրառությունն է: Այսպես՝ «Լուսադեմին ծեր դռնապանը հասիկ-հասիկ հավատում է բառերը, որոնք հետո դառնում են կուտակ-կուտակ ամպեր»<sup>234</sup>, «Քարտաշ Մուրափի սղան պրոֆեսորի հետ նարդի է խալում ու կում-կում սուրճ խմում»<sup>235</sup>, «Անմարդ Օսաննան մեծ-մեծ, չաղ-չաղ կոներ ունի»<sup>236</sup>, «Օսանի կոներն անամոք-

<sup>233</sup> Թումանյան Յովիկ., Երկերի ժողովածու, Յատոր IV, Երեւան, «Յայաստան» հրատարակչություն, 1969 թ., էջ 374-375:

<sup>234</sup> Յովհաննիսյան Ս., Երկեր, Առաջին հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուն, 2005 թ., էջ 93:

<sup>235</sup> [22. 96]:

<sup>236</sup> [22. 122]:

<sup>237</sup> [22. 123]:

<sup>238</sup> [22. 126]:

անամոք մերկացված էն»<sup>237</sup>, «Երեխաներն անուշ-անուշ բնած էին»<sup>238</sup> եւ այլն:

Մ. Հովհաննիսյանի դասմվածքներն ու ակնարկներն իրենց լրջության, առաքինի ձեւավորման հետ մեկտեղ դարունակում են նաև դասկերակերտ ձայնարկություններ, կոչեր ու ափսոսախառն արտահայտություններ, որոնց հաջորդող բազմակետերի լուսաբան արանքում ամենակարենը բառերն ու զգացմունքները բառացիորեն չեն ասվում՝ հաղթահարվում են լուսաբան՝ բառերը շարունակում են եւ բառադասման անամրող դասկերը դառնում է ամբողջական։ Հեղինակի դաս-զգացմունքի նկարագրական վերլուծումը եւս տպավորիչ ու տուափելի է դարձնում իրադասկերը։ Կոչականների եւ մի շարժ այլ դասկերավոր ձայնարկությունների ու նրանց շարունակող բազմակետերի ներգործության ձեւակերպումներում առերեսվում են այրումների, հասկադես ցավի ու սառադանքի ներսն ու դուրսը։ «Արշակը իշնում է, nr ջրաղացի ջուրը կտրի ու hrwagawāḥig srwafng է լավու՞ վա՞խ... Սաֆունց Բախչու ունիրը վեր է բռչում, դեմքի մկանը ուզում է դողալ, բայց պահում է, ինչն էլ չիմանալով՝ ինչ-պիս»<sup>239</sup>, «Էհ, մեկ չէ՞ թեզ համար, թե ուս հետ կամուսնանա»<sup>240</sup>, «- Ohn-, դուի արդին սկսել ե՞-՝ նկատելով սեղանին դրված կոճակի շիշը ասում է Աշխենը եւ հրավիրում մեզ սեղան նստել»<sup>241</sup>, «Վա՞յ, Ohաննես ապա...»<sup>242</sup>, «- Այ թեզ Վամի, ա՞յ թեզ նախազահ, դե կե՞-r»<sup>243</sup>, «Հը՝ բաղադի հարսները սիրո՞ւմ են,- չարախնաց Սեխակը»<sup>244</sup>, «Ծառը սկսեց երերալ, բո՞ի, վերջա-

<sup>239</sup> Յովհաննիսյան Մ., Արցախ իմ, ցավ իմ, Երեւան, «Նաիրի» հրատարակչություն, 1998 թ., էջ 63:

<sup>240</sup> Յովհաննիսյան Մ., Երկեր, Արածին հատող, Ստեփանակերտ, «Վաշագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2005 թ., էջ 59:

<sup>241</sup> [22. 61]:

<sup>242</sup> [22. 105]:

<sup>243</sup> [22. 114]:

<sup>244</sup> [22. 380]:

<sup>245</sup> [22. 382]:

*պե՞ս»<sup>245</sup> եւ այլն:*

Հովհաննիսյանն օգտագործում է նաև գրաբարյան արտահայտություններ՝ 5-րդ դարի եւ Ամարաս վանքի անդրադարձման ժամանակ: Օրինակ՝ «մՏո՞ւ երեխաներ», «զրան հանձարոյ», «ցորյան» եւ այլն:

Արձակագիրն իր դասկերավոր մտածողության շնորհիվ հասնում է ասելիքի կոնկրետության, նկարագրվող երեւույթի բազմակողմանի բացահայտման, խոսքի գեղարվեստական հնչեղության, հուզականության:

Ըստ բանասեր Ա. Մարությանի. «Համեմատության ճիշտ կառուցումը դայնանավորված է գրողի գեղարվեստական մտածողությամբ, կախված է նրա դատողականությունից, արտաքին առարկաների ու երեւույթների միջեւ եղած կապերն ու ընդհանրությունները տեսնելու, դրանից բանասեղծորեն ընկալելու եւ զգալու ունակությունից»<sup>246</sup>:

Մ. Հովհաննիսյանի տողը հարուստ է դիմուկ համեմատություններով, ենդին ու նղատակին գործածվող դարձվածներով ու ժողովրդական իմաստություններով, արցախյան հողի ու նրա բարբառի համ ու հոսն իր մեջ ամփոփող բառ ու բանով: Բնավորություն, հոգեվիճակ, կենսակերպ բնութագրող հետարքիր համեմատություններն առանձնահատուկ են: Եվ, եթե բնության գիտակ Հան Սահյանը մարմնավորել, անհատականացրել է բնության այս կամ այն երեւույթը, շարժը, աղա Հովհաննիսյանի արձակում ենդի է ունենում հակառակ երեւույթը: Նա մարդու այս կամ այն արարքը, բնավորության գիծը, հոգեվիճակը, դիմագիծն ու միմիկան համեմատության մեջ է դնում բնության այս կամ այն դրսեւորման հետ: Այս համեմատություն-

<sup>246</sup> Մարության Ա., Յայոց լեզվի ոճարանություն, Երեւան, «Նախի» հրատարակչություն, 2000թ., էջ 155:

ները իրենց քարմությամբ, կայացած կառույցներով աշխուժություն են մտցնում անգամ դրամատիզմով լեցուն նկարագրություններում: Այսպես՝ Համբարձու թիվակալած հնագերն ավելի են իշնում աշբերին<sup>247</sup>, Առավույան նախագահի հետ բռնվեց եւ ամրող օրը՝ կեղտուրերան ու զգվելի՝ դարձել էր բոլի աղու տանձ<sup>248</sup>, Մեխակը մերտում եփ եկավ, մեջքի սեռով մի կեծություն անցավ, եւ կամքը սկսեց կաշկանդվել, դարձավ օրու կին կարճ կապած զամքիկ ծի՝ ոչ բաշր կարող է մեկնել կանաչից մի փոքր կծել, ոչ էլ կարող է մեջքի արյունը ծծող բռները բշել: Անշիկոն բռնից էլ աներես է<sup>249</sup>, Տրակուրի ամպինվաճին այլն չի օգնում, եւ արեւը կատաղած շան պիս բոլոսում է մեզ, Ու չի հմանում, որ հնանուտեցիք բանջարանց մասօծ զոմեշ են, ամեն ինչ ոտի տակ են տալիս, միայն թե իրենց յավա ունիսը ման ածեմ<sup>250</sup>, եւ այլն:

Հովհաննիսյանն իր ասելիքն ամփոփելով բովանդակալից նախադասությունների մեջ՝ ազատ տարածություն չի թողնում: Նրա լեզվի խությունը շարունակաբար ճյուղավորվում է՝ հիմք դառնալով յուրօհնակ ոճի դրսեւրմանը, որտեղ իրենց ուրույն դերն ունեն դարարաղցու միտքը բնորոշող բարբառային եւ ժողովրդախոսակցական դարձվածքները, առածներն ու ասացվածքները, որոնք բարձրածայնվում են հենց հերոսների ժուրերով: Օրինակ՝ Զեռը խալողին չհասավ, թե իսկ է, Հաշան շունը չի կծիլ Լուս ուղս են դարձնում, բեռնում այլորին, Փետք վերցնեն՝ զող կատուն իր հաշիվը կվերցնի, ճիպուր բոլիցը կտրել, Ականջների մսերը ուտել Խոսքը ականջի ետեր զցել եւ այլն:

Այն, որ Մաքսիմ Հովհաննիսյանը թե՛ դատմվածքներում, թե՛ ակնարկներում կարեւոր տեղ է հատկացրել բարբառային-ժողովրդախոսակցական բազմաթիվ ձեւերին, բնավ

<sup>247</sup> Յովհաննիսյան Ս., Երկեր, Առաջին հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրասուն, 2005 թ., էջ 177:

<sup>248</sup> [22. 355]:

<sup>249</sup> [22. 365]:

<sup>250</sup> [22. 357]:

չի նշանակում, թե հեղինակը չի կարող ստեղծագործել «մաքուր» գրական հայերենով: Նրա գրչին փոքրիւցաւ ծանոթ ցանկացած մարդ կարող է համոզվել նրանում, որ նա լավագույն ձեւով սիրառելում է գրական հայերենի բոլոր նրբություններին, դարզապես, որմեսզի իր ընտրած միջավայրն ու մարդիկ իրենց իրական ու կենդանի դասկերն ու նկարագիրը ստանան, անհրաժեշտ է դիմել մայրենի բարքարի գանձարանին, ինչը սվյալ դեմքում ոչ թե խանգարում, այլ՝ նողասում է զեղանկարչի նրբությամբ ամենայն մանրամասնությամբ ընդգծելուն եւ Արցախի եւ արցախցու յուրօհինակ դեմքն ու դիմագիծն ընդհանրացնելուն: Ինչպես լեզվաբան Լ. Եղեկյանն է նշում. «Հայ գրողները առանց վարանելու դեմք է բարքառներից վերցնեն այն, ինչը անհրաժեշտ է ու նաև ներկայի բառային ու ֆերականական այն ձեւներն ու միջոցները, որոնք չկան գրական լեզվի մյուս ոլորտներում եւ որոնք կարող են դառնալ ընդհանուր գործածական, համաժողովրդական-խոսակցական...»<sup>251</sup>:

Մաքսիմ Հովհաննիսյանը, ստեղծելով լեզվառնական իր ուրույն համակարգը, իր նողասուն է բերում հայ գրական լեզվի զարգացման գործում:

---

<sup>251</sup> Եղեկյան Լ., Դրանու Մաքելույանի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, 1986, էջ 45:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Մաքսիմ Հովհաննիսյանի գեղարվեստական արձակը եւ հրապարակախոսությունն ուսումնասիրելով՝ եկել ենք հետեւյալ եզրահանգումների. Ս. Հովհաննիսյանը որպես գրող, հրապարակախոս, ձեւավորվել է 20-րդ դարի երկրորդ կեսի հակասական ու դրամատիկ ժամանակաշրջանում՝ իր ժամանակակից գրչընկերներից տարբերվելով թե՛ իրականությունը պատկերելու, թե՛ սեփական պատմելածը ձեւավորելու ու հաստատելու համակարգով:

Պատմական Մեծ Հայքի 10-րդ նահանգը հանդիսացող Արցախի գեղարվեստական դիմանկարը նրա շնորհիվ է հայտնվել արդի հայ գրականության տեսադաշտում:

Ս. Հովհաննիսյանն իր լեզվամտածողությամբ, ոճական առանձնահատկություններով գրականության հոգեբանական հոսքի ներկայացուցիչներից է: Յուրացնելով հայ դասականներից Ակսել Բակունիցի ավանդույթներն ու սովորելով Հրանտ Մաթեոսյանի աննախադեպ վարպետությունից, Մաքսիմ Հովհաննիսյանը առաջին հերթին բացահայտում է արցախցիների կենսափիլիսոփայությունը, նկարագրում նրանց կրած տառապանքը, հայ մարդուն հատուկ կամքի ուժն ու հավատն ապագայի հանդեպ:

Անցյալ-ներկա-ապագա փոխսկապակցության մեջ, իրականի ու երեւակայականի համադրմանը՝ Ս. Հովհաննիսյանին հաջողվում է ստեղծել ժամանակի ընդգրկուն պատկերը: Նրա երկերում կարեւոր տեղ են գրավում հերոսների վերհուշը, ինքնարացահայտման հոգեբանական երանգը: Պատմվածքներում օգտվելով կոմպոզիցիոն տարբեր ձեւերից ու միջոցներից, նա հասնում է մարդկային հոգեւոր աշխարհի ցուցադրմանը:

Ս. Հովհաննիսյանի հաջողության կարեւոր գրավականը կայանում է նրանում, որ ապրում է իր ծննդավայրում, նկարագրում հայրենակիցների դժվարին ապրուստն ու ակնկալիքները, ռեալիստորեն բացահայտում նրանց հարուստ ներաշխարհը, ա-

ռանձնապես՝ Հայրենական Մեծ պատերազմի եւ հետպատերազմյան բախտորոշ ժամանակաշրջանում:

Հայրենի ծննդավայրը կնքելով Լեռնաղբյուր անվանք, նրա միջոցով խորհրդանշելով ավանդական եւ նոր Արցախը՝ իր աշխատասեր ու սրամիտ մարդկանցով, դրախտային գեղեցկությամբ, հայկական յուրահատուկ կենցաղով ու սովորություններով, նա իր գրական հունձքի մեջ ներկայացնում է մի ամբողջ սերնդի պատմություն։ Հովհաննիսյանի Լեռնաղբյուրն իր ուրույն տեղն ունի Հրանտ Մաթեւսյանի Ծնակուտի եւ Մուշեղ Գալշոյանի Սամանա աշխարհի շարքում։

Մեծ է Մ. Հովհաննիսյանի ստեղծագործության դերն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի արտացոլման բարդ ու պատասխանատու գործում։ 1988-1994 թվականների շարժումն ու պատերազմը իր փուլային ընդգրկումներով տեղ է գտել նրա հրապարակախոսության մեջ՝ ժողովուրդների փոխհարաբերությունների սրման, ներքին եւ արտաքին քաղաքական դրսեւորումների ընդգրկմամբ։ Մ. Հովհաննիսյանը, հավատարիմ իր գրողական հավատանքին՝ ծշմարտացիորեն ներկայացնում է պատերազմող երկրի ծանր իրավիճակը։ Նա ցույց է տալիս արցախցու՝ ազնվազարմ տեսակի յուրահատկությունները եւ նշում, որ նրա հայրենիքին նվիրված լինելը, վեհությունն ու սիրագործությունը կենսարանական ծագում ունեն։

Ուշադրության կենտրոնում պահելով հայ ազատամարտիկի նորահայտ կերպարը, նա ընդգծում է, որ սասնածռերյան արցախցի ժառանգորդները, փոքրից մինչեւ մեծ, գենետիկորեն զգում են հայրենի հողի պաշտպանության կարեւորությունը եւ նվիրվում այդ սրբազն գործին։

Գրող-հրապարակախոսն առաջնայինը համարում է հասարակական հնչեղություն ունեցող, հրատապ ու կենսական նյութը, ինչից եւ հաճգում է կերպարակերտման եւ հոգեբանական քացահայտումների հիմնարար դրույթներին։ Մ. Հովհաննիսյանի արձակը գեղարվեստական եւ հրապարակախոսական տարրերի հետաքրքիր սինթեզ է, ինչը նոր որակ է տալիս նրա գրական հունձքին։ Նրա բովանդակալից էսսեները, դիպուկ ու խոսուն հրապարակումները պատմական կարեւոր ներդրումներ են Անկախության շրջանի հայ հրապարակախոսության գանձարանում։

Մաքսիմ Հովհաննիսյան - գրողի ինքնատիպությունը պայմանավորված է ոչ միայն ժամրային ու թեմատիկ բազմազանությամբ, բարձր ինտելեկտուալությամբ, օգացմունքների բնականությամբ, այլև կենդանի, գունեղ լեզվաօճական առանձնահատկություններով։ Գրողը, իր ասելիքն ամփոփելով բովանդակալից շարադրանքում, բաց տարածություններ չի թողնում։ Նրա լեզվի հարստությունը շարունակաբար ճյուղավորվում է, նպաստում յուրօրինակ ոճի դրսեւորմանը, որտեղ իրենց ուրույն դերն ունեն բարբառային բառերն ու բառակապակցությունները, ժողովրդական առած-ասացվածքները, հետաքրքիր համեմատությունները, որոնք առավել վառ գույններ են հաղորդում նրա պատումներին։ Ս. Հովհաննիսյանը լեզվաօճական իր ուրույն համակարգով իր բաժին նպաստն է բերում նաև հայ գրական լեզվի զարգացմանը։

# **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

## **ԳՐՔԵՐ**

1. Անանյան Գ., Ակնարկներ հայոց հին եւ միջնադարյան հրապարակա-խոսության, Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 2005 թ., 304 էջ:
2. Աղայան Ն., «Մենախոսություն ժամանակի հետ», Երեւան, Մուղնի հրատարակչություն, 2006 թ., 397 էջ:
3. Ավետիսյան Զ., Գրական ստեղծագործության հոգեքանություն, Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ., 240 էջ:
4. Аристотель, Искусство поэзии, Москва, 1973 г. 184 с.
5. Бахтин М., Проблемы поэтики Достоевского, Москва, 1972 г., 363 с.
6. Բանաստեղծությունը եւ արդիականությունը (Յոդվածներ եւ ուսումնասիրություններ), Երեւան, 1976 թ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 392 էջ:
7. Բելինսկի Վ., Երկերի ժողովածու, Յատոր III, Երեւան, 1954 թ., էջ 204:
8. Бочаров С. Характеры и обстоятельства // Теория литературы. Основные проблемы в историческом освещении. Образ, Метод, Характер. Москва. Издательство «АН СССР». 1962 г. 451 с.
9. Брюсов В. Литературное наследство.Москва.Издательство «Hayka».1976г.854 с.
10. Գասպարյան Դ., Պոեզիան եւ կյանքի ճշմարտությունը, Երեւան, «Լույս» հրատարակչություն, 1990թ., 396 էջ:
11. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հատոր IV, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1968 թ., 626 էջ:
12. Եղելյան Լ., Յրամտ Մարելոյանի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երեւան, 1986 թ., 172 էջ:
13. Եղելյան Լ., Յայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2007թ., 367 էջ:
14. Թումանյան Յովի, Երկերի ժողովածու, Յատոր IV, Երեւան, «Յայստան» հրատարակչություն, 1969 թ., 490 էջ:
15. Իսահակյան Ավ., Երկեր, հատոր 5, «Սովետական գրող» հրատարակչություն, 1977 թ., 434 էջ:

16. Лессинг Г., Гамбургская драматургия, М. - Л. 1936 г. 519 с.
17. Խանջյան Ս., Մ. Յովհաննիսյան. Լեռնադրյուրի վիպաշխարհը, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2007 թ., 122էջ:
18. Кац И., Соб. соч. Том II , Москва. 1967 г. 743 с.
19. Кожинов В. Слово как форма образа. // Слово и образ. Сб. ст./ Москва. Издательство «Просвещение», 1964 г. 288 с.
20. Ջախվերյան Լ., Զրույցներ լեզվի մասին, Երեւան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1986 թ., 192 էջ:
21. Յովհաննիսյան Մ., Արցախի հմ, ցավ իմ, Երեւան, «Նախիք» հրատարակչություն, 1998 թ., 284 էջ:
22. Յովհաննիսյան Մ., Երկեր, Արաջին հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2005թ., 468 էջ:
23. Յովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2006 թ., 527 էջ:
24. Յովհաննիսյան Մ., Երկեր, Երրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2008 թ., 479 էջ:
25. Յովհաննիսյան Մ., Երկեր, Չորրորդ հատոր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, 2009 թ., 351 էջ:
26. Յովհաննիսյան Մ., Զաստվածների խնջույք-2, Ստեփանակերտ, «Սոնա» գրատուն, 2009 թ., 172 էջ:
27. Յովհաննիսյան Մ., Յոգնած Երեկո, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, 2010 թ., 336 էջ:
28. Յովհաննիսյան Մ., Երկեր, Յիմերրորդ հատոր, «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչություն, «Սոնա» գրատուն, Ստեփանակերտ, 2015 թ., 632 էջ:
29. Յովհաննիսյան Յոլ., ժամանակակից փիլիսոփայական հոսանքներ, Երեւան, 1998 թ., 164 էջ:
30. Մարելոսյան Ր., Սահտակ թղթի առջեւ, Երեւան, «Դայգիտակ» հրատարակչություն, 2004 թ., 367 էջ:
31. Մարության Ա., Դայոց լեզվի ոճաբանություն, Երեւան, «Նախիք» հրատարակչություն, 2000 թ., 243 էջ:
32. Մինասյան Ս., Մաքսիմ Յովհաննիսյան. Կենսամատյան, Ստեփանակերտ, 2004 թ., 220 էջ:
33. Шкловский В. Заметки о прозе русских классиков. Москва. Издательство «Советский писатель», 1953 г. 323 с.

34. Նիցշե Ֆ., Բարուց եւ չարից անդին, Զաստվածների մթնշաղ, Երեւան, «Ապոլոն» հրատարակչություն, 1992 թ., 272 էջ:
35. Զրբաշյան Էդ., Աշխարհայացք եւ վարպետություն, Երեւան, «Հայաստան» հրատարակչություն, 1967 թ., 460 էջ
36. Զրբաշյան Էդ., Մախչանյան Յ., Գրականագիտական բառարան, Երեւան, «Լուսյ» հրատարակչություն, 1980 թ., 350 էջ
37. Ռубиншտեյն Ս., Основы общей психологии, Москва, Издательство «Учпедгиз», 1940 г., 596 с.
38. «Սովետահայ գրականության պատմություն», 2-րդ հատոր, 1965 թ., Երեւան, էջ 45:
39. Սարինյան Ս., Յաջ գրականության երկու դարը, Յատոր V, Ստեփանակերտ, «Դիզակ պյուս» հրատարակչություն, 2009 թ., 552 էջ:
40. Սեւակ Պ., Երկերի ժողովածու, Յատոր 6, 1976 թ., Երեւան, «Հայաստան» հրատարակչություն, 448 էջ:
41. Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Երեւան, «Սարգիս Խաչենց» Փրինթինգ» հրատարակչություն, 2008 թ., 514 էջ:

## **ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻԶՈՑՆԵՐ**

1. Արցախի հանրային ռադիո, 2006 թ. (Արխիվ):
2. «Արցախ» հանդես, 1994 թ., N 3-4:
3. «Ազգ» օրաթերթ, N 83, 10-05-2011:
4. «Գարուն», 1968 թ., N 8:
5. «Գարուն», 1968 թ., N 11:
6. «Գարուն», 1972 թ., N 11:
7. «Գարուն» ամսագիր, 5-6, 2006 թ.:
8. «Գրական Աղրբեջան», 1971թ., N 3:
9. «Գրական Աղրբեջան» հանդես, 1984 թ.:
10. «Գրական թերթ», 1955թ., N 25, N 28:
11. «Գրական թերթ», հոկտեմբերի 14, 1966թ.:
12. «Գրական թերթ», 1992 թ., N 1:
13. «Գրերի աշխարհ», 1979 թ., N 5:
14. «Սարցիս» հանդես, 2009թ.:
15. «Писатели Франции о литературе» Москва, 1978 թ.
16. «Պատմա-բանասիրական հանդես», 1964 թ., N 3:
17. «Սովետական գրականություն», 1957թ., N 6:
18. «Սովետական գրականություն», 1976թ., N 1:
19. <http://168.am>, Դանիել Խարմս, 2008, օգոստոսի 26:
20. <http://www.litopedia.org>, 2013 թ., հոկտեմբեր:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ակնկալված աշխատություն .....	5
Ներածություն .....	7
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ</b>	
ՄԱՔՍԻՄ ՀՈՎՐԱՆԻՍՅԱՆԻ ԳԵՂԱՐԿԵՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ	
1.1. Սիրո թեման «Նարնջագույն գիշերներ» պատմվածաշարում.....	25
1.2. Լեռնաշխարհն ու նրա մարդիկ («Գյուղացի մարդիկ», «Հարար-Հարար» ժողովածուները) .....	41
1.3. Հայ մարդու խառնվածքն ու հոգեբանությունը պատերազմական եւ հետապատերազմական տարիներին («Բաց դրմեր», «Հոգնած երեկո», «Հեռացող երկրի կարոտը»).....	91
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b>	
ՄԱՔՍԻՄ ՀՈՎՐԱՆԻՍՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
2.1. Արցախի ճակատագիրը «Մենք» ժողովածուում .....	134
2.2. Արցախյան գոյապայքարի անդրադարձը «Ուպորտած դեպքի վայրից», «Ուպորտած դեպքի վայրից-2», «Ուպորտած դեպքի վայրից-3» եռագրությունում .....	162
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ</b>	
ՄԱՔՍԻՄ ՀՈՎՐԱՆԻՍՅԱՆԻ ԼԵԶՎԻ ԵՎ ՈճԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՋԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	193
Եզրակացություն .....	217
Օգտագործված գրականության ցանկ .....	220

**ԱԼԻՍԱ ՅՈՒՐԻՔԻ ԲԱԴԴԱՄԱՐՅԱՆ**

**ՄԱԳԻՍՏՐ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ.  
ԳՐՈՂ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՒ**

**АЛИСА ЮРЬЕВНА БАГДАСАРЯН**

**МАКСИМ ОВАНЕСЯН.  
ПИСАТЕЛЬ И ПУБЛИЦИСТ**

Խմբագիր՝  
Գեղ. Խմբագիր՝  
Սրբագրիչ՝

Սովորատ Աղալարի ԽԱՆՅԱՆ  
Մնացական Սուրենի ԱԶԻԶՅԱՆ  
Ունա Անդրանիկի ՄՈՎՍԵՍՅԱՆ

---

Տառաստեսակ՝ «Dallak Time»: Թուղթ՝ օֆսեթ: Տպագրական 14 մամուլ:  
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակ՝ 250:  
Գինը՝ պայմանագրային:

«ՍՈՒԱ» գրահրատարակչություն  
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16  
Դեռ. 951555  
E-mail:sonatparan@rambler.ru

